XIII

# ԴԱՎԻԹ ԲԱՂԻՇԵՑՈՒ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ (XVII Դ.)

*Դավիթը ծնվել է Բաղեշում, այնտեղ էլ անցկացրել իր կյանքը և գրել իր ժամանակագրությունը։ Նրա ծննդյան տարեթիվը հայտնի չէ[1]։ Կենսագրական որոշ տեղեկություններ կան իր իսկ կազմած ժամանակագրության մեջ, որոնցից պարզվում է, որ Դավիթը աշակերտել է Բաղեշի առաջնորդ Մեսրոպ վարդապետին, 1641 թ. իր ուսուցչից ձեռնադրվում է քահանա, «և յետ Զ (6) ամի», այսինքն 1647 թվին՝ վարդապետ[2], իսկ 1651 թվին դառնում Բաղեշի վանքերից մեկի՝ Խնդրակատարի վանահայր։ Ժամանակագրության այս տեղեկություններին եթե ավելացնենք մի քանի հիշատակարանների ուրիշ, թեև ոչ այնքան մանրամասն, վկայությունները[3], ապա մեր գիտելիքների շրջանակները Դավիթ Բաղիշեցու մասին կսահմանափակվեն։ Դ. Բաղիշեցին, ինչպես հաղորդում է նրա ուսուցիչը, մահացել է 1673 թվի դեկտեմբերի 29-ին[4], Լիմ անապատում[5]։*

*Ժամանակակիցներից մեկը Դավիթ Բաղիշեցուն կոչում է «քաջայաղթ փիլիսոփա»[6], թեև մեզ հասած նրա մատենագրական ժառանգությունը չի հաստատում այդ հորջորջումը։ Դ. Բաղիշեցին անձամբ ընդօրինակել կամ ուրիշներին ընդօրինակել է տվել բազմաթիվ ձեռագրեր, որոնցից մի քանիսը գտնվում են Մատենադարանում[7]։ Դ. Բաղիշեցու հիմնական աշխա-*

---

*[1] Պրոֆ. Աշ. Աբրահամյանը Դ. Բաղիշեցու մասին գրած իր հոդվածում ենթադրում է, որ նա ծնված պետք է լինի 1610—1620 թվականներին («Էջմիածին», 1946, VIII—X, էջ 56)։*

*[2] Պրոֆ. Աշ. Աբրահամյանը վերոհիշյալ իր հոդվածում սխալմամբ գրում է. «Նույն Մեսրոպից նա (Դ. Բաղիշեցին—Վ. Հ.) 1641 թվին ստացել է «գաւազան իշխանութեան», այսինքն վարդապետելու, քարոզելու իրավունք» (նույն տեղում, էջ 57)։*

*[3] Տե՛ս Դ. Ազանյանց, Դիւան Հայոց պատմութեան, գիրք Ժ, Թիֆլիզ, 1912, էջ 55—58, Մատենադարանի ձեռագրեր №№ 5155, էջ 185ա, 5179, էջ 242ա, 5732, էջ 165բ և այլն։*

*[4] Տե՛ս ներքևում, ծանոթ. 287։*

*[5] 1664 թ. Վարդան Բաղիշեցին գնում է և նորոգում Տարոնում գտնվող ս. Ղազարի վանքը, այնտեղ նա հանդիպում է քայքայված ձեռագրերի, որոնց մի մասը տալիս է ընդօրինակելու, այդ մասին գրելով հետևյալը. «...տվաք նորոգել և կազմել ձեռամբ Սահակ Վանեցի վարդապետին ի թվին ՌՃԻ (1671) օգնականութեամբ և ձեռնտվութեամբ* հոգևոր և հարազատ համշիրակ եղբօր մերոյ Դաւիթ վարդապետին. *որ այժմ առաջնորդ է ս. Ուխտիս Ղազարու վանացս...» (№ 2748, էջ 358բ)։ Ընդգծված բառերը մեզ ենթադրել են տալիս, որ խոսքը վերաբերում է Դավիթ Բաղիշեցուն, եթե ճիշտ է այդ, նշանակում է Դ. Բաղիշեցին իր կյանքի վերջին տարիներին եղել է ս. Ղազարի (Առաքելոց) վանքի վանահայր։*

*[6] № 5179, էջ 242ա։*

*[7] №№ 4109, 5155, 5179, 5732 և այլն։*

տությունը դա նրա ժամանակագրությունն է, որը բավական ժամանակ ինչ հայտնի է մասնագետներին։ Ժամանակագրությունից առաջին անգամ Ղ. Փիրղալեմյանը 1888 թ. «Նոտարք Հայոց»-ում հրատարակեց չորս ոչ ընդարձակ հատվածներ[1], որոնք նա վերցրել էր իր շրջագայությունների ժամանակ Վարագի ս. Նշան վանքի մատենադարանի մի ձեռագրից։ Ավելի ուշ, 1898 թ. «Արարատ»-ում լույս տեսավ Կիլիկեցու (նույն ինքը Հ. Թոփչյան) հոդվածը ժամանակագրության և նրա հեղինակի մասին[2], իսկ ժամանակագրության մի քանի ընդարձակ հատվածները նա հրատարակեց Խ. Դադյանի ձեռագրերի ցուցակում[3]։ Ալիշանը վերոհիշյալ հաղորդումները նկատի ունենալով, Դ. Բաղիշեցուն դասում է հայ պատմիչների շարքը՝ սակայն սխալմամբ նշելով, թե իբր նրա ժամանակագրությունը սկսվում է արաբների տիրապետությունից[4]։ Դ. Բաղիշեցու մասին համառոտ տեղեկություններ և ժամանակագրության անհամեմատ ընդարձակ հատվածներ լույս ընծայեց Գ. Աղանյանը[5], վերցնելով Ղ. Փիրղալեմյանի հավաքած նյութերից։ Դ. Բաղիշեցու մասին դրանից հետո բանասիրությունը երկար ժամանակ լռեց մինչև պրոֆ. Աշ. Աբրահամյանի հոդվածի հանդես գալը[6]։ Նշված հոդվածներից ամենից հետաքրքիրն ու փաստալիցն այս հոդվածն է, որտեղ օգտագործված են ձեռագրական նոր նյութեր և շարադրըված է ոչ միայն Դ. Բաղիշեցու կենսագրությունը, նրա մատենագրական գործունեությունը, ժամանակագրության աղբյուրները, այլև փորձ է արված տալ Դ. Բաղիշեցու պատմագիտական հայացքների և քաղաքական գործունեության գնահատականը։ Բացառությամբ վերջին հոդվածի, նշված հոդվածներին և ժամանակագրության բնագրի հրատարակությանը հիմք է հանդիսացել ժամանակագրության թերի կամ թերի ընդօրինակած (օրինակ Փիրղալեմյան) բնագրերը, այդ պատճառով էլ մինչև վերջերս (1946 թ.) պարզ պատկերացում չկար Դ. Բաղիշեցու ժամանակագրության ծավալի և ընդգրկած ժամանակաշրջանի մասին։

Մեզ հասել են Դ. Բաղիշեցու ժամանակագրության երեք տարբերակներ[7], Սրանցից երկուսը գտնվում են Մատենադարանի №№ 7589 (էջ 1ը—

[1] էջ 86, 122—123, 148, 203—210։ Ղ. Փիրղալեմյանը 86-րդ էջի երկրորդ ծանոթագրության մեջ ժամանակագրության մասին սխալ տեղեկություն է հայտնում. «Ունի սոյն Դաւիթ վարդապետ մի պատմագրութիւն. սկզբնաւորեալ յիշխանութենէ տէրութեան Ռուբինեանց մինչև ի ժամանակս իւր»։

[2] էջ 120—124։

[3] Ե. Ե. Թոփճեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վ-ի Դադեան, Ա. Վաղարշապատ, 1898, էջ 96—99։

[4] «Հայապատում», Ա, էջ 129։

[5] «Դիւան հայոց պատմութեան», գիրք Ժ, էջ ԼԱ—ԼԴ, 41—56։

[6] Պրոֆ. Աշ. Աբրահամյան, Դավիթ Բաղիշեցու տարեգրությունը և նրա արժեքը հայ մատենագրության մեջ, «Էջմիածին», 1946, VIII—X, էջ 55—59, XI—XII, էջ 35—42։ Պրոֆ. Հ. Աճառյանի տեղեկատու հոդվածը («Հայոց անձնանունների բառարան», հտ. 2, Երևան, 1944, էջ 57—58) նկատի չունենք, որովհետև այստեղ բիբլիոգրաֆիկ տեղեկություններ են հավաքած նախորդ հոդվածներից։

[7] Այս երեք ընդօրինակություններից, անշուշտ, տարբեր է «Նոտարք Հայոց»-ում Ղ. Փիրղալեմյանի հրատարակած չորս հատվածների բուն օրինակը։ Հենց այս ընդօրինակությունից էլ Գ. Աղանյանցը «Դիւան»-ում հրատարակեց Դ. Բաղիշեցու ժամանակագրությունը։ Վերջինս իր ներածականում հետաքրքիր մանրամասնություններ է հայտնում ժամանակագրության մասին. լսենք նրան. «Ժամանակագրությունը օրինակել է Գրիգոր երեցը իր՝ Դավթի հրամանով Մխիթար Գոշի Երեմիայի մարգարեության մեկնության

58բ, այս տարբերակը այսուհետև կնշենք A) և 4044 (էջ 1բ—68բ, սա էլ՝ Б) ձեռագրերում[1]: Վերջիններս բովանդակում են միայն Դ. Բաղիշեցու ժամանակագրությունը: Դրանց ընդօրինակության ժամանակը հայտնի չէ, ամենայն հավանականությամբ A-ն XVIII, իսկ Б-ն XVII դարի է: Ժամանակագրությունն ամբողջական է A տարբերակում, իսկ Б-ում միջից և վերջից թերի, թեև այստեղ (Б-ում) ժամանակագրության բնագիրը համեմատաբար լավ է պահպանված, որտեղ աղավաղումները շատ աննշան են: Երրորդ տարբերակը գտնվում է Բաքվի Լենինի անվան քաղաքային գրադարանում[2]: Այս ձեռագիրը, որը զանազան մեկնությունների և այլ նյութերի ժողովածու է, ընդօրինակվել է 1664—1667 թվականներին, Բաղեշում, իսկ ժամանակագրությունը՝ 1667 թ., Միքայելի (մականվամբ Բուչանք) կողմից, ասել է թե Դ. Բաղիշեցու կենդանության ժամանակ, գուցե և հեղինակի ինքնագիր օրինակից: Ժամանակագրությունն այս տարբերակում անհամեմատ լավ է պահպանված, քան նախորդ տարբերակներում՝ չկան աղավաղումներ, խմբագրման և կրճատման հետքեր, ընդմիջարկություններ և գրված է գրագետ մարդու կողմից: Ժամանակագրության Բաքվի տարբերակի միայն նախավերջի թերթն է ընկած: Նախքան վերնագիրը ժամանակագրությունն սկսվում է տոհմական չորս (սյունակաձև) ճյուղագրությամբ: Առաջին սյունակում տրված է Ադամից մինչև Նոյ, երկրորդում՝ Սեմի սերունդը մինչև Աբրահամ, երրորդում՝ Քամի սե-

---

հետ, որ Լիմ կղզում է, ուր բերել է ինքը, երբ իր մահից առաջ իր աշակերտակից Ավետիք վարդապետի և իր վարժապետ Մեսրոպ արքեպիսկոպոսի հետ գնացել էր այցելելու այդ վանքը, ուր և վախճանվում է 1673-ին» (դիրք Ժ, էջ ԼԳ):

Երեմիայի մարգարեության Մխիթար Գոշի մեկնության Մատենադարանի ձեռագրերից մեկի հիշատակարանում կարդում ենք. «Արդ գրեցաւ... ի թուին Հայոց ՌՃ և Ժ (1661) ձեռամբ եղեռնագործ... և տառապեալ ոգւոյ Գրիգոր երիցու ի դառն և ի վշտաշատ ժամանակիս, որ նեղիմք ի ձեռս այլազգեաց և հարկապահանջութեան նոցա: Արդ՝ գրեցաւ սա ի քաղաքս Բաղէշ... ի խնդրոյ սրբազան և քաջայաղթ փիլիսոփայի Գաւթի վարդապետին ի վայելումն անձին...» (թվում է Գ. Բաղիշեցու արյունակիցների անունները, № 5179, էջ 242ա): Միևնույն ժամանակ, այս ձեռագրի (№ 5179) բիբլիոգրաֆիկ քարտում, որպես ծանոթություն, գրված է հետևյալը. «Սույն Ձ-ի բովանդակության մեջ նշանակված է Մեսրոպ արքեպ. Տ. Մովսիսյանի սկզբնապես կազմած ցուցակում հետևյալը՝ «Համառոտ պատմութիւն ազգաց Տաճկաց Օսմանցոց, որ բռնակալեցին միահեծան ի ծայրիցն Եւրոպիոյ բովանդակ հիւսիսոյ և Բաբելոնիւ ընդ հարաւ», սկ. «Արդ ի թվին ՌՀԱ այր ոմն անուն Օսման»: Այժմ ձեռագրում չենք գտնում ոչ ժամանակագրությունը և ոչ էլ Օսմանցիների համառոտ պատմությունը, ինչպես հաղորդում են Գ. Աղանյանցը և բիբլիոգրաֆիկ քարտի ծանոթությունը: Ձեռագրում գրիչ Գրիգոր երեցի ինքնագիրը հասնում է մինչև 237 թերթը, այնուհետև 238ա—242բ էջերը այլ ձեռացագիր է և նոր է դրվել, հավանաբար թերթերը հին, մաշված լինելու պատճառով: Նոր ժամանակի ձեռացագրով գրված են Մխ. Գոշի, Գրիգոր երեցի հիշատակարանները, որոնք թերի են (Մխ. Գոշի այս հիշատակարանի լրիվ, բայց մի այլ ընդօրինակության բնագիրը տես № 3007 ձեռագրի 146ա և բ էջերում): Սակայն հետաքրքիրն այն է, որ Գ. Աղանյանցի ակնարկած Գրիգոր երեցի ընդօրինակությունը Մատենադարանի № 5179 ձեռագիրն է, բայց, որն ընդօրինակված է ոչ թե Լիմ անապատում, այլ Բաղեշում, ոչ թե 1673 թվին, այլ 1661 թվին:

[1] Ժամանակագրության № 4044 տարբերակը Ն. Գաղայանի ձեռագրերի ցուցակում նշված օրինակն է:

[2] Այստեղ գտնվում են հայերեն 4 ձեռագրեր, որոնցից մեկի ԺՀԸ-ՄՀԷ էջերում տեղավորված է Գ. Բաղիշեցու ժամանակագրությունը: Այս տարբերակը այսուհետև կանվանենք Բաքվի օրինակ:

րունդը մինչև Նինոս և սրա կին Շամիրամը, չորրորդում՝ Հաբեթի սերունդը մինչև Արա Գեղեցիկը։ Այս տեղեկությունները Ս. Անեցու համապատասխան վկայությունների խմբագրությունն է միայն[1]։

Ժամանակագրությունն ունի ընդարձակ վերնագիր՝ «Դաւթի Բանասիրի Բաղիշեցոյ ծաղկաքաղ արարեալ ի բազում պատմագրաց [զազ]գն Յաբեթի և ուղ ինչ զՍեմ[այ] և զՔամայ ըստայդ գտակաւ բազում աշխատութեամբ ընտրելով զլաւն և զպիտանին անոխալապէս շնորհօք Քրիստոսի Աստուծոյ մերում»։ Այս ընդհանուր վերնագրից բացի, բնագրում նյութը շարադրված է մի քանի առանձին վերնագրերի ներքո։ Ժամանակագրությունն սկսվում է հայերի բիբլիական նախահոր Հաբեթի և սրա հաջորդների շրջանից և հասնում մինչև հեղինակի ժամանակները՝ 1662 թ.։ Ժամանակագրական այս հսկայական սահմանների մեջ հեղինակի ժամանակակից շրջանը շատ քիչ տեղ է բռնում։ Ժամանակագրության մեծագույն մասը իր նախորդող մատենագիրներից հավաքած նյութերն են։

Ժամանակագրության կառուցվածքի մասին ահա թե ինչ է գրում հեղինակն իր հիշատակարանում, որը, ի միջի այլոց, A տարբերակում թերի է վերջից, իսկ Б-ում չի պահվել. «...Ծաղկաքաղ և համառօտ արարի ի պատմագրաց բազում աշխատութեամբ՝ յԱդամայ մինչ ցարդ զկարգս նահապետաց և մարգարէից և թագաւորաց և հայրապետաց և ի յերկուս ճառօրս բաժանեցի՝ առաջին յԱդամայ մինչ յԱբեթ մեր նախնին և յԱբեթէ զթագաւորս Հայկազանց և զԱրշակունեաց և զԲագրատունեաց և զԱրծրունեաց և զԱլիօսմանեանց, զգալ Թաթարին և Լանկ-Թամուրին, նաև զկարգ կաթողիկոսաց ի ժամանակս իւրաքանչիւրոցն, ի սրբոյն Գրիգորէ մեր Լուսաւորչէն մինչև թվին ՌՃԺԲ կարգաւ ասացի մինչ ի Յակոբ կաթողիկոս աղաչեմ վասն սի[րոյն]*... ցտաճարն և յաւերումն և ի շինումն և անտի մինչև ի Յաղէքսանդր և յԱնտիոքոս... մինչ ի ծնունդ կենարարին և զկարգս առաքելոց և հայրապետաց Հռոմոց և զկարգս թագաւորաց ի Գայիոսէ մինչև ցԿոստանդիանոս և անտի մինչ ի Մանուէլ...»[2] (ընդգծումը մերն է—Վ. Հ.)։

Այսպիսով, ամբողջ աշխատությունը բաժանվում է երկու հատորի՝ առաջին հատորը ընդգրկում է հայոց պատմությունը, իսկ երկրորդ հատորը՝ ընդհանուր պատմությունը՝ նախահռոմեական, հռոմեական և բյուզանդական շրջանը, ընդ որում յուրաքանչյուր հատորը սկսվում է բիբլիական և ավանդական պատմության զրույցներով։

Առաջին հատորի՝ Հայոց պատմության պերիոդիզացիան հեղինակը հարմարեցրել է քրիստոնեական եկեղեցու չորս ավետարանիչների և սրանց համապատասխան աշխարհի կողմերի, հողմերի, գետերի τετραχα-յան համակարգությանը, այդ մասին շատ պարզ գրելով ժամանակագրության մեջ. «Արդ ի Դ (4) բաժանեցի զթագաւորութիւն Արամեանս տոհմի ըստ Դ (4) կողմանց և Դ (4) հողմոց և Դ (4) վտակաց, նախ Հայկազնեաց, երկրորդ Արշակունեաց, երրորդ Բագրատունեաց, չորրորդ այժմ Յարծրունեաց խառնեալք խնամութեամբ ընդ Հայկազունսն»[3]. Հենց այս սկզբունքով հեղի-

[1] Տես Ս. Անեցի, էջ 5—11։

* Բնագրում այստեղից 2—3 տող մաշված է և վնասված։ Հենց այդ մասից էլ հեղինակը սկսում է շարադրել ժամանակագրության II հատորի բովանդակությունը։

[2] Բաքվի օրինակ, էջ ՄՀէ։

[3] Տես ներքևում, էջ 343։

նակը դասավորել է ժամանակագրության սկզբի ավանդական պատմության տոհմական չորս ճյուղագրությունը՝ Ադամից—Նոյ, Սեմից—Աբրահամ, Քամից—Շամիրամ և Հաբեթից Արա Գեղեցիկ։ Հնում, մեր նախնիների մեջ, այս պատկերացումն այնքան էր տարածված, որ շատ հաճախ Ավետարան—ձեռագրի գլխավոր հիշատակարանը այդպես էին սկսում[1]։

Սակայն, նյութի շարադրության ընթացքում հեղինակը առաջին հատորը չի ավարտում Ռուբինյանների պատմական ասպարեզից հեռանալով, այլ նա գրում է Լանկ-Թիմուրի, Օսմանյան Թուրքերի և այլ եղելությունների մասին, մինչև 1662 թ., դուրս գալով իր կազմած պերիոդիզացիայի շրջանակներից։

Ժամանակագրության աղբյուրներին առաջին անգամ անդրադարձել է Հ. Թոփչյանը[2], իսկ ավելի հանգամանորեն քննել է պրոֆ. Աշ. Աբրահամյանը[3], որոնք մատնացույց են արել Գ. Բաղիշեցու օգտագործած մատենագիրներին՝ Մ. Խորենացուն, Փ. Բուզանդին, Ագաթանգեղոսին, Հ. Դրասխանակերտցուն, Ս. Անեցուն, Կ. Գանձակեցուն, Թ. Մեծոփեցուն։ Այս ցուցակին կավելացնենք նաև Եվ. Կեսարացուն, Հոմերոսին, Գր. Նարեկացուն, Ասողիկին, Մխ. Այրիվանեցուն, Վանականին, Կիրակոս Բանասերին, զանազան մարգարեների և առաքյալների։ Հեղինակը մի շարք դեպքերում հիշում է իր օգտագործած աշխատությունների հեղինակներին՝ Հոմերոս, Եվ. Կեսարացի, Մ. Խորենացի, Փ. Բուզանդ, Հ. Դրասխանակերտցի, Գր. Նարեկացի, Ս. Անեցի, Մխ. Այրի, Կ. Գանձակեցի. իսկ ավելի հաճախ օգտագործված նյութը վերապատմվում է առանց հեղինակին հիշելու, երբեմն էլ «ոմանք ասեն» կամ «այլք ասեն» անորոշ արտահայտություններով։ Ավելորդ չենք համարի դեմ առ դեմ բերել ժամանակագրության և օգտագործված կարևոր սկզբնաղբյուրների համապատասխան հատվածներից մեկ մեկ օրինակ։

Մ. Խորենացի[4]

1. Ա., ԺԲ, էջ 40. «Ամասիա բնակեալ յԱրմաւիր՝ յետ ամաց ծնանի զԳեղամ, և յետ Գեղամայ զՓառոխ արի և զՑոլակ։ Եւ յետ ծնանելոյ զսոսա՝ անցանէ զգետովն մերձ ի լեառնն հարաւոյ, և շինէ անդ առ խորշիւք լեռնոտինն մեծապէս ծախիւք երկուս տունս. զմին յարևելս կոյս, մօտ յակունս աղբերցն, որ առ ստորոտով լերինն ելանեն. իսկ զմիւսն յարևմուտս կոյս նորին տանն, բացագոյն իբր մեծօր հասարակ աւուր միոյ հետևակագնացի առն ճանապարհի»։

Գ. Բաղիշեցի

1. Էջ 303 «Ամասիայ բնակէ յԱրմաւիր, յետ ամաց ծնանի զԳեղամ և յետոյ զՓառոխ արի և զՑոլակ։ Եւ յետ ծնանելոյն անցանէ զգետովն Երասխայ մերձ ի լեառնն հարաւոյ և շինէ անդ առ խորշիւք լեարնն ոտին Բ տուն՝ մինն յարևելս ստորոտոյ լերանն մօտ յակն աղբերն և միւսն յարևմուտս կոյս նորին տան, բացագոյն աւուր միոյ ճանապարհ»։

---

[1] Ահա մեկ օրինակ. «Փառք անսկզբանն և սկզբանն ամենայնի՝ անեղէին և գոյացուցչին բնաւից... իսկ չորից աւետարանչացն խորհուրդ բազմաւրինակ իմն ցուցմամբ տեսանի, զի ոմանք ասեն թէ չորից աւետարանչացն են չորք անկիւնք արարածոցս՝ արևելք, արևմուտք, հիւսիս, հարաւ...իսկ ոմանց հաճոյ թուեցաւ ըստ չորից մշտահոս գետոցն յադենական աղբերէն յառաջ խաղացեալ առ ի տիեզերաց ոռոգումն՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս, Եփրատէս և սոցա գոլով նմանապէս թուով ուռճացեալք ի կենդանական աղբերէն... նոյն աւրինակ ըստ տեսութեանն Եզեկիէլի քառակերպեան աթոռոյ՝ մարդ, առիւծ, եզն, արծիւ...» (№ 4841, էջ 359ա—359բ)։

[2] «Արարատ», 1898, էջ 123։

[3] «Էջմիածին», 1946, IX—XII, էջ 38—39։

[4] «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց», աշխ. Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփխիս, 1913։

### Հ. Դրասխանակերտցի[1]

2. էջ 11. «Յետ երկնասահանացն հեղեղաց և անդնդապտոյտ Ջրոհեղձն լինելոյ բոլոր շնչականաց, և յետ ակամայ կամաւ նաւարկութեանն Նոյի և ի ցամաք ելանելոյ ի Հայս ըստ հրամանի տեառն որդւովք և կանամբք հանդերձ և այլովք՝ ես ընդ նոսին անրան կենդանեօք՝ սկիզրն ապա դարձեալ առնու աստուածային այցելութեամբն աճելութիւն ծննդոց երկրի»։

2. էջ 300. «Յետ երկնասահանաց հեղեղաց և անդնդապտոյտն ջրահեղձ լինելոյ շնչականաց, յետ ակամայ նաւարկութեան Նոյի Իէ խաբ ամսոյ և ի նոյնքանիսն ելանելոյ հանդերձ եռեակ սեռիւք ի լաստէն ջրադողդ ի Մասիք Արարատեայ»։

### Ասողիկ

3. էջ 7. «Արդ յամենեցունց ի սոցանէ, իբր ի լայնալիր մարգաց և ի հովտային լերանց հաւաքեալ ծաղիկս հեշտալի աչաց հայելոյ գեղեցկագոյն գունովքն և անուշահամ հոտովքն՝ բերեալ ընծայ մատուցանեմ աստուածասէր անձինդ և հարցասիրական խորհրդոց քոց...»

3. էջ ՄԾԴ «Այլ մեր...... յամենեցունց ի սոցանէ ընդրեալ իբր լայնալիր և ի հովտային լերանց ծաղիկս գեղեցկագոյն, գուարճատեսիլ հոտով կոկոնաձև փնջով ընծա մատուցանեմ բանասէր անձանցդ...»։

### Մ. Խորենացի և Ասողիկ

4. Մ. Խորենացի III, ԼԹ, էջ 307 «ըստ իւրում անզգամութեանն սակրով վճարի...» Ասողիկ, էջ 78, «Այլ քաջ զօրավարին Անատօլեայ նոյնժամայն ըմբռնեալ զՊապ՝ կապեաց երկաթի կապանօք և ետ տանել առ կայսրն։ Եւ ոչ տեսութեան արժանի արար, այլ հրամայեաց ընկենուլ ի ծով»։

4. էջ 324. «Եւ իմացեալ մեծին Թէոդոսի առաքեաց զԱնատօլեայ զօրավարութին, որ ըմբռնեաց զՊապ և կապանօք էած առ Թէոդոս. և նա տեսութեան ոչ արար արժանի, այլ սակրով վճարեալ և ի ծով ընկեցեալ...»։

### Ս. Անեցի

5. էջ 77. «ՌԳ (ՄԱ) աէր Յոհան ի Կոգովտայ ի գեղջէ Բագարանէ ամս ԻՁ. ոմանք ի պատմագրաց զտէր Յոհան և զտէր Աբրահամ, ի միում ամի ասեն վախճանեալ և ոմանք այսպէս, որպէս գրեալս է»։

5. էջ 330. «Ապա տէր Յոհաննէս, ի Կոգովիտ գաւառէ, ի գեղջէ Գաբարանայ, ամս ԻԳ. Զսա յոլովք ի պատմագրաց ընդ Աբրահամու ասեն ի միում ժամանակի»։

### Կ. Գանձակեցի

6. էջ 30—31. «...վարդապետք և ուսուցիչք սուրբն Սահակ և Մեսրոպ և գլխաւորք յաշակերտացն սուրբն Յովսէփ և Յոհան և Ղեւոնդ և Սահակ և Մովսէս Քերդողահայր և Մամբրէ Վերծանող նորուն եղբայր, Եղնակ և Կորիւն, սուրբն Եղիշէ, Դաւիթ փիլիսոփայ և Յովաննէս, տէր Աբրահամ, Արձան, Մուշէ, Խոսրով, Ղազար և յետոյ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոս, և որ զգիրսն յարմարէր գեղեցիկ Հռոմանոս Սամոստացի...»։

6. էջ 320. «Եւ սկսան Մեսրովպ և Սահակ թարգմանել զԱստուածաշունչ գիրս հանդերձ աշակերտօքն՝ Եզնակ, Կորիւն և փոքունք սոցա՝ Յօվսէփ, Յոհան, Ղեւոնդ, Սահակ, Մովսէս Քերթօղն և եղբայրն նորին Մամբրէ Վերծանօղն, սուրբն Եղիշէ, յետոյ Դաւիթ Անյաղթն և Յոհաննէս, տէր Աբրահամ, Մուշէ, Արձան, Խոսրով, Ղազար Փարպեցի և յետ սոցա Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն և Հռափանոս Սամոստացի»։

### Թ. Մեծոփեցի[2]

7. էջ 9—10. «Արդ այր մի Թամուր-Լանկ-անուն, դաւանութեամբ և օրինօք

7. էջ 349. «Արդ՝ այր մի Թամուր-Լանկ անուն, օրինօք պղծոյն Մահմեդի, երևեցաւ

---

[1] «Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912։

[2] Պատմութիւն Լանկ-Թամուրայ և յաջորդաց իւրոց արարեալ Թովմա վ-ն Մեծոբեցւոյ», Փարիզ, 1800։

պղծոյն Մահմետի՝ Նեռին կարապետի, յայտնեալ երևեցաւ ի յարևելս և ի Սմըրղանդ քաղաքի, անողորմ, անգութ, անագորոյն, լցեալ ամենայն չարութեամբ, պըղծութեամբ և հնարիւք բանսարկուին սատանայի։ Զոր ոմանք ի Սարթափու ասեն զոլ զնա, որ ի դաւառն կոզովխա մերձ ի լեառն Մասիս ուր տապանն է Նոյի և մերձ ի ճարատղ գաւառ։ Որ գնացեալ ի Թաւրէզ և զանօրէիցն յղեալ զնա առ ի քէշիկս պահել զթշնամիս ի ճանապարհին Խորասանու»։

յարևելս ի Սմըրղնդ քաղաքի, լցեալ ամենայն չարութեամբ, զոր ոմանք ի Սարթափու ասեն զնա, մերձ յԱրտաղ գաւառի, որ և գնացեալ ի Թաւրէզ և զանօրէից յղեալ զնա ի քէշիկս պահել զթշնամիսն ի ճանապարհին Խորասանու»։

Թ. Մեծոփեցի[1].

8. էջ 51—52. «Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք Յովհաննէս վարժապետ և ուսուցիչ ի սուրբ ուխտէն Հերմոնի վանից և աշակերտք իւր Գաւիթ վարժապետ և Ստեփաննոս վարդապետ ի տանէն Սիւնեաց բազում քահանայք. Շմաւոն վարդապետ շնորհալից աթոռոյն Ստաթէի առաքելոյ. Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս ի սուրբ Առաքելոյն Թադէոսի. և միւս Գրիգոր վարդապետ և եպիսկոպոս ի հռչակաւոր ուխտէն Հագրաաու...»։

8. էջ 353. «Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք՝ Յովհաննէս մեծ վարդապետն Հերմոնա վանից և աշակերտք իւր՝ Գաւիթ վարդապետ, Ստեփանոս վարդապետ, Շմաւոն վարդապետ ի Տաթևու, Գրիգոր վարդապետ ի սուրբ Թադէոսէ, Գրիգոր միւս վարդապետ ի Հագսատու»։

Կ. Բանասեր[2]

9. էջ 6—7. «...ի տղայութեան սնեալ և ուսեալ (Թ. Մեծոփեցին) ի սուրբ ուխտն Մեծոփայ... առ ոտս վարդապետին Յոհաննու...։ Եւ անդուստ գնացեալ ի սուրբ ուխտն Սուխարայ, առ մեծ վարժապետքն Սարգիս և Վարդան, երկոտասան ընկերաւք... Մկրտիչ վարդապետն Նահապետանց, Կարապետ վարդապետ, Մկրտիչ վարդապետ Սւզուլ Բէկենց, Մկրտիչ վարդապետ Հողձեցի, Մարգարէ վարդապետ, Յոհաննէս Փափչէնցին, Սարգիս վարդապետ Սալնապատու և այլքն...։ Եւ մեծ վարդապետն Գրիգոր Որոտնեցին, որպէս դչահս վառեալ ի մէջ աշխարհի, եւ դաւազան Թովմա ճգնաւորին ի քաղաքն Երևան և կոչէ զնա յաստիճան վարդապետութեան երկոտասան իշխանութեան և եկեալ ի վանքն Մեծոփայ և կ ամ անդ կացեալ...»։

9. էջ 353 «... կացեալ (Թ. Մեծոփեցին) առ ոտս Յոհաննէս վարդապետի Մեծոփայ և ժամանակ ինչ առ Սարգիս վարդապետ ի Խառաբաստ և ընկալաւ դաւազան իշխանութեան ի Գրիգորէ Տաթևացոյ ի Երևան քաղաքի հանդերձ ընկերաւք՝ Մկրտիչ, Կարապետ, Մկրտիչ միւս Ողբեկենց, Մկրտիչ Հողեցի, Սարգիս և այլք։ Եւ եկեալ վարդապետն Թումա միւս անգամ ի Մեծոփ և սրբագրեաց զՍաղմոսն գաղօթմատոյցն և կ ամ կացեալ անդ»։

Դ. Բաղիշեցու ժամանակագրության աղբյուրների հարցն ամբողջությամբ քննութեան չենք առնի, որովհետև այդպիսիները մանրամասն նշված են ծանոթագրություններում։ Դ. Բաղիշեցու օգտագործած աղբյուրների առընչությամբ անհրաժեշտ ենք համարում վերանայել նրա ժամանակագրության գնահատման հարցը, որովհետև որոշ հոդվածագիրներ, մեր կարծիքով, գերագնահատել են վերջինիս պատմագիտական նշանակությունը։ Իրենց հոդվածներում Հ. Թոփչյանը և ապա պրոֆ. Աշ. Աբրահա-

---

[1] «Թ. Մեծոփեցու Յիշատակարանը», հրատ. Կ. Կոստանյանց, 1892, Թիֆլիս։
[2] Գ. Հովսեփյան, Թ. Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914 թ.։

մյանը կարծիք են հայտնել, որ Դ. Բաղիշեցու ժամանակագրության առաջին մասը հնարավորություն է տալիս առանձին պատմիչների մեզ հասած աշխատությունների մեջ մի շարք ուղղումներ կատարել, որովհետև ժամանակագրության հեղինակը, ինչպես կարծում են նրանք, օգտվել է Մ. Խորենացու, Փ. Բուզանդի երկերի այնպիսի օրինակներից, որոնք մեզ չեն հասել։ Այս մոտեցումը, թե որքան ճիշտ է, քննության դարձյալ չենք ենթարկի, քանի որ այդ աշխատանքը կատարված է ծանոթագրություններում (տես 59, 116), միայն կնշենք, որ Դ. Բաղիշեցու ժամանակագրությունը մեզ այդ հնարավորությունը չի ընձեռում, քանի որ Դ. Բաղիշեցին օգտվել է ոչ միայն Մ. Խորենացուց կամ Բուզանդից, այլ Ասողիկից։ Դ. Բաղիշեցին իր աշխատության մեջ հիմնականում հետևել է Ասողիկի, իսկ այնուհետև Ս. Անեցու և սրան շարունակողների ժամանակագրությանը։ Խորենացու տեղեկությունները Դ. Բաղիշեցուն մեծ մասամբ անցել են ոչ միայն անմիջապես, այլ Ասողիկի միջոցով, իսկ երբեմն էլ նա վերջինիս տեղեկությունները լրացրել է Խորենացիով (տես վերևում, 4-րդ համեմատությունը), թեև Ասողիկն ինքն էլ բազմաթիվ տեղեր հետևել ու համառոտել է Խորենացուն։ Եվ որպեսզի մասնագետներին հնարավորություն տանք մեր հավաստումներին թեր կամ դեմ արտահայտվելու, նպատակահարմար գտանք առաջարկվող բնագրի այդ մասը հրատարակել ամբողջությամբ։

Դ. Բաղիշեցին որպես ժամանակագիր չունի նախորդ դարերի (XII—XIII դ. դ.), եթե ոչ պատմիչների, գոնե ժամանակագիրների արժանիքները։ Նրա մատենագրական գործունեությունը հանդիսանում էր իր ժամանակի՝ XVII դարի մտավոր կյանքի մասնակի աշխուժացման հետևանք, թեև նրա ժամանակագրությունը չհասավ իր ժամանակակիցների՝ Ա. Դավրիժեցու և այլոց մատենագրական ստեղծագործությունների մակարդակին, որոնց մասին պրոֆ. Մ. Աբեղյանը իրավամբ գրում է. «...Այդ գրվածքների մեջ քննադատությունը, դոկումենտների խուզարկությունը և վկայությունների (ականատեսների) կոնտրոլը բոլորովին բացակայում է։ Գիտական երկեր չեն»[1]։

Ինչպես ցույց է տալիս ծանոթագրություններում և վերևում բերված աղբյուրների համեմատությունը, Դ. Բաղիշեցին թեև գրում է, թե ժամանակագրությունը «ծաղկաքաղ եմ արարեալ», սակայն նրա կատարածն ավելի շուտ մի կոմպիլյացիա է, զանազան երկերից հավաքած և վերապատմած[2], առանձին տեղերում պահելով նույնիսկ բառապաշարը։ Միևնույն եղելության մասին նա աղբյուրների տարակարծությունը նկատելուց այն կողմ չի անցնում։ Ընդարձակ վկայություններն երբեմն խիստ համառոտում է, իսկ երբեմն շարադրված նյութի կապը չկտրելու համար տարբեր աղբյուրներից վերցրածը հերթականությամբ շարահյուսում կամ միևնույն եղելու-

[1] Մ. Աբեղյան, Հայոց հին գրականության պատմություն, գիրք 2-րդ, Երևան, 1946, էջ 442։

[2] Հեղինակը իր հիշատակարանի վերջում այդ մասին դարձյալ գրում է. «...աղաչեմ յիշել ի տէր զորուպ Դաւիթ Բանասէրս, որ ծրեցի զսա ըստ կարի իմում սատ և անդ ժողովեալ ի պատմագրաց և գրեցի և եդի ընդ շարս և ընդ կարգս միմեանց...» (Բաքվի օրինակ, էջ ՄՀԷ)։

թյան մասին տարբեր հեղինակների պատմածը միահյուսում։ Հեղինակը չի խուսափել կրկնություններից[1]։

Նա երբեմն ընդհատում է շարադրելիք նյութը և սկսում այլ բանի մասին խոսել[2]։ Հեղինակը թեև նշում է «կամիմ թվականաւն ասել... զի ի Վարդանայ հետէ շփոթեալ տեսանեմք», սակայն նա բավականացել է որևէ հեղինակի տեղեկությունները բերել տարեթվերով, անկախ նրանից, թե դրանք ինչքանով են հավաստի։ Դ. Բաղիշեցին հոգ չի տարել իր ժամանակագրության պատշաճ մշակմանը։ Այդ երևում է նաև նրանից, որ Մ. Խորենացու առաջին դեմքով պատմելու ձևը նույնությամբ էլ թողել է իր ժամանակագրության մեջ, և բնագրում ստացվում է սխալ այն տպավորությունը, թե մեզ հետ խոսում է ինքը՝ Դ. Բաղիշեցին։ Այս առթիվ միայն մեկ օրինակ.

| Մ. Խորենացի | Դ. Բաղիշեցի |
| --- | --- |
| էջ 123. «Այլ ոչ գիտեմ ասել յորպիսի ազդմանէ ահագին իմն աղմուկ լեալ շփոթից և բազմութեան զօրացն զմիմեանս կոտորեալ, իսկ Արտաշէս փախուցեալ մեռանի...»։ | «...Այլ ոչ գիտեմ, թէ որպէս ազմկեալ եղև զօրաց նորա վաղվաղակի յետ դառնալ»[3]։ |

Հեղինակն աղբյուրներից վերցրած տեղեկություններն առանձին դեպքերում սխալ է հաղորդում։ Հաճախ միևնույն տարեթվի տակ տրված են մի քանի դեպքեր, որոնք տեղի են ունեցել տարբեր ժամանակներում։ Քիչ չեն առանձին դեպքերի տարեթվերի անճշտությունները, բայց տարօրինակն այն է, որ այդ անճշտությունները վերաբերում են ոչ թե հեղինակին ժամանակով հեռու դեպքերին, այլ երբեմն հեղինակին ժամանակով մոտ և ժամանակակից դեպքերին, օրինակ հեղինակը, Մովսես Տաթևացու աթոռակալությունը նշում է 1624—1630 թթ., իրականում՝ 13/I 1629 թ.— 21/V 1633 թ. (տես ծանոթ. 266), օգոստոսի 2-ի արևի խավարումը նշում է 1651 թ., իրականում այն եղել է 1655 թ. (տես ծանոթ. 275) և այլն։

Հեղինակի ժամանակակից պատմությունը, ինչպես վերևում նշեցինք, ժամանակագրության մեջ շատ քիչ տեղ է գրավում։ Այստեղ թեև հանդիպում ենք արժեքավոր և հետաքրքիր տեղեկությունների, ժամանակի անսովոր վիճակի և ծանր հարկապահանջության, կամայականությունների մասին, սակայն, դժբախտաբար, այդ տեղեկությունները նույնիսկ մի քաղաքի սահմաններում հաջորդաբար չի տրված. օրինակ՝ 1630—1650 թթ., 1651—1655 թթ. մասին ժամանակագրության մեջ շատ քիչ բան ենք գտնում, կամ բոլորովին չենք գտնում։ Ժամանակագրության ուշագրավ մասը՝ հեղինակի ժամանակակից պատմությունը, դժբախտաբար, սահմանափակվում

[1] Հմմտ. Գր. Լուսավորչի աջի պատմությունը։

[2] Կիրակոս Վիրաբեցուն կաթողիկոս ընտրելու համար հավաքված վարդապետների ցանկը ընդհատում է Թ. Մեծոփեցու կապակցությամբ և պատմում սրա կենսագրականից որոշ դրվագներ և այլն։

[3] Տես նաև ծանոթ. 32։ Հնարավոր է, որ այս հատվածը Դ. Բաղիշեցին վերցրել է Ասողիկից (էջ 38), թեև այս երկուսին աղբյուր հանդիսացել է Մ. Խորենացին։

է միայն Բաղեշի քաղաքական դեպքերի և ապա մասամբ եկեղեցական պայքարի վկայություններով։

Ինչպես վերևում նշեցինք, մեր հեղինակը Բաղեշի վանքերից մեկի առաջնորդն էր, ասել է, թե նա պատկանել է հոգևորականության վերնախավին։ Եվ որպես այդպիսին, նա հրճվանքով գրում է. «Աչօք մերովք տեսանեմք զսուրբ Էջմիածինն անթիւ վարդապետօք և արեղայիւք և խարանազգեստ կրօնաւորօք աւելի քան զՇ (500)»։ Հեղինակը հեռու էր ըմբռնելուց այն, որ Էջմիածնում ապաստան գտած այդ 500 եկեղեցականները, ինչպես նաև այլուր գտնվող վանքերի միաբանները սնվում էին երիցս շահագործվող հայ չարքաշ գյուղացու քրտինքով, իսկ եթե այդ գիտեր նա, ապա, ըստ երևույթին, դրանում տարօրինակ բան չի տեսել։ Սա էլ պետք է համարել Դ. Բաղիշեցու ժամանակագրության թերություններից մեկը, որպես սկզբնաղբյուրի։

Ինչպես արդեն նշեցինք, ժամանակագրությունը բաղկացած է երկու հատորից։ Երկրորդ հատորն ունի «Արդ կամիմ ծաղկաքաղ առնել յԱբրահամէ մինչև ի Քրիստոսի ծ[ն]ունդն և անտի կարգաւ մինչ ի Կոստանդիանոս և ի նմանէ մինչև թվին Զ զկարգս նահապետաց և զառաքելոցն համառօտաբար» խորագիրը[1]։ Այս հատորն սկսվում է «Աբրահամ հայրն հաւատոյ, որդի Թարայի ծնեալ յերկրին Քաղդեացոց...» և այսպես շարադրվում ըստ Աստվածաշնչի։ Պատմական մասը նվիրված է հռոմեական և բյուզանդական կայսրներին, որը վերջանում է, ինչպես ասվեց, բյուզանդական կայսեր Մանուել Կոմնենոսի շրջանով (մինչև 1180 թ.) և ապա մի փոքրիկ նախադասությամբ, հարևանցիորեն, հիշվում 1453 թվի Կ. Պոլսի անկումը. «Թվին ՋԲ (1453), որ էառ սուլտան Մահմատն, որպէս ասացի. տղայք և աղջկունք էին թագաւորքն ի մարտ պատերազմի և բազում արեան հեղմունս ի մէջ նոցա, վասն այնորիկ դիւրամուտ եղև սուլթան Մահմատ և առ»։

Այս հատորի կեսից ավելին (մոտավորապես 1,5 մամուլ) Աստվածաշնչի Մակաբայեցոց 1—3 գրքերի բովանդակության բավական խիտ համառոտումն է։ Այդ բանը ցույց տալու առանձին դժվարություն չկա, քանի որ հեղինակը ինքն էլ խոստովանում է այդ. «Այլ մէկ Քրիստոսի շնորհօքն խուզեալ զամենայն պատմագիրսն և ընագիրսն Մակաբայեցոց յամէնեցունց ի սոցանէ ընդրեալ...»[2]։

Վերոհիշյալ մեջբերման «խուզեալ զամենայն պատմագիրսն» խոսքերով հեղինակը նկատի ունի այս հատորի պատմական մասի համար օգտագործած հեղինակների երկերին։ Դրանից անվանապես հիշում է Եվ. Կեսարացուն, Գր. Նարեկացուն, Կ. Գանձակեցուն, օգտագործել է նաև Ս. Անեցուն։

| Ս. Անեցի | Դ. Բաղիշեցի Բաքվի օրինակ |
| --- | --- |
| էջ 20. «Յուդա ամաց ԽԸ ծնանի զՓարէս։ Փարէս ամաց ԾԹ ծնանի զԵզրոն. Եզրոն ամաց ԾԸ ծնանի զԱրամ. Արամ | էջ ՄԽԴ. «Յուդայ ԽԸ ամաց ծնանի զՓարէս ի Թամարայ. Փարէս ամաց ԾԹ ծնանի զԵզրոմն. Եզրոմն ամաց ԾԸ ծնանի |

[1] Բաքվի օրինակ, էջ ՄԽԲ։

[2] Նույն տեղում, էջ ՄԾԴ։ Հեղինակը ժամանակագրության մեջ մի քանի անգամ հիշում է Մակաբայեցիների 1-ին, 2-րդ, 3-րդ գրքերի օգտագործման մասին։ Իր հիշատակարանում ևս Դ. Բաղիշեցին գրում է, որ 2-րդ հատորի ընդգրկած նյութի մի մասը. «...առաջին և երկրորդ և երրորդ գիրք Մակաբայեցոցն պատմի» (Բաքվի օրինակ, էջ ՄՀԷ)։

*ամաց ԽԷ ծնանի զԱմինադար։ Ամինադար ամաց ԽԵ ծնանի զՆաասոոն։ Նւ էր, ասէ, Ամինադար սպարապետ զօրուն Յուդայի ի հանել Մովսէսի զորդիսն Իսրայէլի յԵգիպտոսէ։*

*զԱրամ. Արամ ամաց ԽԵ ծնաւ զԱմինադար. Ամինադար ամաց ԽԵ ծնանի զՆայասոն։ Էր Ամինադար սպարապետ զօրուն Յուդայի յորժամ Մօվսէս անցույց զորդիս Իսրայէլի ընդ ծովն Կարմիր։*

Դ. Բաղիշեցին այս հատորն, անտարակույս, չի գրել միայն վերևում նշված հեղինակների գործերի հիման վրա, նա իր ձեռքի տակ ունեցել է այլ աղբյուրներ ևս, օրինակ, Հոմերոսին, Սևերոս Անտիոքացուն, բազմաթիվ մարգարեների, առաքյալների և այլն, որոնց ասույթներով ու մըտքերով հեղինակը համեմել է իր աշխատությունը։ Բայց որովհետև սույն հատորում հաղորդած, ինչպես պատմական նյութը, այնպես էլ աղբյուրների մանրազնին ուսումնասիրությունը մեզ համար բանասիրական առաջնահերթ նշանակություն ու գիտական արժեք չի ներկայացնում, ուստի այդ ուղղությամբ կատարվելիք մեր աշխատանքները ոչ միայն ընդհատում ենք, այլև երկրորդ հատորը նպատակահարմար չգտանք հրատարակել, ուստի հրատարակության բնագրում կրճատեցինանք հատորի սկզբից և վերջից ընդարձակ հատվածներ բերելով։

Հրատարակության համար հիմք ընդունեցինք ժամանակագրության Բաքվի օրինակը, իսկ A (№ 7589) և Б (№ 4044) տարբերակների տարընթերցվածները դրեցինք տողատակ։

Ի վերջո կցանկանայինք նշել մի հանգամանք ևս. ժամանակագրության Բաքվի օրինակում, միևնույն ձեռացագրով, տարբեր տեղեկություններ, գրված են ձեռագրի հինգ էջերի ներքևի լուսանցքում, բայց այդ վկայությունների տեղը հատուկ նշանով, ինչպես սովորաբար լինում է, ցույց չի տրված։

Այդ հինգ հատվածները հրատարակության բնագրում պահեցինք, հետևելով A տարբերակի կոնտեքստին, մինչդեռ Б տարբերակում բացակայում է առաջին հատվածը (էջ 306), իսկ երրորդ (էջ 309) և չորրորդ (էջ 326) հատվածները կոնտեքստում գտնվում են տարբեր տեղերում քան A-ում, մնացածը (էջ 307 և 358) նույնն է, ինչ A-ն։

Դ. Բաղիշեցու ժամանակագրության երեք տարբերակների կոնտեքստում այս հատվածների տարբեր տեղեր գտնվելը մեզ ենթադրել է տալիս, որ դրանք բուն բնագրին, հետագայի, թերևս գրչի, ավելացումներ են։ Այսպիսի մի ավելացում էլ գտնում ենք Б տարբերակում (էջ 360, տողատակ)։ Մեր վերոհիշյալ ենթադրությունը կարող է և ճիշտ չլինել, այդ պատճառով նշված հատվածները հրատարակության բնագրերից դուրս չգցեցինք, այլ նշեցինք շեղագիր։

| | | | |
|---|---|---|---|
| ՋԼ (930) | Ադամ ՄԼ (230) ամաց ծնաւ զՍէթ, սորայ անդրանիկ՝ կային և ապա Աբէլ: | Ո 600 | Սեմ Ճ (100) ամաց ծնաւ զԱրփաքսաթ. սա մառանդեաց զոսկերս նախահօրն Ադամայ և Եւայի: Զսա յոյժ սիրէր հայր իւր՝ Նոյ: |
| ՋԺԲ (912) | Սէթ ՄԵ (205) ամաց ծնաւ. սա հրաման առ յԱստուծոյ ոչ առնել խնամութիւն ընդ ազգին Կայենի: | ՆԿԵ 465 | Արփաքսաթ ՃԼԵ (135) ամաց ծնաւ. սա ամփոփեաց զոսկ[եր]սն նախահօր ի Գողգոթայ, և զԵւային ի Բեթղեհէմ ի վիճակն իւրեանց: |
| ՋԵ (905) | Ենովս ՃՂ (190) ամաց ծնաւ. սա յուսացաւ կոչել զանուն տեառն Աստուծոյ: | ՃԻ 120 | Կայինայն Կ (60) ամաց ծնաւ. զսա Մովսէս ոչ յիշէ, այլ Ղուկաս աւետարանիչն, զի սա բազմացոյց զհետապաշտութիւն ի Քաղդեացիս. սա շինեաց զԽառան: |
| ՊԺ (810) | Կայնան ամաց ՃՀ (170) ծնաւ. սորա եղբայրքն և ազգն անձինք Մ (200) ելին ի լեառն Ահերմոն ճգնել կուսութեամբ: | ՆԿ 460 | Սաղա ՃԼ (130) ամաց ծնաւ. սորա միւս որդի Ցետկան: |
| ՊՂԵ (895) | Մաղաղիէլ ՃԿԵ (105) ամաց ծնաւ. սա կեցեալ մինչև ԽԸ (48) ամն Նոյի: | ՆԴ 404 | Էբեր ՃԼԴ (134) ամաց ծնաւ. սա այր բարի և աստուածապաշտ: |
| ՋԿԲ (902) | Յարեդ ՃԿԲ (162) ամաց ծնաւ, սա կեցեալ մինչև ՄՁ (280) ամն Նոյի. ի սորա Խ (40) ամն լցաւ Ռ (1000) ամն Ադամայ և եդին իւրեանց թագաւոր Ազորոս անուն: | ՅԽԳ 343 | Փաղեկ ՃԼԴ (134) ամաց ծնաւ. յաւուրս սորա բազմացան մարդիկ և զարձեալ բաժանեցին զերկիր ի վերա միմեանց հարստահարելով: |
| ՅԿԵ (305) | Ենովք ՃԿԵ (165) ամաց ծնաւ. զսա վերափոխեաց Աստուած ի դրախտն և ի յայսմ ամի սպանաւ Կայէն ի միուս Ղամէքայ: | ՅԼԹ 339 | Ռագաւ ՃԼԲ (132) ամաց ծնաւ. ի սկիզբն ծննդեայն սորա սկսան շինել զաշտարակն մինչև ի Խ (40) ամն, զոր փլոյց Տէր: |
| ՋՁԹ (989) | Մաթուսաղայ ՃՁԷ (187) ամաց. ոմանք ասեն առ Ջրոյն մեծի մեռաւ և այլոց՝ թէ յառաջ մեռաւ: | ՅԼ 330 | Սերուք ՃԼ (130) ամաց ծնաւ: |
| ՉՀԳ (773) | Ղամէք ՃՁԸ (188) ամաց ծնաւ. սա մեռաւ յառաջ քան զհայրն ԺԹ (19) ամօք: | ՄԱ 201 | Նաքովր ՀԹ (79) ամաց ծնաւ. յաւուրս սորա լցաւ երկիր անօրէնութեամբ և ազգն Քամայ առին զՊաղեստին զրկանօք: |
| ՋԾ (950) | Նոյ Շ (500) ամաց հրաման առ յԱստուծոյ առնուլ կին Նոյեմզարայ անուն և ծնաւ երիս որդիս՝ զՍեմ, զՔամ և զՅաբեթ ի Ճ (100) ամն: Եւ յորժամ եղև Ո (600) ամաց կատարեաց զգործ տապանին: ՅԱդամայ մինչև ցայժմ ՍՄԽԲ (2242) ամ: Եւ ի Ո (600) ամին Նոյի եկն ջրհեղեղն և եմուտ Նոյ ի տապանն և որդիքն իւր հանդերձ կանամբք: Ամ մի բովանդակ իար ամսոյ Իէ (27) մտին և ի նոյնքանիսն ելին: | ՄԵ 205 | Թարա Հ (70) ամաց ծնաւ. յաւուրս սորա եղեն ամազունք, այսինքն կանանց իշխանութիւն, զի կին մի Ռացեալ թագընկալ ի Թորգոմայ: |
| | | ՃՀԵ 175 | Աբրահամ Ճ (100) ամաց ծնաւ զԻսահակ: |

Այս Գ (3) էջս են Գ (3) ազգ՝ ցԱբրահամ և ցՆինոս և ցը մերն յետ Նինոսի մանուկ տիօք, զոր Քսիւսթրայ, Սեմա, Զրուան, Քաբեղև ԻԵ (25) լեզու ազգն Սեմայ:

| | | |
|---|---|---|
| Քամ, զսորա որդին Քանան անիծեաց Նոյ, ուստի Քանանացիք։ | | Ցաւէթ։ Զմեր ազգի որպիսութիւն և զգաջութիւն մի ըստ միոջէ գրեալ եմք։ |
| Քուշ, յորմէ քուշացիք, որք են Հապաշք։ | | Գամեր |
| Մեստրայիմ, սոցանէ Եգիպտացիք։ | | Թիրաս |
| Ներրովթ՝ Եթովպացիք. էր սա շինեաց զԲաբելոն և թագաւորեաց անդ։ | | Թորգոմ |
| Բար. սա որդի Ներրովթայ, որ էր Բէլ և Նոոնոս։ | | Հայկ |
| Աներիս | | Արմենակ |
| Արբէլ | | Արմայիս |
| Քայաղ | | Ամասիայ |
| Արբէլ միւս | | Գեղամ |
| Նինոս ծնաւ զՆինուաս. սա պարըսպեաց զՆինուէ և նստաւ։ | | Հարմայ |
| Շամիրամ կինն. սա սպան զԱրայն Գեղեցիկ։ | | Արամ ծնաւ զԱրայն Գեղեցիկ, |

Սեմ, Քամ, Ցաբէթ. ԱԺ (11)-ան դոլով վերուստ ի վայր մինչև Արամ, զի Արայն Գեղեցիկ, որդի Արամայ ԲԺ (12)-ան եր[կ]րորդէ սպան Շամիրամ, բայց ոմանք այլ և այլ անուն տան սոցայ՝ Նոյի մա, Տիտան, Ցաբեթի, Ցապետոսթէ։ Ցետ փլանելոյն աշտարակին ԼԲ (32) Քամայ, ԺԵ (15) Ցաբեթի, որ լինի ՀԲ (72)։

XIII

## ԴԱՒԹԻ ԲԱՆԱՍԻՐԻ ԲԱՂԻՇԵՑՈՅ ԾԱՂԿԱՔԱՂ ԱՐԱՐԵԱԼ Ի ԲԱԶՈՒՄ ՊԱՏՄԱԳՐԱՑ [ԶԱԶ]ԳՆ ՅԱԲԵԹԻ ԵՒ ՍՈՒՂ ԻՆՉ ԶՍԵՄ[ԱՅ] ԵՒ ԶՔԱՄԱՅ ՐՍՏՈՅԳ ԳՏԱԿԱՒ ԲԱԶՈՒՄ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ԸՆՏՐԵԼՈՎ ԶԼԱՒՆ ԵՒ ԶՊԻՏԱՆԻՆ ԱՆՍԽԱԼԱՊԷՍ ՇՆՈՐՀՕՔ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ ձշ

*Յետ երկնասահանաց հեղեղաց և անդնդապատոյտ ջրահեղձ լինելոյ շնչականաց, յետ ակամայ նաւարկութեան[1] Նոյի Ի Է (27) իար ամսոյ և ի նոյնքանիսն ելանելոյ հանդերձ եռեակ սեռիւք ի լաստէն ջրատղող ի Մասիք Արարատեայ։ Եւ յետ կրկին օրհնութեան աճել ծնելութեամբ և օրէնսդրութեան ոչ հեղուլ դարիւնն բանականի և ոչ ուտել զմիս արեամբ շնչով հանդերձ և յետ կար երդման ոչ ողողել դարձեալ ամենայն երկրի և տալոյ զմարգարէութիւն, զքահանայութիւն և զթագաւորութիւն Նոյի, զոր կորոյս Ադամ։ Եւ նոյն քահանայութեամբն պատարագեաց Աստուծոյ ի սուրբ կենդանեաց և մարգարէութեամբն օրհնեաց զերիս որդիս ըստ իւրաքանչիւր պատուոյ յայտնելով նոցա զապագայսն։ Եւ թագաւորութեամբն բաժանեաց զաշխարհս յերիս մասունս՝ յԱսիայ, յԵւրոպիայ և ի Լիբիայ։ Եւ բաժանեաց զնոսա երից որդոց. զԱսիա Սեմայ ետ, սկսեալ ի Պարսկաստանէ, զայ ընդ մէջ Ասորեստանի և երթայ մինչ ի Պաղեստինէ թափանց գնացմամբ ծիր առնու Ցռինու Կուրաբայ, որ է Գեհոն։ ԶԼիբիայ ետ Քամայ, որ սկսանի ի Գեհոնէ, ընչափ հոսանէ ընդ ներքս հարաւ կոյս մինչ ի Գադիրոն։ ԶԵւրոպիայ Յաբեթի շնորհեալ, որ սկսանի յականցն Տիգրիս գետոյն, որ բաժանէ ընդ Պարս և ընդ Մաղէ մինչև յարևմուտս առնու ի հիւսիսոյ և ի հարաւոյ մասնաւորաբար։*

*Յաբեթ ծնանի զԳամեր։*
*Գամեր ծնանի զԹիրաս։*
*Թիրաս ծնանի զԹորգոմ։*
*Թորգոմ ծնանի զՀայկն։*
*Հայկն ծնանի զԱրմենակ։*

1 A *Բաղրշեցո*, Б *Բաղիշեցւոյ*։ 3 A *ըստուգ, ընդրելով*։ 4 A *պիտանին*, Б *մերոյ*։ 5 A *անդնգապտոյտ*, Б *անդընդապտոյտոյտն*։ 8 A *Արարատեա*, Б *աւրհնութեան*։ 9 A *արիւն*։ 10 *միս*։ 11 A *ողողել*։ 12 A *և զքահանայութիւն*։ 13—14 A *պատարագեաց Աստուծոյ ի սուրբ կենդանեաց և մարգարէութեամբն* չիք։ 14 A *որդիսն*։ 15 Б *պատւոյ*։ 16 Б *թագաւորութեամբ*։ 17 A *Ասիայ Եւրոպիայ Լիբիայ*։ 18 A *որդոց իւրոց*։ 20 A *Ցռինիւ, որ* չիք։ 21 Б *հատանէ* փխ. *հոսանէ*, A *ի հարաւ*։ 22 Б *Գադրոն*, A *ետ Յաբեթի*։ 23 A *յականց*։

Արմենակ ծնանի զԱրամյիս։
Արամյիս ծնանի զԱմասիայ։
Ամասիայ ծնանի զԳեղամ։
Գեղամ ծնանի զՀարմայ։
Հարմայ ծնանի զԱրամ։
Արամ ծնանի զԱրայն Գեղեցիկ[2]։
Արայ Գեղեցիկ ծնաւ զԱրայեանն Արայ։
Արայեանն Արայ ծնաւ ըզՍօս, որ է Անուշաւան։

Այլ մեք դարձցուք ի վեր Յաբեթ , ուստի ազգաբանեցաք և սկսցուք համա || ռօտաբար զքաչութիւն և զտիրելն հայրենեաց, ԺԶԱ թէ որպէս կամ զիարդ տիրեցին աշխարհի։

Յաբեթ ծնանի բազում որդիք, նախ զԳամեր, ուստի աշխարհ կալուածո նորա կոչեցան Գամիրք, զՄագոգ, ուստի Կեղտք և Գաղատացիք, զՄադայ, ուստի Մարք, զՅաւան և ի նմանէ Հելլենք և Յոյնք. իսկ որդիք Յաւանայ Եղիշա, յորմէ Սիկիլացիք և Աթենացիք։ Կիտիիմ, յորմէ Հռովմայեցիք. Թոբէլ որդի Յաբեթի, յորմէ Թետաղք. Մոսոք, յորմէ Լիւրիկեցիք. սոքա ամենեքեան որդիք Յաբեթի ազգօքն իւրեանց։

Թիրաս որդի Գամերայ, ի նմանէ Թրակացիք, սա ծնանի Դ (4) որդիս՝ զԱսքանազ, յորմէ Սարմատք, Ներիփատ, յորմէ Սօրամատք, զԹորգոմ, որ ժառանգեաց զկալուածս երէց եղբօր իւրոյ Ազքանազայ, յորմէ մեք կոչիմք Հայեաստանեայքս և նայ ժառանգեաց զՍարմատիայ, ՙորրորդ զՔիտիմ և ի նմանէ Մակեդոնացիք, և ի սոցանէ մեկնեցան կղզիք և ազգ հնդետասան. ապայ ի բաժանել ազգաց, յաղգս եզև ԾԱ (51) ազգ[3]։

Թորգոմ որդի Թիրասայ, ուստի Թորգոմեանս։ Հայկ որդի Թորգոմա սերունդ ազգիս մերոյ։ Եւ սա մի էր ի հսկայիցն քաջագանգուրն և խայտակն[4], միաբանեալ ի չար շինուածս ամբարտակին զԽ (40) ամ մինչև ի շնչել հողմոյ ուժգին կործանելով զբուրքն ահագին, բաժանելով զմի լեզուն ՀԲ (72)։ Զայն տեսեալ Բելայ, որ է Նեբրովթ որդի Մեծրայիմայ, որդոյ Քուշայ, որդոյ Քամայ[5], որ ի Նոյէ, ըմբոստացեալ, մեծամտեալ, խորհէր միապետել ի վերայ այլոց ազգաց և սատուածս համարէր զինքն։ Բայց Հայկայ ոչ հնազանդեալ նմա և առեալ զորդի իւր զԱրամենակ, զոր ծնաւ ի Բաբելոն, և զորդի Արամանեկայ զԿադմոս հանդերձ այլ ուստերօք և դստերաւք և որդոց որդովք և ընդոծնօք, եկեւո յարեւոյ ի նա իբրև արք ԳՃ (300) և ամենայն ախիւ գայ ի Յայրարադ ի լիառնոտին միում ի դաշտավայրի։ Շինէ անդ տուն

1 А զԱրամայիս։ 2 А Արամայիս։ 7 А զԱրայեան։ 8 А Արայեան, զՍօս, Б որ և։ 9 А յազգն Յաբեթի, ազգաբանեցայք։ 10 А զքաջութիւն, հայրենեացն իւրեանց։ 13 А կալուածոյ։ 14 А ի չիք։ 15 А Յունք, Եղիշայ։ 16 А Կիտիմ, Հռոմայեցիք։ 17 А սոքայ։ 19 А յորմէ փխ. ի նմանէ, սայ։ 20 Б Ներիփատ։ 21 А յորմէ փխ. որ, երէց որդոյ, 22 А կոչիմք մեք Հայաստանեասս։ 23 Б զԱրամատեայ, А զՄակեդոնացիք։ 27 АБ Թորգոմայ, А սայ։ 28 АБ աշտարակին փխ. ամբարտակին։ 31 А Մեծրաիմայ։ 33 Б մամարէր։ 34 А նմայ, զԱրամանեակ։ 35 А Բաբիլօն։ 36 А դստերօք, որզօվք, ընդոծնովք, եկեւոյ։ 37 Б յարեւո, А նայ, А Յարարատ։ 38 Б լեառնոտին։

ընակութեանն կալուածոյ և տա թոռին իւրոյ Կադմոսի և ինքն առեալ զԱրամենակ որդի իւր խաղայ յարևմուտս հիւսիսի և գնա առնու անդ և կոչէ զբարձրաւանդակ դաշտն Հարք։ Շինէ գիւղ մի անդ և անուանէ Հայկաշէն, այսինքն աստ են բնակեալ որդին Թորգոմայ[6], Հայկն, որ անուանի այժմ Մալանծկերտ։ Բայց յառաջ ‖ քան զգալ Հայկայ ցրուեալքն յաշտարակէն խառնիճաղանճքն ԺԶԲ աստ անդ ղետեղեալք էին փանաքիք և զնոսայ հնազանդեալ Հայկայ ինքն դոլով գլուխ ամենեցուն սոցայ։ Բայց Ներբովթ, որ է Բէլ, լուեալ զամենայն և առաքեաց զորդի իւր զԲար[8] առ Հայկն ասելով. «Միայն հնազանդ լեր բանիւ և նիստ ի տան քում պատուով»։ Եւ ոչ լուաւ նմայ քաջազանդուրն, այլ մեծաւ անարդանաւք յետս դարձոյց զառաքեալն։ Եւ Բէլ մոլնչեաց իբրև գչար դազան և ժողովեաց զամենայն հնազանդեալ զօրս իւր իբրև զաւազ և եկեալ հասեալ յերկիրն Արարադեայ մերձ ի տունն Կադմեայ. և փախստական լինի Կադմոս առ Հայկ, քաջ ընթացս առաքէ առաջի իւր առ հաւն իւր. «Գիտեայ, ասէ, զի Բէլ եկեալ հասեալ է յաւերժիւք քաջօք և երկայնադէզ հասակաւք սկայիւք մրցօղօք»։ Եւ Հայկ աճապարեալ հաւաքէ զորդիս իւր և զթոռունս յոյժ, նուաղունս յորդորկլով զնոսա և չու արարեալ հասանէ ի ձորադաշտակի միոջ, ուր Բէլ նստէր հանդերձ սկայիւք, վառեալք յաղեղն և ի սուսեր և ի տէգ նիզակին։ Եւ Հայկն և որդիքն և թոռունք եղեն Գ (3) դունդ, գնացեալք ընդառաջ. և խայտակն լի քարշէ պինդ զլայնալիճ աղեղն և զերեք թևեան նետ դիպեցուցեալ երկաթագամ տախտակի կրծիցն Ներբովթայ թափանց անց ընդ թիկունսն յայնկոյս, յերկիր հարըստէր զմսադէզն սատակմամբ և զօրքն ցիր և ցան ի փախուստ դարձան։ Եւ զտեղի պատերազմին կոչեաց Հայուձոր, և զտեղի սատակման Բէլայ՝ Գերեզման մինչև ցայսաւր ժամանակի։ Բայց զդիակն Բէլայ բերեալ եդ ի Հարք ի տեսիլ կանանց և որդոց իւրոց։ Իսկ աշխարհս մեր կոչի յանուն նախնոյն մերոյ Հայկայ՝ Հայք[9]։ Սորա կային երկու որդիք այլ, բաց յԱրամենակայ, գլխաւորք Խոռ և Մանաւազ, ուստի Խոռխոռունիք, որ է Արճէշ և Բերկրի, և Մանաւազեանքն, որ այժմ կոչի Մալածկերտ։ Եւ եղեալ որդի Մանաւազայ Բաղ անուն, ուստի Բզնունիք յեզր ծովակին[10]։

Եւ կեցեալ Հայկ ամս շատ մեռանի ի Հարք, թողեալ զամենայն ինչ Արամանեկայ անդրանկի իւրոյ և զեղբարսն յիշխանութիւն նմա։ Արամենակ թողեալ զեղբարս զԽոռ և զՄանաւազ տալով զերկիրն և ին ‖ քն հանդերձ ախիւն և որդովք երթայ ԺԶԳ յարևելս հիւսիսի տեղի մի բարետեսակ պարսպեալ լերամբ և ընդ

1 А ընակութեան, Б տան փխ. տա։ 2 А զԱբեմենակ զորդի, А գկայ։ 3 А ըզբարձաւանդակ։ 7 А հնազանդեցուցեալ։ 10—11 А տուն քոյ։ 11 В պատվով, Б նմա։ 12 А մոընչեաց։ 14—15 А տուն Կադմոսի։ 15 Б և չիք, А փախըստական։ 16 А դիտեաց։ 17 Б հասել, А քաչիւք։ 18 А մըրցաւզօք, թոռունսն։ 20 А սկայիւք իւրովք վառեալ։ 21 А Հայկ։ 25 Б յայնկույս։ 26 А զօրք։ 27 Б Բէլա։ 28 А ցայսօր, զի ակն փխ. զդիակն։ 30 А անուն, Հայկայ չիք։ 31 А այլ չիք, յԱրամենակա։ 32 А Խոռխոռունիք, Б Մանաւազա։ 35 А կացեալ։ 36 А որդոյ իւրում անդրանկի, զեղբայրս։ 37 А նմայ, զեղբայրսն։ 38 Б աչախիւ, А որդովք։ 39 А պարըսպեալ, ընդ չիք։

ստորոտով լերին դետո կարկաջասան ի յարեւմտից ընդ մէջ՝ անցանելով և զդաշտն արևելից իմն գոգցես երկայնութեամբ ընդ մէջ դէպ յարեգակն պտրզեալ. յայսմ խորութեան դաշտի բնակեալ Արամենակայ, շինէ զմասն ինչ հիւսիսոյ դաշտին յոտն լերին ի նոյն կողմանէ և անուանէ զլեառն սպիտակ Արագած և զկալուածն՝ ոտն Արագածոյ. և կեցեալ ամս շատ մեռանի հաւատալով Արմախսայ որդոյ։

Արմայիս որդի Արտմանեկայ ի նմին իսկ դաշտի բլուր մի, առ եզերբ գետոյն Երասխայ, շինէ քաղաք և տուն բնակութեան իւրոյ և անուանէ զնա Արմաւիր յանուն իւր, և զանուն գետոյն յանուն Թոռին իւրոյ Երաստայ՝ Երասխ[11]։ Եւ զորդին իւր զՇարա զյոլովածին և զշատակեր ամենայն ախիւ իւրով առաքէ ի դաշտ մի մաւտեոր, արգաւանդ ի Թիկունս հիւսիսոյ Արագածու, ուր ջուրք բազում գնան, և զգաւառն անուանեալ Շիրակ։ Այս Արմայիս ծնաւ զԱմասիայ, կեցեալ շատ ամս մեռաւ[12]։

Ամասիայ բնակէ յԱրմաւիր, յետ ամաց ծնանի զԳեղամ և յետոյ զՓառոխ արի և զՑոլակ։ Եւ յետ ծնանելոյն անցանէ զգետովն Երասխայ մերձ ի լեառնն հարաւոյ և շինէ անդ առ խարշիւք լեառնն ոտին Բ (2) տուն՝ մինն յարևելս ստորոտոյ լերանն մօտ յակն աղբերն և միւսն յարևմուտս կոյս նորին տան, բացագոյն աւուր միոյ ճանապարհ։ Եւ ետ ի ժառանգութիւն Բ (2) որդոց իւրոց արւոյն Փարոխի և կայտոյին Ցոլակայ, որ անուանին՝ Փառախոտ և Ցոլակերտ, բայց զլեառն յիւր անուն կոչէ Մասիք և գայ յԱրմաւիր և կեցեալ ամս շատ մեռաւ[13]։

Գեղամ ծնաւ զՀարմա յԱրմաւիր, եթող զնա անդ հանդերձ որդովք և ինքն զմիւս լերամբն յարեելեայ հիւսիսոյ յեզր ծովակի միոյ շինէ տուն, կոչէ զ[լ]եառն Գեղ և զշէնսն Գեղաքունի, որով կոչի և ծովն։ Աստ ծնաւ զորդի իւր զՍիսաք բարեգեղ և գեղեցկաղեղն. սմայ տա ժառանգութիւն ի ծովէն ընդ արևելս մինչ ցդաշտ մի, որ դետն Երա[ս]խայ հատեալ զքարանձաւս, զոր բազումք Քարավազս անուանեն, աստ բնակեալ Սիսակ լնու զկալուածս իւր, ուստի կոչին Սիւնիք։ Բայց ինք Գեղամ դառնայ անդրէն ի դաշտ || անդր և առ ոտամբ նորին լերինն շինէ մեծ ճ2Գ դաստակերտ մի և դնէ զիւր անունն Գեղամի. յետոյ ի Գառնկէ Թոռէ նորա կոչեցաւ Գառնի, և առ Վաղարշակաւ կոչեցաւ Վարաժնունի, վասն վարժ անուան, որ էր փոյթ յորս եղջերաց և այծեմանց. և հրամայէ որդոյ իւրոյ Հարմայի յԱրմաւիր բնակել և կացեալ ամս բազում մեռաւ[14]։ Իսկ Հարմայ կեցեալ ամս ծնանի զԱրամ և մեռաւ։ Արամ բազում գործ քաջութեան պատմի. լաւ

2 A իմն չիք։ 3 A արեգակն։ 4 A Արամանեկայ։ 5 A զլխառն։ 8 A Արմախս, Արամենեկա։ 10 A անունն։ 11 A անուն Թոռին, Երազխայ Երազխ, Б զՇարայ զհոլովածին։ 12 Б աղխիւ։ 13 A մօտաւոր։ 14 A բազումք, զաւառն։ 15 AБ մեռանի։ 18 A Երազխայ, լեառն։ 19 Б խորշիւք ի լեառնն, A խորշիւք լերին, Б ստորոտ։ 20 Б յարեմուտ, A կուս։ 23 A զլխառն իւր։ 24 A Արմաւիր, AБ մեռանի։ 25 A զՀամրայ, զնայ։ 26 A լերամբ արեելայ, Б հիսիսոյ։ 27 A Գեղարքունի։ 29 A տայ։ 30 A Երախս։ 32 Б ինքն։ 34 A մի չիք, Б իւր, A անունն։ 35 Б Թոռնէ։ 36 A եղջերուաց։ 37 Б որդւոյ, A բնակիլ։ 38 Б կեցեալ, A բազում ամս, մեռանի, կացեալ։ 39 A քաջութեանս գործ։

համարէր զմեռանելն իւր, քան թէ քայլ մի ոտին ի սահմանաց իւրոց կոխել օտարածնաց[15]. զի սա անուանեաց Առաջին Հայք, զԿեսարիայ իւր վիճակով, և Երկրորդ Հայք՝ ի Պոնտոսէ մինչև ի Ծոփաց գաւառն և Երրորդ՝ անտի մինչև ի Նփրկերտ, Չորրորդ՝ անտի մինչև ցԱղձնիս։ Եւ զիւր սեփական աշխարհն կոչէ Մեծ Հայք, զոր յետ բազում ժամանակաց Մօրիկ կայսրն Հոռոմայեցոց փոփոխեաց զանուանս նոցա, զայս վասն այն ասացի, զի յորժամ հանդիպեսցիս այլ և այլ անուանց ոչ մեղադրեսցես[16]։

Եւ այս Արամս փոքր ինչ յառաջ է քան զՆինոս։ Եւ սայ սպանանէ զՆիւքարն՝ զգլուխն Մեդացոց, յեղեր սահմանաց Հայոց, որ հանապազ քուշանաբար զինու սլմրակակոխ արարեալ զՀայս և տիրեալ ամս Բ (2), զոր քաջապէս ձերբակալ արար զՆուքար ածէ յԱրմաւիր ցից երկաթի վարեալ ընդ ճակատ յորմ պարսպին վարսել հրամայէ ի տեսիլ անցաւորաց և զաշխարհ նորա մինչև Նինուէի և Ասորեստանի տիրէ։ Մինչև ի Նինոս թագաւոր, որ քէն ունէր միշտ ի մտի վասն սպանման Բէլայ հաւույն իւրոյ և Նիւքարա, այլ ոչ իշխէր ընդդիմանալ նմա և մեծ համարձակութիւն տայ նմա վարսակալ ածել մարգարտէ և երկրորդ նորա կոչեալ[17]։ Նաղա նոյն զաւրութեամբ զկողմամբն Ասորեստանի և գտանէ զոմն ապականիչ երկրին իւրոյ Բարշամ անուն, յազգէ հսկայից անապատ արարեալ զերկիրս ի գիմի հարեալ ընդ մէջ Կորդաց ի դաշտն Ասորեստանի սպանանէ զնա և դաշտն ի ծառայութիւն կացուցանէր ամս բազումս։

Եւ գնացեալ յարևմուտս հիւսի[սի] Պայեապիս Տիտանեան ումն բոնացեալ ունէր զԿապադովկիայ, զՏրապիզոն մինչև ի ծովն Ովկիանոս. և Արամ ի դիմի հարաւ նմա հալածէ ի կղզի ինչ Ասիական և տա զտեղին Մաշակայ ազգականին իւրոյ և բիւր մի ի զօրաց ‖ իւրոց յօգնականութիւն նմա և հրամայէ աշխարհին ճՁԵ ուսանել զլեզու հայկական և մինչև ցայսաւր ժամանակի անուանեն զկրլիմն զայն Պրոտոն Արմենան, այսինքն Առաջին Հայք, որպէս յառաջն ասացաք[18]։ Եւ սա կեցեալ այսպիսի քաջութեամբ ծնաւ զԱրայն Գեղեցիկ և երկրորդէր Նինոսի թագաւորութիւն։

Արայն Գեղեցիկ տիրէ հայրենեաց իւրոց կոչելով զերկիրն յանուն իւր Այրարատ։ Եւ սա պատուի ի Նինոսէ որպէս և հայրն իւր և յետ փախըստական լինելոյ Նինոսի ի կնոջէն իւրմէ ի տուայտէն Շամիրամայ ի Կրետէս կղզին և անդ մեռեալ, որպէս ասեն։ Այնուհետև կաթոտ Շամիրամ կս առաւել լրբեալ ի շամշեալ խորհուրդն իւր և տեսալ էր զԱրայն Գեղեցիկ, որ երթս և եկս առնէր ի ժամանակս Նինոսի տափայր հանապազ ընդդէմ

1 А բզմեռանիլն։ 2 Б օտարանաց։ 3 А զԿեսարիեայ, վիճակօքն, Պոնտոսէ։ 4 А անտի երրորդ մինչ։ 5 А սեպհական աշխարհ։ 6 Б հետ փխ. յետ, Մօրիկայ, А Հռոմայեցւոց։ 9 А Արամ, Б սա։ 10 А ըսպանանէ, գլուխ, Б Մեգացւոց յեզր։ 11 А քուշանաբար սմբակակոխ առնէր։ 12 А զՆիւքարն։ 13 Б զարսպի։ 15 А մինչ, թագաւորն։ 16 Б Բէլա։ 17 А այլ չիք, նմայ։ 18 Б աա, А նմայ։ 19 А խաղայ, զօրութեամբ։ 21 А զերկիրն։ 22 А զնայ, Б զդաշտն։ 23 Б կացուցանել, բազում։ 24 А Պայապիս։ 25 А զԿապադովկեայ, մինչ։ 26 А նմայ։ 27 А տայ։ 28 А օգնականութիւն։ 31 А ասացայք։ 34 А իւր անուն Արարատ, հայր։ 35 Б փախստական։ 36 Б շուայտէն փխ. տուայտէն։ 37 А կաթոտն։ 38 А երթ և եկս։

նորա։ Եւ յորժամ փախեաւ Նինոս ի կնոջէն իւրմէ եւ ի հնազանդութենէն Շամիրամայ. և Շամիրամ յար առաքէր առ նա դի կամ եկեալ առցէ զնա և տիրէ Նինուէի և ամենայն Ասորեստանի և թէ ոչ, գոնէ միայն զչար կամս տռփանացն կատարես[ց]է և երթիցէ պատուով, որում ոչ հաւանեալ Արայի ընաւ։ Եւ եկեալ կաթոտն Շամիրամ ամենայն ուժով ի վերա Արայի յԱյրարատ և պատերազմեցաւ և սպանաւ Արայն Գեղեցիկ և տիրեաց ամենայնի Շամիրամ[19]։ Սա շինեաց զՎան քաղաք, զի ամառնային եղանակն անդ կացցէ, վասն զովութեան և զայլ երեք եղանակն ի Նինուէ[20]։

Եւ որդի մի էր Արայի ԲԺ (12)-ան ամաց, և Շամիրամ վասն տռփանաց հօր նորա կոչէ զնա յանուն հօր նորա Արայ և տա զպատիւ ի ձեռս նորա։ Եւ ի մեռանել Շամիրամայ ի Զարմեսեայ, որ է Նինուասս յորդոյ իւրոյ։ Եւ Արայեանն Արա մեռաւ ի պատերազմին և եթող զաւակ ամենահարուստ յիր և ի բան զԱնուշաւան։ Անուշաւան, որ և Սօս. սա շատ արհամարհանս կրեալ ի Նինուասէ տուայտի ի դրան արքունի և օգնեալ ի բարեկամաց շտհի զմասն ինչ աշխարհիս յետո, ապա և զբոլորս և յետ ամաց բազմաց նուաճելոյ մեռանի[21]։

Եւ աստ բարձեալ լինի պայազատութիւն սոցա ոչ ըստ ազգի, այլ ըստ յառաջադիմութեան արանց զմիմեամբք ելանելով հարըստահարութեամբ տիրելով Թորգոմեանս տոհմի. Նախ Պարետ, Արբոկ, Յաւան, Փառնաւոս, Սուր, առ սովաւ Յեսու, որդի Նաւեա, սատակեաց զՔանանացիս, և ոմանք ի նախարարացն Քանանացոց փախուցեալ եկին ի Հայս ‖ ճ22 և ստուգեալ անտի գոլ զազգն Գնթունեաց, որ առյապայ եղեն զգեցուցանօղք ազգին Արշակունեաց։ Հաւանակ, Վաշտակ, Հայկակ. սա ամբոխ արարեալ ի վերա Բելոքոսի Նինուէի թագաւորի և մեռանի ի նմանէ։ Ամպակ, Առնակ, Շուարշ, Նորայր, Վստասկար, Գոռակ, Հրատն, Ընձակ, Գղակ, Հօրոյ, Զարմայր, Պերճ, սա յաւուրս Գաւթի թագաւորի, Արբուն, Բազուկ, Հոյ, Յուսակ, Կայպակ[22]։

Յետ սոցա կրկին դարձաւ իշխանութիւն ի Հայկազունսն, նշանաւորաբար որդի ի հօրէ պայազատելով ոչ միայն իշխանաց իշխան, այլ ճոխաբար թագաւոր նոր։

Պարոյր Սկաորդին ոչ միայն իշխան այլև տրդ թագաւոր, զոր և զներրող գովեստի սորա ուսցիս ի Մովսէս Քերթողէ[23], զի և զայս ծաղկաքաղ եմ արարեալ ըստ ախորժակաց իմոց։ Այս Պարոյրս յիշխանութեան աւուրս օգնական լեալ Վարբակայ Մարի Մեդացոյ բարձին զթագաւորութիւնն ի Սարդանապալլայ թագաւորի Ասորեստանի[24], որ նստէր ի Նինուէ, որ կոչի Աթուրիայ

2 A հնազանդութենէ, յար չիք։ 3 A տիրեսցէ։ 4 A տռփանաց նորա։ 5 A պատուօվ։ 8 A սայ, Б զամառնային։ 9 Б Գ փխ. երեք։ 12 A անուն։ 13 A տայ, մեռանիլ։ 14 A Արայեան Արայ։ 17 Б բարէկամաց։ 18 Б եստոյ։ 23 Б Փառնօոս, Նաւեայ։ 24 Б Քանանացւոց։ 26 A Գթունեաց, ըզգեցուցանօղք։ 28 A Բելեքոսի։ 29 Б Շաւարշ։ 30 Б Հօրո. A սայ, Б յաւուր, թագաւորի չիք։ 31 Б Արբաւն, A Կայկապ։ 32 Б Հայկազանսն։ 33 Б իշխանաց չիք։ 36 Б ներրոզ, A սորայ։ 37 A սա փխ. զայս։ 38 A լիեալ։ 39 Б Մեդացւոյ, զթագաւորութիւն։ 40 Б Նուէ, A Աթուրայ։

և Սելևկիա և այժմ Մօսըլ։ Եւ յորժամ Վարրակէս Մար տիրեաց իսկ և իսկ Մարաց և Ասորեստանի զԲելոքսս թագաւորեցոյց ի Բաբելոն և զՊարոյր թագաւորեցոյց Հայեաստանեաց։ Առ այս Պարոյրս եկին որդիքն Սենեքարիմայ Սանասար և Ադրամելէք յետ սպանելոյ հօրն իւրեանց առաջի կռոց փախուցեալք յեղբօրէն յԱսորդանայ։ Եւ Պարոյր պատուեաց զնոսա, որ յետոյ ի ժամանակս Արշակունեաց անուանեցան Արծրունիք և Գնունիք[26]։ Արծրունիք, որք զարծուիս բարձեալ առաջի Արշակունեաց և բնակութիւն ի Սասուն գաւառի, և Գնունիք այսինքն, տակառապետ, որք զանոյշ գինի մատուցանէին առաջի թագաւորին, և բնակութիւն նոցա յԱմուկ բերդի[26]։ Այլ Պարոյր թագաւոր կացեալ ամս բազումս մեռանի։

Հրաչեայ որդի նորա առնու զթագաւորութիւնն։ Հրաչեայ կոչի սա, վասն կարմրայտ և բոցատիպ դոլոյն. առ սովաւ յիշէ գիրն Երեմիայի, թէ հրաման տուր ազգին հիւսիսոյ Ասքանազեան գնդին[27], այսինքն Հրաչէի գալ ընդ Նաբուգոդոնոսորա ի վերա Երուսաղէմի ի գերութիւն նոցա ե սա խնդրեաց զմի ի գերելոց Շամբատ անուն յազգէ Յուդայ և ետ, որ էր եղբայր Յովաքաղու և որդի Յօվսիայ թագաւորի։ Եւ բերեալ ի Հայս և պատուով պահեաց, զի թագաւորազնին ի թոռանց Դաւթի և Արքահամու է ի Սառայէ և անվանեցան Բագրատունիք[28] և բնակութիւն նոցա ի Աղթամար, զի ասեն թէ Աղթամարոյ կաթողիկոսքն ի նոցանէ են։

Բայց կարի յոյժ զարմանամ հիացմամբ ընդ միջոց նոցա, զի բազում ամք են ի տիրելոյն Վարրակայ և Դ (4) թագաւորք այլ յետ նորա տիրեցին Ասորեստանի մինչ ի Սենեքարիմ, որ որդիք նորա եկին առ Պարոյր և աստի յառաջ յոլով ամք են մինչ ի Նաբուգոդոնոսոր, որ յիշէ ի ժամանակս Հրաչէի որդոյ Պարուրա, այլ թէ գրիչն սխալեալ կամ յանուսումն բարուց, կամ շատ ամ կացին Պարոյր և Հրաչէ։

‖ Այլ կամիմ ագիւսակով յայտնել զՄարաց և զՀայոց թագաւորութիւն ե Թալանց անցանել երագութեամբ։ ճՁԷ

| Մարաց առաջին թագաւորն | Հայոց առաջին թագաւորն |
|---|---|
| Վարրակէս Մար | Պարոյր Հսկայորդին |
| Մաւդակիս | Հրաչեայ |
| Առտիկիս | Փառնուաս |
| Դէովկիս | Պաճոյճ |
| Փռաւորտիս | Կոռնակ |
| | Փաւոս |

2 A զԲելիքոս։ 3 A Բաբիլօն, Պարուր։ 4 Б որդիք։ 5 A ըսպանանելոյ, կռոցն։ 6 АБ զնոսայ, A այլ փխ. որ յետոյ։ 8 Б արծուիս։ 9—10 A տկառապետ չիք։ 10 A զանուշ։ 11 A սոցայ։ 12 Б բազում։ 13 A զթագաւորութիւն։ 14 A սա չիք։ 16 A Նաբուգոդոնոսորայ։ 18 Б Յուդա։ 18–22 տողը Б որ էր եղբայր... ի նոցանէ են չիք։ 23 A սոցայ։ 24 Б Վա[ր]րակայ։ 25 A մինչև։ 27 A մինչև։ 27—28 Б որդւոյ Պարորոյ։ 28 A սխալեալ է, անյուսումն։ 30 A ագիւսակօվ։ 33 A Պարուր սկաորդին։ 34 A Մօտակիս։ 36 A Գէովկիս, Պաճուճ։ 37 A Փռաւորդիս։

Կուաք
Աժդահակ

Այս Աժդահակ, որ թարգմանի վիշապ, սա սպան զԲաղդասար, զորդի Նաբուգոդոնոսորայ և տիրեաց ի վերա Մարաց և զԲաբելոն ամս Բ (2), յԼԶ (36) ամի թագաւորութեան իւրոյ, և սա կոչեցաւ Դարեհ, և յոյժ սիրէր զԴանիէլ մարգարէն։ Եւ ի ժամանակս սորա մարգարէն եգ զվճիռն ԿԲ (62) եւթներորդացն, որ է ԴՃՁԳ (483) մինչև ի ծնունդ կենարարին մերոյ, որ փութացաւ յառաջ քան զութսուն ամի։

Հայկակ
Երուանդ սակաւակեաց
Տիգրան[29]

Այս Տիգրան հուժկու լեալ ամենայն նախնեաց իւրոց և հզաւր զօրութեամբ։ Սա սպան զԱժդահակ Մարաց թագաւորն աջակցութեամբ Կիւրոսի Պարսից թագաւորին, զի նիզակակից էր նորա և բանիւ նորա սպան և գերեաց զտուն սորա ազխս իբրև Ռ (1000) և զԱնուշ մայրն վիշապաց պատուով պահէր, տարեալ ընակեցուցեալ ի Գողթան ի Ծուղայ ի Խրամ և կոչեաց զանուն ազգին Մուրացաւան, այսինքն զարմ Մարաց թադաւորին Աժ || դա- 32Ը
հակայ։ Յետ որոյ և Կիւրոս հնազանդեցուցեալ իւրն երկրորդ առնելով։ Եւ սա շինեաց զՏիգրանակերտ ի պատիւ քուեր: Եւ սա ծնաւ զԲար, Տիրան, Վահագն և կեցեալ ամս մեռաւ։ ԶԲար Տիրանայ, ասեն, հանգոյն Հերակլայ, և ընդ վիշապաց կռուեալ և յաղթեալ, յորմէ Վահունիք։ Սորա որդին Առաւեն, յորմէ Առաւենեանքն. Ներսեհ, Զարեհ, աստի Զարեհաւան. Արմոգ, Բագամ, Վան[30], Վահէ. սա ընդվզեալ ընդդէմ Աղէքսանդրի Մակեդոնացոյ մեռանի ի նմանէ և տիրեաց միահեծան Աղէքսանդր[31]։

Եւ աստի ի վայր ոչ հաւաստեաւ ունիմ ասել թագաւոր Հայոց, զի շփոթեալ ցուցանի ցանկն Թորգոմեան[32], զի Աղէքսանդր տայր հասարակաց թագաւորութիւն ըստ հաճոյից իւրոց։

Յետ Աղէքսանդրի տիեզերակալի, որ թագաւորեաց ԺԲ (12) ամ և ի մեռանելն Դ (4) բաժանեաց զթագաւորութիւն Դ (4) դայեակ որդոց իւրոց, զոր իւրում տեղոջն ասելոց եմք[33]։ Յորոց մինն Սելևկոս թագաւորեաց Բաբելոնի, Պարսից և Ասորոց, սա Նիկանովր կոչեցաւ, վասն յաղթութեան, ամս ԼԱ (31)։ Զսա պայազատէ նորին որդի Անտիոքոս Սովտէրն կոչեցեալ, ամս ԺԹ (19)։ Յետոյ սորա Անտիոքոս Թիոս, ամս ԺԷ (17)։ Եւ ի ԺԱ (11) ամին սորա, զկնի Կ (60) ամի վաղճանի Աղէքսանդրի, ապստամբեցին Պարթևք և Պարսք ի ծառայութենէ Մակեդոնացւոց

2 A Աժդախակ, Երվանդ։ 5 A սայ։ 5--6 A զՊաղդասար։ 6—7 Б Նաբուգոդոնոսորա։ 8 A զԲաբիլոն։ 8—9 A Բ-ս ԼԶ։ 10 A սայ։ 11 Б Դարեհ։ 13 A սորայ։ 14 A եօթներորդացն։ 4 A լեալ։ 7 A հզօր։ 9 Б Կիրոսի։ 10 A արքային փխ. թագաւորին։ 11 A նորայ։ 13 A զորայ, հազար։ 14 A պատւով։ 15 A ընակեցուցանէր։ 16 Б Ծուղա։ 17 Б անուն։ 20 Б զԿիւրոս։ 21 A սայ, Б քեռ, A քուերն։ 22 Б Վահակն հսկայ, ամս սակաւ։ 24 A սորայ, Б Առաւեան, A Առաւեններնք։ 26 Б Մակեդոնացւոց։ 31 Б ՄԲ փխ. ԺԲ։ 33 Б յիւրում տեղւոջն։ 34 A Բաբելոնի։ 35 A Նիկանովրայ։ 37 A Յետ սորայ, Б ՄԱ փխ. ԺԱ։ 38 A սորայ, զկնի չիք, զԿ, Б վախճանին։ 39 A Մակեդոնացոց։

և եղին խուրեանց թագաւոր զԱրշակ։ Այս Արշակ քաջ էր ի Քե-տուրական ծննդոցն, ի սերմանէ Աբրահամու, որոյ ասաց Աստ-ւած «Թագաւոր ի քէն ելցեն»[34]։ Սա թափէ յարևելից և ի Բա-բելոնէ զիշխանութիւն Մակեդոնացոց և ետ Հոռմայեցոց Ճ (100) քանքար ամի-ամի պատարագս, զի մի օգնեսցեն Մակեդոնացոցն։ Սա թագաւորեալ ամս ԼԱ (31) մեռանի ի Բալհ[35]։ Եւ յետ նորա Արտաշէս, որդի նորա, ամս ԻԶ (26)։ Զսա պայազատէ Արշակն մեծ, որդի նորա, ի վերա սորա եկին ի Բաբելոն Դեմեար և որդի նորա Անտիգոն, թագաւորք Ասիոյ և պատերազմեցան։ Եւ Արշակ յաղթեալ ըմբռնէ զնոսա և տանի ի Պարթևս։ Էր Դեմետրի եղ-բայր մի կրսեր Անտիոքոս անուն ի Սիդէ քաղաքի սնեալ, իբրև լուաւ զգերիլ եղբօր խւրոյ եկն էառ զտեղի նորա։ Իբրև լուաւ Արշակ եկն ի վերա նորա ԲԺ (12)-ան բիւրուք ի ձմերայնի յանծուկ տեղի և սպանանէ զնա և դարձեալ դնէ զԴեմետր. և սա տիրեաց երրորդ մասին աշխարհի[36]։ Այս Արշակ ‖ մեծ, թոռն Ար- ԺԶԲ շակայ քաջի, թագաւորեցուցանէ Հայոց զեղբայր իւր զՎաղար-շակ, խաղտեաց դաւառին, որ է Կեսարիայ, տալով նմա զհիւսիս և զարևմուտս։ Այս եղև սկիզբն երկուց հարազատ թագաւորացն՝ Պարսից և Հայոց ի տոհմէ Արշակունեաց։

Նախ ասասցուք զՊարսիցն որքան տևեցին Արշակունիքն համառօտաբար և ապա զՀայոցն ծիգ և յերկար ըստ ոնոյն.

Արշակ մեծ ամս ԾԴ (54), Արշական ամս ԼԱ (31), Արշա-նակ ամս Լ (30), Արտաշէս ամս Ի (20), Արշաւիր ամս ԽԶ (46), ի սորա Ի (20) ամին ծնունդն Քրիստոսի ի Բեթղէէմ Հր[է]աս-տանի։ Արտաշէս ամս ԼԵ (35), Դարեհ ամս Լ (30), Արշակ ամս ԺԷ (17). Արտաշէս ամս Ի (20), Պերոզ ամս ԼԴ (34), Վաղարշ ամս Ծ (50), Արտաւան ամս ԼԱ (31)։ Զսա եսպան Արտաշիր Ստահրացի, որդին Սասանայ և երարձ զթագաւորութիւն Արշա-կունեաց ի Պարսից[37], յաւուրս Խոսրովու հօր սրբոյն Տրդատայ Արշակունոյ ի ԻԹ (29) ամի թագաւորութեան նորա։

Այլ մեք թողցուք զսոսա և դարձցուք յառաջին կարգն ուստի թողաք և թուեսցուք զՀայոցն զամքն և զոր ինչ լինել նոցա[38]։

Վաղարշակ թագաւոր եղբայր Արշակայ մեծի, որպէս յառաջ ասացաք, թագաւորեաց Հայոց ամս ԻԲ (22)։ Սա յօրինէ զաթոռ թագաւորութեան իւրոյ ի Մծբին[39] և յօրինէ կարգս կենցաղա-կանս զանազան յօրինուածով գտեալ դիր ի նախնեացն Հայոց։ Թագադիր զԲագարատ դնէ, զի յառաջ նախաձեռն սա եղև Ար-շակայ յանուլ զՀայս։ Սա էր Հրէայ, յազգէ Յուդա և զգեցու-

2 A ծնընդոց։ 3 A Բաբիլօնէ։ 4 A զՄակեդոնացւոց զիշխանութիւն, Б Հռոմայեց-ւոց։ 5 Б Մակեդոնացւոցն։ 7 A զսայ։ 8 Б որդի չիք, A սորայ, Բաբիլօն։ 11 A Սեդէ։ 12 A զգերիլն։ 13 A բիւրիւք։ 14 A յանձուկ տեղիս, զնայ, սա չիք։ 15 A թոռն մեծին։ 17 A զաւառի։ 21 A երկար։ 24 A սորայ, ծնունդ, Բեթղէհէմ։ 27 A զսայ։ 28 Б Ստհրացի, Սա-սանա։ 30 Б Արշակունւոյ, ամին։ 31 A զսոսայ, առաջին։ 32 Б ուտի, A զամենեքեան փխ. զամքն, և (զոր) չիք։ 35 A ԻԱ փխ. ԻԲ։ 36 Б կենցաղական։ 37 A նախնեաց։ 38 A ս այ։ 39 A առնուլ, սայ, Յուդա և որպէս ասացաք և զգեցուցանող։

ցանող իւր, զնձեռէս Փանանացի և կոչէ զազգն Գնթունի։ Եւ Թիկնապահ ի զաւակացն Խոռայ Հայկազնոյ, որ և Մախազունիք։ Եւ ըզՊատ ի վերա որսոյ, որ և Վարաժնունիք։ Եւ զԳարաղ ոմն ի վերա կուտից և զԳարէլ սպասարար և Գաբեղեանք և Արեղեանք կոչին նոքա։ Եւ Արծրունիք, որք արծուիս բարձեալ։ Եւ Գնունիս, որ գինի մատուցանէին առաջի թագաւորին։ Սոքա յորդոցն Սենեքարիմայ։ Եւ Սպանդունիսդ ի վերա զենարանաց։ Եւ զՀաւունիսդ բաղեկալս։ Եւ Ջիւնակալդ ձիւնակիրս յամարայնի[40]։ Եւ երկրորդ իւր ի զաւակացն Աժդահակայ։ Եւ յարևելից Բ (2) նահապետութիւնս՝ զՍիսականսն և որ ի տանէն Կադմեայ, և ‖ ձՂ յարևելից հիւսիսոյ զԱռան ի ծնընդոց Սիսակա, ուստի Աղուանք. և ի սորա ծնընդոցն սերին ազգն Ուտէացոց և Գարդմանցոց, և Գօդէացոց[41], և Գարդմարացոց իշխանութիւն։ Եւ Գուշարայ, որ յորդոցն Շարայի ժառանդեցուցանէ զԿանդարս։ Զտէրութիւն Տաշրայ և զԱշոցաց ընդդէմ Կովկասու լերինն կարգէ զհզօր ազգն ի զաւակէ Միհրդատայ Դարեհի նախարարի։ Եւ զՏուրք ոմն ի Պասքամայ վասն դժնեա երեսաց կարգէ կուսակալ արևմտից և կոչէ զնա Անգեղտան։ Եւ զայր ոմն Սրտեա-Սլաք անուն, յազգէ Հայկա, կարգէ պահել զլեառն որսալ քօշս[42], որ և Սղկունիք և ի սոցին զՄիանդակնայ դառնալի, յորմէ Մանդակունիք և զայլսն ամենայն, զոր ոչ գրեմ լիապէս, այս Վաղարշակ հաստատեաց և մեռաւ ի Մծբին[43]։ Առ սա եկին ի Հնդկաց Բ (2) եղբարք իշխանք ճարտարք Դեմետր և Գիսանէ անուն և բնակեցուցանէ զնոսա ի Տարօն, զոր յետ ԺԵ (15) ամի սպանան նոքա և որդիք նոցա արարին զպատկերս նոցա և եդին ի տեղի ԻՆնակնեա. և եղև մեհեան նոցա, զոր յետ բազում ժամանակի սուրբն Գրիգոր խորտակեաց և եդ անդ զնշխարս սուրբ Կարապետին[44]:

Եւ թագաւորեաց Արշակ որդի նորա ամս ԺԳ (13)։ Սա պատերազմեալ ընդ Պոնդացիսն և յաղթեաց նոցա և նշանակ եթող յեզր ծովուն մեծի զնիզակն իւր բոլորատէգ մխեալ արեամբ զեռնոց ձգեալ ուժգին յերկանաքար մի և խորագոյն նստոյց զնիզակն ի կարծր քարն և կանգնեաց ի ծովեզրն և ժամանակ ինչ պաշտեցին և մեռաւ Արշակ[45]։

Եւ թագաւորեաց Արտաշէս որդի նորա ամս ԻԵ (25), սա հպարտ գոլով և պատերազմասէր ոչ եղեալ երկրորդ Պարսից, այլ զՊարսից արքայն Արշանակ իւր երկրորդ արարեալ։ Եւ դնացեալ ի Լիբիայ զԿրասոս թագաւոր[46] նոցա մահացուցեալ և տիրեաց նոցա։ Սա զմիջօրեայն մթացուցեալ բազում նետաձգութեամբն, զի անհամար գոլով զօրաց յիջևանս իւրաքանչիւր քար մի դնէին

1 А զձեռնէս։ 3 Б զԳարող։ 4 Б զԳարեղեանք։ 5 А արծուիք։ 6 А որք, որդոցն։ 7 А Սպանդունիք, զենարանացն։ 8 Б Ջիւնակալդ չիք։ 10 А զՍիսականն։ 11 А ծնընդոցն Սիսակայ։ 12 Б ծընդոցն, Ուտեացւոց, Գարդմանացւոց։ 13 Б Գօդէացւոց, և Գարդմարացւոց չիք։ 14 А որդոցն։ 15 Б Տաշրա, զԱշացոց, А Կովկասու։ 17 Б Պասքամա, А դժնայ։ 19 Б զարդէ, զլեառն, А դդօշս, Սլկունիք։ 20 А զՄիանդակնայ, Б զՄիանդակն անդառնալի։ 22 А ի Մծբին չիք, եղբայրք։ 25 А Ինակնեայ։ 26 Б Գրիգոր Լուսաւորիչն, А խորտակեաց զայն։ 27 А Կարապետին որ է վանք հոչակաւոր։ 29 А նշայնակ յաղթութեան։ 30 А ծովոյն, զնիզակ։ 35 Б հպարպ։ 36 Б Արշակնակ։ 38 А զմիջօրեան։

և լինէր իբրև ղահագին կարկառ մի, սա գծովն մեծ որպէս ցամաք ցուցեալ վասն անչափ նաւացն, որ կից կային առ միմեանըս կամելով զամենայն արևմուտս հնազանդել, այլ ոչ դիտեմ, թէ որպէս աղմկեալ եղև զօրաց նորա վաղվաղակի յետ դառնայ բերելով ընդ ինքեան զպատկեր արեգական և լուսնի յԱրմաւիր ե պաշտեցին. և մեռանի Արտաշէս յիւրոց զօրացն խոցեալ[47]։

Եւ թագաւորեաց Տիգրան որդի նորա ամս ԼԳ (33)։ Ի սմանէ ապստամբեցան Յոյնքն, որ ի կողմանս Մաժակայ, վասն որոյ երթեալ պատերազմի և յաղթէ նոցա։ Եւ ի քեռ այր իւր հաւատայ զՄաժաք և զՄիջերկրայս բերէ ընդ ինքեան զկուռս նոցա յաշխարհս մեր զԴիոսին յԱնի, զԱրտեմիդեա, զԱփրոգիտեա և Հեփեստոսին յայլ տեղիս. ‖ ԺԳԱ. և անտի դիմէ յաշխարհն Պաղեստինացոց։ Իսկ դշխոյն Հրէից Աղէքսանդրիայ, որ և Սաղինա, կին Աղէքսանդրի որդւոյ Յոհաննու, որդոյ Շմաւոնի, եղբօր Յուդա Մակաբէի, զայնու ժամանակաւ նայ էր թագաւոր Հրէից։ Ունէր սա Գ (3) որդիս՝ Հիւրկիանոս, Արիստաբուլոս և Անտիգոնոս։ Այս դշխոյս ինչս բաղում ետ Տիգրանայ և հնազանդեալ նմա, գնաց ի նմանէ։ Եւ զգերեալսն, որ ի Հրէից անթիւ բերեալ Տիգրանա ընակեցուցեալ յԱրմաւիր։ Յայնմ ժամանակի Պոմպիոս Հոռոմայեցոց զօրաւար եկեալ անթիւ զօրօք ի Միջերկրայս ի վերա Տիգրանայ և ոչ էհաս նմա, զսպարապետն իւր կացոյց ի Դամասկոս կալ ընդդէմ Տիգրանայ և ինքն գնացեալ ի Մաժակ պատերազմել ընդ Միհրդատայ.և փախոյց զնա ե տիրեաց տեղայն և զպատանին Միհրդատիայ անուամբ հօրն գերեաց և չուեալ ի Հրեաստան ետես, զի Սաղինայ դշխոյն Հրէից տուեալ էր զթագաւորութիւն Արիստաբուլեա՝ որդոյ իւրոյ և քահանայութիւն Հիւրկիանեայ. և պատերազմեալ առ զքաղաքն և առ դերի զթագաւորն Արիստուբուլոս և եդ ի տեղի նորա զՀիւրկիանոս կամելով Անթիպատրեայ Ասկաղոնաց[ի]ս հօր Հերովդէի։ Եւ Հիւրկիանոս թագաւոր և քահանայ խնդրեաց ի Պոմպէոսէ, զի արասցէ գործակալ զԱնթիպատրոս, զոր և արարն իսկ, և ինքն Պոմպէոս հանդերձ Արիստաբուլիւ. չուէ ի Հռոմ։ Իսկ Տիգրան իբրև լուաւ զայս ամենայն դարձեալ եղև երկրորդ Պարսից և առեալ ի նմանէ անթիւ զօր և կացոյց ի վերա Բաղափրան Ըռըշտունի և իւրով հանդերձ խաղայ յԱսորիս ի վերա Հոռոմայեցոց ընդառաջ նորա զա Գաբիանոս զօրավար նոցա. և ոչ կարաց ի դիմի կալ, այլ խոյս ետ, գնաց յԵգիպտոս և գաղտ ի Հռոմայեցոց հաշտութիւն

1 A ահագին, A մեծ չիք։ 2 A նաւուցն, կացին փխ. կային, միմիեանս։ 6 A իւրոց։ 8 A ապըստամբեցան Յունք, Մաժաքայ։ 9 A պատերազմէ, ի (քեռ) չիք։ 10 Б զՄացաք փխ. զՄաժաք։ 12 Б զՀեփեստոսին, Б Պաղեստինացւոց։ 13 A դըշխոյն, Սաղինայ կիննե։ 14 A որդոյ, Շմաւօնի, Յուդայ։ 15 A զի այնու։ 16 A սայ, զԱրիսապուլոս։ 18 A Տիգրանայ։ 19 A յայն, Պոմպեոս։ 20 A զօրավար Հռոմայեցւոց։ 21 A իւր չիք։ 22 Б և չիք։ 23 A զնայ։ 25 Б Հրէաստան։ 27 A Արիստապուլեա, իւրում։ 28 A Արիսապուլոս, Հիւկիանոս։ 29 A զԱնթիպատրեա, Ասկաղոնաց[ի]ս չիք, հօրն Հերօվդէի։ 32 A Արիստապուլիւ։ 33 A երկրորդ եղև։ 34 A զօրս, Б զԲաղարրփրան Ըռշտունի, իւր զօրօք։ 35 Б Հռոմայեցւոց։ 36 A եյանէ փխ. զա, զօրաւար։ 37 A Եգիպտոս, Б Հռոմայեցւոց։

խօսեալ ընդ Տիգրանայ. և դքւեր որդին զպատանին Միհրդատ արձակէ՞ գաղտ առ նա, զոր Պոմպէոս կալեալ էր համբաւելով, թէ գաղտ փախեաւ։ Իբրև լուան Հոռմայեցիք զայս իր, փոխեն զԴաբիանոս և փոխանակ նորա առաքեն զԿրասոս, որ եկեալ անթիւ զօրաւք կալ ընդդէմ Հայոց և ոչ տայր թոյլ ընդ Եփրատ անցանել։ Եւ առաքեաց Տիգրան զԲաղափրաի նահապետն Ըռըշտունեաց և զԴնէլ նահապետ Գնունեաց, բազում զօրու ընդդէմ Հոռմայեցոց կամ հնազանդ առնել զԱսորեստան և զՊաղեստինէ և կամ ի սուր սուսերի մաշել։ Եւ եկեալք զհրամանն կատարեցին մաշ‖ելով զամենեսեանն ի սուր սուսերի և յաղթեցին նոցա և ճԴԲ փախուցին։ Յառաջ նոցա եկեալ Պակարոս ոմն, խնամի Անտիգոնեայ եղբօր Հիւրկիանայ ասելով. «Բաղմափրա փութայ, զի զՀիւրկիանա թագաւոր դրեսցես և դիցես թագաւոր զփեսայն իմ, զԱնտիգոնոս, տամ քեզ Շ (500) աղջիկս գեղեցիկս և Ռ (1000) քանքարս ոսկւոյ»։ Եւ գնացին ի վերայ Պաղեստինայ, իբրև տեսին զՀիւրկիանոս թագաւոր և Փեսաղոս որդի Անթիպատրեա գործակալ, զի յայն ժամանակի զԱնթիպատրոս հայր սորա և զՓէրուրի եղբայր սպանեալ էին հրէայքն՝ դեղըմպութեամբ. և Մնացեալ այս Փեսաղոս, որ այժմ գործակալ է Հերովդէս։ Իբրև տեսին սոքա զյաղթութիւն Բաղմափրայ խօսին զխաղաղութիւն հնազանդութեան։ Եւ Բաղափրան յառաջագոյն առաքեաց զԳնէլ տակառապետն Յերուսաղէմ առ նոսա գալ ի հնազանդութիւն։ Եւ Հիւրկիանայ զտակառապետն բազում զօրօք ոչ ետ թոյլ մտանել ի քաղաքն, այլ Ճ (500) արամբ և Գնէլ խրատ տայր Հիւրկիանեա, թէ ել գնայ առ Բաղափրի իշխանն մեր և լեր պատուով։ Եւ նորա պահանջեալ երդումն և նա երդուաւ յարեգակն և ի լուսինն և յամենայն պաշտելիս, ընդ որ վստահացեալ գնաց առ Բաղափրի տարաւ ընդ ինքեան զՓեսաղոս գործակալ։ Եւ յորժամ գնացին առ ժամ մի մեծարէր Բաղափրան զՀիւրկիանոս թագաւոր և յետ սակաւու եղեալ փոքր մի հեռացաւ վասն երդման և ասաց զօրացն մատնել զՀիւրկիանոս ի ձեռն Անտիգոնեայ եղբօր իւրոյ։ Եւ Անտիգոնոս ատամամբք կարեաց զականջ Հիւրկիանեայ եղբօր, զի մի այլ լիցի քահանայապետ ըստ օրինացն։ Եւ Փեսաղոս եղբայր Հերովդի իւրովի էհար զգլուխն ի քարի. և Անտիգոնոս բշիժկ առաքեաց և թունաւոր դեղովք սատակեցին զնա։ Իբրև ետես Հերովդէս գաղտ փախեաւ ընտանեօքն ի Հոռմ առ Աւգոստոս կայսրն պատմել զանցս աղէտից հօրն և եղբարցն, թէ որպէս մեռան ի վերա հաւատարմութեան Հոռմայեցոց։ Եւ մինչ այս եղև առաջի Բաղափրա ընբռնեաց զՀիւրկիանոս թագաւոր և

1 A քուեր։ 2 A նայ, Б զօր։ 5 A զօրօք, ոչ չիէ։ 6 A զԲաղափրան։ 7 A Գնել նահապետն, Б Հոռմայեցւոց։ 9 A եկեալ։ 12 Б Անտիգոնեյ, A Բաղափարւ 15 A Պաղեստինոյ։ 16 A Հիւրկիանոս, Б Անթիպատրեայ։ 17 A սորայ։ 19 Б Փասաղոս։ 20 A սոքայ զյաղթութիւնն Բաղափրայ։ 21 A յառաջայգոյն։ 23 A Հիւրկիանոս։ 24 Б քաղաք, A արամբք, խրրատ։ 25 Б զնա, A Բաղարրան, Б պատւով։ 26 A զերդումն, լուսին։ 27 A պաշտելին։ 27—28 A Բաղարրա և տարեալ։ 29 A Բաղարրան։ 30 A ելեալ։ 31 A Անտիգոնեա, իւրում։ 33 A օբինաց։ 34 A Հերովդէի, Б եհար, A ըզգլուխ իւր։ 35 A թիւնաւոր։ 36 A ընտանօք, Б Հռովմ։ 37 A կայսր, աղէտիցն։ 38 Б Հռովմայեցոց։ 39 Б Բաղտփրայ, ըմ[բ]ռնեաց։

փահանայ և՝ եա զիշխանութիւն Անտիղոնեա եղբօր նորա, ըստ խոստման Պակարոսի, աներոջ նորա, զի առցէ զխոստացեալն։ Եւ մտին ի քաղաքն ձեռնատուութեամբ Անտիգոնեա. նոր Թագաւորի ոչ մեղանչեցին քաղաքին այլ զտուն և զաղխ և զամենայն ինչս Հիւրկիանեա հանդերձ ինքեամբ երեր Բազափրի գերի և բնակեցուցեալ ի Վան քաղաքի[48]։ Իբրև լուաւ կայսրն Օգոստոս զիրսն, որ եղեն ի բերանոյ Հերովդէի, Թագաւորեցուցանէ ‖ [ծՂԳ] զՀերովդէս Հրէաստանի կամակցութեամբ դշխոյին Եգիպտացոց Կղէոպատրայ և Հերովդէս հանդերձ Հռովմայեցովք եկեալ ի վերա Երուսաղէմի, պաշարեալ առ զնա, և սպան զԱնտիգոնոս Թագաւոր և տիրեաց անհոգապէս։ Եւ Տիգրան յետ դերելոյն զՀիւրկիանոս կացեալ Բ (2) ամ մեռաւ[49]։

Եւ Թագաւորեաց Արջամ, որդի Արտաշէսի, եղբայր Տիգրանայ, ամս Ի (20)․ ի սորա առաջին ամին մեռաւ Արտաշէս Պարսից Թագաւոր և մնաց ժառանգ Թագաւորութեան նորա Արշաւիր, փոքր աղայ և ոչ կարաց օգնել Արջամայ, վասն որոյ Արջամ ձեռն ետ յՕգոստոս և այս եղև սկիզբն մասնաւոր հարկս տալ Հայք Հռովմայեցոց[50]։ Եւ Հերովդէս սկսեալ ի Հռովմէ մինչև յԱնտիոք սալայատակ արար պճանապարհս, խնդրեաց յԱրջամայ արս անարուեստից և ոչ ետ յառաջ, յետոյ վասն սաստիկ պատասխանոյն Օգոստեա տայ, զոր խնդրէր և Արջամ մեռանի[51]։

Եւ Թագաւորեաց Աբգար որդի նորա ամս ԼԸ (38)։ Սա խազմ արար ընդ Հերովդէս, սպանանէ զեղբօր որդի նորա, զի բազում զօրօք եկեալ էր ի վերա իւրն։ Ի Բ (2) ամին սորա, և ի ԽԲ (42) ամին Օգոստեա, ԻԱ (21) ամին Արշաւիրի Պարսից Թագաւորին և ԼԲ (32) ամին Հերովդէի, յԱդամայ ԲՃՂԸ (5198), ի ՃՂԵ (195) նահանջին ծնանի տէրն մեր Յիսուս Քրիստոս ի Բեթղէէմ Հրէաստանի, յորում ամի Օգոստոս առաքեաց զԿիւրինոն առնել աշխարհագիր[52]։

Ի ԺԸ (18) ամին իւրոյ Աբգար շինեաց զՈւրհայ և եդ անդ զաթոռ Թագաւորութեան ի Մծբնայ։ Զայս Ուրհայ, որ է Եդեսիայ, յառաջ շինեաց Ներրովթ Բէլն և անուանեաց Որեդ և կրկին շինեաց Սելևկոս բարեկամն Աղէքսանդրի և երրորդ այս Աբգարս[53]։ Ի ԻԷ (27) ամին Աբգարու մեռաւ Արշաւիր Պարսից արքայ Թողլով Գ (3) որդին՝ Արտաշէս, Կարին, Սուրէն և դուստր մի Կոշմ անուն։ Արտաշէսն առեալ զԹագաւորութիւն և Բ (2) եղբարքն հակառակէին ընդ նմա. իբրև լուաւ իմաստունն Աբգար չուեաց ի Բահլ քաղաքի և համոզեաց Գ (3) եղբարսն ի

1 Б զիշխանութիւն նորա։ 2 А Պագարոսի։ 3 Б Անտիգոնեայ։ 5 А Բազափրան։ 6 Б կայսր։ 8 Б Եգիպտացւոց։ 9 А Կղէոպատրայ, Հռոմայեցովք։ 10 А էառ։ 11 А Տիրան փխ. Տիգրան։ 12 А կեցեալ, մեռանի։ 14 А սորայ։ 15 А Թագաւորն։ 16 Б աղա։ 17 Б Օգոստոս։ 18 А Հռոմայեցոց, Հռոմէ։ 19 А Արջամայ։ 20 А պատասխանացն։ 21 Б Օգոստեայ տա զօրս խնդրէրն։ 23 Б Հէրովդէս։ 24 Б էր չիք, А ամի սորայ։ 25 А Օգոստիեա, ի ԻԱ, Արտաշէսի փխ. Արշաւիրի։ 26 Б ԼԱ փխ. ԼԲ, А Հերօվդէի, Б ՃՂԸ։ 27 А Բեթղէհէմ, Б Հրեաստանի։ 28 А առաքեաց Օգոստոս։ 30 Б զՈւրհա։ 31 А Մըծբինայ։ 33 АБ Սելևկոս։ 34 А Աբգարիոս։ 35 Б արքայն, А որդիս։ 36 А Կոմշ։ 37 А եղբայրքն։ 38 Б զԳ։

հաշտութիւն, տալով զթագաւորութիւն Արտաշէսի և կոչեաց զնոսա Պալհաւս՝ Արտաշէսի Պալհաւ, Կարենա Պալհաւ, Սուրենայ Պալհաւ։ Զայս վասն այն երկարեցի, զի ծանիցես զլուսաւորն մեր ի Սուրենա Պալհաւէ սերեալ, և ի Կարենա Պալհաւէ՝ զազգն Կամսարականաց, և յետոյ ի ժամանակն Տրդատայ եկին յաշխարհս մեր։ Բայց մեծն Արդար ‖ ԾԴԴ յետ համոզելոյ զնոսա առեալ գիր երդման դարձաւ և ի հեռաւոր ճանապարհին հանդիպի նմա ցաւ ուրկութեան[54]։ Եւ ի յայսմ ամի Տիպեր կայսրն ոստիկան առաքեաց յԵրուսաղէմ՝ զՊիղատոս և զպատկերն իւր ընդ նմա դնել ի տաճարն։ Եւ եղ հոգին սուրբ ի դարիրայէն և աղխաւագգեաք[55] Բ (2)-սեանցն աղաղակէին։ Այլ այս Պիղատոս և Հերովդէս չորրորդապետն և Փիլիպոս և Լուսենա չարախօսէին զԱրգար առ գործակալս Հռոմայեցոց, որ գային տանել զհարկն ամի ամի ասելով, թէ «Արգար ապստամբել կամի յարքայէ, վասն այն գնաց ի Պարս և եկն, զի նոքա զօր առաքեսցեն[56]»։ Ընդ այն աւուրս եկաց ի գործ հազարապետութեան Ասորոց և Փիւնիկեցոց և Պաղեստինացոց Մառինոս, յառաջագոյն առաքեաց Արդար առ նա զՍարիհայ բդեաշխն Աղձնեաց և զՇամշադրամ նահապետն Ապահունեաց[57] և զգիր ուխտի Գ (3) եղբարցն Պարսից ասելով. «Մի ունկն մատուցես չարախօսաց իմոց, զի վասն համոզելոյ զնոսա գնացի ի Պարս»։ Եւ. Մառինոս սիրով ընկալաւ զնոսա ասելով. «Ոչ ընդ իցեմ նոսա մի լիցի կասկած ի մտի քում»։ Եւ մինչ դարձան լուան զսքանչելիսն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ զորդի այրւոյն յարուցեալ էր ի մեռելոց Ինային քաղաքին. եկեալ աչօք տեսին և երկրպագեցին Քրիստոսի և եկեալ պատմեցին Աբգարու[58]։ Եւ նա հաւատաց և առաքեաց առ տէրն մեր Թուղթ աղաչանաց գալ առ նա[59]։ Եւ տէրն մեր երանեաց զնա և առաքեաց զանձեռագործ դաստառակն պատկերին, որով կէս մարմնոյն ողջացաւ, յետոյ Թադէոս առաքեալն զբովանդակն։ Եւ երանելին Արգար բոլորով սրտիւ հաւատաց ի Քրիստոս և փոխեցաւ առ նա։

Յետ սորոյն Արգարու յերկուս բաժանեցաւ թագաւորութիւն՝ զի Անանուն որդին Աբգարու թագաւորեաց ի Յեդեսիայ և ուրացաւ զՔրիստոս և սպան զԱդդէ աշակերտ Թադէոսի, և Սանատրուկ քեռորդի Արգարու Արշակունոյ թագաւորեաց յԱրտազ։ որ և Շաւարշան և այժմ Մակու. իսկ Անանուն սատակեցաւ անկաւ սիւն կճեա ի վերա նորա ի նոյն ամի։

Եւ թագաւորեաց Սանատրուկ քեռորդի Արգարու ամս Լ (30)։ Եւ եկեալ ի վերա Ուրհայոյ և փակեցին ընդդէմ նորա զդուռն և

2 A Կարենայ, Б և Սուրենայ։ 4 A Սուրենայ, Կարենա։ 5 A որ յետոյ։ 7 Б դի[ր]ս։ 8 Б Տիրեր։ 9 A զԵրուսաղէմ։ 10 Б զարիրաէն, A աղխաւեղագէղք Բ-սիեանցն։ 13 Б Հռոմայեցւոց։ 16 Б Փիւնիկեցւոց։ 18 A նայ, A զՇամշագրամ։ 20 A զներ փխ. մատուցես։ 22 A լուիցեմ փխ. ընդ իցեմ։ 23 A սքանչելիսն։ 24 A այրուն։ 25 A երկրպագեն։ 26 A երանելին Արգար փխ. նա։ 27 A թուղայ, նայ։ 28 A պատկերն ի դաստառակին։ 29 A զկէս, բովանդակ։ 31 A նայ։ 32 A երկուս, Б թագաւորութիւնն։ 33 Б զի չիք, զԱնանունն։ 37 A կճեայ։ 39 A Ուրհայուս։

խնդրեցին ուխտ, զի պահեսցէ զնոսա քրիստոնեայ և երդուաւ նոցա, և բացին զդուռն և ստեաց || երդմանն։ ծՂԵ Եւ զամենայն որդիսն Արդարու սպան և զամենայն ինչս տան նորա ետ կնոջն Արդարու և բարեպաշտ և առաքինի կինն զամենայն ետ և գնեաց ցորեան և բաշխեաց կարօտելոց, զի սղութիւն էր հացի, և գնացեալ Յերուսաղէմ կրօնաւորեցաւ և հանգեաւ ի Քրիստոս։ Այս Սանատրուկս նահատակեաց զԹադէոս առաքեալն և զօրիորդն իւր զսուրբն Սանդուխտ ի Յարտազ և զսուրբն Բարդուղիմէոս ի Յաղփակ և զսուրբն Յուդայ Յորմի և յետոյ ինքն նետիւ խոցեալ[60]։

Եւ թագաւորեաց Երուանդ ամս Ի (20)։ Սա որդի կնոջ Արշակունոյ Վարարի, յղացեալ յայլ և յայլ սերմանց։ Սա արար ընդ տանն Սանատրկոյ, որպէս նա ընդ տանն Արգարու, բայց մնաց պատանի մի Արտաշէս անուն, զոր առեալ Սմբատայ Բագրատունոյ փախեաւ ի Պարս առ Դարեհ արքայ և իբրև մեծացաւ առեալ զօր ի Դարեհէ եկեալ սպանանէ զԵրուանդ ի Յերուանդաւան քաղաք[61]։

Եւ թագաւորեաց Արտաշէս որդի Սանատրկոյ ամս ԽԱ (41)[62]։ Ի սորա ժամանակս կոչեցան Ամատունիք և պատուեցան։ Եւ են սոքա Հրէա՝ յազգէ Մանուէա, հօր Սամփսոնի, գերեալ յԱրշակայ մեծէ[63]։ Ի վերա սորայ եկին արքայն Ալանաց յայնկոյս թեէ Կովկասու լերին և ըմբռնեցաւ ի Հայոց որդի, թագաւորին և փախուցին զնոսա մինչ ի Կուռ գետ և բանակեցան նոքա յայնկոյս գետոյն և սոքայ աստի և երթ և եկս լինէին Ալանք առ Արտաշէս զի հաշտեսցին և Արտաշէս ոչ լսէր նոցա։ Յետոյ վասն կսկծանաց որդոյ թագաւորին, քոյր նորա Սաթենիկն գայր յափն գետոյն յայնկուսէ և կականմամբ ձգեալ զձեռն իւր աղաղակէր. «Ով քաջդ Արտաշէս ոչ է պարտ դիւցազանութեանդ ի ստրկի պահել զորդի քաջաց և անհաշտ խռովութիւնն առնել ի մէջ Բ (2) հզօր թագաւորացդ»։ Եւ Արտաշէս իբրև ետես զկականումն օրիորդոյն Սաթինկայ առ ափն գետոյն, որ վասն եղբօրն, տոփացաւ նմա և ասաց զկիրս մտաց դայեկին իւրոյ Սմբատայ, որում հաւանեալ խօսին ընդ թագաւորն Ալանաց տալ զօրիորդ իւր զՍաթենիկն Արտաշէսի ի կնութիւն և արձակել զեղբայրն նորա փառօք, որում տայ զՍաթենիկն. և կնքեցին մուրհակ հաշտութեան և դարձան[64]։ Ընդ Սաթինկայ եկին յԱլանաց Սուքիասանքն և եկին ընդ նմա և աշակերտեցան որրոց Ոսկեանց և մկրտեցան ի յակունս Եփրատայ, յետ ԽԲ (42) ամի նահատակութեան Թադէոսի առաքելոյն և յետոյ սուրբն Ոսկեանք նահատակեցան յորդոցն Արտաշէսի Վրոյ և Վնդոյ կո || չեցեալ և սուրբն Սուքիա- ծՂԶ

1 А քրիստոնեայս։ 2 Б նոցա չիք։ 6 Б կրօնաորեցաւ։ 7 А զօրիորդն։ 9 А Յաղբակ, սուրբն։ 10 А խոցեալ մեռանի։ 11 А Արշակունւոյ։ 12 А այլ և այլ։ 13 А ի փխ. (նա) ընդ։ 14 А միայն մնաց։ 16 Б եկել, А Յերևանդաւան քաղաքի։ 19 А սորայ։ 20 А Հրէայ, Արշակայ 21 А մեծի, Կովկասու։ 23 А մինչև։ 28 Б դիւցազնութեանդ։ 31 А ալափացաւ։ 32 А Սմպատայ։ 33 Б խօսէին, А զօրիորդ։ 34 Б արձակեալ։ 35 А մուրհակ կընքեցին։ 36 А Ալանաց, Սուքիասեանքն։ 37 А առ փխ. ընդ։ 38 А յակունսն։

սանդ խոյս ետուն ի Ծաղկէ լեռնէն և գնացին ի Սուկաւ լեառն, զոր ի Բօսատաղ[65]։ Եւ յաւուրս Արտաշէսի կոչեցան ամիսք և շաբաթք և երկրագործութիւն ի Հայս, զի մինչ ի յայս աւագակարար կէյին մարդիկ և սա յամենայն սահմանս իւր արձան կանգնէր քարեա գրոշելով յանուն իւր և յետոյ վճարեաց[66]։

Եւ թագաւորեաց Արտաւազ Շիդար[67] որդի նորա ամս Բ (2)։ Սա՝ յաւուր միում հեծեալ ի ձի կամէր երթալ որսալ կինճս, հասեալ ի վերա կամրջի յԱրտաշատ, ցնորեալ ի խելաց, անկաւ ի գետն, և աննետի եղեալ ընական դիւահար գոլով, զոր Հայք բաղում առասպելս տողեն ի Մասիք լ[ե]առն շղթայիւք պարաւանդեալ[68]։

Եւ թագաւորեաց Տիրան եղբայր նորա ամս ԻԱ (21). սա մեռաւ ի բքոյ ձեան[69]։

Եւ թագաւորեաց Տիգրան եղբայր սորա ամս ԽԲ (42)։

Եւ թագաւորեաց Վաղարշ որդի Տիգրանայ ամս Ի (20)։ Սա պարսպեաց դաւանն Վարդգէս ի վերա Քասախ գետոյ և անուանեաց Վաղարշապատ և փոխեաց ի նայ զարքունիս[70]։

Եւ թագաւորեաց Խոսրով որդի նորա ամս ԽԸ (48)։ Սա անցեալ զլեառն մեծ Կովկաս ի վերա Խազրաց, զի զհայր նորա Վաղարշ նոքա սպանեալ էին և առեալ զվրէժն բիւրապատիկ և հնազանդեալ զնոսա առնու պատանդս և դառնայ[71]։ Ի ԻԹ (29) ամին սորա սպան Արտաշիր Սահրացի զԱրտաւան Պարսից թագաւորն Արշակունի և լուեալ Խոսրով խնդրեալ զօր ի Փիլիպոսէ կայսերէ Հռոմայեցոց։ Եւ գնաց՝ի վերա Արտաշրի որդոյն Սասանայ և փախոյց զնայ մինչև ի Հնդիկս և թափեաց ի նմանէ զՄիջագետս, զԱսորեստան և զայլ արքանիստ աշխարհն[72]։ Եւ յոյժ նեղեալ Արտաշիր ի Խոսրովայ կոչէ զամենայն նախարարս իւր, աղաչէ զնոսա, եթէ ոք կարասցէ թափել զնա ի ձեռաց Խոսրովու, եթէ հնարիւք դեղոց կամ խողխողմամբ սրոյ, երկրորդ իւր լինել և տացէ նմա զԲահլ քաղաք։ Ցառաջ կացեալ Անակ, որ ի Սուր[են]եանն Պալհաւէ խոստանա առնել զհրամայեալն յԱրտաշրէ և իբր հատուածի պատճառաւ գա յաշխարհս Հայոց տամբ և ընտանեաւք հասանէ յԱրտազ գաւառի և պնդեալ զօրացն Արտաշրի զհետ նորա կամօքն Անակայ, զի իրաւացուսցէ զփախչելն։ Եւ Խոսրով զօր առաքեաց թափեաց զնա ոչ գիտելով զնենգ[ութիւն] նորա։ Եւ աստ յԱրտազ գաւառի պատահէ նմա օթեանս առնել մօտ առ դուրս ի ներքսագոյն սրբոյ || կապարի ճՂէ խորանի դամբարանի սուրբ առաքելոյն Թադէոսի. և անդ, ասի,

---

1 A լիառն։ 2 A Բօսաղազ։ 4 A կային փխ. կէյին, սայ ամենայն, Б սահման։ 5 A դրոշմելով զանուն, Б վարեաց փխ. վճարեաց։ 7 A աւուր։ 8 Б ի [խելաց] չիք։ 9 A գետ, եղեալ չիք։ 10 Б տողէն, A լիառն։ 13 Б բքո, A ձիան։ 14 A և թագաւորեաց Տիգրան եղբայր սորա ամս ԽԲ չիք։ 17 A զարքունիսն։ 19 A լիառն։ 20 A վրէժն։ 21 Б պադանդս, դառնա։ 22 A զԱրտաւ։ 23 A Խոսրովու։ 24 A Հռովմայեցոյ, Արտաշէսի, Б որդւոյն։ 25 Б զնա, A Խնդիկս։ 26 A արքայանիստ։ 27 Б նեղեցաւ։ 29 A սրրոյ։ 30 A զԲալհ։ 31 A Սուրեանն։ 32 Б և (իբր) չիք, իբրև, A հաաւածի, զայ աշխարհս։ 33 A տամբք և ընդանեօք։ 35 A զփաղչիլն։

*յղանալ մօրն սրբոյն Գրիգորի, ի Ցանակայ, անուն նորա Ոգոհի, որ յետոյ ժառանգեաց զվիճակն նորին։ Եւ գնացեալ Անակ սիրով առ Խոսրով թագաւոր և նա մեծարեաց որպէս զազգային իւր, զոր յետ Բ (2) ամաց յերրորդում յիշեաց զգաւ ուխտին, որ առ Արտաշիր, սպան զԽոսրով յորս նետիւ[73]. և մինչ յոգւոջ էր հրամայեաց կոտորել ընտանիսն Անակայ միայն շնորհօքն Աստուծոյ և աղօթիւք առաքելոյն Թադէոսի մնաց պատանի մի Գրիգոր անուն, առեալ դայեակ նորա Սոփի, ազգաւ Հռոմ, քոյր Եւթաղեայ, փախոյց գաղտ ի Կեսարիայ և մկրտեալ ի Քրիստոս կոչեցաւ Գրիգոր[74]։ Այլ Արտաշիր Պարսից թագաւոր իբրև լուաւ զսպանումն Խոսրովայ վաղվաղակի դիմէ յաշխարհն Հայոց և միահեծան տիրեաց Պարսից և Հայոց ամս ԻԶ (26)։ Եւ գիտելի է, զի Անակ յորժամ եկն ի Հայս, մնաց որդի մի նորա ի Պարս, Սուրէն անուն և նստաւ առ հօրաքեռն իւր Խոսրովուհի և զարգացեալ չոգաւ յերկիրն Ճենաց և Դարբանդաց և թագաւորեաց ի վերա նոցա։ Այս Խոսրովուհի, քոյր Անակայ, կին էր Տիրանայ որդոյ Ջուաշիրի արքային Հեփթաղաց, ուստի լեալ ի նմանէ Բ (2) որդիս Զգօն անուն, որ է Ցակոր և Հրաչէ։ Եւ յետ ինչ ամաց զհայր սոցա Տիրան սպան զթագաւորն Լփնաց Առիդէս անուն և տիրեաց երկրին։ Եւ Ցակոր որ և Զգօն և Հրչէ եղբայր նորա ի մեռանել ծնօղացն եկին յերկիրն Գթաց և ի բարի պատահմանէն թագաւորեաց Հրչէ ի վերա Գթաց։ Եւ սա էր, որ եկն ի վերա Գիոկղետիանոսի և Տրդատ որդի Խոսրովայ, ուր սնեալն՝էր ի Կեսարիայ առ Լիկիանոս կեսառոս Դիոկղետիանոսի. սա ած զնա կենդանի առաջի նորա և զայլ քաջութիւնսն պատմեաց Լիկանէս առաջի արքային։ Եւ նա թագաւորեցոյց զՏրդատ ի տեղի հօր իւրոյ։ Բայց Ցակոր յետ ինչ ամաց մկրտի հաւատացեալ ի Քրիստոս և սիրեաց զվարս միակեցութեան առ Մարոդէ կրթեալ է յետոյ եղև եպիսկոպոս Մծբին քաղաքին։ Այլ ոմանք զՀրչէ քւեր որդի ասեն Ցակոբայ անուն, մօր նորա Ակդէն[75] և ոմանք եղբայր որպէս ասացաք։ Այլ մեք դարձցուք ուստի թողաքն. յետ սպանման Խոսրովա ի Ցանակայ տիրեաց Արտաշիր Հայոց ամս ԻԶ (26)։ Ցայսմ ժամանակի եկեալ Բառլահաս ոմն յԱլանաց և նահատակեաց զսուրբն Սուքիաս ընկերօքն, որ կային ցարդ ևս կենդանի, որպէս ասէ Ցովհաննէս պատմագիրն[76],*

### ‖ Վասն թագաւորելոյն Տրդատայ ի վերա Հայոց ի Դիոկղետիանոսէ։ ԺԳԸ

*Եւ թագաւորեաց Տրդատ ԾԵ (55), յերկրորդ ամին Դիոկղե-*

---

1 А *Ոգուհի*։ 2 А *զվիճակ նորա, Անակ* չիք։ 3 А *զնա*, Б *զազգաին*։ 4 А *իւր* չիք, Б *յերրորդումն*։ 5 А *ի յորս*, Б *հոգւոջ*։ 6 А *զնդանիսն*։ 9 А *Կեսարիա*։ 11 АБ *յիմէ* փխ. *դիմէ*։ 13 Б *զի* չիք, *զԱնակ*։ А *նորա* չիք։ 14 А *սնաւ* փխ. *նստաւ*, *իւրում Հոսրովուհի*։ 16 А *քոյրն*։ 17 Б *որդւոյ*։ 19 Б *թագաւորն*։ 20 Б *երկիրն*։ 21 Б *եկն*։ 23 А *Խոսրովու*, *որ* փխ. *ուր*։ 24 А *Կեսարիա*։ 26 А *արքային*։ 27 А *մկըրտի*։ 28 А*վարս*, *Մարուդէ ճգնաւոր*։ 29 А *քաղաքի*։ 30 А *քուեր*։ 31 А *և ոմանք եղբայր որպէս ասացաք* չիք։ 35 А *Յօհանէս*։ 37 Б *Տրդատա*։ 39 Б *Տրդաա ի վերայ Հայոց ամս ԾԵ, երկրորդ*։

ախանոսի և յառաջին ամին Շապհոյ Պարսից արքային։ Եւ յառաջին ամի թագաւորութեան իւրոյ եկն Ցեկեղեաց գաւառն զոհամատուցանել իգական պատկերին Անահտայ՝ կնոջն Արմազդայ, որում ստիպեալ զսուրբն Գրիգորիոս ոստո թաւոյ մատուցանել և յոչ հաւանել սրբոյն չարչարեաց զնա ԲԺ (12)-ան կտտանօք մինչև լուաւ ի Տաճատայ Ամատունւոյ, որ էր այր քեռ Արտաւազդայ Մանդակունոյ, թէ սա որդի է Անակա մահապարտի, վասն որո չէ պարտ դմայ կեալոյ և կամ զարև տեսանելոյ։ Եւ արկին զնա ի Խոր Վիրապն յԱրտաշատ քաղաքի ի մէջ օձից թունաւորաց ամս ԺԵ (15)-անն[17]։ Զի սուրբն Գրիգորիոս սնեալ ի Կեսարիայ և Սուփի կին, Բուրդարա Պարսկի և քոյր Եւթաղեա, դայեակ որբոյն, ամուսնացոյց զնա ի դուստրն Դաւթի՝ Մարիամ անուն, ուստի ծնաւ Բ (2) որդիս՝ զՎրդանէս և զԱրիստակէս։ Եւ հրաժարեալ յամուսնոյն զինուորեցաւ Տրդատայ, հարիւրապետին Լիկիանոսի, զի զպարտս հօրն վճարեսցէ, զի լուեալ էր զանցս աղէտիցն ի դայեկէն իւրմէ և կամ թէ աստուածային իմն գոգցես աեռչութեամբ լինել լուսատու խաւարեալ ազգիս Հայոց[18]։

Եւ ի յայսմ ամի Մամգոն ոմն ի Ճենաց եկն առ Տրդատ։ Այս Մամգոն և Բգդոյ Բ (2) եղբայք թագաւորազինք Ճենաց աշխարհին հակառակէին ընդ միմիանս, զի Բգդոյ դայեակ էր թագաւորին Ճենաց Արբուկայ։ Եւ Մամգոն առնուլ կամէր զպատիւն և Բգդոյ իմացեալ զնախանձ եղբօրն մատնեաց զնա քսութեամբ առ թագաւորն Արբոկ, թէ կամի Մամգոն, եղբայրն իմ, սպանանել զքեզ։ Եւ Մամգոն փախեաւ և եկն ի Պարս առ Արտաշիր։ Եւ լուեալ Արբոկայ թագաւորին Ճենաց և բարկացաւ և յարուցին պատերազմ ընդ միմեանս և մինչ յայսմ էին մեռաւ Արտաշիր և թագաւորեաց Շապուհ որդին. և ոչ կարաց պահել զՄամգոն, այլ առաքեաց ի Հայս առ գործակալս իւր գրելով առ Արբոկ թագաւորն Ճենաց. թէ «Մի լիցի պատերազմ ընդ իս և ընդ քո, զի զՄամգոն երդուեալ էր հայրն իմ յարեգակն ոչ տալ զնա ի ձեռս քո, այլ ես աքսորեցի զնա յեզերս աշխարհին Հայոց, որ հաւասար է նմա մահու»։ Եւ մինչ եկն Մամգոն հանդիպեալ Տրդատայ յայ‖նմ աւուրսն թագաւորեալ և ոչ կամեցաւ ԾՂԹ գնալ ընդ գործակալսն Շապհոյ, որ փախեան ի Տրդատա այլ ամենայն ախիւն իւրով յարեցաւ ի Տրդատ[19]։ Եւ իշխանն Տարօնոյ նահապետն Սզկունեաց, որ նստէր յամուրն Ողկան, ապստամբեալ ի Տրդատա օգնական առնելով զՏարօն և զԱսսուն միտելով զհետ Շապհոյ։ Եւ Տրդատ արքայ ասէ Մամգոնայ. «Հնարեա սպանանել զնա դեղովք կամ զինուք, տաց զտեղի նորա քեզ»։

2 А իւրոյ չիք, գաւառ։ 3 А Անահտայ չիք։ 5 Б ոչ, А հաւանելն, զնայ։ 7 Б Մանդակունւոյ, А սայ է որդի։ 8 А և (կամ) չիք։ 9 А Վիրապըն Արաաշաա, օձից։ 10 Б Գր[իգ]որիոս։ 11 А Բուրդարայ, Б Պարսիկի։ 12 А զնա չիք։ 15 А էր չիք։ 19 Б եղբարք, А թագաւորազին։ 20 Б միմեանս։ 21 А Արբոկայ։ 22 Б Բգդո փխ. Բրդոյ, զնախանձն եղբօր։ 26 Б միմիեանս։ 29 Б թագաւոր։ 30 А քեզ փխ. քո, զի չիք, А արեկակն։ 31 А քոյ, այլ չիք, Б հեզր։ 32 А նմայ։ 33 А յայն աւուրս։ 34 Б Շապոհ։ 35 Б ազխիւն։ 36 А Սըլկունեաց, ամուրն։ 39 Б դեղօք, А զտեղին։

Եւ նա եկեալ իբր զբարեկամ Շապհոյ և նա ընկալաւ զնա յամուրն. և յետ սակաւուց գտեալ դիպող ժամ սպանանէ զնա ներքև յորս և կալեալ զամուրն. և թագաւորն Տրդատ տայ զնահապետութիւնն Տարօնոյ Մամգոնայ, ուստի Մամիկոնէից ազգն[80]։ Եւ յեօթնուտասան ամին Տրդատայ նստի յաթոռ սուրբ Առաքելոյն մեծն Գրիգորիոս, յետ անտանելի չարչարանաց եկեալ ի Վիրապէն։ Եւ ամփոփեալ զնշխարս որբոց Հռիփսիմեանցն յետ Թ (9) աւուրն նահատակութեան նոցա ի նոյն արքայէն Տրդատայ։ Եւ յետ բժշկելոյ խոզացեալ արքային և դիւաբախ զօրացն երթեալ սուրբն Գրիգորիոս ի Կեսարիայ բազում զօրօք առ Ղեւոնդիոս պատրիարգն և ձեռնադրեալ ի նմանէ հայրապետ Հայոց։ Եւ տուեալ նմա պարգևք զնշխարս սուրբ Կարապետին և զԱթանագինեայ եպիսկոպոսին, որ էր աներ իւր։ Նւ եկեալ պերճ փառօք, որպէս վայել էր նմա։ Ընդառաջ նորա գնաց մեծն Տրդատ Գ (3) օրեա ճանապարհ յափն Եփրատայ առ ստորոտով Նպատ լերինն, որ է այժմ Աբաղայ. և մկրտեաց զթագաւորն Տրդատ և անուանեաց Յովաննէս և ԳՃՌ (300000) այր ի զօրաց, և պատարագեալ ի խորանն վրանին, որ յափն գետոյն է հաղորդեալ կենաբար հացիւն և անմահական բաժակաւն։ Եւ ի Ի (20) ամին Տրդատայ շինեաց Լուսաւորիչն մեր զսուրբ Կարապետն ի տեղի Գեմետրեա և Գիսանա դիցն[81]։ Եւ ի սոյն ամի թագաւորեաց մեծն Կոստանդիանոս Սպանիացին և հաւատաց ի Քրիստոս ի ձեռն Սեղբեստրոսի Հռոմայ հայրապետի, զոր լուեալ Տրդատայ ի սրբոյն Գրիգորի գնացին ի Հռոմ ի տեսութիւն նորա ՀՌ (70000) հեծելով և. յոյժ բերկրեցան Կոստանդիանոս և Տրդատ, Գրիգորիոս և Սեղբեստրոս։ Եւ պատմեցին իւերաց զդարձն իւրեանց և բազում պաղատանօք հայցեն զսուրբն Գրիգորիոս մատուցանել պատարագ, զոր ակներև ամենեցուն տեսին զհոգին սուրբ աղաւնոյ նման իջեալ ի սուրբ սեղանն և Բ (2) թագաւորքն եւս առաւել բորբոքեցան || Մ ի սէրն Քրիստոսի և ադ․ն ի ներքոյ ծիրանեացն քուրձ և կային որպէս զանմարմին ուսեալք ի սրբոց հայրապետացն և դաշինս գրեցին ահաւոր բաժակաւ միարան լինել երկուց ազգաց և կնքեաց գրովն մեծն Կոստանդիանոս և սուրբ հայրապետն Սեղբեստրոս՝ տալ Հայոց Յերուսաղէմ զԳողգոթայ և զսուրբ Յարոյր և տեղի մի պատարագի ի սնարս սուրբ Յարութեան և կախեալ կանթեղ մի ի վերայ սուրբ գերեզմանին և խնդրեալ յԱստուծոյ. յետոյ ճլ լոյս ի սուրբ գերեզմանէն և լուսաւորեաց զկանթեղ սուրբ Լուսաւորչին մինչև ցայսօր ժամանակի։ Զտյս ամենայն հրաման ընկալաւ և ետ իշխանութիւն հայրապետութեան ինքնագլուխ որպէս և աթոռա-

---

1 A բարեկամ։ 2 A սակաւուց աւուրց, Б ըսպանանէ։ 3 A նեախւ հարեալ։ 4 Б Տարոնոյ։ 5 Б յեօթնուտասան, A առաքելոյն Թախէոսի։ 8 A աւուր։ 9 A բժբշկելո՛։ 10 Б զօրաւք։ 12 A զԱթանագինա, Б և չիէ։ 16 A մկըրտեաց, անուանեաց զնա։ 18 A խորան։ 20 Б մեր չիէ։ 21 A Գիսանեայ։ 23 Б Հռովմայ, A հայրապետին։ 26 A և Գրիգորիոս։ 27 A իւրեանց և բազում չիէ։ 29 Б աղաւնւոյ, A սեղան։ 30 Б առաւել չիէ, AБ ագանէին։ 32 A բաժակաւն։ 33 Б Բ փխ. երկուց, A գրով։ 36 A խորանս փխ. ի սնարս։

կալին Պետրոսի և Պօղոսի, և տան մասն ինչ ի Նշխարաց գլխաւոր առաքելոցն և զահեակ ձեռն Անդրէի առաքելոյն և մասն ինչ ի Ղուկասու Աւետարանչէն[82]։ Եւ եկեալք մեծաւ ցնծութեամբ շինեցին ի Տարօն զսուրբ Առաքելսն և եդին անդ զասացեալ Նշխարսն։

Եւ մինչ եկին ի Հռոմայ, զօրքն Շապհոյ ապատակեալ էին ի Հայս աստ և անդ և ի Տփխիս և ի Տաշիրս։ Եւ մեծն Տրդատ իւրովի մղէր զպատերազմ։ Եւ ձայն արկեալ առ մեծն Կոստանդիանոս և նա առաքեաց զօր բազում ի վերա Պարսից, և նեղեաց զնա, և Շապուհ խնդրեաց զխաղաղութիւնն ի Կոստանդիանոսէ. և հաւանեալք հաշտեցան ոչ ևս նեղել զՀայաստան։ Եւ հայցեալ մեծն Կոստանդիանոս ի Շապհոյ զԹագն Դաւթի մարգարէի, զոր առ Ցովար ի տանէ Ամոնայ, որ ի Կովտայ, ի գլխոյ Մեդքոմայ, և եդ ի գլուխն Դաւթի, որ մնաց մինչ ի Սեդեկիայ, զոր դիրեալ Նաբուդոդոնոսոր և ապա ի Կիւրոս մինչ ի Դարեհ վերջին, զոր սպան Աղէքսանդր, որով պսակեցան Մակեդոնացիքն մինչև Ցանտիոք, զոր սպան Արշակ Պարթևն և առ զԹագն մինչև Ցարտաւան, զոր սպան Արտաշիր Ստհրացի, և նա ետ յորդին իւր ի Շապուհ, զոր խնդրեաց սուրբն Կոստանդիանոս իբր, թէ օրինակ արասցէ. և յորժամ արարն, խնդրեաց յԱստուծոյ, զի Դաւթին առ ՚ինքն մնասցէ և եդ զերկու Թագսն ի մի տեղի և ծառայք Շապհոյ առին զնոր շինեալն և գնացին և մնաց հինն առ Կոստանդիանոս։ Եւ յայսմ ժամանակի շինեաց Տրդատ զշինուած ամրոցին Գառնոյ սքանչելի դրօշուածով յանուն քեռ իւրոյ Խոսրովիդխտոյ[83]։

Ցայսմ ժամանակի եղև ժողովն ի Նիկիայ ընդդէմ Արիոսի Աղէքսանդրացոյն չարափառի աւագ երիցու, որ իշխեաց ասել, զորդին Աստուծոյ արարած, դրդեալ նա ի սատանայէ։ Եւ սուրբն Կոստանդիանոս հրաւիրակ առաքեաց առ Լուսաւոր || իչն մեր և ՄԱ
նա ոչ կամեցաւ գնալ, զի մի առաւել փառաւորեսցի, այլ զպրսար որդին իւր զԱրիստակէս և զհօրաքեռ որդին իւր զսուրբն Ցուկոբ առաքեաց ի Կեսարիա առ արքեպիսկոպոսապետն Ղևոնդիոս, զի նովաւ հանդերձ գնասցեն ի Կոստանդ[ն]ուպօլիս։ Եւ գնացեալք ի միասին և դարձան մեծաւ ուրախութեամբ և խնդութեամբ ուղղափառ կանոնաւ, զոր ընկալեալ սուրբն Գրիգորիոս կնքեաց իւրով բանիւ[84] Իսկ մեք փառաւորեսց[ուք]։ Եւ խրատեն զսուրբն Գրիգոր, Անտօն և Կրօնիդէս և սուրբ հայրապետն Ցակոբ և ասեն. «Ծածկեա զքեզ ի մարդկանէ ի ծերութեանդ, զի մի առաւել փառաւորեսցիս և զոսկերս քո պաշտեսցեն ճիւղաբարոյ ազգն Հայոց»։ Եւ սուրբն պաշտեալ զաթոռ հայրապետութեան ամս Լ (30)

1 А Պօղոսի, գլխաւոր չիք։ 6 Б եկն, А էին չիք։ 7 А և (ի Տփխիս) չիք։ 9 А առաքեալ։ 12 А մարգարէին։ 13 А Ամօնա։ 14 А մինչև։ 15 А մինչև։ 16 А Մակեդանացիք։ 17 Б առ չիք։ 18 А որ փխ. և, ի որդին։ 19 А ի (Շապուհ) չիք, մեծն փխ. սուրբն։ 21 А զերկուս, ծառայքն։ 24 А քեռ։ 26 А ի (Նիկիայ) չիք։ 27 А Աղէքսանդրացւոյն, աւաք։ 29 Б լուսաւորիչ։ 30 А նայ, կրսեր։ 31 А իւր չիք։ 32 Б արքեպիսկոպոսն։ 34 А ի միասին չիք, ուրախութեամբ և չիք։ 36 А փառաւորութեան։ 39 А քոյ։ 40 А սուրբն չիք։

ձեռնադրեալ աւելի քան զՒԾ (400) եպիսկոպոս և այնուհետև անյայտ եղև բաղում ժամանակս կեցեալ ի Մանեա սուրբ կուսի այրսն բնակելով և հանգեաւ ի Քրիստոս անգիտելի մարդկան։ Եւ հովուաց ոմանց դտեալ կանգուն վաղճանեալ ի փորուած գիսյ ծառոյ, կարկառս քարանց կուտեցին ընդդէմ նորա, ոչ գիտելով թէ ով ոք է նա, վայել էր իսկ որք Փրկչին մերոյ ծնընդեանն խորհրդածուք լինէին, լինել և աշակերտին յուղարկմանն սպասաւորք[86]։ Զոր տեսեալ մեծին Տրդատայ առաքեաց զսուրբն Արիստակէս ի Կեսարիա ձեռնադրել հայրապետ ի ԽԷ (47) ամի արքայութեանն իւրոյ ըստ յառաջագոյն խրատու սուրբ Լուսաւորչին։ Եւ ինքն Տրդատ նոյն վարուց փափագեալ Ը (8) օրեայ մի անգամ ճաշակէր և յաւուրս քառասնորդաց անսուաղ անցուցանէր, զի թէպէտ յետ այնորիկ եկաց ամս Ը (8), այլ յարաժամ լեառնակեցիկ լինէր ըստ նմանութեան Անաոնի։ Եւ ի ԾԴ (54), ամի Տրդատայ խողխողեցաւ սուրբն Արիստակէս յԱրքեղայոսէ իշխանէ Չորրորդ Հայոց, ի Ծոփաց գաւառի ի Զմշկածակ. և բարձեալ զնշխարեալ մարմին նորա աշակերտացն և տարեալ եդին ի Թիլն աւանի Եկեղեաց գաւառի, որ եկաց հայրապետ ամս Է (7)[86]։

Եւ յաջորդեաց զտեղին աւագ որդին մեծին Գրիգորի սուրբն Վրդանէս, ի ԾԴ (54) ամին Տրդատայ[87] ձեռնադրեալ ի Կեսարիայ, ամս ԺԵ (15). և ի ԾԵ (55) ամին Տրդատայ տան Նմա դեղ, որպէս կատաղեալ Հրէայքն կենարարին զլեղին և ոչ մեռանելն նետիւ ի յորս դողամիտ և պղծասէր իշխանքն տան դեղ մահու և շիջուցին յինքեանց զջահն մեծաբորբոք և խաւարեցան ինքեանք[88]։ Եւ ժողովեալ նախարարացն առ մեծն Վրդանէս թախանձանաց գրեն թուղթ առ Կոստանդիանոս որդի մեծին Կոստանդիանո || սի և նա լուեալ աղաչանաց նոցա առաքեաց թագ ՄԲ
և ծիրանի ի ձեռն Անտիոքոսի զօրագլխին իւրոյ և թագաւորեցոյց զԽոսրով որդի Տրդատայ ամս Թ (9)[89]։ Սա յոյժ կարճ հասակաւ ոչ ինչ արութիւն ցուցեալ, այլ միայն շինեաց զԴուին քաղաք առ ստորոտով լերինն Գեղամայ և անդ փոխեաց զարքունիս, վասն դառնաշունչ օդոյ փչմանն և տնկեաց անտառս և մայրիս և մեռաւ[90]։

Եւ թագաւորեաց Տիրան որդի Խոսրովայ ամս ԺԳ (13) կամակցութեամբ մեծին Վրդանայ ի Կոստանդիանոսէ և սա ևս վատթար ամենայն գարշութեամբ։ Յերրորդ ամի սորա փոխի ի Քրիստոս մեծն Վրդանէս և եդաւ ի Թորդան ընդ եղբօրն, որ առյապա և նշխարք սրբոյն Գրիգորի[91]։

Եւ ժողովեալ նախարարացն առ Տիրան և առաքեն զսուրբն

---

1 А ԴԾ։ 3 Б յայրսն։ 4 А հովվուց, ոմանց չիք։ 6 А նայ։ 9 А ի (ԽԷ) չիք։ 10 А արքայութեան, առաջագոյն։ 11 Б վարոց։ 14 А լիռնակեցիկ, Б Անտօնի։ 16 А Զմըշկածակ։ 20 А աւաք, Б մեծի։ 22 Б կեցեալ հայրապետ ամս ԺԷ փխ. ամս ԺԵ, ի չիք, А նմայ։ 23 Б յոչ։ 25 А ինքեանք։ 27 А թուղթ գրեն, Б Կոստանդինոս, А որդին։ 28 Б Կոստաղանոսի, А նոցա չիք։ 29 А զօրավարին։ 30 Λ սայ։ 32 Б Գեղամա, А փոխեաց։ 40 А Խոսրովու։ 42 А սորայ։

Յուսիկ, որդին Վրթանայ, ի Կեսարիա և ձեռնադրեն կաթողիկոս, որ եկաց ամս Զ (6)[92]։ Ընդ այն ժամանակս թագաւորեաց ուրացողն Քրիստոսի, պիղծն Յուլիանոս և հնազանդեալ զամենայն թագաւորս, ընդ որ յոյժ զարհուրեալ Տիրանայ գնաց առ նա Յասորիս և նա խնդրեաց պատանդս։ Եւ Տիրան ետ զՏրդատ որդին իւր կնաւ և որդովն Գնէլաւ և զՏիրիթ, որդի Արտաշէսի մեռելոյն որդոյն և արձակեալ զՏիրան փառօք պիղծն Յուլիանոս և տա նմա զպատկերն իւր նկարեալ ընդ դիւաց, զոր բերեալ Տիրան ագիտաբար կանգնեաց յեկեղեցոջն ի Ծոփաց գաւառին, զոր հանդիպեալ անդ սուրբ հայրապետն Յուսիկ ընկէց զպատկերն յերկիր և ոտիւքն կոխեալ մանրեաց առաջի ծառայիցն Յու[լի]անոսի, զոր իբրև ետես Տիրան, ասաց. «Գանել զնա ստուար վարուցօք». մինչ ի գանելն աւանդեաց զսուրբ հոգին և տարան եդին ընդ հարս իւր։ Եւ բերին զԴանիէլ ծերունին, որ էր աշակերտ սրբոյն Գրիգորի, զի նստուցանեն յաթոռն և նա դէմ յանդիման նզովեաց զՏիրան. և Տիրան ետ զնա խեղդամահ առնել[93]։

Եւ յաջորդէ զաթոռն Փառներսեհ յԱշտիշատոյ ամս Դ (4), ոչ ի նոյն ազգէ, զի որդիքն Յուսկայ Պապ և Աթանագինէ անարժան գործովք լեալք, ի միում աւուր երկոքին շանթահար լեալք յԱշտիշատ, թողեալ փոքր պատանի մի որդի Աթանագինէի, որ էր ի Կեսարիայ ի վարժ ուսման[94]։

Եւ յայսմ ամի Շապուհ նահատակեաց զսուրբն Սարգիս և զՄարտիրոս որդի նորա[95]։ Եւ կոչեաց Շապուհ զՏիրան խաբկանօք և խաւարեցոյց զԲ (2) ակն նորա, փոխանակ Բ (2) լուսաւոր հայրապետացն՝ որ սպան[96]։ Եւ Վըռամշապուհ խաւարեցոյց զնա ի քսութենէ Փի || սկայ, վասն ձիոյ միոյ, ուստի եղև անթիւ ՄԳ
արիւն, զի Հոռմայեցիքն ընդ Հայոց էին և յաղթեցին Պարսից, զայն իբրև ետես Շապուհ, և ոմանք ասեն Ներսեհ, զանցս աղէտից վաղվաղակի թագաւորեցուցանէ զԱրշակ[97]։

Եւ թագաւորեաց Արշակ ամս Լ (30). սա որդի Տիրանայ, թագաւորեաց ի Պարս և հանդերձ Տիրանաւ առաքէ ի Հայս[98]։ Սա, ի Գ (3) ամին իւրո, առաքէ զՆերսէս որդի Աթանագինէի ի Կեսարիայ առ արքեպիսկոպոսապետն Եւսեբի, զի ձեռնադրեսցէ զնա հայրապետ. և ի ժամ օծմանն եղև ահագին հրաշք, զի հոգին սուրբ էջ յերկնից աղաւնոյ նման ի վերա գլխոյն Ներսէսի և ապա ի վերա Բարսղի[99]։

Եւ եկեալ սուրբն Ներսէս պերճ փառօք նստաւ յաթոռ հայրապետական ամս ԼԴ (34), նման սրբոյն Գրիգորի. և զամենայն սահմանս բարեձևութեան, զոր արար ուսցիս ի կատարեալ պատմագրաց[100]։ Եւ Արշակ նշկահեաց զարքայն Հոռվմոյեցւոց Վաղէս։

3 А յուրացողն Քրիստոսի զպիղծն։ 4 А Տիրանայ չիք։ 5 А պատանդն, զորդին։ 6 А զՏրիթ։ 7 Б որդոյ։ 10 Б զո[ր]։ 11 Б Յոլիանոսի։ 13 А վարոցովք։ 16 Б զի Տիրան փխ. զՏիրան, А Տիրան չիք։ 18 Б որ փխ. ոչ։ 20 А լիեալք յԱշտիշատ ի միում։ 21 Б վարժս։ 23 Б որդին, խաբանօք։ 24 А լուսաւոր չիք։ 25 А Վարազշապուհ փխ. Վըռամշապուհ։ 26 Б Փիսակայ։ 28 А աղէտիցն։ 32 А սա երեք ամին 33 Б Կեսարիա, А արքեպիսկոպոսն։ 35 А աղաւնանման։ 37 А յաթոռն։ 40 А Հոռվմայեցոց։

Եւ Վաղէս գրեաց թուղթ աղաչանաց առ Արշակ ոչ խախտել զեղեալ պաշխինքն առաջնոց, իսկ նա գոռոզութեամբ արհամարհեաց զնա[101]։ Եւ ցասեաւ Վաղէս կայսրն կոչէ առ ինքն զԹէոդոս զօրագլուխն իւր և անհամար զօրս կուտեաց առ նմայ հրաման տայր քանդել զաշխարհս Հայոց և բերել ի հիմանց։ Զարհուրեալ յոյժ Արշակայ ի մեծէն Թէոդոսէ զօրաւարէ, առաքեաց ընդառաջ նորա զսուրբ հայրապետն Ներսէս առնել հաշտութիւնն։ Եւ նա գնաց մեծաւ թախանձմամբ աղերսեալ զԹէոդոս։ Եւ ետ զանցեալ ամաց հարկն լիով։ Եւ բարեցեպարտն և հեզն յամենայնի Թէոդոս լուեալ սուրբ հայրապետին և արար հաշտութիւն[102]։ Եւ գնաց սուրբ հայրապետն ընդ Թէոդոսի առ Վաղէնտիանոս և ի հանդարտութիւն շրջեաց զկայսրն։ Եւ նա զպատանդսն արձակէ ընդ նմա զԳնէլ որդի Տրդատայ։ Զայս Տրդատ ի բարկութեան ժամու սպան կայսրն, վասն այսորիկ զԳնէլ, որդի նորա առաւել շքեղացոյց, արծաթ և ոսկի բաղում ետ նմա, և տայ նմա զպատիւ հիւպատո[ս]ութեան. ընդ նմին և զծիրիթ արձակէ ընդ սրբոյն Ներսէսի և կոյս մի Ոլոմպիա, զքոյր իւր տայ Արշակայ ի կնութիւն[103]։ Եւ մեծաւ փառօք եկին առ Արշակ։ Եւ Գնէլ առ կին զՓառանձեմ դուստր Անդովկայ Սիւնեաց իշխանի և օրըստօրէ յառաջանայր։ Եւ Տրիթ նախանձեալ ընդ փառս նորա, քսեաց զնա առ Արշակ, թէ «Կամի ապստամբել ի քէն, տես, զի զմիտս ամենայն նախարարացն առ ինքն յան || կուցեալ է»։ Եւ տա ՄԴ
առատապէս զոսկի և Արշակ էհան զնա յԱյրարատէ տամբն իւրով և առաքեաց Յաղիովիտ ըստ առաջին սովորութեան զանդրանիկն պահել յԱյրարատ վասն թագին, և զայլսն ի Հաշտէնս և ի Յաղիովիտ, որպէս և զԳնէլ։ Եւ կուրացեալն Տիրան իբրև լուաւ, բարկացաւ որդոյն Արշակայ և անէծ զնա և Արշակ ետ խեղդել զՏիրան և առան վրէժք սրբոյն Յուսկա հայրապետին և Դանիէլի եպիսկոպոսին[104]։ Եւ յորժամ եկն Գնէլ ի կողմանս Աղիովտայ ոչ դադարէր Տրիթ ի չարախօսելոյ զնա։ Եւ Արշակ որսոյ աղագաւ անդ դնացեալ և նետիւ սպանին զնա իբր ի չըքմեղս եղեալ։ Եւ ի լալ Փառանձեմա ի վերա առն իւրոյ[105], տեսեալ Արշակա և տռպացաւ նմա և առ զնա։ Ոմանք ի պատմագրացն, որպէս Բիւզանդ, ասեն՝ Տիրիթ վասն գեղեցկութեան Փառանձեմա ետ սպանանել Արշակայ ի խորան վրանին, աղաչելով սրբոյն Ներսէսի և ոչ լուեալ[106]. և Մօվսէս Խորենացին այսպէս, որպէս յառաջ գրեցաք, սպանեալ նետիւ ի ստորոտ Նպատ լերինն, որ է Աբաղայ։ Եւ եղև Փառանձեմ կին Արշակայ։ Եւ նա ոչ հաւանէր մտօք նորա,

3 А Վաղէս չիք։ 4 А և չիք, Б ընդ փխ. առ։ 6 А առաքէ։ 7 Б հաշտութիւն։ 9 Б հարկսն, բարեցեպարարն, А ամենայնի։ 13 А նմայ, որդին։ 14 А առաւէլ չիք, շքացոյց։ 15 Б ե արծաթ, А պատիւ։ 16 А զՏրիթ։ 17 Б Ոլոնտիոս, А տա։ 20 Б Տիրիթ, А ընդ չիք, զփառս։ 23 Б ոսկի, А Արշակ չիք, յԱրարատէ տամբ։ 25 Б թագի, զայլն, А Խաշտէնս։ 26 և (զԳնէլ) չիք։ 27 А զնայ։ 28 Б հայրապետ։ 29 А Յաշխղովտայ։ 30 Б Տիրիթ։ 31 Б ան[դ]։ 32 А Փառանձէմայ, և (տռփացաւ) չիք։ 33 Б և ոմանք, А պատմաղրաց, Բուզանդ։ 34 А Տրիթ։ 35 А խօրան։ 36 А Խորենացի, յառաջ գրեցաք։ 37 А ի (ստորոտ) չիք, Б Արաղա։

զի Թաւամարմին էր, Արշակ սիրէր զՈլոմպիայ։ Եւ Նախանձեալ Փառանձիմայ բան եդ ընդ դրան երիցուն Մրջըմնիկ անուն և նա խառնեաց զմահադեղն ընդ փրկական խորհրդոյն և ետ Ոլոմպիայ և ելոյծ ի կենաց[107]։ Եւ լուր եղև առ Վաղէս, զի նշկահեաց Արշակ ի եսպան զքոյրն իւր, բարկացաւ և կամէր ելանել ծանր ամբոխիւ ի Հայս։ Եւ լուեալ Արշակայ մեծաւ պաղատանօք աղաչէ զսուրբն Ներսէս ոչ Թողուլ զվիճակն իւր, գնալ շիջուցանել զբարկութիւն Վաղէսի, զի բազում ժամանակս ոչ էր տեսեալ սուրբն Ներսէս զԱրշակ, վասն պղծութեան նորա։ Եւ նոքա եղեալ էին կաթողիկոս զՉունակ ապաշնորհն։ Եւ սուրբն Ներսէս ետես զաղէտս Հայաստանեացս չոգաւ առ կայսրն Վաղէս, տանելով ընդ ինքեան պատանդս զորդի Արշակայ զՊապ և զամենայն նախարարն[108]։ Եւ Վաղէս չարափառն ոչ ընկալաւ զՆերսէս իբր մի անգամ և երկու դըժող հրամանաց և աքսորեաց ի Պատմոս կղզին աշակերտաւքն հանդերձ, որ կացին անդ Թ (9) ամիս և կերակրեալ լինէին ի շնորհացն Աստուծոյ, որ ծովն ձուկն և հուր և փայտ ձգէր արտաքս և յապառաժ տեղւոջ ջուր բղխեցոյց[109]։ Եւ կալաւ առ ինքն զՊապ և զամենայն նախարարս Հայոց մեծաւ || պատուով արձակեաց աղաչանօք Մակեդոնի պղծոյ, որ յայն աւուրս Մե
եպիսկոպոս էր Բիւզանդիոյ, զի նոքա դաւանեցին ընդ նմա, վասն այնորիկ Թափեաց զնոսա ի ձեռաց Վաղէսի և հաշտեցաւ։ Եւ յետ սակաւ ինչ աւուր սատակեցաւ պիղծն Վաղէս այրմամբ հրոյ յԱգրիանուպօլիս և առնու զԹագն մեծն Թէոդոս կամակցութեամբ Գրատիանոսի[110]։ Եւ դարձոյց զամենայն սուրբ հարսն ընդ որս և զսուրբն Ներսէս և պատուով առ ինքն պահէր մինչև արար ժողով ՃԾ (150) եպիսկոպոսաց ի Կոստանդնուպօլիս, վասն հոգէմարտին Մակեդոնի և նզովեցին զմեռեալ զի նորա և հաստատեցան ի հաւատս։ Եւ դարձաւ մեծն Ներսէս ի Հայաստան[111]։ Եւ ետես զի Արշակ քաղաք ապաստանի էր շինեալ ամենայն չարագործաց, անէծ զնա և զբնակիչսն. և աղօթիւք սրբոյն սատակեցան ամենայն բնակիչք, ըշտ երեէր ի ձեռս նոցա և մեռանէին։ Եւ կործանեցաւ քաղաքն Արշակաւան[112]։

Եւ Շապուհ առաքեաց Զալաոզան Պալհաւիկն և ըմբռնէ զԱրշակ և զՎասակ զօրավար որդի Վաչէի, որդոյ Մամգոնայ և տարեալ ի Պարս և եդ Ցանդմշն բերդի, որ սաւուղաբար մեռաւ[113]։ Եւ զՄերուժան Արծրունի ուրացողն առաքեաց Շապուհ ի Հայս, տալով նմա զքոյրն իւր, գալ միապետել զաշխարհս Հայոց ի վերայ Պարսից. և նա ջանայր խափանել զքրիստոնէութիւն և շինէր ատրուշան կրակի[114]։ Զայն տեսեալ մնացեալ նախարարացն Թոզին զկանայս իւրեանց ի յամուրս և գնացին լալով անկան յոտս

1 Б սիրէր Արշակ զՈլոմպիայ, նախանձել։ 6 A աղաչէր։ 10 A ապաշնորհ, Ներսէս չիք։ 11 A յինքեան։ 12 A զորդին։ 13 A զսուրբն զՆերսէս, Б Ներսէս։ 14 A դժրող։ 18 A պատուով մեծարեալ։ 19 A աւուր։ 20 Б էր չիք, A Բուզանդիոյ։ 22 A աւուրց։ 23 Б Ցագիանուպօլիս։ 24 Б զարձոյ, A զհողեոր փխ. զամենայն, հայրսն։ 30 A զբնակիչս նոքա, Б [ա]զօթիւք։ 31 A ձեռըն։ 34 A Վասակ։ 36 Б ուրացօղն։ 37 A զքոյր, A ի վերայ չիք։ 38 Б և (շինէր) չիք։ 39 Λ ատրուշանս։ 40 A գնացին չիք։

սրբոյն[115], ոչ անտես առնել զվիճակն Աստուծոյ. և լուաւ նոցա, և գնաց առ մեծն Թէոդոս թագաւորեցուցանել զՊապ, որ էր ի պատանդի առ նմայ[116]։

Եւ թագաւորեցոյց կայսրն Թէոդոս զՊապ, որդի Արշակայ, ամս Է (7)։ Եւ անթիւ զօր գումարեաց ընդ նմա և զՏէրենդ զօրաւարն ընդ նմա։ Եւ եկեալ տեսին զՄերուժան Արծրունի ուրացողն, զի պետացեալ ունէր զաշխարհս Հայոց։ Եւ պատերազմեցան ընդ զօրս Պարսից և սուրբն Ներսէս ել ի գլուխ լերին Նպատայ, օրհնեաց զՄուշեղ, որդի Վասակայ, կախելով զգաստառակ ձեռացն ի նիզակն նորա։ Եւ զամենայն զօրսն խաչակնքեալ մղեաց ի պատերազմ։ Եւ աղօթիւք սուրբ հայրապետին ել հողմ ուժգին ի կողմանցն Հայոց ընդդէմ Պարսից և կոտորեցին զնոսա և զամենեսեանսն փախստական արարին։ Եւ ըմբռնեալ Սմբատ Բագրատունի զՄերուժան ուրացօղն և շիշ երկաթի շողացուցեալ բոլորեալ և եդ ի գլուխ նորա. և բարձաւ չարն ‖ ի միջոյ և ոչ ՄԶ
ետես զփառս Աստուծոյ և անհոգապէս տիրեաց Պապ աշխարհիս։ Եւ մեծն Ներսէս դնէր վկայութիւն ոչ գնալ ընդ ճանապարհս հաւրն, այլ կեալ ըստ կանոնաց աստուածպաշտութեան[117]։ Եւ Պապ ամաւթալի պղծութեամբ կայր յարւամոլութեան, զի անօրէն մայրն նորա ի ժամ ծննդեան ձօնեալ էր զնա դիւաց։ Եւ դեքն յայտնի երեւէին նմա և էր ի գործ զաղրագործութեան[118]։ Եւ սուրբն Ներսէս բազում անգամ խրատէր զնա և նայ ոչ լսէր, վասն որոյ տա նմայ դեղ մահու ի գեօղն Խախ Ցեկեղեաց գաւառին և ելոյծ ի կենաց ի Ե (5) ամի իւրոյ։ Եւ Պապ ի չքմեղս եղեալ և աշխարհ ամենայն սգացեալ ի վերա սրբոյն Ներէսի[119]։ Եւ եդին կաթողիկոս զՍահակ ոմն ի զաւակէ Ողբիանոսի ի Մանածկերտոյ ամս Դ (4) և առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու։ Զոր լուեալ Բարսղի մեծի զսպանումն սրբոյն Ներսէսի անէծ զպիղծն Պապ և զիւրսն ամենայն և երդուաւ այլ ոչ ձեռնադրել եպիսկոպոս Հայոց[120]։ Եւ Պապ ապստամբեալ ի Թէոդոսէ ձեռն ետ ի Շապուհ։ Եւ իմացեալ մեծին Թէոդոսի առաքեաց զԱնատոլիայ զօրագլուխն, որ ըմբռնեաց զՊապ և կապանօք էած առ Թէոդոս. և նա տեսութեան ոչ արար արժանի, այլ սակրով վճարեալ և ի ծով ընկեցեալ, վասն սրբոյ առն Աստուծոյ, զոր նա սպան[121]։ Եւ թագաւորեցոյց զՎարազդատ ոմն Արշակունի, որ առ ինք էր[122] ի պաղան[գ]ի և թագաւորեաց ամս Դ (4)։ Սա յար և նման Տրդատայ, այլ մանուկ տիօք և գնացիւք։ Սա կացոյց զՋաւէն կաթողիկոս, եղբայր Սահակայ, ամս Դ (4)։

Այլ Վարազդատ միտեալ զհետ Շապհոյ, զոր իմացեալ Թէոդոսի կոչէ առ ինքն և երկաթեղէն կապանօք ետ տանել ի Թուլաս կղզի[123]։

---

3 Б պատա[ն]դի։ 6 A զօրավար։ 7 Б ուրացօղն։ 8 A ելեալ։ 13 A Յաջեալսն-փխ. զամենեսեանսն, Б [ը]մբռնեալ։ 14 A Բագրատունի չիք։ 19 A կեայր, Б յարուամոլութեան։ 20 A մայր։ 21 A էր չիք, զաղրաւութեան։ 22 A և խրատէր բազում անգամ սուրբն Ներսէս։ 24 A էլոյծ զնա։ 29 A զպիղծ։ 33 A սակրօվ։ 35 A Վարազդատ։ 36 Б ինքն։ 37 Б տիոք։ 39—40 Թէոդոս։

Եւ թագաւորեցոյց զԲ (2) որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ, պատանդ պահելով զմայր մանկանցն, որք եկեալ ճզօրեղարար յաղթեցին Պարսից։ Եւ եկեաց հայրապետ Ասպուրակէս ամս Ե (5), եղբայր Սահակայ և Զաւենա[124]։ Յերկրորդ ամին Արշակայ մեծն Թէոդոս վախճանի և առնուն զթագաւորութիւն որդիքն Արկադէոս ի Բիւզանդիայ և Ոնորիոս ի Հռոմ։ Իմացեալ Շապհոյ զթուլամոլթութիւն Արկադեա խօսի ընդ նմա զխաղաղութիւն. և Արկադ յանձն առ և բաժանեն Շապուհ և Արկադ զաշխարհս Հայոց յերկուս։ Արշակ ելեալ յԱյրարատէ գնաց ի կողմն Յունաց Յեկեղեաց գաւառն, || վասն քրիստոնէութեան և մօրն, որ ի պա- Մէ տանդ[125]։ Եւ Վաղարշակ ընակեցաւ ի Յայրարատ ի բաժնի Պարսից, որ եկաց ամի մի և մեռաւ։ Իբրև ետես Շապուհ վաղվաղակի թագաւորեցոյց զԽոսրով[126]. Եւ թագաւորեաց Խոսրով Արշակունի, որ էր պատանդ առ Շապուհ, սա թագաւորեաց ամս Ե (5)։ Իբրև լուան նախարարքն Հայոց, որ ի բաժնին Յունաց, որ ընդ Արշակայ գնացեալ էին, թէ Շապուհ թագաւոր կացոյց Արշակունի, ուրախացան, թողին զԱրշակ և գնացին ի կալուածս իւրեանց առ Խոսրով[127]։

Եւ Մեսրովպ աշակերտ մեծին Ներսէսի. յորժամ վախճանեցաւ էր նօտար ի դրան արքունի մինչև ցարդ և թողեալ զհոգս արքունի գնաց ի Գողթան կեալ միակեցութեամբ[128]։

Եւ թագաւորն Խոսրով իբրև տիրեաց ամենայն նախարարացն յղէ առ Արկադ, խնդրէ զբաժինն Յունաց, զի ծառայեսցէ Բ (2) թագաւորաց և տացէ զիւրաքանչիւր բաժնի զհարկն ի նոյն թագաւոր. և զի մեռեալ էր Արշակ նոցայ եդեալ թագաւոր և Արկադ յանձն էառ[129]։

Եւ եկաց կաթողիկոս սուրբն Սահակ, որդի մեծին Ներսէսի, ամս ԾԱ (51), ի Դ (4) ամի թագաւորութեան Խոսրովու կամակցութեամբ նորա։ Իբրև լուաւ Շապուհ բարեկամանալն Խոսրովու առ Արկադ և առանց հրամանին նստուցանել զՍահակ հայրապետ, բարկացաւ և առաքեաց զԱրտաշիր որդին իւր, որ եկեալ ըմբռնեաց զԽոսրով և ետ տանել Յանուշն բերդի, որպէս յառաջ զԱրշակ[130]։

Եւ թագաւորեցոյց զՎռամշապուհ եղբայր Խոսրովայ ամս ԻԱ (21)։

Եւ Շապու[հ] Պարսից յետ ՀԲ (72) ամի թագաւորութեան իւրոյ մեռանի առեալ զթագաւորութիւն Արտաշիր, որդի նորա, ամս Դ (4)։ Առ սա գնաց մեծն Սահակ և թախանձեալ, զի սպարապետ կացուսցէ Հայոց զՀամազասպ փեսայն իւր Մամիկոնեան փոխանակ Սահակայ ասպետի։ Եւ Արտաշիր կատարեաց զխնդիրն

1 A եղբայրս այսինքն որդիսն։ 2 Б մանկացն։ 4 A Զաւէնայ, յերրորդ փխ. յերկրորդ։ 5 A առնու, որդիքն չիք։ 6 A Բուզանդիա, Б Հռովմ։ 7 Б Ա[ր]կադեա։ 8 Б և բաժանեն։ 9 AБ յԱրարատէ։ 15 A բաժնի։ 16 A որ չիք, Б Շապուհու։ 17 A ուրախացան յոյժ, Б ի չիք, կալուածս։ 19 A Մեսրոպ, Б վախճանեցաւ։ 24 A իւրաքանչիւր։ 25 Б թագաւորն։ 26 A յանձ։ 29 Б զբարեկամանալն։ 33 A յառաջն Արշակ։ 34 A Խոսրովու։ 37 A իւրոյ չիք։ 38 A գընաց։

*դրելով առ Վռամշապուհ մեր թագաւորն։ Եւ իբրև եկն սուրբն Սահակ և կատարեցին զհրամայեալսն*[131]*։*

*Մեռաւ Արտաշիր արքայն և թագաւորեաց Վռամ, որ և Կրմանն կոչեցաւ, ամս Ժ (10)։ Եւ զնոյն սէր և բարեկամութիւն կալաւ ընդ Հայոց*[132]*։ Ցայսմ ժամանակի Մեսրովպ սքանչելի այրն Աստուծոյ եգիտ զձայնաւոր գիրսն, տուեալ Աստուծոյ ի վիմին տպաւորեալ ի Բալու։ Եւ սկսան Մեսրովպ և Սահակ թարգմանել զԱստուածաշունչ գիրս հանդերձ աշակերտօքն՝ Եզնակ, Կորիւն և փոքունք սոցա՝ Յովսէփ, Յոհան, Ղեոնդ, Սահակ, Մովսէս Քերթօղն և եղբայրն նորին Մամբրէ Վերծանօղն, սուրբն Եղիշէ, յետոյ Դաւիթ Անյաղթն և Յոհաննէս, տէր Աբրահամ. Մուշէ,* ՄՐ *Արձան, Խոսրով, Ղազար Փարպեցի և յետ սոցա Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն և Հոփաննոս Սամոստացի*[133]*։*

*Եւ Վրամշապուհ բարուք վախճանեալ. և սուրբն Սահակ խնդրէ ի Վռամայ, Պարսից արքայէ, թագաւորեցուցանէ զկապեալն Խոսրով, զոր արարն իսկ*[134]*։*

*Եւ թագաւորեաց Խոսրով ի կրկնումն ամ մի միաւ*[135]*։ Եւ Յազկերտ, որդի Վռամայ, թագաւորեաց Պարսից, թագաւորեցուցանէ Հայոց զՇապուհ որդի իւր ամս Դ (4), զոր ոչ ընկալան և ոչ դնէին նմա պատիւ թագաւորի իշխանքն Հայոց։ Եւ մեռաւ հայր սորա Յազկերտ, վասն որոյ անարգանօք վարեցին և մեռաւ։ Եւ մնաց երկիրս Հայոց ամ մի անթագաւոր, ժողովեցան իշխանքն առ սուրբն Սահակ և գնացին առ Վռամ երկրորդ, որդի Յազկերտի, և խնդրեցին ի նմանէ թագաւոր Արշակունի. և նա թագաւորեցոյց զԱրտաշիր որդի Վռամշապհոյ։ Եւ թագաւորեաց Արտաշիր, որ և Արտաշէս, ամս Դ (4)։ Եւ զի սա զեխ էր և իգամոլ, միաբանեալ նախարարքն առ սուրբն Աահակ, զի օգնեսցէ նոցա լինել չարախօս զնմանէ առ Վռամ, զի ընկեսցեն զնա և հեթանոս ածեն ի տեղի նորա և սուրբն ոչ միաբանեցաւ ընդ նոսա։ Եւ նախարարացն գնացեալ ի Պարս հանդերձ Սուրմակաւ Արծկեցոյ առ Վռամ երկրորդ և չարախօսէին զԱրտաշրէ և զՍահակ հայրապետէ. և նա լուաւ նոցա եդ ի կապանս զԱրտաշիր և զսուրբն Աահակ արգել ի կաթողիկոսութենէ, զՍուրմակ չարալեզու տալով ի տեղի նորա և բազում պարգևս տուեալ նախարարացն արձակէ Պարսիկ մարզպանաւ Միհրշապուհ անուն*[136]*։*

Աստանօր բարձաւ թագաւորութիւն Արշակունեաց ի Հայոց տևեալ ամս ՇԿԸ (568)[137]: Եւ բարձաւ հայրապետութիւն ի ցեղէ Լուսաւորչին, զի թէպէտ յետ այսորիկ մնաց սուրբն այլևս ԺԶ (16) ամ, սակայն անարժան վերակացուք ի Քրիստոսէ ՆԾԱ (451) ամ, և ի Լուսաւորչէն ՃԽԵ (145) ամ մինչև ցայժմ[138]։

*Եւ կեցեալ Սուրմակ ստոխասէրն ամ մի հալածեն զնա նա-*

---

4 A *և (հրմանն)* չիք, *նոյն։* 6 Б *էգիա։* 7 Б *թարքմանել։* 9 Б *Յովսէփ։* 10 A *եղբայր, վերծանողն։* 12 Б *Փարպիցի։* 14 A *Բարուք,* A *վախճանեալ, Սահակ* չիք։ 17 A *և մեռաւ։* 18 A *Վռամա թագաւոր։* 22 A *յերկիրս։* 24 *Ազկերտի։* 28 Б *Վառամ։* 29 A *միաբանեցեալ։* 34 A *աւեալ։* 36 Б *թագաւորութիւնն։* 37 A *հայրապետութիւնն։* 38 Б *սուրբն Սահակ, այլևս* չիք։ 41 Б *ստխասէրն* փխ. *ստոխասէրն։*

խարարքն և խնդրեն յարքայէն Պարսից զԲրգիշոյ Ասորի վատ-թար քան զնա, որ եկաց ամս Գ (3)։ Դարձեալ աղաչեն և եա զՇմուէլ և նախարարքն յերկուս բաժանեալ, ոմանք ասէին, զոր թագաւորն տայ նայ լիցի կաթողիկոս, իսկ Մանէճ Ապահունի և Սպանդարատ Արշակունի խնդրէին զսուրբն Սահակ հայրապետ նաև զՄեսրոպ և այլ եպիսկոպոսունքն խնդրէին զսուրբն Սահակ, վասն որոյ հաւանեալ Վռամայ կատարէ զերկուց դասուց զխըն-դիրն տա զՇմուէլ հակառակ աթոռ և տա սրբոյն Սահակայ զիւր վիճակն միայն վարդապետել և ձեռնադրել, զոր Շմուէլն կամիցի։ Եւ թագաւորն ասէ ցսուրբն Սահակ. «Երդմնեցուցանեմ զքեզ ի քոյին հաւատն ‖ Մթ և յաւետարանն, զի միամիտ կացցես և յորդո-րեսցես զամենայն կոյլ ի ծառայութիւն մեզ և մի պատրել ի մոլար հաւատակցութիւնն Յունաց»։ Զայս իբրև լուաւ սուրբն Սահակ ի բարկութիւն բրդեալ, զմահ յանձն առեալ, կանգուն կա-ցեալ ի բեմբասութեան ձևի, համեստ հայեցւածով. «Ո՞ւաւ լիցի կարծել մոլար զՅոյնսն», և պատմեաց զերախտիս նախնեաց իւրոց առ նախնիս նորա և այլ բազում բան և յանդիմանեաց զհրապաշտութիւն նոցա։ Եւ յոյժ պակեաւ թագաւորն և ամենայն ատեանն, հրամայեաց արծաթ բազում տալ նմա իբրև համար-ձակախօսի առաջի այսպիսի հզօր թագաւորի, զի Աստուած յար-գոյ ցուցանէ զծառայս իւր։ Եւ սուրբն Սահակ ասէ. «Արծաթ քո քեզ լիցի, բայց խնդրեմ, զի զՎարդան թոռն իմ, որդի Համա-զասպայ, արասցես ստրատելատ բաժնի քում, որպէս և Թէոդոս իւրոյ բաժնին և զամենայն նախարարսն մատուսցես ի դահի իւրում»։ Զոր և արարն իսկ բազում շքեղութեամբ արձակէ զնոսա։ Բայց Շմուէլ վատթարն կացեալ ամս Ե (5) մեռանի։ Եւ ժողովեալ նախարարացն առ սուրբն Սահակ անկան յոտս նորա ու-նել զաթոռն և սուրբն ոչ լուաւ նոցա մինչ կարի աղաչեցեալ ասաց զտեսիլն իւր ի Վաղարշապատ քաղաքի ի ախս սարկաւա-գութեան՝ զջնջումն Արշակունեաց թագաւորաց և զքահա-նայութիւն ի ցեղէ սրբոյն Գրիգորի մինչև ի յետին ժամա-նակն ապա նորոգիլ Բ (2) գաւազանացն[139]։ Եւ նախարարքն վա՜յ կարդացեալ թողին զնա ի կամս իւր։ Եւ հանգեաւ մեծն Իսահակ նաւասարդի Լ (30), յորում աւուր ծնեալ էր, ի յերկրորդ ամի Յազկերտի, որդոյ Վռամայ, և յերրորդ ամի մարզպանու-թեան Վարդանայ։ Եւ եդ ի տեղի իւր զսուրբն Մեսրոպ, Զ (6) ամիս կեցեալ հայրապետ, և ննջեաց ի Քրիստոս[140]։ Եւ եդ ի տեղի իւր զՅովսէփ աշակերտն իւր ամս Ը (8). էր սա ի դաւառէն Վա-

1 Б զԲրդիշոյ։ 3 А երկուս, ասէին չիք։ 5 А Սպանդարադատ Արշարունի։ 6 А Մեսրովպ։ 8 Б տայ, А սրբոյն չիք։ 13 А հաւատակցութիւն։ 14 А բարկութեան, յանձ։ 15 А հայեցուածովք։ 16 А զՅունսն, զերահտիսն։ 18 А զհրապաշտութիւնս։ 19 А հրա-մաեաց, Б իբր։ 20 Б զի չիք, զԱստուած։ 21 А ասէ չիք, քոյ։ 22 Б թ[ո]ռն, Համայզասպա։ 23 Б և (Թէոդոս) չիք, А Թէոդորոս։ 25 А թագաւորն փխ. արարն, արձակեաց։ 28 А զաթոռ։ 29 Б սարկաւագութեան։ 30 А զհայրապետութիւն փխ. զքահանայութիւն։ 31 Б մինչ։ 33 Б հանգաւ։ 34 Б Սահակ, որում։ 35 А ամն Աղկերտի, Б որդւոյ, А յեր-րորդի։ 37 Б կացեալ, А վազջանի նրնջեաց։

յոյ ձորոյ, ի դեղջէ Հողոցմաց։ Բայց գիտելի է, զի յորժամ հանդերձ ի Քրիստոս սուրբն Սահակ և սուրբն Մեսրոպ, դարձեալ զօրացաւ Սուրմակ և Զ (6) ամ ինքն կատարէր զձեռնադրութիւնն և ոչ իշխէր սուրբն Յովսէփ ասել ինչ։ Եւ յորժամ մեռաւ Սուրմակ, ապա համարձակեալ Յովսէփ ամս Բ (2)։ Սա արար ժողով ի Շապիվանս, ուր ղտուգանաց կանոնս կարգեցին։ Սա նահատակեալ ընդ սրբոց Ղևոնդեանց ի Պերոզէ որդւոյ Յազկերտի, յետ Բ (2) ամի նահատակութեան սրբոց Վարդանանցն[141], զի այս Բ (2) ամս ի կալանս կացին ի Պարս ի Նուշաւոր քաղաք և շահեցան զերանելի մոգպետն Ներշապուհ։ Եւ մինչ ի կալանսն էին հրամաեաց Յուացեալ || նախարարացն տալ ձեռնադրել ըզ Դիւա ՄԺ կաթողիկոս, որ եկաց ամս Ժ (10)։ Էր սա ի գաւառէն Վանանդայ, ի դեղջէ Օդմսոյ։ Եւ ոմանք ի պատմագրացն ասեն, թէ Վարդան կացոյց զսա կաթողիկոս, յորում աւուրսն դարձան ի Հայս Յաթենայ սուրբ Մովսէս Քերթողն և Մամբրէ և Դաւիթ, և թուի թէ ի լինել ժողովսյն Քաղկեդոնի վաղջանեալ էր Գիւտ, զի շփոթեալ երևի միջոցս[142]։

Եւ յետ կատարման սրբոց Վարդանանցն ՌՄԼ (1230) ընկերօքն հրոտից Լ (30), ի ԺԶ (16) ամին Յազկերտի և Յուաց երկիրս Հայոց անիշխան ամս Զ (6), յետոյ զղջացեալ Պերոզ, որդի Յազկերտի, կացոյց իշխան Հայոց զՄագնոս[143], որդի Վարդանայ, որ եկաց ամս Ի (20)։ Յառաջին ամին սորայ եկաց հայրապետ Յոհան Մանդակունի ամս ԺԲ (12) և ոմանք Զ (6) ասեն։ Յաւուրս սորայ սուրբ հայրն Թաթուլ Վարոսիւ եղբարբն թողեալ զամենայն և գնացեալ ի լեառն Կաղզուանայ, որ Վիշապաձոր անուանի և անդ ճգնեալք որպէս զանմարմին[144]։

Եւ յետ Յոհաննու տէր Բաբգէն, ի գաւառէն Վանանդայ, ի դեղջէ Օդմսոյ, ամս Զ (6)։ Յաւուրս սորայ միաբանեալ եպիսկոպոսք և վարդապետք և անյաղթ փիլիսոփայք, աշակերտք սրբոց թարգմանչացն և միաբան նզովեցին զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի և զդուշացուցին զաշակերտեալս[145]։

Եւ կացեալ իշխան Հայոց Վահան, որդի Հմայեկի, եղբօր Վարդանայ, ամս ԼԱ (31), կամակցութեամբ Վաղարշայ, որդւոյ Պերոզի, թագաւորին Պարսից։ Սա նորոգեաց զամենայն եկեղեցիս Հայաստանեացս զաւերեալսն ի Պարսից։ Սա և զԱլանս արգէ[լ]ական արար[146]։

Եւ յետ Գիւտա[147] նստաւ տէր Սամուէլ ամս Ժ (10) ի Յարծկոյ. ապա աէր Մուշէ, ի գաւառէ Կոտայից, ի գեղջէ Աղաբերից, ամս Ը (8). ապա Սահակ, ի գաւառէ Հարքայ, ի դեղջէ Զակայ,

---

2 Б հանդան։ 3 А զձեռնադրութիւն։ 4 А ասել սուրբն Յովսէփ։ 5 Б Յով[ս]էփ։ 6 А տուղանաց։ 8 А Վարդանանց։ 10 А կալանս։ 11 Б հրամայեց։ 14 Б աւուր։ 15 Б սուրբն, Б Քերթողն։ 16 А Քաղկեդոնի չիք, Б վա[խ]ճանեալ։ 18 А Վարդանեանց, ՌԼԶ փխ. ՌՄԼ։ 19 А Ազկերտի։ 20 А յերկիրս, Հայոց չիք։ 21 А զՄամգնոս։ 24 Б հայրն Թաթուլ։ 25 А լեառն Կաղըզվանայ։ 26 А ճգնեալ։ 28 А դեղջէն։ 29 А աշակերտօք։ 31 А զաօւմարն, Б և [զդուշացուցին] չիք, զդուշացուցին, А աշակերտեալսն։ 32 А Հմայակէ։ 37 А Գիւաա, Б Սմուէլ։ 38 А Կոտէից։ 39 А ութ։

*ամս Է (7). ապա տէր Քրիստափոր, ի գաւառէ Բագրեւանդայ, ի գեղջէ Տիրառճոյ, ամս Զ (6)*[148]*.*

*Եւ յետ Յոհաննու*[149] *եկաց իշխան Հայոց Վարդ Պատրիկ, եղբայր նորա, ամս Դ (4)։ Սա բազում արեան ճապաղիս արար ի Հոռոմոց և տեսլեամբ ասացին նմա շինել բազում եկեղեցիս յանուն սրբոյն Ստեփաննոսի և կատարեաց անյապաղ։ Եւ զկնի Վարդ Պատրկայ մարզպանք Պարսիկք տիրեցին ամս ԺԱ (11)*[150]*։*

*Եւ յետ Քրիստափորին տէր Ղեւոնդ, ի գաւառէ Առբերանոյ, ի գեղջէ Փոքր Առեստոյ, ամս Գ (3)։*

*Եւ եկաց իշխան Մեժէժ Գնունի ամս Լ (30)։*

*Յետ Ղեւոնդի ‖ եկաց հայրապետ Ներսէս, ի գաւառէ Բագրե-* ՄԺԱ
*ւանդայ, ի գեղջէ Աշտարակայ, ամս Թ (9)։ Յետ սորայ Յոհաննէս, ի գաւառէ Գաբեղենից, ի գեղջէ Ոնձգնուտայ*[151]*, ամս ԺԵ (15)։ Եւ ապա տէր Մովսէս ամս Լ (30), ի գաւառէ Ցաղագածոտն, ի գեղջէ Եղիվարդայ։ Սա Ժ (10) ամին իւրոյ, և ոմանք Դ (4) ասեն, և յիշխանութիւն Մեժէժայ և Յուստինիանոսի Կոստանդնու և Խոսրովու Պարսից, այս Մովսէսի հրամանաւ եդաւ Թվականն Հայոց, յետ լրման Մ (200)-ևկին Անդրէասայ, ի Գուին քաղաքի ի կենարար ծննդենէ Փրկչին մերոյ ամք ՇԾԳ (553), և ի Լուսաւորչէն ՄԽԱ (241) և ի գտանելոյ գրոյն ՃԺԷ (117) և էր Յունաց Թուականն ՅԴ (304) և Ասորոց Թուականն ՊՀԱ (871), ոմանք ի պատմագրաց ասեն, թէ առ Ներսէսիւ եղաւ Թվական, բայց յոլովքն առ այս Մովսէսիւ ասեն. Թվական Ժ (561) կարգեցաւ Շ (500)-եակն ի ձեռն Էասայ Աղէքսանդրացոյ*[152]*։*

*Այս Մովսէս զԿիւրիոն ոմն, փակակալն իւր, եպիսկոպոս ձեռնադրեաց Վրաց և Գուգարայ և Եգերացոց նահանգին ըստ առաջնոցն սովորութեան։ Եւ Կիւրիոնս այս միտեցաւ զհետ ժողովոյն Քաղկեդոնի և հայրապետն Մովսէս բազում անգամ խրատեաց զնա և նա պատճառէր զպատճառս մեղաց սուտ կարծել զիրն*[153]*։ Եւ յետ Մովսէսի նստի տէր Աբրահամ, ի գաւառէ Ըռըշտունեաց, ի գեղջէ Աղբաթանից, ամս ԻԳ (23) ի մարզպանութեան Տաճկաց, զի յետ Մեժեժայ իշխանի Տաճիկք տիրեցին Հայոց ամս ԼԶ (36)։ Եւ յաւուրս Աբրահամու յայտնի եղև աղանդն Կիւրոնի, վասն որոյ նզովէ զնայ և բաժանեցան Վրացիքն ի Հայոց և եղեն քաղկեդոնիք։*

Այսուհետև կամիմ թվականաւն ասել զամենայն բան, զի ի Վարդանէ նետէ չփոթեալ տեսանեմք զիշխանութիւն Հայաստանեաց և թագաւորութիւն ամենևիմբ բարձեալ, զի թէպէտ երբեմն-երբեմն

---

*3* А *Յոհանու*, Б *Հայոց Վար[դ]։ 6* Λ *Սահփաննոսի։ 8* А *Քրիստափորի, Առբերունունոյ։ 10* Б *Մէժէժ*, А *Գնունունի։ 11* А *գաւառէն։ 12* А *Աշտարակայ*, Б *այսօրիկ* փխ. *սորայ։ 13* А *Անձգնուտայ։ 15* А *Եեղիվարդայ*, Б *ի Ժ։ 16* А *իշխանութիւն։ 17* А *Թվական։ 18* Б *Մ-ևկն*, А *Անդրիասայ։ 19* А *ծննդէնէն։ 20* А *ի (գտանելոյ)* չիք։ *22* Б *պատմագրացն, տէր Ներսէսիւ, Թվականն, 23* А *յոլովք։ 24* А *Շ-ակն*, Б *Աղէքսանդրացւոյ։ 25* А *ի Կիւրիոն։ 26* А *Գուգարաց*, Б *Եգերացւոց*, А *նախանգին։ 27* А *Կիւրինոս։ 28* А *Մովսէս* չիք։ *30—31* А *Ըռուշտունեաց։ 33* А *Կիւրեննի։ 35* Б *Քաղկէդոնի։ 36* А *Թվականաւ։ 37* А *Վարդանայ, Հայաստանեացս։ 38* А *Թագաւորութիւնն։*

իշխանք նստէին, այլ ի հրամանէ Պարսից և Յունաց և էր զի ինքեանք նստէին մինչև զԲագրատունիսն այլ ատ մարզպանք Պարսիկք տիրէին, այլ մեք թվականաւն զկարգն ցուցից:

*Թվին Ի (571) Նստաւ կաթողիկոս տէր Աբրահամ յետ Մովսէսի, որպէս յառաջն ասացի։ Ապա տէր Յոհաննէս, ի Կոգովիտ գաւառէ, ի գեղջէ Գաբարանայ, ամս ԻԳ (23)։ Զսա յոլովք ի պատմագրաց ընդ Աբրահամու ասեն ի միում ժամանակի*[154]*։*

*Մօրիկ կայսրն նստուծեալ ի Հայս ի բաժնի իւրում, բայց մեք ստուգեցաք, որպէս յառաջն ասացի։*

*‖ Թվին ԾԷ (608) Դաւիթ Սահառունի մարզպան եղեւ* ՄԺԲ
*Հայոց ամս Լ (30)*[155]*։*

*Թվին ԿԲ (613) ըստ բաժանումն։ Եւ ի յայսմ ամի ելեալ Մահմետ սուտ մարգարէ Տաճկաց, յազգէ Իսմայէլի, գլուխ վաճառականաց Եգիպտոսի։ Սա զօրավար Քաղրթի, որ էր գլուխ իսմայէլականաց և Քաղրթ իւրատովն Մահմետի տիրեաց Պարսից, Հայոց և Ասորոց, Եգիպտացոց, Մարաց և Պարթևաց և Պաղեստինացոց, և իբրև յաջողեցաւ ըստ ացան զսա օրէնսդիր ըստ պղծութեան կամաց իւրեանց։ Սա կեցեալ իշխան ամս Ի (20)։ Եւ յետ սորա տիրեցին Ապուբաքր, Օթման և Օմառ։ Այլ մեք դարձցուք ի վեր ուստի թողաք։*

*Թվին ՀԷ (628) Նստաւ կաթողիկոս տէր Կոմիտաս, ի գաւառէ Արագածոտն, ի գեղջէ Աղցից, ամս Ը (8)։ Սա նորոգեաց զվկայարան սրբոյն Հռիփսիմեայ և աղօթիւք գտեալ զսուրբ մարմինն անյայտ տեղ և չափեաց Թ (9) թիզ և Դ (4) մատ կնքեալ ի յարկեղ սրբոյն Գրիգորի և սրբոյն Սահակայ և ոչ իշխեաց բանալ, այլ ինքն ևս կնքեաց և եդ ի ներքոյ սեղանոյն և ասաց ողբալով «Անձինք նուիրեալք»*[156]*։ Ապա տէր Քրիստափոր ամս Դ (4)։ Սա յաղատ տանէ, ազգական Աբրահամու*[157]*։ Եւ ապա տէր Եզր, ի գաւառէ Նգայ, ի գեղջէ Փառաժնկերտէ, ամս Ժ (10)։ Սա կուրացեալ կաշառօք ի Հերակլէ դարձաւ քաղկեդոնիկ. և ետ նմայ Հերակլ կայսրն զերրորդ մասն Կողբայ գին հաւատոյն և փոփոխեաց և խախտեաց զառաքելական սահմանս. եղև այս թվին Զէ (638)։*

*Թվին ՃԸ (659) եկաց իշխան Թէոդոս Ռշտունի ամս ԻԵ (25) ձեռամբ իսմայէլականաց*[158]*։ Սա շինեաց զՑաղթամար կղզին։*

*Թվին ՂԶ (647) Նստաւ հայրապետ տէր Ներսէս, ի գաւառէ Տայոց, ի գեղջէ Իշխանայ, ամս Ի (20), ձեռամբ Թէոդորոսի իշխանի։ Սա մեծապէս նորոգեաց զէջմիածինն և զԶոր Վիրապն և զԴվնայ սուրբ Սարգիսն։*

---

3 Б *ցուցցուք*։ 5 А *յառաջն* չիք։ 6 Б *Բարգարանայ*։ 9 А *ըստուգեցայք*։ 10 Б *մարզպանեալ, եղեալ* չիք։ 12 Б *բաժանումն*։ 13 А *սուտ մարգարէն Մահմեդ, Իսմայելի*։ 14 А *զօրաւար Քաղըրթի*։ 15 А *Քաղըրթ*։ 16 Б *Եգիպտացւոց*։ 16—17 Б *Պաղեստինացւոց*։ 17 Б [ի]բրև, *ստացան*, *զսա* չիք։ 19 А *Աբուբաքր*։ 20 Б *ուստի*։ 21 Б *Կումիտաս*։ 23 А *զսուրբ* չիք, *զմարմինն*։ 24 Б *յանյայտ*, А *չորս մատն*։ 26 А (*եդ*) *ի* չիք։ 28 А *աղատ*։ 29 А *Նգոյ*, *Փառաժնակերտէ*։ 30 Б *քաղկէդոնիկ*։ 32 А *և եղև*։ 34 А *ԶԸ* փխ. *ՃԸ*, Б *Թէոդորոս*։ 35 А *զԱղթամար*։ 37 Б *Իշխանա*, А *Թէոդոսի*։ 38 А *զէջմիածին*, Б *և* (*զԶոր*) չիք։ 39 Б *զԴւնայ*։

Արդ՝ յերկրորդ ամին Ներսէսի և ի Ժ (10) ամին Թէոդորոսի և ի մի ամին Կոստանդի, որդւոյ Կոստանդնի, բարձաւ իշխանութիւնն Պարսից, որ Սասանեանն կոչէր, ի ձեռն իսմայէլականաց՝ Աղուբաքրայ, Օթմանայ, և Օմառայ։ ԻԲ (22) ամի իշխանութեան նոցա, որ յետ Մահմետի սոքա բռնացեալ ունէին զաշխարհս, եկեալ զօրաց սոցա ի Տիզրոն սպանին զՈրմիզդ, թոռն Խոսրովու, յեկոտասան ամի թագաւորութեան նորա և ինքեանք տիրեցին Պարսից թվին ՂԸ (649). տևեցին Սասանեանքն ի սպանմանէն Արտաւանայ Արշակունոյ մինչև ցայժմ ամք ՆԺԸ (418)[159]։

Արդ կամիմ համառօտարար բացայայտել զթագաւորութիւնս Պարսից, որ Սասանեան կոչի մինչև ցայժմ:

Նախ և առաջին Արտաշիր, որդի Սասանայ Ստահրացի, ամս ԽԷ (47)։ Սա սպան զԱրտաւան Արշակունի բառնալով զթագաւորութիւն նոցա ի Պարսից, վասն որոյ Խոսրով հայրն Տրդատայ քինախնդիր եղեալ իբր ազգային. և փախոյց զնա մինչև ի Հնդիկս. և այս Արտաշիր առաքեաց զԱնակ, որ սպան նենգութեամբ զԽոսրով։ Ապա Շապուհ, որդի Արտաշէրի, թագաւորեաց ամս ԽԶ (46). յաւուրս սորա չարչարեաց Տրդատ զսուրբն Գրիգոր և արկեալ ի Վիրապն և նահատակեցան սուրբ կուսանքն և խողանալն Տրդատայ և բժշկութիւն նորա և զօրացն ի ձեռն սրբոյն Գրիգորի և Ձեռն ազին Մամգոնի և Կամսարականի որդւոյ Պերոզամատայ ի Կարինեան Պալհաւէ գալն ի Հայս առ Տրդատ և են սոքայ մեծ նախարարութիւնք. և շինումն Կոստանդնուպօլսի։

Ապա Ներսեհ, որդին Շապհոյ, ամս Թ (9)։

Ապա Որմիզդ ամս Գ (3)։ Շապուհ, որդի Որմզդի, ամս ՀԳ (73)։ Սա նահատակեաց զսուրբն Սարգիս։ Ի ԿԹ (69) ամին սորա նստաւ սուրբն Սահակ հայրապետ Հայոց։

Արտաշիր, որդի Շապհոյ, ամս Գ (3)։ Առ սա գնաց սուրբն Սահակ և պատուեցաւ։ Վռամ Կրման, որդի նորա, ամս ԺԱ (11)։ Յազկերտ, որդի նորա, ամս ԺԱ (11)։ Վռամ Երկրորդ ամս ԻԲ (22)։ Առ սա գնացին նախարարքն Հայոց և Սուրմակ չարախօսեցաւ ընդ նոսա և ընկեցին զԱրտաշիր Արշակունի, որդի Վռամշապհոյ. ի տէրութենէ և զսուրբն Սահակ ի կաթողիկոսութենէ։ Եւ առ սովաւ բարձաւ թագաւորութիւն Արշակունեաց ի Հայոց տևեալ ամս ՇԿԸ (568) և հայրապետութիւն ի ցեղէն սրբոյն Գրիգորի տևեալ ամս ՃԽԵ (145). թէպէտ եկաց յետ այնորիկ կենդանի սուրբն Սահակ այլևս ԺԶ (16) ամ։

Ապա Յազկերտ, որդի Կրմանայ, ամս ԺԹ (19)։ Ի ԺԷ (17) ամին՝ սորա կատարեցան Վարդանանքն։ Ապա Պերոզ, որդի Յազ-

1 A Ներսեսի, Թէոզոսի։ 2 Б որդւոյ, A իշխանութիւն։ 3 A կոչիւր։ 5 Б Քաղրթի։ 8 A թուին։ 9 A Արշակունույ։ 11 A բայցայայտել։ 12 A Սասանեանք կոչին։ 14 A զթագաւորութիւնն։ 16 A և (փախոյց) չիք, Б մինչ։ 18 Б զԽոսրով նենգութեամբ, Արտաշրի։ 19 A յաւուր, Տրդատ չիք։ 22 A որդոյն։ 23 Б Պերոզամաայ, A Կարնեան։ 26 Б որդի Որմզդի ամս ՀԳ չիք։ 27 Б սա նահաաակեաց զսուրբն Սարգիս չիք, և ի։ 28 A սուրբ։ 31 A Յազկերտ որդի նորա ամս ԺԱ չիք։ 34 Б սուրբն, A սովաւ։ 38 A այլև։ 40 A ամի։

կերտի, ամս ԻԲ (22)։ Վաղարշ ամս Դ (4)։ Կաւատ ամս Է (7). սա էառ զՑամիթ։ Զամասպ ամս Բ (2)։ Կաւատ ամս ԺԷ (17)։ Խոսրով ամս ԽԸ (48)։ Սա մօտ ի վախճանն իւր հաւատաց ի Քրիստոս և մկրտեցաւ, և ի սենեակն իւր սեղան ետ կանգնել յանուն սուրբ Աստուածածնին և հաղորդեցաւ ‖ և կացեալ սակաւ ՄԺԳ աւուր վախճանի։

Եւ յետ նորա Որմիզդ, որդի նորա, ամս ԺԲ (12)։

Խոսրով ամս ԼԷ (37)։ Սա գնաց փախստեամբ առ կայսրն Մօրիկ, զի փոքր էր և ոչ ընդունէին զնա զօրքն արեաց գնդին. Եւ Մօրիկ մկրտեաց զնա և անթիւ զօրս ետ ընդ նմա, որ եկեալ տիրեաց հայրենեացն։ Սա խնդրեաց զվրէժն Մօրկայ և գերեաց զսուրբ խաչն փրկչական և տարաւ ի Թաւրէզ, որ մնաց անդ ամս ԺԳ (13), մինչև Թագաւորեցոյց Հերակլ զԽոռիան նախարարն Պարսից և փոխարէն էառ զսուրբ խաչն և տարաւ եդ Երուսաղէմ ի տեղի իւր թվին ՁԲ (633)։

Կաւատ Ա (1) ամ։ Արտաշիր ամս Թ (9)։ Խոռիան Ա (1) ամ. սա ոչ ի նոյն ազգէ։ Խոսրով, որդի Արտաշրի, ամ մի։ Բորմ և Զարմանդուխտ, դստերք վերին Խոսրովու, Ա (1) ամ։ Յազկերտ, որդի Խոսրովու, ամս ԺԲ (12)։ Զսա սպանին զօրքն իսմայէլականաց ի Տիզբոն և բռնացան ի վերա ամենայնի Ասուրաքը, Օթման և Օմառ, որպէս յառաջ ասացի[160]։

- Այլ մեք դարձցուք յառաջին ոճն, ուստի թողաքն ի Հայոց բան.

Թվին ՃԺԳ (664) եկաց իշխան Հայոց Համազասպ ամս Է (7)[161]։

Թվին ՃԺԶ (667) նստաւ հայրապետ տէր Անաստաս, ի գաւառէ Մասեացոտանէ, ի գեղջէ Ակոռոյ, ամս Զ (6)։ Սորա հրամանաւն Անանիայ Շիրակաւորին արար մեկնութիւն տումարի և զտնշարժ եղանակ նորին և մնաց անհաստատ[162]։

Եւ ապա Գրիգոր եկաց իշխան ամս Ժ (10)։ Յաւուրս սորա նստաւ հայրապետ տէր Իսրայէլ, ի գաւառէ Վանանդայ, ի գեղջէ Յօթմանայ, ամս Ժ (10)։ Եւ ապա տէր Սահակ հայրենօք ի Ձորոյփորոյ, ի գեղջէ Արքուաշինայ և մայրենօք ի Մազազայ, ի գեղջէ Բերդկանց, ամս ԻԴ (24)։

Յետ Գրիգորի եկաց իշխան Ներսեհ Կամսարական և միւս այլ Ներսեհ ընդ սոցա ամք Ը (8)։

Ապա Սմբատ Բագրատունի ամս Ի (20)։ Յաւուրս սորա և տեառն Սահակայ վրդովեցաւ աշխարհս Հայոց. և Մրւան գլուխ իսմայէլացոց ոստիկան առաքեաց ի Հայս Մահմետ անուն, այր ժանդ և չար, որ եկեալ քանդէր և աւերէր զաշխարհս մեր։ Եւ յետ նորա Արդլայ անուն ևս չարագոյն .քան զնա, որ եկեալ

---

1 А Գ փխ. Դ։ 3 А վաղջան։ 4 А մկըրտեցաւ։ 6 Б վախճանի։ 8 Б փախըստեամբ։ 10 А մկըրտեաց։ 12 Б Թարուէզ։ 15 А ՁԸ փխ. ՁԲ։ 17 А ոչ չիք, Б յազգէ, Բորմ չիք։ 19 Б ԺԲ ամ, А եսպան։ 20 А Արուրաքը։ 21 Б յառաջն։ 22 Б թողաք։ 23 А բանն։ 27—28 А հրամանաւ։ 28 Б աօմարի։ 30 А յաւուր։ 32 А Յօթմայ, հայրենեօք։ 33 А մայրենեօք, Մաղաղայ։ 35 Б միուս։ 38 А Մրվան։ 39 Б իսմայիլացւոց։ 40 А ժանտ։

աւերէր զՀայս, ընդ որս և զմեծ կաթողիկոսն Սահակ կապեալ շղթայիւք ետ տանել ի Դամասկոս։

Եւ յետ Սահակայ նստաւ տէր Եղիայ, հրամանաւ Սահակա, ամս ԺԴ (14), ի դեղջէ Արճիշոյ։ Յաւուրս սորա և Սմբատայ եկն ի Հայս ոստիկան Օկբայ || անուն, որ և Մահմետ, խիստ և անագորոն, որ եկեալ ի Մրւանէ անհնարին չարիս անցոյց ընդ Հայս։ ՄԺԳ Եւ ժողովեալ ազգին Կամսարականաց. և Սմբատայ և այլ իշխանացն Հայոց ի վերա Օկբայի ի Վարդանակերտ և կոտորեցին զամենայն զօրս նորա։ Եւ Օկբա Մահմետ փախստեա գնաց առ ամիրապետն իւր Աբդլմէլիք, զի մեռեալ էր Մրւան և առեալ անթիւ զօրս գալ հիմնայատակ առնել զՀայս։ Իսկ սուրբ կաթողիկոսն Սահակ գերեալն յԱբդլայէ դեռևս կայր կենդանի ի Դամասկոս։ Իբրև լուաւ զսպառնալիսն Օկբայի բաղում թախանձմամբ խնդրէր երթալ առ նա և հրամայեցաւ գալ և եկեալ մինչ ի Խառան վաղճանեցաւ. և մինչ յոգւոջ էր պաղատանաց թուղթ գրեաց առ Օկբայ. «Ո՜չ առնուլ զքէն վրիժուց ի Հայոց, եթէ զայդ առնիցես եկեսցէ աւրհնութիւն Աբրահամու և Իսմայէլի հօր քո և ի վերա քո». և ծալեալ զթուղթն եդ յափն իւր և ննջեաց։ Եւ Օկբա, որ և Մահմետ, իբրև լուաւ զմահն սորոյն, եկն եկաց ի վերա գերեզմանին, շարժեալ զձեռն. «Սալամ ալէք» ասելով. յայն ժամ եղև ահագին նշան, զի մեռեալն զձեռն շարժեալ և ետ զթուղթն ի նա և իբրև ընթերցան վաղվաղակի կատարեաց զխնդիրն և կնքեաց մուրհակ ոչ աւերել զՀայաստան. այս եղև ի թվին ՃԾԱ (702) յաւուրս տէր Եղիայի։ Եւ յայսմ ամի առ Մահմետ զծովն Գեղամայ և զՍևան[163]։

Զի թէպետ և առ ժամն ոչ մեղանչեցին Հայոց, այլ յետ փոքր ինչ ամաց ՃԾԸ (709) թվին նենգութեամբ ժողովեցին զամենայն իշխանսն Հայոց ի Նղչուան և ի Խրամ յԲ (2) եկեղեցիսն և այրեցին զնոսա և զկանայս և զմանկունս նոցա ի գերութիւն վարեցին, ընդ որս և զՎահան Դ (4)-ամեա, որդի Խոսրովու տեառն Գողթնայ, տարան և առյապայ պսակեցաւ մարտիրոսութեամբ յՕմարա[164],

Թվին ՃԿԴ (715) նստաւ հայրապետ Յոհանէս, ի գաւառէն Տաշրայ, ի գեղջէն Օձնայ, ամս ԺԱ (11), այր իմաստուն և հանճարեղ։ Սա ծաղկերանկ և խտրտեալ ոսկով զարդարէր զինքն, այլ ի ներքոյ տատասկաձև խորք զգենոյր։ Եւ Վլիթ ոմն ոստիկան Հայոց պատմեաց զգեղեցկութիւն նորա առաջի Օմարայ։ Եւ նա կոչեաց զՅոհան առաջի իւր երև[ե]լ մեծաշուք փառօք, ասէ ցնա Օմար. «Քրիստոս և աշակերտքն իւր խոնարհութեամբ շըր-

1 А մեծ։ 3 А Եղիեա։ 4 А Արճշոյ։ 5 А անագորուն։ 6 А Մըրվանէ, անհուն փխ. անհնարին, անցուցանէր։ 7—8 А իշխանաց։ 16 А Մրվան։ 12 А գերեալսն։ 13 А Օկբէի։ 14 Б խն[դ]րէր, А գնալ փխ. երթալ։ 15 Б վախճանեցաւ, հոգւոջ։ 16 А առ. ոստիկան, Б թէ փխ. եթէ։ 17 А քոյ։ 18 А քոյ, Б զթուխտն, А ննջեաց։ 19 Б զմահ։ 23 Б և (կընքեաց) չիք։ 26 А առ. չիք։ 28 А իշխանս, Б Նախչուան։ 29 Б մանկունս։ 31 А տարան գերութիւն առ. որ յապա։ 33—34 А հայրապետ տէր Յոհաննէս ի գեղջէն Օձնայ ի գաւառէն Տաշրայ։ 36 А ըզգենոյր։ 38 А նայ, Б զՅոհան, երեիլ։ 39 А աշակերտք։

չէին, դու ընդէ՞ր այդպէս պճնազարդիս»։ Եւ. նա աստ ցնա. «Քրիստոս աստուածն մեր և աշակերտքն իւր նշանօք և զօրութեամբ փայլէին, իսկ մեք ոչ ունիմք զնոյն զօրութիւն, այլ ունիմք արտաքոյ զարդարել զերեւելիսս ի տեսութիւն ռամկաց. և թէ կամիս տեսանել առանձին, ‖ տեսցես զիս». և եւտես զնա Մժե խորք զգեցեալ ի մերկ մարմինն և յոյժ հիացեալ ամիրապետն ասէ ցնա. «Զոր խնդրես յինէն առայ և տաց քեզ»։ Ասէ ցնա հայրապետն. «Երեք բան խնդրեմ ի քէն՝ մի զի զօք բռնութեամբ մի դարձուցէս ի դինս ձեր, և երկրորդ՝ զի ազատ լինիցին պաշտօնեայք եկեղեցոյ. և երրորդ զի հանցես յաշխարհէն Հայոց զազգն Յունաց, զի միտ նոցա առ թագաւորն իւրեանց է»։ Եւ նա ուրախութեամբ զխնդիրն կատարեաց մուրհակ կնքելով։ Սա արար ժողով ի Մանածկերտ և սրբեաց զՀայաստան ի քաղկեդոնական դաւանութեանցն, զի յԵզրէ մինչ ի սա Ե (5) կաթողիկոսաց ժամանակ խմորեալ էին Հայաստան աշխարհս ի ժողովն Քաղկեդոնի ի տեղիս-տեղիս, զոր սուրբն Յոհան սրբեաց և սահմանեաց դեկտեմբեր ԻԵ (25) տօնել Դաւթի և տեառն եղբօրն, և ասաց «Մեղաք յամենայնի և զ[պատուի] և անշարժ առնել զծնունդն Քրիստոսի յունվար Զ (6) ըստ կանոնաց տեառն եղբօրն». եղև այս թվին ՃՀԳ (724)[165]։

Թվին ՃՀԶ (727) նստաւ հայրապետ տէր Դաւիթ, ի դաւառէ Կոտայից, ի գեղջէ Արամօնից, ամս ԺԴ (14) յամս անիշխանութեան։ Ապա տէր Տրդատ, ի դաւառէ Վանանդա, ի գեղջէ Օդմսոյ, այր պարկեշտ և սուրբ, ամս ԻԳ (23)։ Եւ ապա միւս Տրդատ ի Գառնաւորաց ամս Գ (3). ի սորա առաջին ամն Աշոտ Բագրատունի եկաց իշխան ամս ԺԵ (15) ձեռամբ Աբդլայի թվին ՄԺԳ (764)։ Ապա տէր Սիոն եկաց հայրապետ, ի դաւառէ Արագածոյ, ի գեղջէ Բունից, ամս Ը (8)։ Սա աղօթիւք զցամաքեալ աղբեւրն Սիմնլերին բղխեցոյց առաջի ոստիկանին յեպիսկոպոսութեան ժամանակին։ Ապա տէր Եսայի, ի Նիգ դաւառէ, Յեղապատրուշ գեղջէ, ամս ԺԳ (13)։ Սա որդի գոլով կնոջ այրոյ սնեալ սրբութեամբ ի տաճարի տեառն։ Ի սորա Զ (6) ամին կացեալ իշխան Հայոց Սմբատ, որդի Աշոտոյ, ամս ԻԲ (22) թվին ՄԻԹ (780)։ Յետ Եսայեա եկաց հայրապետ տէր Ստեփաննոս, ի Դուին քաղաքէ, ամս Բ (2)։ Ապայ տէր Յովար, ի Յոստանէ, ամ մի և կէս։ Ապա տէր Սողոմոն, ի քաղաքէն Գառնոյ, ամ մի։ Ապա տէր Գէորգ, ի դաւառէ Արագածոյ, ի գեղջէ Բուրականէ, ամս Գ (3)։ Ապա տէր Յովսէփ, ի դաւառէ Արագածոտանէ, ամս ԺԱ (11). ի սորա Թ (9) ամին և

1 Б այդպէս չիք, А նայ։ 2 А աշակերտօ, Б նշաննօք։ 4 А զարդարեալ, Б զերենելիս, А ռամկաց։ 5 А (և) թէ չիք։ 7 Б ասա։ 8 Б Գ, մեն, А ոք։ 9 А զէնս, ազատք։ 10 Б եկեղեցւոյ, երրորդն։ 10 А յաշխարհէ։ 12 Б նա չիք։ 13—14 Б քաղկէդոնաեան։ 14 А դաւանութեանց, Եզրէ մինչև։ 16 Б Քաղկէդոնի, զօր, А Յօհան։ 17 Б սաւնել, А Դաւթի մարգարէին, Б եղբաւրն։ 19 А զծնունդ, Б եղբաւրն։ 20 А ի թվին։ 21—22 Б ի Կոտայից դաւառէ։ 25 Б զա[ռ]նաւորաց, А ի (սորա) չիք։։ 26 А ԺԷ փխ. ԺԵ։ 28 А աղաւթիւք չիք, ցամաքեալ։ 32 А տան փխ. տաճարի, ի սորա ժամանակին և Զ։ 33 А Սմպատ, Եսայեայ։ 34 Б Ստեփաննոս։ 35 А Յովար ի Ոստանէ։ 36 А գաղաքէն, Գրիգոր փխ. Գէորգ։ 37 А Յօվսէփ։ 38 А Արագածոյանէ, ի (սորա) չիք։

Թվին ՄԾԱ (802) կացեալ իշխան Աշոտ, որդի Սմբատայ, Մսակերն ամս Ի (20)։ Յետ Յովսէփայ եկաց հայրապետ տէր Դաւիթ, ի գաւառէ Մազազոյ, ի գեղջէ Կակաղոյ, ամ ԻԷ (27). ի սորա ԺԹ (19) ամին և Թվին ՄՀԱ (822) կա‖ցեալ իշխան Հայոց Սմբատ, ՄԺԶ որդի Աշոտոյ, ամս ԼԲ (32)։ Յետ Դաւթի տէր Յովաննէս Նստաւ հայրապետ, ի գաւառէ Կոտայից, ի գեղջէ Ովայից, ամս ԻԲ (22)։ Յաւուրս սորա և Սմբատա իշխանին Ջաֆր ամիրապետն ոստիկան առաքեաց ի Հայս Աբուսէթ անուն, որ շատ ոճիրս գործեաց և զԲագարատ իշխանն Տարօնոյ կապանօք ետ տանել առ Ջաֆր. և ընակչացն Սասնոյ եկեալ սպանին զԱբուսէթ և զօրս նորա։

Յետ Յովանէսի Նստաւ հայրապետ տէր Զաքարիա, ի Կոտայից, ի դեղջէ Ջագայ, ամս ԻԲ (22), որ ի միում աւուր ի սարկաւագութենէ եհաս ի վեհագոյն աստիճան։ Ի սորա առաջին ամին և Սմբատայ ԼԲ (32) ամին և Թվին ՅԲ (853) Ջաֆր ամիրապետն ոստիկան առաքեաց ի Հայս զչար գազանն Բուղայ անթիւ զօրօք, դալ առնուլ զվրէժն Աբուսէթայ, զոր սպանին։ Ո՜հ, ո՜հ գառնութեան ամիս, որ անասելի չարիս արար և յոլովք զըրկեցան ի լուսոյն կենաց ուրացութեամբ և բազումք վկայութեամբ կատարեցան ի Քրիստոս ընդ որս և սուրբն Ատոմ Զ (6) ընկերօքն, ի Յաղրակ գաւառէ, Յորսիրանայ գեղջէ, մանուկ աիօք և կայտառ երեսօք զնոսա խնայելով, զի թերևս կարասցէ յանօրէն օրէնս իւր դարձուցանել, ըստ չար սովորութեան իւրոյ, բազում ջանիւ. և ոչ կարաց խախտել զնոսա ի սիրոյն Քրիստոսի։ Եւ յետ բազում կտտանաց հրամայեաց ի փայտէ կախել զնոսա։ Եւ սուրբն Ատոմ բարձրագոչ ձայնիւ քաջալերէր զընկերս իւր և ի նոյն կատարեցան ըստ նմանութեան տեառն, և ընդ նոսա այլ ևս ՃԾ (150) վկայք։ Իբրև ետես գազանաբարոյն Բուղայ զչար կամսն իւր յաջողեալ, ապա զրաամբ ածեալ զիշխանսն Հայոց զօրս խաբէութեամբ և զոմանս սաստիւ և զայլսն նենգիւ ընդ որս և զՍմբատ Բագրատունի, որ Աբլաբասն կոչեցաւ, կապանօք տարեալ առ Ջաֆր ի Բաբելոն ընդ այլ իշխանացն, որ համարձակ խոստովանեցաւ զՔրիստոս աստուած առաջի ամենեցուն և ի կալանս սովով և ծարաւօվ վաղճանեցաւ և եդին զսուրբ մարմինն նորա մերձ ի դուռն Դանէլի մարգարէին։

Եւ յետ աւերման աշխարհիս Հայոց ժողովեցան մնացեալ նախարարքն առ մեծ կաթողիկոսն Զաքարիայ և հաւանութեամբ ամենեցուն կացուցին իշխան, մեծաշուք պատուով զաւրհնեալն Աշոտ, զորդի Սմբատայ Խոստովանողի, Թվին ՅԳ (854)։ Սա վե-

2 Б Յովսեփայ։ 3 АБ Մաղաղայ, Б ամս, А ի (սորա) չիք։ 4 А Սմպատ։ 5 А Յովանէս։ 6 А հոտէից, Օվայից։ 7 Б Սմբաաայ։ 8 А Ապուսէթ։ 9 А Տարոնոյ, Б կապանաւք։ 10 А զԱպուսէթ, Б զզօրս։ 11 А և ետ, Б Յովանիսի, А տէր չիք, Б Զաքարիայ։ 11—12 А հոտէից։ 15 А Բուղա։ 16 А Ապուսէթայ։ 17 А գործեաց փխ. արար։ 20 Б ընկերաւքն, А Յորսիրանա, А աիեօք։ 21 А կայտառք, խնաելով, կարացէ։ 21—22 Б յանուրէն աւրէնս։ 23 А ի (սիրոյն) չիք։ 25 А ձայնէր։ 26 А և (ընդ) չիք, այլ և։ 27 А կամս։ 30 А զՍմպատ։ 31 А Բաբիլոն։ 32։ А Քրիստոս։ 33 Б ծարաւով վախճանեցաւ, А մարմին։ 34 Б Դանիէլի։ 37 А իշխան մեծ պատուօվ, А զօրհնեալն։ 38 А Սմպատայ։

հադոյն դտաւ ամենայն նախնեաց սրբութեամբ և մաքրութեամբ յինքն յանդուցանելով զմիտս ամե || նեցուն հաւատացելոց և Մժէ անհաւատից Ցուդայեան դոլով շառաւիղ ի տոհմէ թադաւորաց, որք երրեմն թադադիրք լեալք Արշակունեաց և այժմ վերստին ստեղնեալ և պտղաբերեալ թադաւորութեամբն, զի այժմ սպարապետ կոչեցեալ։ Եւ տեսեալ զլաւութիւն նորա ոստիկանին, որ Ալի Արմէն կոչէր, կացոյց զնա իշխանաց իշխան զամս ԼԱ (31). և յետոյ պոակեալ եղև թադաւոր ամս Ե (5), զոր ասելոց եմ[166]։ Ցետ Զաքարիայ նստաւ հայրապետ տէր Գէորդ, ի քաղաքէն Գառնոյ, ամս ԻԱ (21), ի ԻԲ (22) ամի իշխանութեանն Աշոտոյ, թվին ՅԻԴ (875)։

Այսուհետև կամիմ բացայայտել զթագաւորութիւն Բագրատունեաց որպէս յառաջ զՀայկազանց և զԱրշակունեաց։

Եւ թադաւորեաց Աշոտ, յետ ԼԱ (31) [ամի] իշխանութեան իւրոյ, վասն առաւել խոնարհութեան իւրոյ, ընկալեալ թադ յերկուց թադաւորացն՝ Իսմայէլեան և Ցունականէն, թվին ՅԼԶ (887) և ի դալստենէ Փրկչին ամք ՊՁԸ (888), ի հայրապետութեան Գէորքեա ԺԲ (12) ամս, օծեալ ձեռամբ նորա, ի բառնալոյ թադաւորութեան Արշակունեաց ամք ՆԼԴ (434)։ Եւ կացեալ սա թադաւոր ամս Է (7) վախճանի[167]։ Էին յաւուրս սորա Սահակ վարդապետ Հայոց Ապիկուրէշն կոչեցեալ և Համամ Արևելցի, որ զվերլուծութիւն առակացն դրեաց համեղ[168]։

Եւ յետ Աշոտի թադաւորեաց Սմբատ, որդի նորա, ամս ԻԴ (24), թվին Յ և Խ (891), կամակցութեամբ Լևոնի կայսերն Հոռոմայեցոց, որդո Վասլի, որ պսակեաց զհայրն նորա[169]։ Եւ նստաւ հայրապետ տէր Մաշթոց Խոստաճարակն ի Սևանայ ամ մի, յԸ (8) ամի թադաւորութեան Սմբատայ, սա յԱրադածյոտնէ, ի Ցեղիվարդայ։ Եւ յետ նորա տէր Ցովաննէս մաշեալն անյաղթ փիլիսոփայ և պատմադիր, աշակերտ Մաշթոցի և ազդական, ամս ԻԸ (28), ի թվին ՅԽԶ (897)[170], Ի սրբոյն Գրիգորէ մինչև յայս լինին Ծ (50) հայրապետք, ըստ թվին յոբելինին։ Այլ աստանօր յայսմ ժամանակի ճմլի սիրտ իմ և դողան երիկամունք իմ, յորժամ յիշեմ զաղէտս անցիցն, որ ընդ մեզ, զի թէպէտ կային մեր թադաւորք, բայց ընդ ձեռամբ անօրինաց էին։ Եւ նոցա տէրութիւնն բաժանեալ ի Պարս, ի Բաբելոն և ի Պաղեստին, ի Միջերկրայս և ի միմեանց շորթել կամէին։ Բայց թուի թէ մեծադոյնն նոցա ի Բաբելոն նստէր, որ ասի յետնաննաց Մահմետի։ Այլ յորոց և էին ոստիկանք չարք և անօպայք[171] դային զկնի

2 Б հանդուցանելով։ 4 А լեալլք։ 5 А ստեղձեալ։ 5—6 Б սպարապետ։ 7 А իշխանաց չիք։ 9 А Զաքարիա, Գէորք։ 10 А իշխանութեան։ 15 А վասն առաւել խոնարհութեան իւրոյ չիք։ 16 Б թագաւորաց, յիսմայէլեան։ 18 А Գեորքայ, Б ամին աւծեալ, և փխ. ի։ 26 А Ե փխ. Է, վախճանի, Б յաւուրս։ 21 А Ցարևելցի։ 23 А Աշոտոյ, Սմպատ։ 24 Б հայսերն, А Հոռվմայեցւոց։ 25 Б որդի։ 27 А Սմպատայ, սա յԱրագածյոտնէ ի Ցեղիվարդայ չիք։ 28 А Ցովհաննէս։ 30 Б մինչ։ 31 А թվոյն։ 34—35 А տէրութիւն։ 35 А Բաբիլօն, Б և (ի) չիք։ 35—36 А Մէջերկրացս։ 38 А թվի։ 37 А Բաբիլօն։ 38 А անօպայքանք։

միմեանց, որպէս յառաջագոյն պիղծն Բուղայ, յետոյ Աֆշին, որդի չարագործին Աբուսիթայ և ևս չար ապականիչն Յուսիփայ, որ այժմ բնաջինջ արար զազգս մեր և զՍմբատ թագաւորն խեղդեաց, յետոյ կախեալ զփայտէ ի Դուին քաղաքի և փախեան որդիք արքայի՝ Աշոտ առ կայսրն Լևոն և Աբաս || ի Վրաց տունն։ Եւ ՄԺԸ տնօրէնն Ափշին յորժամ դայս ամենայն գործեաց թագաւորեցոյց ինքն զԳագիկ ի տոհմէ Արծրունեաց, հակառակ թագաւորութեան ազգին Բագրատունեաց։ Էր սա քեռ որդի Սմբատայ թագաւորի զոր սպան[172], Եւ Գագիկ նոր թագաւոր, որ ի Յարծրունեաց, շինեաց յԱղթամար կղզին եկեղեցի՝ յանուն սրբոյ Խաչին, թվին ՅԿԵ (916)։

Այլ երկիրս Հայոց մնաց անթագաւոր զամս Է (7), զի այս Գագիկ Վասպուրականին տիրեաց մասնաւոր, այր բարի, զկարգ սորա յի՛րում տեղւոջն ասելոց եմ։

Եւ յետ Է (7) ամի անիշխանութեան Հայոց թագաւորեաց Աշոտ, որդի Սմբատայ, ի ձեռն թագաւորին Յունաց, որ եկեալ մեծաւ յաղթութեամբ տիրեաց հայրենեաց ամս Ը (8), ՅՀ (921) թվին։ Եւ աշխարհս յերկուս բաժանեցաւ՝ <Թագաւորութիւնն> Աշոա Բագրատունի՝ յԱնի, ի տեղի հօր իւրոյ և Գագիկ Արծրունի ի կողմանս Վասպուրականի։ Սա որդի Դերանկանն ամս ԻԹ (29)։ Ապա Դերենիկ որդի նորա ամս ԺԷ (17) և ապա Ապուսահլ, եղբայր սորին և ապա Աշոտ, նորին որդի, սակաւ ժամանակ և ապա Բ (2) եղբարքն՝ Գուրգէն և Սենեքարիմ մնաց թագաւոր ամս Ի (20)։ Այս զրաժին իւր ետ Վասլի և էառ զՍեաստ և զԿեսարիայ։ Այլ մեք դարձցուք ի վեր ուստի թողաք։ ՅԱշոտ Բագրատունի որ է Է (7) ամին սորա և ի թվին ՅՀԷ (928) Նստաւ հայրապետ տէր Ստեփանոս ամ մի։ Ապա տէր Թէոդորոս ամս ԺԱ (11)։

Յետ Աշոտոյ թագաւորեաց Աբաս, եղբայր նորա, ամս ԻԴ (24)։ Յաւուրս սորա Նստաւ հայրապետ տէր Եղիայ ամս Է (7) և էր յաւուրս սոցա խաղաղութիւն։ Եւ զկնի սորա Նստաւ հայրապետ տէր Անանիայ Մոկացի, առաջնորդ սուրբ ուխտին Վարագայ, ամս ԻԲ (22), այր սուրբ։ Յաւուրս սորա և Աբասայ թագաւորին բազում անապատք և վանքօրայք հաստատեցան. նախ՝ Կամրջաձոր, ի գաւառին Արշակունեաց, իսկ ի գաւառին Շիրակայ Հոռոմոսին կոչեցեալ վանք, և սուրբ ուխտն Նարեկ՝ Յոշտունեաց գաւառին, և վանք Հնձուց ի Կարին գաւառի։ Եւ յայսմ ժամանակի սուրբ հայրն Վարդիկ և Վանգոյ վանացն Թաթլոյ՝ Վիշապաձոր անուանեալ, ի բարձրաբերձ լերինն Կազզւանայ. և սուրբ հայրն Կարմիր ի Ծոփաց գաւառին բնակէր և բազում անուանի վարդապետք[173],

Եւ թագաւորեաց Աշոտ, որդի Աբասայ, ամս ԻԷ (27), թվին

2 А Ապուսիթայ, Б չար չիք։ 5 А Աշոտայ, կայսրն Յունաց։ 8 Б քւէր։ 10 А յեկեղեցի։ 12 А յերկիրս, 14 А իւրում։ 19 Б ի Ցանի։ 20 А Դերանկան։ 21 Б Աբուսահլ։ 23 Б մնացին։ 25 Б ուսա զոր թողաք։ 26 А Ն փխ. Է, ՑՀՆ փխ. ՑՀԷ։ 29 А աւուրս, հայրապետ չիք։ 30 А աւուր 33 А վանորայք։ 34 А Արշարունեաց փխ. Արշակունեաց։ 35 Б Հոռոմոսին, А ի գաւառին ի ըԹշտունեաց։ 38 Б և փխ. ի։ 39 А գաւառի։

ՆԲ (953)[174]։ Եւ յետ Անանիայի եկաց հայրապետ տէր Վահան ի Բաղայ ամ մի, որդի Ջուանշիրի՝ իշխանին Բաղաց։ Սա դաշնադիր եղև ընդ Վրաց քաղկեդոնա ‖ կանաց և իմացեալ վարդապետք ՄԺԸ ժամանակին և հալածեցին զնա և նա փախստեամբ եկեալ ի Վասպուրական։ Եւ եդին կաթողիկոս զտէր Ստեփաննոս ամս Բ (2), ազգական Մաշթոցի։ Եւ ապա զտէր Խաչիկ, հարազատ Անանիայի, ամս ԺԹ (19), բանիբուն և անյաղթ, որ սանձեաց զբերանս հերձուածողաց[175]։

Եւ թագաւորեաց Սմբատ, որդի Աշոտոյ, որ Շահնշահ կոչեցաւ, այսինք[ն] գլուխ թագաւորաց, ամս ԺԳ (13), թվին ՆԺԹ (970)[176]։ Եւ նստաւ հայրապետ տէր Սարգիս ամս ԻԴ (24)։ Եւ թագաւորեաց Գագիկ, եղբայր Սմբատայ, ամս ԻԹ (29), թվին ՆԽԲ (993)։ Արդ՝ ի Ժ (10) ամին Գագկայ և ԻԷ (27) Վասիլ կայսեր Յունաց և Ն և Դ (1004) ամի մարմնանալոյ տեառն և թվին ՆԾԱ փայլէր լոյս զարեգակն սուրբն Գրիգոր Նարեկացին, որդի Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսին. և յայսմ ամի աւարտեաց զհոգեկեցոյց բանս իւր, զոր այժմ ունի եկեղեցի սուրբ և ամենք ասեն, թէ յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս աստուած[177]։

Եւ յայսմ ժամանակի Սենեքարիմ, որ Յարծրունեաց թագաւոր կոչմանցն Վասպուրականի, նեղեալ ի յանօրինաց ետ զՎասպուրական ի Վասիլ թագաւորն, բաց ի վանօրէիցն և առնու ի նմանէ զՍեւաստ իւր դաւառօքն, որպէս ասացաք։ Եւ են սոքա յորդոցն Ասենեքարիմայ, որ սպանին զհայրն իւրեանց և փախուցեա եկին ի Հայս, որ առաջին թագաւոր Գագիկ և վերջինս Սենեքարիմ։ Որ ի ժամանակս սորա բերաւ սքանչելօք ի Կոստանդնուպօլսէ ի Հայս յեթն մասանցն Քրիստոսի, եդեալ ի յուսկի մարգարտաշար տփի, ի ձեռն Ստեփաննոսի եպիսկոպոսի, եղբօր որդոյ Դաւթի սուրբ ճգնաւոր եպիսկոպոսի. և Սենեքարիմ թագաւոր հիմնարկեալ մօտ ի շիրիմ սորա մեծափառ եկեղեցի և եդ ի նմա անյայտ զբերեալ մասունսն, ի կենդանութեան Գրիգորի Նարեկացոյ, որ կոչի Ապարանից սուրբ խաչ։ Եւ նստաւ հայրապետ Պետրոս ամս ԽԲ (42), թվին ՆԿԵ (1016)։ Ի Զ (6) ամին սորա թագաւորեաց Յովաննէս, որ և Սմբատ, ամս Ի (20), սա որդի Գագկայ Շահնշահի։ Կայր եղբայր սորա Աշոտ անուն և հակառակ էր թագաւորութեան նորա և հաւանութեամբ ամենեցուն թագաւորեցուցին զնա մասանց ինչ։ Եւ յետ Յովաննիսի թագաւորեաց Գագիկ. որդի Աշոտոյ, եղբայրն Գագկայ, որ ոչ տարեալ հող պատերազմի, որով վարի թագաւորութիւնն, այլ հանապազ ընթերցման պարապէր։ Եւ Յոյնք, բստ սովորութեան

---

2 A Բաղաց ամ, Ջւանշիրի իշխանի։ 4 A փախստականս։ 6 A ապա չիք, տէր. 7 Б զբերանս։ 9 A Շահընշահ։ 12 A Սմպատայ։ 13 A ՆԾԱ փխ. ՆԽԲ, և ի Իէ։ 14 Б ՌԴ փխ. Ռ և Դ, A բանին փխ. տեառն։ 17 A ունի չիք։ 19 Б Արծրունեաց։ 21 A թագաւորն Յունաց։ 24 A փախըստեայ։ 25 A Սենեքերիմ։ 25—26 A Կոստանդնուպօլսոյ։ 26 Б յէ։ 28 Б որդւոյ։ 31 Б Նարեկացւոյ։ 33 Б Յովհաննէս, A Սմպատ։ 34 A սորա եղբայր։ 36 Б Յովհաննիսի։ 37 A եղբօրն։ 37 Б տար[ե]ալ։ 38 A թագաւորութիւն։ 39 A ընթերձման, Յոնք։

իւրեանց խարկանօք, ուր ինքեանս կոչեն ի սադրելոյ իշխանացն
Սարգսի և || Գրիգոր Բճնեցոյ և արգելին զթագաւորն ի կղզին ՄԺԹ
Աղթամար և ինքեանք տիրեցին Հայոց ամս ԻԱ (21)[178]։
Եւ բարձաւ թագաւորութիւն յազգէն Բագրատունեաց թվին
ՆՂԲ (1043), որ տևեցին ամս ՃԾԸ (158) ի թագաւորութենէ
Աշոտի մինչև յայս Գագիկ յետին։
Այլ յառաջ քան զայս տէր Պետրոս հայրապետն արար մեծ
ոսքանչելիս ի Տրապիզոն քաղաքի, յաւուր մկրտութեան տեառն,
առաջի մեծ թագաւորի Վասլի, ջուր գետոյն յետս արգելեալ զօ-
րութեամբ սուրբ խաչին և լոյս ճառագայթեալ ի վերա ջրոյն և
թագաւորն մկրտեցաւ ձեռամբ նորա ի ջուրն և յամօթ եղեն
Յոյնք։ Եւ տարեալ թագաւորն զտէր Պետրոս հայրապետն ի
Սեաստ, զոր ետ Արծրունեաց և հանգեաւ անդ ի թվին ՇԶ (1057)։
Եւ նստաւ հայրապետ տէր Խաչիկ, քեռ որդի տեառն Պետրոսի,
ամս Զ (6)։ Եւ յետ սորա խափան եղև հայրապետութիւն զամս
ԻԴ (24). զի ոչ տային թոյլ Յունքն, զի անճարակ լեալ, ասեն,
Հայք ի կրօնս մեր դարձցին։ Յայն ժամ Գագիկ արքայն Կարուց,
զուն գործեալ վասն նորոգման հայրապետութեան, տայ զԿարս
քաղաք իւր վիճակովն ի թագաւորն Յունաց և փոխանակ առեալ
զդղեակն Ծամընդոյ և հրաման ընկալեալ ի կայսերէն Տիօժլէ՝
ձեռնադրել հայրապետ Հայոց, զի յորժամ Վասիլ թագաւոր տա-
րաւ զտէր Պետրոսն ի Սևաստ, ոչ տային թոյլ Յոյնքն համար-
ձակութեամբ կատարել զհայրապետութիւն մինչև ցայս, որ թվին
ՇԺԴ (1065)։ Եւ նստաւ հայրապետ տէր Գրիգորիս, որ և Վահրամ,
որդի Գրիգորի Մագիստրոսի, որդոյ Վասակա Նահատակի, յազգէ
Պալհաւունոյ։ Սա թողեալ էր զիշխանութիւն և միայնացեալ յա-
նապատն և գտեալ զնա ի Սեաւ լեառն, տարեալ օծին հայրապետ
և անուանեցին զՎահրամն, Գրիգորիս յանուն հօրն, կացեալ յա-
թոռն ամս ԺԷ (17)։ Սայ էր ի քաղաքէն Բջնոյ և Վկայասէր
անուանեցաւ և ճառս բազումս Յունաց և Ասորոց թարգմանեաց
և մեկնեաց զարուեստ քերականութեան։ Սա եդ ի մտի երթալ
ի Հռոմ յերկրպագութիւն սուրբ առաքելոցն և յոչ կամաց ձեռ-
նագրեաց զտէր Գէորգ փոխանակ իւր, զի ինքն նուիրեաց զինքն
և հայրապետն գնաց ի Հռոմ և մեծապէս պատուեցաւ որպէս
գլուսաւորիչն։ Եւ անտի նաւեաց գալ Յերուսաղէմ. և ակամայ
նաւն եհան զնա յԵգիպտոս. և անդ բազում հրաշս արար և հա-
գարացի թագաւոր նոցա մեծաւ սիրով ընկալաւ զնա. և ետ զԵ-
գիպտոս և զԱղէքսանդրիա զաթոռն Մարկոսի Աւետարանչի յիշ-
խանութիւն նմա. և անդ թարգմանեաց զվարս հարանցն սրբոց։
Եւ յետ բազում ամաց դարձեալ գայ ի Հայս և տեսեալ || զկաթողի- ՄԻ
կոսութիւն ի Դ (4) բաժանեալ[179]. տէր Գէորգ մեռաւ յանկմանէ

5 A ՄԾԸ փխ. ՃԾԸ, թագաւորութենէն։ 6 A այս։ 9 A թագաւորին։ 12 A Յոնք։ 16 Б Յոյնքն։ 17 A այն ժամ, Գակիկ։ 18 A տաս։ 22 A Յունք։ 23 A զհայրապետութիւնն։ 27 A լերին, Б ածին։ 29 Б սա։ 33 A Գէորք։ 36 A էհան, Б զնան։ 38 Б աւետա-րանչին։ 39 Б և անդ նս թարգմանեաց։ 40 A բազմաց, գայ չիք, կաթողիկոսութիւն։ 41 A Գէորք։

հեծանելին ի վերա նորա և Սարգիս, և Գօղոս, և Թորոս վախճանեցան. և ժողովեալ էր ամենայն Հայք առ Ցովսէփ կաթողիկոսն Աղուանից և հայցեալ ի նմանէ Կիւրակէ արքայ Աղուանից, որ ի Բագրատունեաց, զի ձեռնագրեսցէ զԲարսեղ հայրապետ, ազգական տեառն Գրիգորիսի, և Ցովսէփ ձեռնադրեաց[180]։ Եւ մինչ եկն սուրբ հայրապետն Գրիգորիս, այս ամենայն եղեալ էր և վերստին հաստատեաց զտէր Բարսեղն յաթոռն իւր և յանձնեաց ի նա զքուեր որդիքն իւր, փոքր հասակաւ՝ Գրիգորիս և Ներսէս անուն և ինքն գնացեալ ի քաղաքն Քեսում առ իշխանն Գող Վասիլ կոչեցեալ կատարեցաւ ի Կարմիր վանս։ Եւ հաստատեալ Բարսեղ յաթոռ հայրապետութեան իւրոյ ամս ԼԱ (31), թվին ՇԼԲ (1083)։ Սա գեղեցիկ տեսանելով և զարգարեալ ամենայն առաքինութեամբ. ի սորա յաւուրսն ազգն Ռուբենեանց, որ առյայս թագաւորեցին ի Կիլիկեայ։

Թվին ՇԽԵ (1096) Ֆռանգն էառ զԵրուսաղէմ։ Եւ թագաւորք. նստան անգ, նախ Կունտօփրի, ապա Բաղտոյ, նորա որդի, ապա Ամարեա, նորա եղբայր, ապա Բաղտոյ, որդի սորա. սա ուրուկ լեալ ետ զթագաւորութիւն քուեր որդոյն Բաղտոյ հոմանուան իւրոյ և ի սմանէ էառ Արուսահլ[181]։ Այլ մեք ի վեր դարձցուք.

Թվին ՇԿԲ (1113) վախճանեցաւ տէր Բարսեղ[182] և ի նոյն ամի վաղճանեցաւ Գէորդ վարդապետն, մականուն Մեղրիկ։ Եւ մեծաշուք փառօք նստուցանեն յաթոռ հայրապետական զտէր Գրիգորիս, զորդի Ապիրատին, և քուեր որդի Վահրամայ, ամս ԾԳ (53), ի թվին ՇԿԳ ի Քրիստոսէ ՌՃԺԶ (1116)։ Սա զարդարեալ ամենայն սրբութեամբ և իմաստասիրութեամբ յազգէ Պալհաւունոյ, սա զամենայն ճնացեալ մեկնիչս թարքմանեաց, զորս ինքեամբ և զորս ի ձեռն Ներսէսի եղբօրն։ Եւ ի սորա փայլէին յաշխարհի իբրև զարեգակն բազում վարդապետք նախ Ներսէս հարազատն իւր և երկրորդ Ներսէս Լամբռոնացին, ոմանք ի պատմագրաց, [որպէս Սամուէլ ասէ, զսա յետ հայրապետութեան Ներսէսի, և Կիրակոս պատմագիր ասա ասէ. այս Ներսէս Լամբռոնացիս թարքմանեաց զմեկնութիւն տեսլեանն Ցոհաննու Աւետարանչիս, սրբար մեկնութիւն յինքենէ սաղմոսացն Ռութի և Սողոմոնի և պատարագամատուցին և «Էր ընդ եղբարսն երանեալ]», սրբար և լուծմունս աղօթից երանելոյն Գրիգորի Նարեկացոյն։

Եւ երրորդ՝ Իգնատիոս վարդապետ, որ հրամանաւ տեառն Գրիգորիսի մեկնեաց զգլուխն Ղուկասու Աւետարանչին։ || Չորրորդ՝ Սարգիս վարդապետ, աշակերտ Ստեփաննոս վարդապետի ՄԻԱ

1 А Գողոս, Թորոս։ 1—2 Б վաղճանեցան։ 3 Б Աղւանից, А Կիւրակ, Б Աղւանից։ 7 А նայ։ 8 А քւեր, Б որդինքն։ 12 А առաքինութեամբ։ 13 Б յաւուրսն, А Ռուբենեաց։ 16 А նորա չիք։ 17 АБ ապա Ամարեա նորա եղբայր ապա Բաղտոյ որդի չիք։ 18 А լեալ, հոմանուան։ 19 Б յետո փխ. ի վեր։ 20 А վաղճանեցաւ, Б ի չիք։ 21 Б վախճանեցաւ, А Գէորք։ 26 Б թարգմանեաց։ 27 А ի սորա ժամանակս։ 28 Б աշխարհի։ 29 Б և չիք, А Լամբրոնացին։ 30 Б զՍամուէլ։ 32 А Լամբրոնացիս, Б թարգմանեաց։ 33 А աւետարանչի։ 34 А երանեալ չիք։ 35 Б Նարեկացւոյն։

անյաղթ փիլիսոփայի, որ ի տիս տղայութեանն էառ գաւազան ի Բարսեղ հայրապետէ, սա մեկնեաց զէ (7) թուղթ կաթուղիկէից նախերգանօք և յորդորակօք։ Եւ Յովսէփ եպիսկոպոս ի կողմանցն Անտիոքայ, իսկ ի յարևելս Անանիայ վարդապետ. սա ի մի հաւաքեալ զմեկնութիւն չորեքտասան պրակացն Պօղոսի առաքելոյն, զմեկնութիւն Եփրեմի և Յոհաննու Ոսկիբերանին և Կիւրղի և այլ սրբոցն ի մի հաւաքեալ համառաւտաբար, վասն դիւրահասութեան ընթերցողացն, և սա ասաց զսրբասացութիւնսն. և ապայ մտահարուստն Յովհաննէս, որ Սարկաւագն կոչիւր ի հաղբատ։ Սա արար անշարժ տումար Հայոց, որ ք[րո]ննիկոն կոչի և փոքր թվական, արար և միաբանութիւն ամենայն ազգաց տօմարի ընդ Հայոց, ասաց և ճառս ներբողականս Տրդատայ և Ներսէսի, Սահակայ և Մեսրովպայ և շարականս Ղևոնդեանցն «Պայծառացան այսօր», և յամենայն մեկնութիւնս դրոց հնոց և նորոց, դոյզն ինչ սա ասացեալ է և զանուննն դրոշմեալ ընդդէմ բանից։ Սա յօյժ տօնասէր գոլով, որ ամենայն աւուր տօնի, սուրբքն երևէին նմա։ Եւ միւս ևս Գրիգոր վարդապետ, որդի Թոքակերին. սա անյագ բաղձանօք կրթէր աստուածաշունչ գրովք։ Այս Գ (3) վարդապետքս՝ Անանիայ, Յոհանէս, որ և Սարկաւագ և Գրիգորս էին յաշխարհէն Գանձակայ։

Ի ժամանակս Գրիգորիսի մեծ կաթողիկոսի, որ փոխեաց զաթոռ հայրապետութեանն ի Ծովք անուն դղեկէն ի կլայն Հռովմէական, խնդրեալ զնա ի լատին կնոջէ այրոյ, զի նմայ էր բնական, և կինն բարեպաշտօն սիրովետ նմա և շինեաց ի նմայ եկեղեցի հրաշազան և արար աթոռ հայրապետական, զի նախնի աթոռ սրբոյն Գրիգորի Էջմիածինն ի հինահարութենէ անօրինացն ի միգի կայր խաւարեալ[183]։ Եւ յետ սորա նստաւ հայրապետ տէր Ներսէս, եղբայր սորա. ամս է (7), թվին ՈԺԵ (1166)։ Եւ զինչ ասացից վասն սորա, զի Ժ (10) ապատէկ գտաւ, քան զբազումս ամենայնիւ, զի զարդարեաց զեկեղեցիս Հայաստանեաց կարգօք և քաղցր եղանակ շարականօք, զի անչափ ունէր շնորհս հոգևոր և մարմնաւոր, զի վկայեն ոմանք ի տեսողացն, որպէս Միխայէլ վկայէ, թէ զամենայն Աստուածաշունչ դիրս ի բերան առեալ իբրև զմի կանոն սաղմոս և արդ յայտնի են ասացեալ բանք սորա և պաշտի ի սուրբ եկեղեցիս հանապազ։ Եւ մեկնեաց զՄատթէոսի աւետարանն մինչև ի մի համարիքն և ոչ գիտեմ, թէ զի՞արդ ‖ արգիլեաց։ Եւ համբաւ իմաստութեան և սրբութեան ՄԻԲ սորա եհաս յամենայն ազգս, մինչ զի թագաւորն Յունաց ցանկայր տեսանել զնա և առաքեաց հռետորս, զի փորձեսցէ զնա

1 Բ տղայութենէն։ 3 Ա յորդորակօք։ 5 Ա մի չիք, Ա Պօղոսի։ 6 Բ Ոսկեբերանին։ 7 Ա այլոց։ 8 Ա ընթերձողացն։ 9 Ա Յօհաննէս։ 10 Բ արար և, ԱԴ տօմարի։ 12—13 Բ և [Ներսէսի] չիք։ 13 Բ Մեսրօպայ, Ա Ղևոնդեանց։ 14 Բ այսաւր։ 15 Ա դոյզ։ 17 Բ սուրբք։ 18 Բ անհագ։ 19 Բ Յովհաննէս։ 21 Ա մեծ չիք։ 22 Ա հայրապետութեան, Բ դղէկէն։ 22—23 Ա Հռոմէական։ 24—25 Ա եկեղեցի հրաշազան և արար չիք։ 25 Բ զի չիք, զնախնի։ 26 Բ անաւրինացն։ 31 Բ եղանակաւք շարականաց։ 32 Բ վկայէն։ 33 Ա դիր։ 34 Բ կանօն։ 36 Ա ի չիք։ 37 Ա արգելեաց։ 38 Ա ամենայն։ 39 Ա առաքեաց։

և գտաւ Է (7)-ապատիկ առաւել քան զհամբաւն[184]։ Եւ յետ վախճանի սորա նստաւ հայրապետ Գրիգոր, եղբօր որդի սօրա, ամս Ի (20), թվին ՈԻԱ (1172)։ Բայց փոքր ինչ հակառակութիւն եղև աստ, զի մեռանել տեառն Ներսէսի Բ (2) եղբօր որդիք կային՝ աւագ եղբօր որդին Գրիգոր և կրսերոյն՝ Գրիգորիս մականուն Ապիրատ։ Յորժամ վախճանեցաւ սուրբն Ներսէս, Գրիգորն ոչ էր մերձ, այլ Գրիգորիս զնա կարգացին կաթողիկոս, բայց ոչ ձեռնադրեցին, այլ յորժամ եկն Գրիգոր՝ աւագ եղբօր որդին և ետես զիւրն եղեալ, զնաց առ փեսայն իւր Վլեհ իշխանն. և առաքեաց զնա առ Նուրատինն ի Բերիայ և առ հրաման ի նմանէ. և եկին ժողովեցան ի Հռոմկլայն բազմութիւնք վարդապետաց և եպիսկոպոսաց և հաւանութեամբ ամենեցուն աւրհնեցին զտէր Գրիգոր կաթողիկոս, լի ամենայն սրբութեամբ զարդարեալ էր սա նման Ներսէսի։ Բայց փոքր մի մեղադրեաց Միխայէլ պատրիարքն Ասորւոց, թէ ը՞նդէր եղև գժտութիւն ի շնորհս հոգևորս և ևս ի մէջ ազգականաց, բայց լիցի գթութիւն տեառն Աստուծոյ ի քո վերայ և հայցեմ ի քէն ոչ անտես առնել զանուանեալն Գրիգորիս և տուր նմա զՀամրոն և զՏարսոնի վիճակն. և սա ետ[185]։

Ի Ե (5) ամին տեառն Գրիգորի եկաց պարոն Հայոց Ռուբէն և յետ նորա Լևոն. սոքա որդիք Ստեփանէի, որդւոյ Լևոնի, որդւոյ Կոստանդիայ, որդւոյ առաջին Ռուբենի, որ ի Յարծրունեաց և ի Հայկազանց, որպէս յառաջն ասացի։

Ի թվին ՈԼԷ (1188) և ի հայրապետութեան Գրիգորի ԺԷ (17) ամ և ի պարոնութեան Լևոնի Բ (2) ամ և ի Քրիստոսէ ՌՃՂԲ (1192) ամ առաւ սուրբ քաղաքն Երուսաղէմ Յարուսա՛լայ, ազգաւ Քուրթ, որդի Էարայ, ի Դուին քաղաքէ[186], որ յա[յ]ն ժամ գլուխ էր Եգիպտոսի և շրջակայից. ի բախտից ինչ դիպեալ և այժմ վասն ծուլացեալ մեղաց մերոց էառ զԵրուսաղէմ ի Ֆռանկաց. ԽՌ (40000) ոգի միայն ի տաճարին ջարդեաց թող յայլ և յայլ տեղիս և զՅարութեան դուռն կապղայիւք փակեաց և ետ զրաղանին ի յազգականս իւր, զի տացեն կարմիր մի ըստ գլուխ և ապա մտցեն ի Յարութիւնն. և շինեաց զտաճարն և բնակեցոյց ի նմա Դանիշմանս, այսինքն շեխերս և մի իշխեսցէ ոք ի քրիստոնէից մտանել ընդ զրունս տաճարին և թամբով ձի հեծնուլ համարձակ և այլ շատ բան, ըստ չար կրօնից իւրեանց։ Այս ամենայն իրագործեցաւ || յաւուրս Գրիգորի։ Եւ յետ սորա նստաւ հայրապետ ՄԻԳ տէր Գրիգորիս Տղայ կոչեցեալ, քուեր որդի տեառն Ներսէսի. ամս Բ (2)։ Սորա չարախօսքն բազում էին՝ Յոհաննէս, որ առյապա նստաւ կաթողիկոս, և Անանէ, որ եղև հակառակ աթոռ ի

1—2 Б վախճանի։ 4 Б զի ի մեռանել, A Ներսէսի Բ չիք։ 5 A աւագ։ 6 Б վախճանեցաւ։ 7 A կարգեցին փխ. կարգացին։ 9 A Մլեհ փխ. Վլեհ, առաքեաց։ 10 A Նուրաջինն։ 11 Б Հռոմկլայն։ 14 A պատրիարքն։ 15 A ի (շնորհս) չիք։ 18 A զՀամրոոն։ 19 A ամք։ 20 Б որդւոյ։ 21 A Կոստանդեա, Արծրունեաց, և չիք։ 22 A յառաջն չիք։ 24 Б (և) ի չիք։ 25 A Յարուսահլայ։ 29 A այլ և այլ։ 30 A զրանային։ 31 իւր չիք։ 32 A նմայ։ 33 A շեհերս։ 34 Б թամբով, հեծնել, համարձակել։ 35 A իւրոց։ 35—36 A իրագործեցաւ։ 37 A Տղա կոչեցեալն։ 38 A առապա։

*Սևաստ, և միւս ևս Դաւիթ, որ ապստամբեալ նստաւ յԱղթամար. զԻնքն առէր Յարծրունեաց, և այլ Զ (6) եպիսկոպոսունք քսեցին զնա առ թագաւորն Լևոն, բարուրս սուտս ի վերա դնելով, և նորա ի կալանս արարեալ ի Սիս քաղաքի, և հրաւիրակս առաքեալ, զի ի մի վայր ժողովիսցին վարդապետք քննել զսուտն և զիրաւն։ Եւ մինչ չև եկեալ էին, յաւուր միում տեսին զնա յատակս պարսպին և կտաւ զմիջով նորա և մեռեալ, ոմանք ասացին, թէ չարախօսք նորա արարին և կտաւ վասն այնորիկ կապեցին ընդ մէջ, զի մի կարծիցեն զնոցանէն. և ոմանք ասացին, թէ գիշերի կամեցաւ փախչել կտրեալ պարանին և մեռեալ։ Եւ եդին զնա ի Դրազարկն[187]։ Եւ յետ սորա Նստաւ տէր Գրիգորիս, որ Ապիրատն կոչեցեալ, այն որ յետ տեառն Ներսէսի քարոզեցաւ. կաթողիկոս և Գրիգոր առ ի Նմանէ և եա զվիճակն Տարսոնի Նմա և այժմ սա եղև կաթողիկոս ամս Ը (8) զարդարեալ սրբութեամբ[188]։*

Յայսմ վայրի եղև թագաւորութիւն ցեղիցն Ռուբենեանցն, որ Յարծրունեաց և Հայկազեանց խառնեալք խնամութեամբ որոց նախ թագաւորեաց Լևոն:

*Արդ՝ ի թուին ՈԽԶ և ի մարմնանալոյ բանին Աստուծոյ ամք ՌՃՂԹ (1199) և յառաջին ամին Գրիգորիսի դարձեալ Նոր Նորոգեցաւ թագաւորութիւն Արամեանս տոհմի և եղև վերջինս պայծառ, քան զառաջինն։*

*Արդ՝ ի Դ (4) բաժանեցի զթագաւորութիւն Արամեանս տոհմի ըստ Դ (4) կողմանց և Դ (4) հողմոց և Դ (4) վտակաց. Նախ՝ Հայկազնեաց, երկրորդ Արշակունեաց, երրորդ Բագրատունեաց, չորրորդ այժմ Յարծրունեաց խառնեալք խնամութեամբ ընդ Հայկազունսն։ Նախ Լևոն, որդի Ստեփանէի, որդոյ Լևոնի, որդոյ Կոստանդեայ, որդոյ Ռուբենի, որ ի Սենեքերիմանց։ Այս Լևոն[189] կացեալ իշխան ամս Ժ (10) և այժմ Քրիստոսիւ զօրացեալ եղև թագաւոր տանս Արամեանս ի Սիս քաղաքին։ Սայ ընկալեալ եղև թագ ի Հռոմայեցոց և Յունաց։ Եւ սա շինեաց զմեծափառ վանքն Ակներ և օծեալ եղև ի Գրիգորէ կաթողիկոսէ։*

*Ի սորա յաւուրս էին երևելիք վարդապետք ի կողմանս Աղուանից մեծ վարդապետն Մխիթար Գոշն կոչեցեալ, որ շինեաց զՆոր Գետկայ եկեղեցիներն[190], և Ներսէս Լամբրոնացին, և Յովսէփ կողմանցն Անտիոքու, և Յոհանէս, ոյ յապայ եղև կաթողիկոս, և Աստուածատուր վարդապետ, որդի Աղբէրկայ. յԱր ճէշ քաղաքէ,* Մ Ի Դ *այր սուրբ և մեռելյարուց և այլ բազում անուանի վարդապետք[191]։*

*Այս Լևոն թագաւորս հնազանդեաց զսուլտանսն Անտիոքու*

---

2 A *զինք, Արծրունեաց։* 3 A *սուտ դնելով ի վերա։* 6 Б *յաւուր,* A *զնայ։* 7 A *զմէջս։* 8 A *չարախօ[ս]քն,* Б *յայնորիկ։* 10 A *և (մեռեալ)* չիք։ 12 A *որ (յետ)* չիք։ 10 A *Ռուբեննեացն։* 17 A *և ի։* 19 Ь *թվին, ի [մարմնանալոյ]* չիք։ 20 A *ՌԽԹ։* 21 A *թագաւորութիւնն։* 24 Б *կողման։* 25 A *և երկրորդ։* 27 Б *Ս[տ]եփանէի։* 28 A *որդւոյ, հոստանդեայ,* Б *Ըռուբենի։* 29—30 Б *զաւրացեալ։* 31 Б *Հռոմայեցւոց։* 32 A *Ակներև։* 33 A *երևելի, կողմանց.* 35 Б *եկեղեցիքն։* 36 A *Յովհաննէս, որ առապ։* 38 A *երևելի* փխ. *անուանի։* 40 Б *զսուլտանն։*

և զԴամասկոսի և այլ բազում գործ արութեան ցուցեալ յամենայն տեղիս և պատուէր սա զամենայն ազգս քրիստոնէից և մահու չափ հնազանդէր օրինաց և եկեղեցականաց և ոչ սխալեալ, բայց ի միում նուագի, զի եթող նա զառաջին կին իւր և առ զդուստր արքայի Կիպրոս կղզոյն Ֆռանգ ազգաւ[192],

Ի ՅԸ (8) ամի թագաւորութեան սորա վաղճանեցաւ Գրիգորիս կաթողիկոսն և նստաւ յաթոռն տէր Յոհաննէս Խճկտորն թվին ՈԾԳ (1204), ամս Թ (0) և ընկեցեալ եղև հրամանաւ Լևոնի։ Եւ եդին զԴաւիթ Արքակաղնեցին յաթոռն, որ կացեալ ամս Բ (2) վաղճանի։ Եւ դարձեալ եդին զՅոհաննէս Խճկտորն, որ եկաց ամս Ե (5) վաղճանի[193]։ Արդ՝ ի Ե (5) ամի Յոհաննիսի և թվին ՈԿԸ (1219) կոչեաց Լևոն զամենայն աշխարհախումբ ժողովս հանդերձ կաթողիկոսիւն և զԿոստանդին իշխան՝ ազգական իւր և զի որդի ոչ ունէր, այլ դուստր մի Զապէլ, որ և Եղիսաբէթ, զնա յանձնեաց յիշխանսն յամուսնացուցանել զնա նմանոյ և դնել թագաւոր և ինքն հանգեաւ ի Քրիստոս թագաւորեալ ամս ԻԲ (22)։ Եւ ետուն զԶապէլ որդոյ բրընձին Անտիոքու Փիլիպոս, որ և Փիլիփան, ամս Գ (3)։ Այս Փիլիփան խարեալ եղև ի հաւրէ իւրմէ, առեալ ի նմանէ զթագն Լևոնի և եդին ի բանտի և անդ մեռաւ[194]։ Յառաջին ամին սորա և թվին ՈԿԹ (1220) նստաւ կաթողիկոս մեծաշուք պատուով իմաստնացեալն յԱստուծոյ Կոստանդին, որ եկաց ամս ԽԷ (47)։ Արդ՝ ի Ե (5) ամի սորա և թվին ՈՀԴ (1225) ետուն զԶարպէլ ի կնութիւն Հեթմայ, որդոյ Կոստանդնի մեծ իշխանի և օծ զնա Կոստանդին կաթողիկոսն թագաւոր մանուկ տիօք։ Այս Հեթումս զարդարեալ ամենայն առաքինութեամբ հանդերձ կնաւն իւրով Զապէլեաւ, զի սա հզօրագոյն դըտաւ, քան զԼևոն, հարբ և եղբարբք, որք էին զօրաւոր և պայլք Հայոց և հնազանդ թագաւորին[195]։

Յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ մեծ վարդապետն Վանական ի վերին կողմանս և յԱղուանս։ Սա աշակերտ մեծին Մխիթարայ, որ վաղճանեցաւ ՈԿԸ (1219) թվին։ Էին աշակերտք Վանականայ՝ Թորոս վարդապետ ի սահմանացն Մելտինոյ Հայոց և Կիրակոս վարդապետ պատմագիր, որ ի մանկութենէ կրթեալ էր առ ոտս նորա, ի Նորն Գետիկ, զոր շինեաց Մխիթար յԱղուանս, և Վարդան վարդապետն Հաղբատեցի, որ մեկնեաց զսաղմոսն, որ եկեալ ի վերին կողմանց գնացեալ Յերուսաղէմ և եկն ի տեսութիւն Կոստանդնի կաթողիկոսի և նա ոչ ետ նմա թոյլ դնալ, այլ ժամանակ ինչ առ ինքն արգելեալ։ Եւ || յետ բազում ամաց ընդ- Միև

1 A զործ։ 4 A կինն։ 5 A ֆռանկ։ 6 A Ը փխ. ՅԸ, Б վախճանեցաւ։ 7 A կաթողիկոս, Յոհաննէս։ 8 Б կեցեալ։ փխ. ընկեցեալ։ 9 Б Արքայկաղնցին, A կեցեալ։ 10 Б վախճանի, զՅոհանէս, Б Խճկառ։ 11 Б վախճանի, A ամին Յովհաննիսի։ 12 Б կոչեց։ 14 Б Զարել։ 15 A զիշխանսն, 17 A Զապել, Б Փիլիպպոս, A Փիլան։ 18 A Փիլոն փխ. Փիլիան, հօրէն։ 19 A բանդի, A յամին, Б յամի։ 20—21 Б պատւով։ 22 Б ամին։ 23 Б Զապէլ, A Զարպէլ, Հեթմոյ։ 24 Б ածւ 26 A Զապելեաւ, Б հրզօրագոյն։ 27 A զօրավարք։ 30 A 'և չիք։ 31 Б վախճանեցաւ, A թվին չիք։ 33 Б մանկութեան, A կրթեալ էր չիք։ 34 A յԱզուանս, 37 A նմա չիք։

հանրական Թղթոյն փոխանակ իւր առաքեաց ի վերին կողմանս աշխարհի մխիթարել զմնացեալսն ի կոտորածէն Թաթարաց և ապրեալ յոլով ժամանակս[196]։ Եւ յայսմ ժամանակի Յովանէս Դառնեցին, վարդապետ, այր սուրբ և ընտրեալ, գնացեալ Յերուսաղէմ եւեսս զտեսիլ պատկերի Գաբրիէլի պայծառացեալ, որ ետ ողղջոյն պատկերի սուրբ Աստուածածնին ասրբըլ Զ (6), ասելով «Ողջոյն ընդ քեզ», ընդ մէջ դիւերին յորում լուսանայր ապրիլ է (7). և սա ետես վառեալ զկանթեղ սուրբ յարութեան։ Եւ յետ ամարոյ միոյ գնացեալ ի սուրբ Յորդանան և հանդիպեալ մուղրուն Ջանկի անուն և մկրտեաց Բ (2) որդովքն ի Յորդանան։ Եւ անտի եկեալ ի քաղաքն Կողոնիայ քարոզել և զբազումս յանհաւատից դարձոյց ի Քրիստոս, ընդ որ նախանձեալ Պարսից իշխանաց արկին ի խիստ բորբոքեալ հուր և կացեալ բազում ժամս եւ ամբողջ, որ և մազ մի ոչ էր խանձեալ։ Եւ եկեալ առ կաթողիկոսն Կոստան[դին] և ոչ ետ թոյլ նմա գնալ, այլ կացեալ բազում ժամանակս առ նմա հանդեալ ի Հռոմկլայն[197]։ Եւ այլ բազում վարդապետք, եպիսկոպոսք, կրօնաւորք, զորս ոչ թուեմ յառաջ և յետոյ ի ժամանակ սոցա։

Թվին ՈՀ (1221) ել Թաթար հիւսիսոյ յարևելից ոմանք ասեն ի Չին և ի Մաչին յաշխարհէն, ոմանք ի ներքուստ քան զդուռն Դարբանդու ի խժական ազգաց և ոմանք ի Ս[կ]իւթոյ հիւսիսի անրաւ հեռաւորութեամբ և ամենայն ազգքն այն Թաթարք կոչին ըստ մարգարէին խուժդուժ Սկիւթացի, որք են սոքա մեծ և հզօր զօրութեամբ, Թագաւոր նոցա Ջանկզ ղան անուն. և եղև ի մեռանելն եդ զԹագն ի գլուխ կրտսեր որդոյն, որում անուն էր Հոզդախան ղան։ Եւ զօր գումարեաց իբրև զաւազ զիւր սեփհական ազգն, զոր Մուղալ Թաթար անուանեն, զԹազրտց, զՀոնաց և զայլ բազում ազգս և բաժանեաց զնոսա յերիս. առաջս զմին ընդ կողմն հարաւոյ, և զերկրորդ ընդ արևմուտս հիւսիսոյ և զորդի իւր ընդ նոսա, և զերրորդն ընդ արևելս հիւսիսի։ Եւ եդ գլխաւոր նոցա Ջարմաղան, այր խորագէտ և յաջող ի պատերազմի։ Պատուէր տուեալ նոցա աւերել, քանդել զամենայն աշխարհ և զԹագաւորութիւնս և ինքն ուտելով և ըմպելով պարապէր։ Իսկ զօրացն երթեալ աւերէին և բռնային զիշխանութիւնս ազգաց։ Եւ այս Ջարմաղան զօրավար, որ ել ի կողմն արևելից հիւսիսի, հոդաւ ի վերա Ջալալադին սուլտանին, որ իշխէր[198] Խորասանայ, եհար, վանեաց զզօրս նորա և արար փախստական, և կարդ առեալ աւերեցին ‖ զամենայն աշխարհն Պարսից՝ զՌէ, զԱսպահան, ՄԻՁ
զԱտրպատան և այնպէս եկին հասին յերկիրն Աղւանից բազմու-

1 Б կողման։ 3 Б Յովհանէս։ 4 A այր չիք։ 6 Б զողջըն, սուրբ չիք, ապրիէլ։ 7 A դիւերի։ 9 A սուրբ չիք։ 9—10 A և հանդիպեալ մուղրուն Ջանկի անուն և մկրտեաց Բ որդովքն ի Յորդանան չիք։ 11—12 Б յանհաւատիցն դարձոյց։ 16 A հանդեաւ, Հռոմկլայն։ 17 Б և կրօնաւորք։ 18 A ժամանակս սոցայ։ 20 Б ի (Մաչին) չիք։ 22—23 A Թաթար։ 25 A կրսեր։ 26 Б Հոքդախան, A իբր։ 26—27 A սեպհականն։ 27 A զԽոնաց։ 28 A յառաջս։ 29 A երկրորդն, հիւսիսոյ։ 33 A զԹագաւորութիւնս։ 35 A զօրաւար։ 36 A վերայ, զօրս փխս. որ։ 38 A աշխարհս։

թեամբ զօրաց. և զձմերային եղանակն դադարէին յարգաւանդ և ի բերրի տեղի, որ կոչի Մուղանայ, որ ի Յաղւանս։ Եւ ուժ առեալ յինքեանս և երիվարքն, դարունն ելեալք սփռէին, քանդէին զաշխարհս ամենայն և կատարեցաւ մարգարէութիւն մեծին Ներսէսի՝ «Աւերիլ ամենայն երկրի յազգէն նետողաց»։ Ո՞հ, ո՞հ դառնութեան մերոյ և այս ոչ թէ ի մի ամ կամ Ժ (10), Ի (20), Լ (30) գործեցաւ, այլ բազում ժամանակս իբրև հրդեհեալ անտառ ծածանելով եկն և զտէրութիւնս ամենայն ազգաց յինքեանս գրաւեցին. և անխափր ուտէին զմիս ձիոց և մկանց և զժժմունս. և ի զանն իւրեանց պարծէին։ Եւ իբրև այս յաջողեցաւ ի ձեռն մեծ զօրավարին Չարմղան կոչեցեալ. սա ընտրեաց իւր զօրագլուխ և ախոռապետ Իսքրար նուին, Ղութուն ն[ո]ւին և Չաղատայն, որ զօրագլուխն էր ամենայն զօրուն, զոր յետոյ սպանին Մուլհէտքն և այլ բազում գլխաւորք։ Թվին ՈՀ (1221) ելին և յորժամ տիրեցին եղև Թվական ՈՁԳ (1234)[199]։ Եւ ընդ բազում դերեալսն գերեցին զվարդապետն Վանական և զաշակերտն զԿիրակոս վարդապետն։ Եւ կացեալ ամ մի ի գերութիւն յետոյ վաճառեցին զվարդապետն Վանական Ձ (80) դահեկան, և յետոյ Կիրակոս վարդապետն դաղտ փախեաւ և եկին երկոքին ի տեղի սնընդեանն իւրեանց[200]։

Թվին Չ (1251) վախճանեցաւ Վանական Հ (70) ամաց[201]։

Թվին ՈՂԱ (1242) Փաչօն եղև ի տեղի Չարմղ[ան]ին զօրավար, զի նա համրացեալ էր. և առ զԹէօդուպօլիս և ի միւսում ամի առ զամենայն աշխարհն Հոռոմոց կոչեցեալ զԿեսարիայ, զՍեւաստ, զԵրզնկայ և զամենայն գաւառս, մանաւանդ զվշտատես ազգս Հայոց դերեցին և խանգարեաց զՍիաթադին սուլտանն Հոռոմոց[202]։ Իբրև զայն ետես, իմաստուն թագաւորն Հեթում առաքեաց զՍմբատ եղբայր իւր զօրավար Հայոց առ Փաչօն, կալ նմայ ի հնազանդութիւն, որում հաւանեալ խնդրէ ի նմանէ զմայր և զկին և զդուստր սուլտանին, որ առ նմա էր փախուցեալ դադաականութեան աղագաւ։ Թէպետ թագաւորն կամաւ ոչ կամէր, այլ վասն ահի ետ[203]։ Եւ Բաչօն նուին խնդացեալ և երդմամբ դաշինս կռեաց և զզօրավարն Սմպատ առաքեաց առ զանն մեծ և նորա մուրհակ կնքեաց, զի մի ոք նեղեսցէ զիշխանսն Հայոց և կալ անահ ի թագաւորութիւն իւր, միայն եթէ եկեսցէ թագաւորն Հեթում առ նա։ Եւ եկեալ Սմբատ սպարապետն Հայոց բազում շքեղութեամբ և պատմեաց եղբօրն զասացեալսն || մեծին։ Մ Ի Լ Իսկ նորա յանձն առեալ գնացեալ առ Բաչօ զաւրավարն և երկրորդ։ Եւ ի նմանէ առեալ մուրհակ երդման վասն մտերմութեան զանին. և գնացեալ զերկայնաձիգ ճանապարհն և անցեալ զծովն Կազբից։ Եւ ընդ իւր ունելով բազում քահանայս և Վարդան վարդապետն[204]։ Հասին ամիսս Ե (5) ի դուռն արքունի[205] և զանն մեծապէս փառօք ընկալաւ զնա և տուեալ մուրհակ կնքով,

1 A զձմեռնային։ 2 A ի (բերրի) չիք։ 6 A այս չիք։ 9 A զժըժմունս։ 11 A զօրաւարին Չարմաղան, ընդրեաց, զօրագլուխ։ 18 A դահեկանի։ 21 A Չարմ[ա]ղ[ան]ին։ 26 A Հոռմոց։ 27 A եղբայրն, իւր չիք, զօրաւար։ 29 A զմայրն, առ չիք։ 32 A զզօրաւարն Սմբատ։ 33 A զիշխանս։ 36 A զասացեալն։ 37 A զօրաւարն։ 42 A տուեալ։

անխղճելի սէր ունել. և դարձեալ բաղում չքնաղութեամբ ի Մանկու ղանէն, որ յետ Հոքտայ ղանին նստեալ էր և Գիուգ ղանին։ Եւ եկին առ Բաթու, հայր Սարդախին, մեծալիր և մօտ ազգական ղանին, որ նստէր մերձ ծովուն Կազբից, յետ ղանին իշխան Գ (3) կողմանց։ Եւ նա ևս սիրով ընկալաւ զթագաւորն Հեթում և մեծափառ պատուով յուղարկեաց դալ առ Բաչու նուին և ըստ արժանոյն և նա պատուեաց, զի էր իշխան Վրաց, Աղուանից, Հայոց և Հոռոմոց։ Եւ եկեալ Հեթում յաթոռն իւր թվին ՉԵ (1256)[206]. Եւ յայսմ ամի մեռաւ Բաթուն և նստաւ Սարդախ, որդի նորա, և ի սոյն ամի գեղակուր եղեալ և սա[207]։

Ի թվին ՉԷ (1258) մեծն Հուլաւու, եղբայր Մանկու ղանին, եկն անթիւ զօրօք առ զԲաղդատ ի խալիֆայէն Մուստասայ, որ էր յետնամնաց Մահմեդի։ Եւ ի դալ դարձեալ առ զՄուֆարկին, զՑամիթ, զՈւրհայ, զՀալպա, զՇամ և զամենայն երկիրն[208]։

Թվին ՉԺԲ (1263) հանգեաւ ի Քրիստոս Յովհաննէս Գառնեցին[209]։

Թվին ՉԺԳ (1264) սուլտանն Մսրայ եկն յաշխարհն Կիլիկեցւոց, զկէս երկրին գերեաց և զԼևոն որդին Հեթմայ ծառա տարաւ յԵգիպտոս և զԹորոս կրսեր որդին սպան[210]։

Յայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ և առաքինութեամբ սուրբն Ստեփաննոս վարդապետ, որդի Յուսկայ քահանայի, ի կողմանս Բերկրու և Վասպուրականի[211]։

Թվին ՉԺԵ (1266) վախճանեցաւ կաթողիկոսն Կոստանդին անփուտ ի մեղաց[212]։

Թվին ՉԺԶ (1267) կաթողիկոս տէր Յակոբ ամս Ի (20)։

ՉԺԸ (1269) ազատեցաւ ի գերութենէ Լևոն որդի թագաւորին։ Ի Դ (4) ամին Յակոբայ կաթողիկոսի հասանէ վախճան թագաւորին Հեթմայ. կրօնաւորեալ անուանեցաւ Մակար ի ժամանուն, թագաւորեալ ամս ԽԵ (45)[213]։

Թվին ՉԻ (1271) օծաւ Լևոն թագաւոր, որդի նորա, ամս ԺԹ (19)[214]. Սա առաւել քան զհայր իւր սիրող կարգաւորաց։ Սորա էին Է (7) որդի և անդրանիկ Հեթում։

Թվին ՉԼԸ (1289) կաթողիկոս տէր Կոստանդին Պրունգործն ամս Գ (3), զոր ընկեց յաթոռոյն Հեթում և եդիր զտէր Ստեփանոս Հռոմայեցին, որ եկաց ամս Դ (4)[215]։

Թվին ՉԼԸ (1289) օծաւ Լևոնի որդին, Հեթում՝ թագաւոր[եաց] ամս ԺԸ (18). սա ոչ արար կին[216]։

Թվին ՉԼԹ (1290) եկն Աշրաֆ սուլտանն Մսրայ ‖ ի վերա ՄԻԸ Հռոմկլային և առ զնա[217] և զտէր Ստեփանոսն գերի տարաւ յԵգիպտոս և անդ մեռաւ։ Եւ նստաւ կաթողիկոս տէր Գրիգոր

---

2 A Հոքաախան։ 3 A Սարդա խանին, մեծ ողիր փխ. մեծալիր։ 4 A մերձ։ 6 A պատուով, Բաչոյ։ 7 A Աղուանից։ 10 A եղև։ 12 A Մուստասայ։ 13 A յեանմնաց, զՄուֆարղին։ 14 A զՀամիթ։ 17 A ՉԺԴ փխ. ՉԺԳ։ 18 A երկիրն, Հեթմոյ ծառայ։ 21 A վարդապետն։ 26 A ԻՉԺԸ։ 27—28 A ի Դ (4) ամին... թագաւորին Հեթմայ չիք։ 36 A Լևոն, թագաւորին։ 38 A Մսրա

Անարզաւեցին, այր հանճարեղ և գիտնական, սա արար բազում երգս շարականաց, որ եկաց ամս ԺԳ (13)։

Ցայսմ ժամանակի հակառակէին Զ (6) եղբայրքն ընդ միմեանս վասն թագաւորութեան և երթային ի Կոստանդնուպօլիս և ոՃն յարևելս, հիւս[իսի ի] ղանն, և թագաւորէին Սմբատ, Թորոս, Կոստանդ։ Սմբատ սպան զԹորոս և զԹագաւորի ղակն պորեաց. և բազում մարտէր ի մէջ եղբարցն։ Յետոյ զօրացեալ Հեթում առ ընդ իւր զԼևոն, զորդի Թորոսի եղբօր իւրոյ և զեղբարսն զՍմբատն և զԿոստանդին յաքսորս առաքեաց[218]։

Թվին ՉԾԶ (1307) կաթողիկոս տէր Կոստանդին ամս ԺԶ (10)։ Ցաւուրս սորա և Հեթումայ եղև ժողով ի Սիս, առնել զտաւն ծ[ն]նդեան դեկտեմբեր ԻԵ (25) և զամենայն տաւնս սրբոց ուր և հանդիպի և արկանել ջուր ի սուրբ խորհուրդն[219]։

[Թ]վին ՉԾէ (1308) թագաւոր Լևոն, որդի Թորոսի, ամ մի։ Եւ միւս ամի թագաւոր Օշին, որդի Լևոնի, կալեալ ղաթոռ ամս ԺԳ (13)։ Սա ոչ հաւանեցաւ փոխել զկրօնս հայրենի։

Թվին ՉՀ (1321) կացեալ թագաւոր Լևոն, որդի Օշնի։ Ի սորա Գ (3) ամի կացեալ կաթողիկոս տէր Կոստանդին Լամբրոնացին ամս Դ (4)։

Ցայսմ ամի եկն Մսրցին ի Կիլիկոյ երկիրն և բազում առ և դերի տարեալ և զբերդն Ադանու քակեաց[220]։

Ցայսմ ժամանակի փայլէր իմաստութեամբ Մխիթար վարդապետն ի Մեծոփ հանդերձ աշակերաւքն։

Թվին ՉՀԶ (1327) կաթողիկոս տէր Ցակոբ. սա որդի գոլով քրիստոսասէր Գրիգորի Անարղաւեցոյ[221]։ Ցաւուրս սոցայ, թվին ՁՁԴ (1335) յաւուր Համբարձման տեառն[222], ի լնլոյ չափոյ մեղաց մերոց, ի խաղաղ ժամանակի, ամիրան Հալպայ եկն ի Մամւէստիայ և յԱտանիայ և ընդ բոլոր երկիր և ի թագաւորական քաղաքն և առհասարակ սրոյ ճարակ ետուն և անթիւ դերի՝ զարս և զկանայս, զծերս և զտղայս և զանասունս առեալ տարան յաշխարհն իւրեանց[223]։

Թվին ՁՁԶ (1337) վաղճանեցաւ Մխիթար վարդապետն ի Մեծոփ։

‖ Համառօտ պատմութիւն ազգաց Տանկաց Օսմանցոց, որ տիրեցին միահեծան ի ծայրին Եւրոպիու բովանդակ հիւս[իս]ով և Բաբելոնիւ ընդ հարաւ: Միթ

Արդ՝ ի թվին ՈՀԱ (1222) այր ոՃն անուն Օսման, այր շինական և հողագործ, յազգէ Տաթակինոսաց, Տաճիկ կոչեցեալ, օրինօք պղծոյն Մահմեդի, որ թողեալ զաշխարհն իւր զԱսիայ ի Ճոխ գեղէ և եկեալ յայլ և յայլ տեղիս եղև գլուխ աւազակաց և ժամանակ ինչ գնացեալ յարեցաւ ի սուլտանն Ալայատին Կա-

3 A եղբայրք։ 5 A Սմպատ։ 8—9 A զեղբայրսն զՍմպատ։ 11 A զտօն։ 12 A տօնս, սրբոց չիք։ 15 A ամին։ 18—19 A Լամբռօնացին։ 20 A Կիւլիկոյ։ 23 A աշակերտօքն։ 25 A սոցա թիւ։ 26 A չափ։ 27 A ամիրայն Ցալպայ։ 30 A զանասունն։ 35 A ծայրիցն Եւրոպիոյ, Б հիւսիսիւ։ 38 A երկրագործ այսինքն հողագործ փխ. հողագործ։ 39 Б պղծոն, զՑաոիա։ 40 A յայլ և այլ։ 41 Б Ալատին։

պաղովկացոց երկրին և եգիտ շնորհ յաչս նորա, առեալ ի նմանէ զօր բաղում եկն էառ բազում կոտորմամբ զԲուրսայ, որ է Եփեսոս, և թագաւորեաց[224]։ Եւ եղև ինքնագլուխ սուլտան ամս Կ (60)։ Որդի զհայր պայազատեալ, որ սակաւ սակաւ տիրեցին ամենայնի, որ արդ հայտնի է ամենեցուն։

Թվին ՉԻԹ (1280) Ուրախան, որ և Օրհանի, որդի նորա, նստաւ սուլթան։ Սա ընդարձակեաց զիշխանութիւն իւր՝ տիրելով բազում քաղաքաց, թագաւորեաց ամս ԻԹ (29), մեռաւ։

Թվին ՉԾԸ (1309) սուլտան Մուրատ, որդի նորա, թագաւորեաց ամս Կ (60)։ Եւ սա ևս մեծացաւ անթիւ զօրօք և մեռաւ։

[Թ]վին ՊԺԸ (1369) սուլտան Պայաղիտ, որդի նորա, թագաւորեաց ամս ԺԴ (14)։ Ի ժամանակս սորա երեքտասան ամի թագաւորութեան և ի Թորգոմեանս թվականի ՊԼԲ (1383) ել Թամուր Լանկ. և պատճառ ելից նորա է այսպէս. Արդ՝ այր մի Թամուր Լանկ անուն, օրինօք պղծոյն Մահմեդի, երևեցաւ յարևելս ի Սմրղնդ քաղաքի, լցեալ ամենայն չարութեամբ, զոր ոմանք ի Սարթափու ասեն զնա, մերձ յԱրտազ դաւառի, որ և գնացեալ ի Թարւէզ և զանօրէից յղեալ զնա ի քէշիկս պահել զթշնամիսն ի ճանապարհին Խորասանու։ Եւ անտի անցեալ զդետն Ջահուն դնացեալ ի Սմրղնդ և անդ եղև աւազակապետ և ժողովեցան առ նա արք անօրէնք, մարդասպանք. և դնացեալ նոքօք յեզր քաղաքին յափշտակեալ զերամակ նոցին. և ել իշխան քաղաքին պատերազմել և նոքա հարին և սպանին զիշխանն և զզօրս և տիրեաց քաղաքին Սմըղնդայ։ Եւ առ զկին իշխանին Խանում անուն։ Եւ զօրացեալ էառ զԲուխարայ, քաղաք և անցեալ ընդ դետն յայսկոյս[225], եկն յերկիրն Խորասանու, առնու զբազում քաղաքս նոցա և ահ և երկիւղ նորա անկաւ ի վերա ամենեցուն, տային դաշխարհն ի ձեռս նորա և նա զոմանս խաբէր, ոմանց երդնոյր և որդեգիրս առնէր և կիսոց զդուստրն իւր տայր և նովաւ սպանանէր։ Եւ գնացեալ ի վերայ Խորասանու և թագաւորն նոցա Շահմասուրն ոչ ետ զքաղաքն և ոչ զՇիրաղ, և զՔիրման, և զԱսպահան զամս Ը (8). և պիղծն Թամուր առ յերեսս խաղաղութիւն արար ընդ նմա և յետս դարձաւ։ Եւ Շահմասուրն դեսպան առաքեաց նմա բազում ընծայիւք, և նորա տեսեալ զդեսպան, եղև սուտ || հիւանդ. և զենեալ գառն մի, էարբ զարիւնն և կոչեաց ՄԼ զդեսպանսն ի մէջ բազմութեան և եցոյց զդէմս իւր, իբր մեռելոտոյ և առաջի նոցա փսխեաց զարիւն գառին և դեսպանքն եկեալ վաղվաղակի աւետիս մատուցանէին Շահմասուրին, թէ այսօր

2 Ա զօրս, Բ զԲուրսա բազում կոտորմամբ։ 5 Ա արգ չիք։ 6 Ա Ուրխան, Բ Օհրան. 7 Բ իւր չիք։ 8 Ա ամենայն փխ. բազում։ 9 Բ Մուրատն։ 11 Բ Պ և ԺԸ սուլտանն Պայազիտ։ 12 Ա յերեգտասան, Բ ամի չիք։ 13 Ա (և) ի չիք։ 14 Բ պատճառ նորա ելիցն այսպէս է։ 16 ԱՍմրղանդ, Բ քաղաքէ։ 17 Ա զնա չիք։ 18 Ա Թարուէզ, զանօրէից, Բ ֆէշիկս, զթշնամիս։ 19 ընդ գետն։ 21 Ա նոքօք չիք. 22 Ա երամակ։ 23 Բ տիրեցին։ 24 Ա Սմրղնգա, Բ առին։ 25 Բ զԲուխարա. 25—26 Ա յայսկոյս, երկիրն։ 27 Ա երկուղ, Բ նոցա փխ. նորա։ 28 Բ ի ձեռն, Ա երդնուլր։ 29 Բ որդէգիրս, կիսոցն։ 30 Բ գնաց։ 31 Ա Շահմասուր։ 33 Ա նմայ։ 34 Բ զդեսպանն։ 35 Ա զառ, Բ զարիւն։ 36 Բ բազմութեանցն, իբրև, Ա իբր չիք։

կամ վաղն․ սատակելոց է Լանկ Թամուրն, իսկ չարաններն պատրաստեաց զզօրս իւր զԴ (4) աւուր ճանապարհ ի մի օր հասեալ ի Խորասան և պատերազմեալ բազում մարտիւ, առկալ աւուր էառ զքաղաքն և զամենայն աշխարհն Խորասանու՝ զԲալի, զՇիրազ, զԲիրման, զԱսպահան, զՆիւշապուհ, զԿուրան, զՄակուրան, զԹուն, զԹանջան, զԴաղման, զՄաղանդարան, զՌէ, զԿաղուան և եհաս ի Սուլթանիայ ի սահմանս Ատրպատականի Թաւրիզու։ Եւ զանն Թաւրիզու[226] փախեաւ․ կողմամբն Ըռըշտունեաց ի Բաբելոն, առ ազգային իւր։ Եւ Թամուր Կաղն առ զԹաւրէզ և անտի չուեալ եկն երկիրն Սիւնեաց ի վերա գղեկին Երընջակու և եկեալ յերկիրն Ծակատու առ զքաղաքն Սուրմարի, որ էր ամրափակեալ ազգին Բագրատունեաց և անտի յԱյրարատ և զամուրն Բջնոյ և ըստ առան զեպիսկոպոսն Վանական և զայլ բազմութիւն քրիստոնէից։ Եւ առ զամենայն աւարն գնաց ի Փայտակարան Տփխիս, էառ զնա և զԹագաւորն Բագարատ ուրացոյց ի հաւատոյ, որ էր յազգէ Հրէից[227] և առ Գրիգորիւ հաւատացին ի Քրիստոս և յետոյ եղեն քաղկեդոնիկք։ Եւ Բագարատ խաբեաց զԹամուր, թէ տուր զզօրս քո, զի երթեայց զամենայն ազգս Վրաց, ածից ի կրօնս քո, որք են լեզուք Ը (8)։ Եւ նա հաւանեալ ետ։ Եւ Բագարատն յղեաց գաղտ առ որդիս իւր Կոստանդին և Դաւիթ գալ ծածուկ ընդառաջ ծնօղին, զի կորիցէ փախչել։ Եւ իւր առեալ զզօրս Չաղաթային բերեալ ի նեղագոյն և ի կածան տեղիս և որդիք թագաւորին սուր եդեալ կոտորեցին ԲԺ (12)-ան Ռ (1000) անձինս և առեալ զհայրն իւրեանց գնացին յաշխարհն իւրեանց։ Իսկ պիղծն Թամուր յեղանակս գարնանային ժողովեաց զզօրս իւր գնաց ի վերա Թուրքման Ղարա Մահմատին և նա խոյս աւեալ. և Թամուր մեծաւ արշաւմամբ հասեալ նմա ի վրա Ճապաղջրոյն և պատերազմեցան, և պարտեաւ Թամուրն ի նմանէ, զի զզօրագլուխն նորա սպան։ Եւ Թամուրն եկն յերկիրն Պալունեաց ի գաւառն Տարօնոյ և բռնաւորն սիրով ընկալաւ, և անտի ի Բաղէշ քաղաք։ Եւ ամիրայն Ամիր-Շարաֆ սիրով հնազանդութեամբ ընկալաւ զնա և նա ետ նմա և աշխարհին գիր ազատութեան երդմամբ ևս առաւել կարդացողաց։ Եւ գնացեալ առ զԼյաթ, զԱրծկէ, զԱրճէշ, զԲերկրի ‖ հեշտութեամբ, զի կամաւ եսուն և ՄԼԱ հնազանդեցան և եհաս ի վերա Վանայ քաղաքին, զաւուրս Խ (40) պաշարեալ կտնդնեաց զհողարկուբսն պատնէշ և բռնաւորն նոցա փախեաւ և ետուն զբերդն։ Եւ ո՛ կարէ ընդ գրով արկանել զաղէտս, զի քաղաքն, ամենայն երկիր ընդ մէջ բերդին էին և առ-

---

1 АБ վաղիւն, Б է չիք։ 2 АБ ճանապարհն, Б ի չիք։ 5 Λ զԲրման, զՆուշապուն։ 7 Б Թարւիզու։ 8 Б Թարուիզու։ 9 Б զԹարւէզ։ 10 Б յերկիրն, զղնեկին, А եկեալ չիք։ 11 Б զքաղաք։ 14 А էառ չիք։ 15 А թագաւորն։ 16 Λ հաւատոցն։ 18 Б զի երթեայց չիք։ 19 А և հաւանեալ նմա ետ։ 20 Б ի Կոստանդին։ 21 Б ընդ յառաջ։ 22 А ի (կածան) չիք։ 24 Б առ զհայր։ 25 Б ժողովեալ։ 26 А Թուրքմանին, Б խոյս աբեալ։ 27 А Թամուրն, Б նմայ։ 28 Б ի նման[է], А զօրագլուխ։ 30 А Տարոնոյ, Б բռնաւոր, АБ ընկալաւ զնա։ 31 А Միր-Շարաֆ։ 32 Б նմայ։ 35 Б Վանա, Խ օր, А քառասուն։ 36 Б պա[ն]էշ, Λ բ[ռ]նաւոր։ 38 А և ամենայն։

հասարակ ղամենեսան ընդ վայր արկլին, մինչ զի յետին անկեալքն ի վրա մսաղէզին այլ ոչ մեռանէին. և բազում աւարաւ դարձաւ ի Սմրղնդ և տիրեաց ամենայնի[228]։ Այլ մեք յետս դարձցուք, զի յորժամ գնաց Թամուրն յԱնկուրիայ ընբռնեաց զսուլտան Ըլտրում Պայազիտն և եդ ի ղաֆազ փակեալ և անդ մեռաւ, զի յաւուրոն յայնոսիկ ի Պուրսայէ անդ էր գնացեալ թվին ՊԼԳ (1384) և բառ ոմանց ՊԼՁ (1387)[229]։

Թվին ՊԼԴ (1385) նստաւ ի տեղին սուլտան Մահմատն ամս Ի (20)։ Սա յաղթող երևեալ քան զհայր իւր և ընդարձակեաց զիւր իշխանութեան։ Ի սորա աւուրս փայլէր յարևելս մեծ վարդապետաց վարդապետն Յովհաննէս Կախիկն, կախեալն ի սէրն Քրիստոսի, ի գաւառէն Որոտու, ի գեղջէն Վաղընդու, որդի մեծ իշխանին Իւանոյ, որ ի զարմէ Վասակայ էր, սա յոյժ իմաստուն և անյաղթ փիլիսոփայ, աշակերտ մեծին Եսայեայ և Տիրատրոյ վարժապետացն մերոց[230]։ Առ սա ժողովեցան բազում աշակերտք և եղեն անյաղթ փիլիսոփայք, որոց գլխաւորք Գրիգոր Տաթևացին, Սարգիս Սորբեցին, Յոհաննէս Մեծոփայ և այլ անթիւ պարք վարդապետ, որք ի նմանէ առին գաւազան՝ Յակոբ, Գէորգ, Մխիթար։

Եւ եդև վախճան վարդապետին Յոհանու Որոտնեցոյն ՊԼԷ (1388)[231]։ Եւ հաւանութեամբ ամենայն եղբարցն եդին ի տեղին զԳրիգոր Տաթևացին։ Եւ զմարմին Յոհաննու եդին ի վանս Երընջակոյ, ընդ Մաղաքիայ ճգնաւոր վարդապետի, որ էր ի ծովահայեաց քաղաքէն Ղրիմայ, աշակերտ սորին և հոգաբարձու Բ (2) զաստատանցն Յոհանու և Սարգսի[232]։ Ի ժամանակս սոցա պայծառացան ամենայն եկեղեցիք Հայաստանեաց, զի Գ (3) վարդապետք անուանիք և գլխաւորք կային՝ մեծն Գրիգոր Տաթևացին ի Տաթև և յամենայն արևելս, և երկրորդ Սարգիս, որ էր տեսուչ Աստապ[ատ]այ, և թվին ՊԼԸ (1389) եկն բնակեցաւ ի սուրբ ուխտն Խառաբաստու Սուխարայ վանք կոչեցեալ, Աստուածածին վերածայնեալ և կացեալ անդ ամս ԺԹ (19)։ Եւ աշակերտք բազում էին սորա՝ Գրիգոր Ծերն, Յակոբ, Մարգարէ, Հովանէս, Մկրտիչ, Կարապետ, Մելքիսէթ, Սարգիս, Մաթէոս, Կարապետ, Թումաս։ Եւ սա բազում հակառակութիւն կրեաց յաշակերտաց իւրոց[233]։ Եւ յետ վախճանի Սարգսի եկաց ի տեղի նորա Վարդան վարդապետ ամս Դ (4)։ Եւ ապա Գրիգոր Խլաթեցին ոչ ի նոյն վանս, այլ ի սուրբ ուխտն Ցիպնայ, որ || ՊՀԴ ՄԼԲ (1425) թվին նահատակեցաւ ի Բաղիշու կողման Մարաց. և Յակոբ վարդապետ ճգնաւոր ամփոփեաց զսուրբ մարմին ի Ցիպնա

---

1—2 А անկեալքն ոչ մեռանէին ոռ մնալով ի վերայ մսաղէզին և բազում։ 3 А Սմրղանդ։ 4 Б զսուլտանն։ 5 А ղաֆաս։ 6 А յաւուրն։ 9—10 А արձակեաց լար։ 11 Б Կանխիկն. А կախեալ։ 12 Б մեծի։ 13 Б զարմէն։ 14 А Եսաեայ։ 15 А վարժապետն։ 18 А վարդապետաց, Գէորք։ 20 Б մեծ վարդապետին, А Որոտնեցւոյն ՊԼԵ։ 22 Б զմարմինն։ 23 Б Մաղաքիա։ 25 Б զաստատանաց (իխ. զաստատանցն։ 29 Б Աստապատ։ 32 А բազումք, АБ Ծերենց, А Յակոբ չիք։ 33 Б Յովաննէս։ 34 А Թովմաս, հակառակութիւնս։ 35 Б վախճանի։ 37 А սուրբն, Б Ցիպնա։ 39 А զսուրբ չիք, զմարմին։

վանից ներքոյ և ամ մի սպասաւորեալ ՚տապանին անդէն վաղճանեցաւ։ Եւ յետ Բ (2) ամի նոյն Քուրթն գնացեալ ի Տոսպ գաւառ սպանին զմեծ առաքինի վարդապետն Յակոբ։ Ի սոյն ամի Ղազար Բաղիշեցին սպանին ի Սասնոյ լեառն[234]։

Այլ մեք դարձցուք ի վեր ի մեծ Գրիգոր Տաթևացին, որ ի վրդովմանց վերին աշխարհին առեալ զաշակերտս իւր ԲԺ (12)-ան և զաշակերտս մեծին Սարգսի, որ յետ վաղճանի նորա դնացեալ էին առ նա ի Տաթև ԲԺ (12)-ան, որպէս ցուցաք և այժմ ասասցից զիւր աշակերտսն, որ էին վարդապետք՝ Մխիթար Տաթևու, Յովանէս ի վանիցն Հերմոնի, Գալուստ ի Վաղրնդու, Սիմէոն ի Սիւնեաց, Յակոբ Բոստացի, Գրիգոր Արարատեան, Գրիգոր, Մատթէոս Ջուղայեցի, Աւետիս Աստապատցի, Եղիա Յծօպու, Յակոբ ի Վաղընդու[235], Յունան ի Շամախու, Յոհաննէս Կարմիր, Գ (3) աշակերտ այլ յայլ տեղիս՝ Մովսէս Տփխեցի[236], Մկրտիչ Փայտարանցի, Ստեփաննոս Թարվիդոյ[237]։ Եւ սոքօք հանդերձ եկն յերկիր Քաջբերունեաց ՊԾԸ (1409) թվականին, ի սուրբ ուխտն Մեծոփայ, առ հոգևոր եղբայրն և որդին իւր Յոհաննէս վարդապետ Արճիշեցի առաջնորդ սուրբ ուխտին, որ զիշխանութիւն առեալ էր ի Յոհաննէս Որոտնեցոյն և գաւազան ի Տաթևացոյն. և յայսմ ամի աւարտեալ էր զտաճար Տիրուհոյ սուրբ կուսին յետ Է (7) ամի, ըստ դաշանց ուխտին սուրբ վարդապետին. և այժմ առ սա եկն Տաթևացին. և սուրբ վարդապետն Յովհաննէս մեծապէս սիրով ընկալաւ զնոսա, իբրև զհարազատ որդի հպատակ կայր սուրբ վարդապետին Գրիգորի և որոց ընդ նմա, զի աւելի էին քան զութսուն ոգի՝ ԻԴ (24) վարդապետք և այլքն աբեղայ և հարազնադեաց կրօնաւորք, զի Տաթևացու հայրն յԱրճշու կողմանցն էր, վասն որոյ արձակեաց զկողմունս Արճիշու և զամենայն Բզնունիս ի կապանաց Աղթամարա և կոչեաց զկաթողիկոսն Աղթամարայ, զի գայցէ ի հնազանդութիւն սուրբ աթոռոյն ըստ տեսլեան իւրոյ և նոքա ոչ կամեցան լսել սրբոյն. և բազում անգամ աղաչեաց և բնաւ ոչ լուան և ոչ եկին առ նա, վասն որոյ կրկին բանադրեաց զԱղթամար և զհնազանդեալս իւր ԷԺ (17)-ան գլխով. և զԱրճեշ արձակեաց և աւրհնեցին զեկեղեցին և արարին նաւակատիս և յետ ամի միոյ գնացեալ ի Յայրարատ և անտի յաթոռն իւր ի Տաթև և անդ վաղճանեցաւ թվին ՊԿԲ (1413)[238]։ Եւ ընդ նմա գնացեալ Յոհաննէս վարդապետն մինչև ի Յայրարատ երկիրպագանել աստուածամուխ սուրբ Գեղարդ || ՄԼԳ եան և պատկերի Փրկչին և անդ եղև վաղճանին ի նմին ամի[239]։ Եւ զայս կարճ ի կարճոյ ասացի ոչ թէ այս կատարեալ պատմագիր

1 Б սուրբ տապանին։ 2 A յետոյ։ 3 Б գաւառն։ 4 A լիառն։ 5 Б ի մեծն։ 10 A վանից, A Վաղնդու, Սիմէօն։ 11 A Սունեաց, Б Արարատէն։ 12 Ջուղայեցին, A Եղիեա։ 13 A Վաղնդու, Б Յոհանէ[ս]։ 14 Б Տփխեցին։ 15 Б Թարվշոյ, յերկիրս։ 17 A որդին և եղբայր, Б Յոհան վարդապետն։ 19 AБ Յոհանէս։ 20 Б այսմ, A սուրբ չիք։ 21 Б ըստ չիք։ 25 Б զՁ հոգի, A այլք աբեղայք։ 26 Б խարազնազգեցք, զկողմանս։ 28 Б զկաթողիկոս։ 32 ԵԺ։ 33 Б զԱրճէշ։ 34 Б միոյ։ 35 Б ի յաթոռ, Б վախճանեցաւ, A ՊԿԵ փխ. ՊԿԲ։ 36 Б նմայ, մինչև չիք։ 38 AБ վախճան, Б ամին։ 39 A կարճ չիք։

է, այլ համառօտ, իբրև ծաղկաքաղ արարի վասն դիւրահաւանութեան։

Թվին ՊԾԴ (1405) նստաւ սուլտան Մուրատ, որդի Մահմատի, ամս ԼԷ (37)։

Թվին ՊՂԱ (1442) գողացան զսուրբ Գրիգոր Լուսաւորչի աջն ի Սըսայ և տարան յԷջմիածին։ Եւ վերստին սրբեցին և շինեցին զսուրբ Էջմիածին, զսուրբն Հռիփսիմէն և զԳայիանէն, զոր ի հինահարութենէ չար բռնաւորաց և աւարառուաց խանգարեալ էր և մայրն բազմորդի կայր նստեալ տխուր իբր զսկընդի, որ զամս բազում այնպէս կայր և արդ Քրիստոսի շնորհիւն նոր նորոգեցաւ[240]. Եւ եդին կաթողիկոս զտէր Կիրակոս, որ էր յերկրէն Քաջբերունեաց, ի գեղջէն Խառաբաստայ և ելեալ յերկրէն, բնակեցաւ ի կենդանաթաղ Վիրապ Լուսաւորչին զամս ԼԲ (32)։ Էր սա յաշակերտաց Սարգսի և Վարդանայ վարժապետաց, այր ճգնաւոր, սուրբ և ընտրեալ, որ ի թվին ՊԽԶ (1397) եղև քահանայ ձեռամբ տէր Պետրոս եպիսկոպոսի Թադէոսի Առաքելոյ։ Մինչ ի թվին ՊՂ (1441) միս ոչ եկեր և գինի ոչ արբ և ոչ կիթ անասնոց։ Եւ այժմ հաւանութեամբ ամենեցուն եդին կաթողիկոս։ Եւ այս են ժողովեալ վարդապետք և եպիսկոպոսք՝ Յովհաննէս մեծ վարդապետն Հերմոնա վանից և աշակերտք իւր, Դաւիթ վարդապետ, Ստեփանոս վարդապետ, Շմաւոն վարդապետ ի Տաթևու, Գրիգոր վարդապետ ի սուրբ Թադէոսէ, Գրիգոր միւս վարդապետ ի Հաղբատու։ Իսկ յԱյրարատեան գաւառէն՝ Կիրակոս վարդապետ Ըռշտունեաց, Սարգիս վարդապետ Ջորավանից, Տիրացու վարդապետ Վանանդայ՝ Սիւ[ն]եաց։ Եւ ի կողմանէ Վասպուրականի Թումա վարդապետ Քաջբերունեաց Ցաղկովտոյ[241], կացեալ առ ոտս Յոհանէս վարդապետի Մեծոփայ և ժամանակ ինչ առ Սարգիս վարդապետ ի Խառաբաստ և ընկալաւ գաւազան իշխանութեան ի Գրիգորէ Տաթևացոյ ի Յերևան քաղաքի հանդերձ ընկերաւք՝ Մկրտիչ, Կարապետ, Մկրտիչ միւս Ողբեկենց, Մկրտիչ Հողեցի, Սարգիս և այլք[242]։ Եւ եկեալ վարդապետն Թումա միւս անգամ ի Մեծոփ և սրբագրեաց զՍաղմոսն, զաղօթմատոյցն, և Կ (60) ամ կացեալ անդ[243], և թվին ՊՂԵ (1446) վախճանեցաւ։ Այլ մեք դարձցուք ի վեր. Կարապետ վարդապետ, Յովսէփ վարդապետ[244] Խառաբաստու, Ղազար վարդապետ Բաղշեցի, Սարգիս և Յոհան վարդապետք Յարծկու, Զաքարիայ վարդապետ Վարագայ և այլ անթիւք եպիսկոպոսք քահանայք, կրօնաւորք, ժողովք, որք յօժարեցան ի շինումն և ի նորո-

1—2 А դիւրոհասութեան փխ. դիւրահաւանութեան։ 3 Б Մուրատն, А Մահմետի։ 5 АБ Գրիգորի։ 6 А ի սուրբ Էջմիածին, Б վերըստին։ 7 Б զսուրբն չիք, Б զՀռիփսիմէն 9 Б էր չիք։ 10 А զկընկի, А բազում։ 12 А Բաչբերունեաց։ 13 А Վիրապն։ 14 Б վարդապետաց։ 15 А ընդրեալ, Б ի չիք։ 16 Б Առաքելոյն։ 17 А մինչև, Б թիվ, գին[ի]։ 20 А Հերմոնու։ 21 Б Դաւիթ վարդապետն, Շմաւոն վարդապետն։ 22 Б Թաթէոսէ։ 23 Б Ցաղբատու, իսկ ի Ցայրարատէ։ 24 А Ըռշտունցի։ 25 Б Վանանդա։ 27 Б Յոհաննէս։ 29 А Տաթևացոյն։ 30 А Մկրտիչ վարդապետ, Մկրտիչ (միւս) չիք։ 31 Б վարդապետն չիք, Թումաս։ 32 А զաղօթմատուց։ 35 А Հառաբաստու, Б Բաղիշեցի։ 36 А Սարգիս վարդապետ և, վարդապետ։ 37 Б անթիւ եպիսկոպոս։ 37—38 А կրանաւորք ժողովաթաւորք։

դումն մօրն լուսոյ քրիստոսադիր սուրբ աթոռոյն Էջմիածնի բազում աշխատութեամբ և ստարութեամբ, կամակցութեամբն Աստուծոյ, որ արկ ի սիրտ բռնաւորին ‖ Այրարատայ պարոն Աղուպ բէկին, որ դառ՝ տուեալ ամենեցուն վերստին նորոգել զսուրբ էջմիածինն, զսուրբ Հռիփսիմէն և զսուրբն Գայիանէն, զպարիսպն, զխցներն։ Եւ եդին կաթողիկոս զտէր Կիրակոս, որ կացեալ Բ (2) ամ, որ յետո քսութեամբ Մարկոս եպիսկոպոսի և Աստուածատուր կրօնաւորի Սաղմոսավանից, Զաքարիայ Հաւուց Թառու ասելով, թէ «Կաթողիկոսդ այդ ի կողմանցն Վասպուրականի է ընդ կապանաց Աղթամարայս. և հաւանեցաւ Յոհաննէս վարդապետն կաշառօք, և հանին յաթոռոյն զառաջինի կաթողիկոսն Կիրակոս և եդին կաթողիկոս զԳրիգոր եպիսկոպոս Մակուայ[215], Չկարգ կաթողիկոսացն ի միատեղ յետոյ ասացից։ ՄԼԴ

Թվին ՊՂԱ (1442) Նստաւ սուլտան Մահմատն, ի տեղի հօրն, ի Բուրսայ, ամս ԼԲ (32)։

Թվին ՊՂԱ (1442) գողացան ի Սըսայ զսուրբ Գրիգոր Լուսաւորչի աջն և տարան ի սուրբ Էջմիածինն ի նախաթոռն իւր։

Այս սուլթան Մահմատն թվին ՋԲ (1453) էառ զԿոստանդընուպօլիս, վասն ծովացեալ մեղաց մերոց և զաղէտս և զկսկիծ գառնութեան ո՛ կարէ գրով արձանացուցանել, վասն զի խեղայեղեալ ազգն Յունաց չփոթեալք այր զարամբ ելանէր, այլև աղջկունք և կանայք ունէին զթագաւորութիւն ամսօք և շաբթօք և վաաթարեալք ամենեիմբ[216], վասն այնորիկ դուրամուտ եղև սուլթանն. զի թէպէտ բազում եղև ճապաղիս արեան, այլ օգնեաց և ոչ ինչ։ Եւ յորժամ առ միահեծան տիրեաց ի ծայրիցն Եւրոպիոյ մասն ինչ արեմաից բովանդակ հիւսիսայնով և հարաւով և յարևելից մինչ ի տունն Պարսից յԱյրարատ, ընդարձակելով զիշխանութիւն իւր. և առաքէր պահապանս ամենայն բերդից յիւրայնոց խստաբարու ազգս ենգիչարի կոչելով. և զգեօղս և զանդաստանս տա գնովք ծառայ իւրոց և խալահի անուանէ. և առաքէ յամենայն քաղաքս դատաւորս և զադի անուանէ և ոստիկան՝ փաշայ անուանէ և զՄարտց տունն տա. իւրաքանչիւր տէրանց իւրեանց պայազատել որդի զհայր, բէկ և ամիրայ կոչել և կալ հնազանդ փաշայից, որ բեկլարբէկի կոչի և զեկեղեցիս և զեկեղեցականս ազատ արար, թէպէտ այժմ բռնաւորքն մեր իբրև զգերի պահեն։

Թվին ՋԺԲ (1463) Տրապիզոն էառ[217]։ Եւ մահ բազում անկաւ յաշխարհն ամենայն և Նաղաշ վարդապետն ասաց զՈղբն[218]։

3 А էարկ։ 4 Б Եաղուպ, А բէյին, Б վերըստին։ 5 А էջմիածին։ 6 А զխցերն, Б Կիրակոսն։ 7 Б և փխ. որ։ 8 А կրոնաւորի։ 9 А Թառայ, Б կողմանց։ 10 Б Յոհաննէս։ 12 Б եպիսկոպոսն։ 12 Б Մակուա։ 13 А միտեղ։ 14 Б տեղին։ 15 А Պուրսայ։ 16—17 Б զսուրբ Գրիգորի Լուսաւորչի աջն ի Սըսայ։ 17 Б Էջմիածին, նախյաթոռն։ 18 А Մահմադ, Б Կ. Պօլիսն։ 19 А զաղէտ։ 20 Б ընդ գրով, խեղանդեալ։ 22 А շաբաթիւք։ 23 Б զիւրամուա։ 25 Б Եւրոպէիոյ։ 26 Б արեմտային, А հարաւօվ, Б յարեմտից փխ. յարևելից։ 27 Б մինչև։ 29 А զիւղս։ 30 А զանտասզանս, Б ծառայից, А սպահիս։ 31 Б զատի, А ոստիկանս։ 32 Б անուանէ փաշա, տայ։ 34 А բէյլարբէյի։ 35 Б ազատս։ 37 А զՏրապիզոն, Б առաւ։ 38 А աշխարհ։

Եւ յայսմ ամի շարժ եղաւ Ցեզընգացն և մեռան ԼՌ (30.000) մարդ։

Թվին ԹԺԻ (1471) նստաւ թագաւոր ի Կոստանդնուպօլիս Պայազիտ, որդի Մահմաաին, ամս ԼԴ (34) և ոմանք՝ ԽԳ (43)։

Թվին ՋԾ (1501) շահ Իսմայիլն գճզընկ‖ան առաւ[249]։ ՄԼե

Թվին ՋԿԳ (1514) թագաւորեաց Իսմայիլ ամս ԺԳ (13)։ Սա սպան զհայր իւր և թագաւորեաց[250]. և սա կոտորեաց զշահ Իսմայիլ ի Չալդրան[251]։

Թվին ՋԿԶ (1517) էառ զՇամ և զՃգիպտոս։

ՋԿԸ (1519) չարացաւ և ազայ ժողովէ ի քրիստոնէից։

Թվին ՋՀ (1521) թագաւորեաց Սուլէման որդին ամս ԽԵ (45)։

Թվին ՋՀԶ (1527) Տոռիլու Հոռոմն ընդվզեցաւ և Հուսէն փաշայն գնացեալ դերեցոյց և հնազանդեաց։ Եւ ի սոյն ամի էառ թագաւորն զթաղթն Ունկռուզաց զՄայաթուն։

Թվին ՋՁԸ (1539) Ծռազատիկ արարին։

Թվին ՋՂԷ (1548) Ալխաս եկն տարաւ զթագաւորն ի Թարւէզ յեղրօրն վերա և աւերեաց զԹարւէզ, զԽնուս։ Իսկ տէրն Թարւիզու շահ Թամանն եկեալ աւերեաց զԹարւէզ, զԽնուս, զԲասէն, զԱրզուրոմ, զԿեղի, զԹերջան, զԲարերդ, զճզընկան, զԻոպեր։

Թվին ՌԸ (1559) որդիք խոդքարին [կռվեցան] ընդ միմեանս ի Կոնիայ. Սէլիմն զԲայազիտ փախուց մինչև յԱրզըրոմ, և նա գնաց ի շահն, Գ (3) որդովն անդ սպանին։

Թվին ՌԺԲ (1563) մահ տարածեցաւ։

Թվին ՌԺԵ (1566) խոնդքար Սուլէման գնաց ի վերա Փէչայ և անդ անկաւ։

Թվին ՌԺԶ (1567) նստաւ Սելիմն, որ փախոյց զեղբայրն, ամս Ը (8)։

Թվին ՌԺԸ (1569) ազջիկ ժողովեցին ի քրիստոնէից։

Թվին ՌԻ (1571) զԿիպրոս առին։

Թվին ՌԻԴ (1575) թագաւորեաց Մուրատ սուլթան սրդին ամս Ի (20)։

Թվին ՌԻԶ (1577) ագեոր աստղ երևեցաւ։

Թվին ՌԻԸ (1579) զճրևան դերեցին ՌԼ (30.000), Չդօլբանդն ի Հայոց վերացուցին։

Թվին ՌԼԴ (1585) Օսման փաշայն էառ զԹարվէզ։

Թվին ՌԽԱ (1592) Սևաստու Տաճիկ էառ զՆուսաւորչի եկեղեցին[252]։

---

1 Б այսմ, А եզև փխ. եղա, Ցեզընկան։ 3 Б ՋԻ փխ. ԹԺԻ։ 5 Б Իսմայիլ, А ճըզնկայն։ 6 А Իսմայել, ամս ԺԳ չիք։ 11 А Սուլէյման։ 13 А Ցուսէն։ 14 Б փաշէն։ 15 А թագաւորն չիք, А Ընկռուզաց։ 17—18 А Թարվէզ։ 18 А զԹարվէզ, Б զԽնու[ս]։ 19 Б աւերեալ, А զԹարվէզ։ 20 Б զԱրզռոմ, զԳերջան, А զԲարերթ, Б զճզնկայն։ 21 АБ զԻսպիր։ 22 Б միմիեանս։ 23 Б զՊայազիտ, մինչ յԱրզըռում։ 24 Б որդով, А և անդ։ 26 А խոնդքարն Սուլէյման, Բէչայ։ 30 А թվին ՌԺԸ չիք։ 32 А ՌԻԳ փխ. ՌԻԴ, Մուրադ։ 35 А զդուլբանդն։ 36 А ի չիք։ 37 Б փաշէն, А առաւ, Б զԹաւվէզ։

Թվին ՌԽԴ (1595) թագաւորեաց սուլթանն Մահմատ, որդին նորա[253], ամս Ժ (10)։

Թվին ՌԾ (1601) մեծ թագաւորն Պարսից շահ Աբաս եկն էառ զԹարվէզ և զԵրևան և տարեալ սուրգուն զմարդիկք Երևանա և զամենայն կողմանց նորա ի Ցասպահան բնակեցուցանել և յայլ կողմանց անդր լցեալ և աստի ի վեր աճեաց և ծաղկեցաւ քրիստոնէութիւն ի բուն աշխարհն Պարսից՝ ի Շօշ և յամենայն շրջակայս նորա[254]։

Թվին ՌԾԴ (1605) թագաւորեաց Ահմատ սուլթան, նորա որդի, ամս ԺԴ (14). և յետ նորա Մուստաֆայ եղբայր Գ (3) ամիս և մաղուր արարին զնա։

Թվին ՌԿԸ (1619) թագաւորեաց Աւսման, որդի Ահմատի, ամս Դ (4)։

Թվին ՌԽ (1591) ապստամբ Աղիչի անուն եւ ի միջոյ իւրեանց ապականեաց բազում գաւառս եւ առաւել զԹուխաթ, յետ Գ (3) ամաց ապա հնազանդեցաւ թագաւորին և ապա գնաց ի վերա Ֆռանգին[255]։

Թվին ՌԽԷ (1598) եւ ոմն զօրավար ներքինի Ջաֆար փաշայ անուն[256] ի յարևելս, նստաւ ի Թարվէզ Գ (3) ամ և սա-
բած || եաց զթոյն դառնութեան իւրոյ յամենայն տեղիս, ան- ՄՀՁ
մարդաբնակ արար զամենայն. և յետ Գ (3) ամաց բարձաւ չարն ի միջոյ։

Թվին ՌԽԸ (1599) երաշտացաւ երկիր և սերմանիքն նորացան։

Թվին ՌԽԹ (1600) եղև մեծ սով ընդ ամենայն երկիր և անկեալ լինէին դիակունք նոցա յամենայն անցս ճանապարհաց իբրև զտարափս կարկտի և ոչ ոք էր, որ թաղէր զնոսա, զի ամենքեան յօժարեցան ուտել զանսուրբս և բազումք զմիս գազանաց[257]։ Ի սոյն ամի անկաւ տարաժամ մահ։ Այս ամենայն եղև ի ժամանակն սուլթան Մահմատին։

Թվին ՌՀ (1621) մահ տարածեցաւ յարևելից մինչև ի մուտս արևու, անասելի և անպատմելի, մինչ զի փոս հատեալ Ի (20), Լ (30), Խ (40), Ծ (50) մարդ ի ներս լնուին և որոց ոչ գոյր տեարք, անկեալք յանցս ճանապարհաց։

Եւ յայսմ ամի հաստատեցաւ Լմայ անապատ, ձեռամբ տէր Ներսէս վարդապետի, անյաղթ փիլիսոփայի, Բեղլու կոչեցեալ, վասն ահարկութեան դիմաց. ժողովելով բազում եղբարս խաբազնազգեստս աւելի քան ղՀ (70) ոգի։ Սա Ե (5) ամ ի Տաթևու անապատն կացեալ և ուսեալ ի նոցանէ զկարս միակեցութեան

1—2 А սուլտան Մահմատն նորա որդի։ 3 А Ապասն։ 4 Б զԹաւրէզ, տարաւ, զմարդիկն, Եր[և]անայ։ 5 А այլ։ 6 А և ծաղկեցաւ չիք։ 9 Б սուլտան։ 10 А եղբայրն։ 11 А մաղուլ, զնայ։ 12 А թագաւորեաց չիք, АБ Ահմատին։ 15 А զամենայն փխ. բազում։ 16 А ապա չիք։ 17 А ֆռանկին։ 18 Б փաշա։ 20 Б զթոյնս։ 20—21 А և անմարդաբնակ։ 30 Б ժամանակ սուլտան, А Մահմադին։ 31 А յարևմուտ։ 32 Б մինչ ի փոս։ 33 А լնէին, յորոց։ 34 А տիեարք, ճանապարհացն։ 35 Б այսմ, А անապատն։ 36 А կոչեցելոյ։ 37 А դիմացն, եղբայրս։ 38 Б հոգիս։

հրեշտակական կարգի. և Զ (6) եղբարք ելեալ անտի և եկեալ ի Լիմն կոչեցեալ կղզի և արար զնա անապատ ընդ հովանեաւ սրբոյն Գէորգեա զօրաւարին, աշակերտ ունելով զՄելքիսէթ վարդապետն[258] և Ստեփանոս վարդապետ, որ յետ Դ (4) ամի փոխման նորա, եկաց գլուխ եղբարց[259]։ Էին յայսմ ժամանակի անուանի վարդապետք, նախ և առաջին Մովսէս վարդապետ Տաթևւացին, որ յետ Դ (4) ամի եղև կաթողիկոս ի տեղի սրբոյն Գրիգորի մեր Լուսաւորչին. և վերստին նորոգեաց սուրբ Էջմիածին զեկեղեցին բովանդակ՝ զպարիսպն, զխցներն և զխաւարեալ ազգս Հայոց Լուսաւորեաց կրկին լուսաւորիչն մեր, զոր եղծեալ էր բնաւ ի Թուլամորթ և ի մարմնասէր առաջնորդաց, զի Դ (4) կաթողիկոսք կային՝ Աւետիս, Մելքիսէթ, Դաւիթ, և միւսն անյիշելի, զմիմեան փոփոխեալ կաշառս տալով Պարսից թագաւորին և մի ի սոցանէ յաթոռն ոչ նստէին այլ յԱսպահան։ Եւ սուրբ աթոռն խարխալեալ և խրթնացեալ ի բարեզարդութեան և գոմս խաշանց եղեալ. զի եթէ մայրն բազմորդի և աթոռն քրիստոսադիր այսպէս կայր, որպէս ասացաք, որչափ ևս առաւել ծնեալքն ի սմանէ նսեմացեալ կային նստեալ ի սգի, ըստ այնմ, եթէ լոյսդ խաւար է, խաւարն որչափ ևս։ Աւրհնեալ է Աստուած, որ ոչ ցանկ բարկանայ և ոչ պահէ ոխս յաւիտեան, այլ յարոյց մեզ եզ(ի)ւր փրկութեան զնմանման նախամարգարէին զՄովսէս Տաթևացին, որ վերստին նորոգեաց զսուրբ Էջմիածինն, որպէս յա‖ւուրս Լուսաւորչին վերակացութեամբ աշակերտաց իւրոց ՄԱԷ ճգնաւորաց և անյաղթ փիլիսոփայից։ Տէր Փիլիպպոս սրբազան վարդապետի, որ յետ սորայ նստաւ կաթողիկոս և Յակոբ մաքրամիտ վարդապետի, որ յետ Փիլիպպոսի նստաւ կաթողիկոս, Խաչատուր վարդապետ Սպահանցի, միւս Խաչատուր վարդապետ Գողթան գաւառէ, Եսայի Երընջակոյ, Զաքարիա վարդապետ Վաղարշապատու, Սիմոն վարդապետ, սոքայ ամենեքեան գլխաւորք և անյաղթ փիլիսոփայք և սիւնք եկեղեցոյ աշակերտք Մովսէսի, որք աշխատեցան ի շինումն սուրբ Էջմիածնին[260]։ Եւ ի սոցանէ եղեն բազում հոյլք վարդապետաց և լցաւ ամենայն երկիր գիտութեամբ տեառն։ Եւ այժմ ասացից կարգաւ զկաթողիկոսունս, զի ՉՁԴ (1335) թվականէն մինչև ՌՀԴ (1625) թվին խառն և շփոթեալ տեսանեմք, և էր վասն ի ծուլութենէ և յանուսումն բարուց մերոց, զի թէպէտ կային կաթողիկոսք այլ աննշանք սաստ և անդ շրջեալք և բազումք զմիմեանս փոփոխելով,

1 Ա զԶ։ 2 Ա հուանեաւ։ 3 Ա Գէորքայ զօրավարին, զՄելքսէթ, Բ վարդապետ։ 4 Բ Ստեփաննոս։ 5 Ա նա եկաց։ 5—6 Բ անուանի։ 6 Ա վարդապետ չիք։ 8 Բ վերըստին, զսուրբ։ 9 Բ եկեղեցին, Ա զխցերն։ 11 Ա թուլամոլ և ի մարմնասէր չիք։ 12 Բ և Դաւիթ։ 13 Ա զմիմիանս, կաշառօք։ 14 Բ յաթոռ, Ա նստաւ։ 15 Ա յաթոռն, բարեկարգութենէ։ 18 Բ ի նմանէ փխ. ի սմանէ, Ա նսեմացեալք, նստեալք ի խաւարի և սգի, Բ թէ։ 19 Բ լոյսդ որ ի քեզ է խաւար է։ 22 Բ աթոռն էջմիածնի։ 24 Ա յանյաղթ, Փիլիփոս։ 25—26 Բ մաքրամի[տ]։ 27 Ա Ըսպահանցի։ 28 Ա Գողթան գաւառէ Եսայի Երընջակոյ Զաքարիա վարդապետ չիք։ 32 Բ հոյլ, երկիր ամենայն։ 33—34 Բ զկաթողիկոսունսն, 34 Բ զյ փխ. զի։ 37 Բ փոփոխելովք։

զոր զսոքա ի միում տեղւոջ ասացի, յետ Կիլիկեցոց թագաւորութեան,՝ կարգաւ մինչև թվին ՊՂԱ (1441), որ Նստաւ կաթողիկոս Կիրակոս յէջմիածին. և աստի մինչև թվին ՌՀԴ (1625), որ ի մերում ժամանակի կարգաւ գրեցից:

Թվին ՌՀԲ (1623) թագաւորեաց դարձեալ Մուստաֆայ մաղուրն ամ մի:

Թվին ՌՀԳ (1624) թագաւորեաց սուլթան Մուրատ, որդի Օսմանի, ամս ԺԷ (17): Սա հուժկու և յաղթող լեալ քան զհարսն իւր և հնազանդեաց զՀէհ քաղաք, որ է Հօթուն[261]:

Թվին ՌՁԴ (1635) սպան զՑուսէն աֆանդին, զՄանօղլին և զԷլէզ փաշայն և գնացեալ ի վերա Երևանայ, առ զնա և եդ անդ փաշայ, որ ի միւս ամին դարձեալ առին Պարսիկք[262]:

Թվին ՌՀԴ (1625) Ապազայ փաշայն յԱրզրումա գնաց յԱնկուրիայ, շատ ենգիչարի ջարդեաց և գնաց դարձեալ յԱրզրում[263]:

Թվին ՌՀԴ (1625) Ուռուզն առաւ զՏրապիզոն Մխ (240) դայխեններով. և ի սոյն ամի Վրացի Մովրով ջարդեաց:

Թվին ՌՁԷ (1638) գնաց սուլթան Մուրատն ի վերա Պաղտատայ Խ (40) օր խասար արարեալ և մսադէղ պատնիշօք առ զնա[264]: Թվին ՌՁԸ (1639) յունիս Բ (2) եմուտ ի թագաւորական քաղաքն Ստամբոլ և ի միւսում ամին մեռաւ[265]:

Այսուհետև կամիմ բացայայտել զկարգս սրբազան կաթողիկոսաց, որ ի մերում ժամանակիս կրկին լուսաւորիչք եղեն ամենայն Հայոց, զի ի ժամանակս սոցա աչօք մերովք տեսանեմք զսուրբ Էջմիածինն անթիւ վարդապետօք և աբեղայիւք և խարազնազգեստ կրօնաւորօք աւելի քան զՇ (500):

Թվին ՌՀԳ (1624) Նստաւ կաթողիկոս ի սուրբ Էջմիածին Մովսէս Տաթևացին ամս Զ (6): Սա վերստին Նորոգեաց զսուրբ Էջմիածինն զքումբէթներն, զդրունքն, զեկեղեցոյ արտաքոյ կողմն բովանդակն, զպարիսպն, զխցներն, վերակացութեամբն աշակերտաց իւրոց՝ Փիլիպպոս վարդապետի և Յակոբ վարդապետի և այլ բազում վարդապետաց, որպէս վերագոյն ասացի և փոխեցաւ ի կարգս սրբազան հայրապետացն[266]:

Թվին ՌՀԹ (1630) կացեալ յաթ || ոռ սուրբ Լուսաւորչին ՄԼԸ
տէր Փիլիպպոս կաթողիկոս[267], ի վիճակէ Բարգու[ղի]մէոսի Առաքելոյ, ամս ԻԵ (25): Սա զարդարեալ ամենայն առաքինութեամբ և ել համբաւ սքանչելեաց Նորա ընդ ամենայն տիեզերս մինչ զի պատարագս գայր Նմա ի պապէն Հռոմայ բազում անգամ, և ի

---

1 A զորս, Կիւլիկեցոց: 2 A մինչ, Б ի թվին: 3 A Էջմիածին: 5 Б ՌՀԴ փխ. ՌՀԲ: 7 Б ՌՀԲ փխ. ՌՀԴ, սուլտան Մուրատն: 8 A խուժկու, լեալ և յաղթող, զհարս: 9 Б հնազանդեցոյց: 10 Б հազար ՀԴ փխ. ՌՁԴ, աֆանտին: 11 A Երևանու: 12 Б փաշա, միում ամի, Պարսիկքն: 13 Б ՌՁԴ փխ. ՌՀԴ, Ապաղու, Б ելաւ Արզրումա, A յԱնկիւրիա: 14 A ենիչարի: 16 Б Մովրամ: 17 Б սուլտան: 17 Б Պաղդատու: 19 A յունիսի: 20 A Ըստամպօլ: 21 Б բացայայտ առնել զկարգ: 23 A ի չիք: 24 Б վարդապետք, աբեղայք: 25 A կրօնաւորիւք, Б Շ: 28 A զեկեղեցին, Б կողմ: 29 Б բովանդակ, A զխցերն, Б վերակացութեամբ: 31 Б վեր: 32 Б հայրապետաց: 34 Б Փիլիպոս: 35 Б ամ: 36 Б սքանչելեաց չիք: 37 Б Նմայ:

Կոստանդնուպօլսէ, և ի Վրաց թագաւորէն։ Էին յաւուրս սորա անուանի վարդապետք նախ՝ Յակոբ վարդապետ Ջուղայեցի, որ յետոյ ժառանգեաց զաթոռն սուրբ, Զաքարիայ վարդապետ Վաղարշապատու, Խաչատուր վարդապետ Աքուլեցի, Եսայի Երնջակոյ, միւս Խաչատուր վարդապետ Ասպահանցի, Գրիգոր վարդապետ Կեսարացի, Կարապետ վարդապետ Մոկացի, օծեալ ձեռամբ սորա Յոհաննէս Ուրհայեցի, Բարսեղ առաջնորդ Ամթայ, Դաւրոցի[268], Խաչատուր վարդապետ, աշակերտ Բուժիկ Յոհաննիսի, աշակերտի Բարողի, որ շինեաց զԱմիրդօլու սուրբ Յովաննէսն, այս Խաչատուր և Յոհանէս Բաղիշցի և Մեսրովբ վարդապետ քաջ քարտուղարն[269] և լցեալ շնորհօք հոգւոյն սրբոյ Բաղշեցի, որ թվին ՌՁԷ (1038) օծեալ եղև եպիսկոպոս և ի նոյն աւուր ընկալեալ գաւազան վարդապետութեան ձեռամբ այս Փիլիպպոս սրբազան կաթուղիկոսի և շնորհեալ առաջնորդ մայրաքաղաքին Բաղիշու

Եւ յայսմ ամի երեք կաթողիկոս զսուրբ աջն Լուսաւորչին յԱսպահանայ, զոր տարեալ էին հին կաթողիկոսքն[270] անդ և եդեալ դրաւ, այլև զմարմին սրբոյն Հռիփսիմեա սուրբ կուսին երեք և վերըստին շինեաց զեկեղեցին գեղեցկայարկ շինուածով և եդ անդ զմարմին սուրբ կուսին[271]։

Այլև զթիւ վարդապետաց ժամանակի սորա ո՛ կարէ ընդ գրով արկանել, զի ձեռնադրեաց սա աւելի քան զՆ (400) եպիսկոպոս և վարդապետ, որոց ամենեցուն վերակացու և գլուխ Յակոբ Ջուղայեցի։

Եւ յառաջին ամին Փիլիպպոս կաթողիկոսի հակառակ կացին, ոմանք սուրբ Էջմիածնա աթոռոյն, զի կամէին զՀռոոմաց տուն անջատել ի գրկաց մօրն լուսոյ անջատեցան և ինքեանք ի փառաց լուսոյ նորա, զի ոմանք յանկարծամահ եղեն, ոմանց լեզուքն տրորեցան, ոմանք ի հաւատոցն ընդ մէջ կարեցան և մեք ազատեցայք ի թունից նոցա, ըստ այնմ նոքա ի ձեռս մեք ժողովուրդ և խաչն արօ[տի][272]։ Եւ եթէ ոք այսուհետև քրիստոսադիր սուրբ աթոռոյն հակառակի զպատիժն Կորխայ և Դադանայ կրեսցէ, զի սայ է մայր մեր ամենեցուն և սովաւ ազատեցաք յերկրպագութենէ կոոց Անահիտա զազրոտոյ կնոջն Արամազդայ։ Այլ մեք պատմեսցուք թվականաւն զկարգս թագաւորաց Օսմանցոց, որ մնաց մինչև ի ժամանակս, որ իմք կարգաւ ‖ և մի վրիպեսցուք ծաղկաքաղ անցեալ։ ՄԼԹ

Թվին ՌՁԹ (1640) թագաւորեաց սուլթան Իբրահիմ, եղբայր

---

1 Б նորա փխ. սորա։ 3 Б զաթոռ, А Զաքարիա։ 4 А Ագուլեցի, Երնջակոյ։ 5 Б վարդապետ Խաչատուր Ըսպահանայ։ 7 Б Ամթայ չիք։ 9 А զԱմիրտօլուս 10 Б Մեսրովպ, А քաջ։ 11 Б շնորհօք չիք, հոգով սրբով Բաղիշեցի, որ չիք։ 12 Б աւուրն, А ընկալաւ։ 13 Б Փիլիպոս։ 14 А առաջնորդութիւն, Բաղըշու 15 Б աջ։ 17 А սուրբ կուսին Հռիփսիմեա։ 20 Б ի ժամանակի։ 21 А քան չիք։ 24 А առաջին, Б Փիլիպոսի։ 25 Б Էջմիածնայ, А զՀռոմոց, Б տունն։ 26 А անջատել, անջատեցան։ 27 Б ոմանք փխ. ոմանց, А լեզուք։ 28—20 Б ազատեցաք ի նոցանէ, թունից չիք։ 29 Б ձեռանս։ 31 Б սուրբ չիք, աթոռին, А Կորխա, Б Դաղանա։ 32 А սա։ 33 Б կռոցն Անահիտայ զազրոտ կնոջ։ 34 Б թվականաւ զկարգ թագաւորացն։ 37 Б սուլտան։

Մուրատի, ամս Ժ (10)։ Սա անհագ պոռնիկ և գիճասէր ըղձախոհ գոլով [որ]ում ոչ կարացին տանել իշխանք պալատին և զօրքն ամենայն միաբանութեամբ միաբանեցան ենդիչար աղասիքն և խասահի աղասիքն և այլ աւագանին սպանին զնա։

Թվին ՌՂԹ (1650) թագաւորեաց ի տեղի հօրն սուլթան Մահմատն ի մերում ժամանակիս և մարտ սորա և հօրն և հաւուն բաղում է ընդ արիական ազգին Ֆռանգաց ի վերա Կրիտէղ կղզոյ, որ Մալթայ կոչի. երբեմն յաղթեն և երբեմն յաղթին ծովով և ցամաքով անթիւ լինելով արեան ճապաղիս և ընկլուզեալք նաւովք յատակս ծովուն և ի մէջ ծովու հրով հրդեհեալ զմիմեանս նաւովք հանդերձ բիւրք յայս կողմանց յաղթին ի նոցանէ և սակաւք յայն կողմանց և վերջն ոչ գիտեմք, թէ զինչ լինելոց է[273]։

Թվին ՌՃ (1651) երկրորդ լուսաւորիչ սուրբ հայրապետն Փիլիպպոս գնացեալ յԵրուսաղէմ մեծաւ փափաքանօք յերկրպագութիւն տնօրինականացն Քրիստոսի աստուծոյ մերոյ, ընդ իւր ունելով բազում վարդապետք և կրօնաւորք։ Եւ թագաւորն Կոստանդնուպօլսի առաքեաց առաջի նորա Բ (2) մեծամեծ զօրագլուխք, զի ուր և մտցէ անկասկած լիցի ի բռնաւորաց և յոր քաղաք մտանէր դռոհ տուեալ ընծանային ընդառաջ նորա, զի գտնէ միայն ի քղանցս հանդերձի նորա մերձեսցին, ոչ միայն հաւատացեալք, այլև անհաւատք և բռնաւորքն եւս։ Եւ այնպէս շքեղութեամբ եմուտ Յերուսաղէմ և ամենայն գլխաւոր ազգ քրիստոնէից և պատուիրարդունքն ընկալան զնա, որպէս զԳրիգոր Լուսաւորիչ և սարսէին ի սրբութենէ նորա։ Եւ սալայատակ կճաւիք և պէսպէս նկարակերտ յօրինուածով զարդարեաց զատակ սուրբ Յակոբայ գլխադրին զրոլոր եկեղեցին յնչից իւրոց և կատարեաց զուխտն իւր դարձաւ փառօք եմուտ ի Կոստանդնուպօլիս և մեծապէս պատուեցաւ ի սուլթանէն վասն նորահրաշ սքանչիցն. զի յայնմ ամի հրաշտութիւն էր և առաջի ամենե-

---

1 A Մուրադին։ 2 A ում փխ. [որ]ում։ 3 A միաբանեալ միաբանութեամբ, Б ենդիչար, A աղասինքն։ 4 A աւաքանին։ 5 A տեղին, Б հօր սուլտան։ 6 Б և (հաւուն) չիք։ 7 Б Կրիտէ, A կղզոյն։ 9 A նաւօվք։ 10 A և ի մէջ ծովու չիք, զմիմիանս։ 11 A այս· Б յաղթեցին ի նոցանէ և սակաւք յայն կողմանց և պատերազմս այս է ԻԸ (28) ամ, որ մարտնչէին Օսմանցին և ազգն Ֆռանգաց ընդ միմեանս. Թվին ՌՃ և ԺԹ (1670) յաղթեցին Ֆռա[ն]գին և առ զքաղաքն և տիրեցին կղզոյն ամենայն։ Եւ Ֆռանգն առեալ նաւա. զինչսն ամենայն գնացեալ յերկիր այլ և թողեալ դատարկ զքաղաքն և Թուրքն եմուտ ի ներքս ի քաղաքն և տիրեաց ամենայնի և բաղում եկեղեցիք արարին ազօթանոց իւրեանց և կոչեն զանուանս ջամի։ Եւ անտի դարձեալ թվին ՌՃԻԱ (1672) դարձեալ ժողովեաց զանթուելի զօրս իւր սուլտան Մահմատն, կարծեմ թէ ոչ մնաց փաշա ի քաղաքին, բայց միայն Գ (3)՝ Բաղդատայն, Վանայ և Արզրումայ ի յահէ Պարսից։ Եւ զայլ զօրս, զոր ո· գոյ թիւ առեալ և կամի երթալ ի վերայ Մաճառայ և ոչ գիտեմ, թէ զինչ լինիցի։ 13 Б և դարձեալ թվին, լուսաւորիչն։ 14 Б Փիլիպոս, Երուսաղէմ, A փափագանօք, Б երկրպագութիւն։ 15 Б տնօրինականաց։ 16 Б վարդապեա, A հ. Պօլսոյ։ 17 Б մեծ։ 18 A և երթիցէ և մտցէ։ 19 A դրոխ, Б ընդանային ընդյառաջ։ 21 Б բռնաւորք, A (եւ) և չիք։ 22 A գլխաւոր չիք։ 24 Б Լուսաւորիչն, սալյատակ։ 25 A արարեալ կճիւք, Նկարիւք և յօրինուածով։ 26 A յեկեղեցին։ 28 Б պատուեցաւ, սուլտանէն, A նորասքանչ հրաշիցն։ 29 A ի փխ. զի, Б յայն։

դուն աղօթևաց, և ի նոյն ժամն եկն անձրև սաստիկ։ Եւ անտի դարձաւ յաթոռն իւր ի սուրբ Էջմիածին[274]։

Եւ ի սոյն ամի խաւարեցաւ արեգակն օգոստոսի Բ (2), մինչ զի աստեղքն համարձակ երևէին և եկաց այնպէս ժամս Բ (2)[275]։

Թվին ՌՃԴ (1655) նստաւ կաթողիկոս Յակոբ Ջուղայեցին, այր սուրբ և ընտրեալ, յար և նման մեծին Մովսէ || սի և Փիլիպպոսի։ Եւ ի ժամանակս սորա էին վարդապետք և միաբանք ի սուրբ Էջմիածին՝ Յովհաննէս վարդապետ, Սահակ վարդապետ աթոռակալ, Միքայէլ վարդապետ, Մովսէս վարդապետ, միւս Մովսէս վարդապետ, Գաբրիէլ վարդապետ, Երեմիայ վարդապետ, Առաքել վարդապետ պատմագիր[276], Ստեփանոս վարդապետ, Աւետիս վարդապետ։ Սոքա ամենեքեան սիւնք եկեղեցոյ և անօթք հոգոյն սրբոյ, անյաղթ փիլիսոփայք, այլև Ղազար վարդապետ, Սարգիս վարդապետ ի Թէոդուպօլիս և Ստեփանոս վարդապետ, մեր սիրելի եղբայր, ի Զմիւռին քաղաք, և որչափ քաղաքաց առաջնորդք այժմ աշակերտք սորա են՝ Յակոբ կաթողիկոսի, և Մեսրոպ վարդապետ Բաղիշեցի։

Մե

Թվին ՌՃԶ (1657) եկն Մալաք փաշայ Վանայ ի վերա Բաղըշու Աբդալ խանին, ԻՌ (20.000) սպառազինաւք և ի հուպ լինել քաղաքին փախեաւ խանն հանդերձ կանամբք և ամենայն ախիւն յանձաւս լերանց, որ Մաւաըկան կոչի, առ Ալի || աղայ նախարար կողմանց։ Եւ Մալաք, որ յառաջ ողիր և այժմ փաշայ զմեծագոյն, որդին Դիադին անուն ամիրայ, եդ ի տեղի հօր և Թալանեաց զմնացեալ աղխ նորա և զքաղաքն և ԺԵ (15) օգի ի քրիստոնեա սպանին և շատ վնաս գործեցին ի ոագրելոյ Վանա զուլոցն։ Եւ ամի միոյ Նուրատին, միւս որդի Աբդալ խանին, քսութեամբ հօրն, սպան զեղբայրն իւր զԴիադին, և հայրն իբր ի չմեղս եղեալ սպան և զՆուրատին կամակցութեամբ նախարարացն և ինքն դարձեալ եղև ամիրայ հրամանաւ Հասան փաշային, որ նստէր ի Տիգրանակերտ։ Եւ այս ԽԳ (43) ամ է, որ ամիրայ է Բաղշու քաղաքին. և զանբաւ չարիս, զոր սա անցուցանէ[277], ո՞ կարէ ծրել ի քարտիսի զհարկապահանջութիւն, զկեղեքել, զԹալանել, զտուգանսն, որ հասուցեալ է զմեզ ի յետին չքաւորութիւն՝ զվարդապետք, զքահանայք, զեկեղեցիք, զվանքերն և զառ հասարակ ժողովուրդ[278]։ Զի Ի (20) րէկզադայ ունէր մեծամեծք, Թող զաղչկունս և զմանր տղայք։

1 Б ի չիք։ 3 Б օգոստոս։ 4 Б աստեղք համարձակք։ 7 A մեծի։ 8 A ի (ժամանակս) չիք։ 9 Б Էջմիածինն։ 10—13 Б Գաբրիէլ վարդապետ միւս Մովսէս մատենագիր Ստեփանոս վարդապետ Աւետիս վարժապետ փխ. Միքայէլ վարդապետ... Աւետիս վարդապետ։ 14 Б այլ։ 15 A Թէոդուպօլսէ։ 17—18 A և Մեսրոպ վարդապետի Բաղշեցի չիք։ 19 A Վանա։ 20 Б Բաղիշոյ, A Աւդալ։ 21 Б խան։ 22 Б աղխիւք, A ասեն փխ. կոչի։ 23 Б Մալաքն, A վաղիր։ 24 A ամիրա։ 25 A Թալանեալ, ախ։ 27 A զուլուցն, յետ ամի միոյ, որդին Աւդալ։ 29 A ի Չքմեղս։ 30 A ամիրա, Յասան, Б փաշին։ 31 A ամիրա։ 32 Б Բաղիշու, A չարիս զործելով։ 33 A քարտիզի։ 33—34 Б զԹալանելն։ 34 Б ի չիք։ 35 Б զեկեղեցիկնք զվանքեր, A առ։ 36 A րէյզադայ ունի։ 37 AБ տղայս։

Եւ կան ի քաղաքիս Բաղիշու Դ (4) անուանի վանք՝ առաջին Գոմաց վանք, առաջնորդարան Բաղշու քաղաքին և երկրին, վերատեսուչ և հովիւ հոգևոր այժմ Մեսրովպ վարդապետ ուծեալ ձեռամբ Փիլիպպոս կաթողիկոսի և առեալ դաւազան ի Նմին ատուր թվին ՌՁԷ (1638), որպէս յառաջ ասացի, և այս ԻԵ (25) ամ է[279], որ նստեալ է յաթոռ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ Գէորգայ զօրավարին, զոր տէր Յիսուս պահեսցէ ընդ երկայն աւուրս։ Եւ երկրորդ վանք Խնդրակատար վերաձայնեալ յանուն ամենասրբուհոյ կուսին, շինեալ ‖ յառաջ ձեռամբ ՄԽԱ Թադէոսի սուրբ առաքելոյն. դամբարան վարդապետացն Ներսէսի Բաղիշեցոյ, միւս Ներսէսի հէրապետի և Կարապետի Փարխնցոյ և Պետրոսի վարժապետացն և ի սոցանէ վարժեալք անթիւ ջոկք վարդապետաց, որք եղեալ են ի շիրմի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին։ Եւ այժմ ծառայ սուրբ կուսին կարգեալ խնամատար՝ ես տրուպ անարժան մեղուցեալ Դաւիթ Բանասէր, սնեալ ի մանկութենէ առ ոտս երջանիկ և երից երանեալ հօրս մերոյ Մեսրոպ վարդապետի, անյաղթ փիլիսոփայի և քաջ քարտուղարի և թվին ՌՂ (1641) ընկալայ ի նմանէ դաստիճան քահանայութեան և յետ Զ (6) ամի դաւազան իշխանութեան, թէպէտ թափուր և տդէտ գոլով ի յուսմանէ[280] և թվին ՌՃ (1651) եդին զանարժանս ծառայ Խնդրակատար սուրբ Աստուածածին։ Երրորդ վանք Աւեխու սուրբ Աստուածածնին, հիմնարկեալ ի Թադէոսէ սուրբ առաքելոյն։ Չորրորդ Ամիրդաւլու վանք, որ յանուն սրբոյն Յոհաննու, դամբարան և դասատուն Բարսեղ վարդապետի և Յոհանէս վարդապետի, Խաչատուր վարդապետի հանգուցելոց ի Քրիստոս և այժմ տեսուչ և գլուխ ի նմա, հոգևոր եղբայրն մեր, Վարդան վարդապետ[281], ճարտասան և բանիբուն, օծեալ քահանայ կուսակրօն ձեռամբ Մեսրովպ վարդապետի և ընկալեալ դաւազան իշխանութեան ի Խաչատուր վարդապետէն. զոր ի մանկութենէ առ ոտս նորա սնեալ և վարժեալ ի նոյն վանս։ Եւ այժմ վասն ծովացեալ մեղաց մերոց ի ներքոյ բաղում և անտանելի հարկի և նեղութեան եմք ամէնքս, զոր տէր Յիսուս այց արասցէ։

Թվին ՌՃԺԱ (1662) դրդռեաց չարն սատանայ զաղթամարցիք, որ զամս բաղումս ի Գրիգորիսէ կաթողիկոսէ թվին ՇԿԳ (1114) բանադրեալք կային, հակառակ կացին քրիստոսադիր սուրբ աթոռոյն Էջմիածնի, կաշառս ետուն Վանայ փաշային ՊԾ (800) կարմիր ոսկի, ձեռամբ Աղթամարայ աղին, որ զուլ է, և

1 Б Բաղիշու չիք։ 2 Б Բաղիշու, երկրի։ 3 Б և հովիւ չիք, Մեսրոպ, A վարդապետ չիք։ 4 A Փիլիպոսի։ 5 Б ՌՁԸ փխ. ՌՁԷ, A յառաջն։ 7 A Գէորքեայ զօրաւարին, Б Յիսուս Քրիստոս։ 8 AБ աւուրս, Б վայրաձա[յնեա]լ։ 9 A ամենասուրբոհու, Б ամենասրբուհոյ, կուսին չիք։ 10 Թաթէոսի, սուրբ չիք։ 11 Б և միւս, հերապետին, Փարխենցոյ։ 12 A ի չիք, Б վարժեալ։ 15 A տրուպս։ 16 Б երջանիք։ 17 A քաչ։ 18 A ընկալեալ, Б աստիճան։ 19–20 Б թէպէտ.... յուսմանէ չիք։ 22 A Աւեղու, Б Աստուածածինն, A հիմնեալ, Б Թաթէոսէ։ 24 Б Յովհաննու, A և (Յոհանէս) չիք։ 25 Б և Խաչատուր։ 26 A ի նմա չիք։ 31—32 Б հարկի եմք և նեղութեան։ 32 Б Յիսուս Քրիստոս։ 34 Б բաղում, A թվին ՇԿԳ չիք։ 35 Б կացին փխ. կային։ 36 Б փաշաին։ 37 A կուլ։

արդ ասին ի փաշայէն. գնացին ամր հանին ի Ստամբօլայ. թէ Վան քաղաք և Բաղէշ Աղթամարա լինի. և դրոհ տուեալ արբանեակք չարին մարդիկ և տանուտեարք Ոստանայ և միաբանութեամբ չայուշով եկին ի Բաղէշ քաղաք, իբր թէ այսուհետև մի ոք իշխեսցէ զանունն էջմիածնայ տալ, այլ զ[Աղ]թամարայ։ Եւ զայն տեսեալ մեծ վարդապետին Մեսրոպայ հանդերձ մեօք զմահ յանձն առեալ և մի տեսանել զարհամարհանս մօրն լուսոյ և ոչ թողաք յեկեղեցի և գնացեալք իջեանեցան ի խանութսն և ի խանիրն։ Եւ էջ հոգևոր տէրն մեր ի քաղաքն և խրատեաց զժողովուրդն և ծանոյց զառաջին կապանս նոցա, թէ ոք նոցա || ՄԽԲ հնազանդին ուրացողք կոչին, զի ուրանան զաթոռ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ։ Եւ հաւանեալ ամենայն ժողովրրդեանն բռնութեամբ Ակզալ խանին արտաքսեցին զնոսա ի քաղաքէն։ Զինչ յերկարեցից, այս Բ (2) ամ է (7) անգամ եկին Մարտիրոս Փշրուփ անուանեալ կաթողիկոս Աղթամարայ և ՝Սահակ վարդապետ և Մովսէս փօղ չեպիսկոպոս և չէկ անիցեալ աշխարհական մի և Դաւաշու պիղծ Մէլիք, աւելի քան զԻ (20) այր և զինչ ասացից Քրիստոսի շնորհն յաղթեաց նոցա և ոչ կարացին մուծանել զաղանդն իւրեանց յաշխարհն մեր, այլ թափեցաք յընչից և աղքատացաք, զի գնաց աւելի քան զՍ (2000) զուռուշ սաղ դրամ փաշային, խանին, չայուշին, Ռ (1000) զուռուշ կարգացողքս և Ռ (1000) զուռուշ քաղաքին։ Յետոյ եկն ամր ի Կոստանդնուպօլսէ կրկին հաստատեալ ի վերա էջմիածնին[282]. օրհնեալ է Աստուած։

Արդ կամիմ ծաղկաքաղ առնել յԱբրահամէ մինչև ի Քրիստոսի ծնունդն և անտի կարգաւ մինչ ի Կոստանդիանոս և ի նմանէ մինչև թվին Չ[283] զկարգս նահապետաց և զառաքելոցն համառօտաբար:

Աբրահամ հայրն հաւատոյ, որդի Թարայի, ծնեալ յերկրին Քաղդէացոց, Հ (70) ամին Թարայի ի Մալքաթու կնոջէ, ԺԵ (15) ամին խնդրեաց զտէր և ծանեաւ։ Ի (20) ամին ել յերկրէն Քաղդէացոց հանդերձ հարբ և եղբարբք և բնակեցան ի Խառան։ ՀԵ (75) ամին ել ի Խառանէ հրամանաւն Աստուծոյ և եկն ի Քանան։ Զէ (87) ամին եղև Իսմայէլ ի Հաքարա Եգիպտացւոյ։ Ճ (100) ամին ծնաւ զԻսահակ ի Սառայէ, որ եկաց Սառա յետ ծնանելոյն ԼԵ (35) ամ և մեռաւ։ ՃԽԵ (145) ամին առ զԿենտուր, ՃՀԵ (175) ամին վախճանեցաւ, յՀԵ (75) ամն Սահակայ և ԺԵ (15) ամն Յակոբայ։ ՅԱբրահամէ՝ Իսմայէլ, ուստի Սարակինոսք, որք են Տաճիկք։ Իսահակ որ և Հրէայք, ի Կենտուրա Արշակունիք……

Եւ թագաւորեաց[284] Վասիլ, որդի Ռոմանոսի, ամս ԾԲ (52), 57ա

1 Բ Ստամբօլ։ 2 Բ Աղթամարու, Ա գրոհ։ 3 Ա մարդիկ, Բ և [տանուտէարք] չիք։ Ա տանուտէրք։ 4 Ա չավուշովք, Բ թէ չիք։ 5 Բ զանունն։ 6 Ա միեօք։ 8 Ա զեկեղեցի, Բ իջանեալ խանութ։ 9 Բ խաներ, հայրն փխ. տէրն, քաղաք։ 10 Բ և թէ որ։ 12 Բ ժողովրդեան։ 13 Ա Աւզալ։ 14 Ա երկարեցից։ 16 Բ զօղալ եպիսկոպոս։ 17 Բ և պիղծ անիծեալ մելիք մի Յովանէս Գաւաշու, Ա Ի։ 18 Բ շնորհքն։ 19 Ա զաղանդ, Բ յաշխարհս, Ա թափեցայք։ 20 Ա Ս։ 21 Բ փաշին և չայուշին։ 22 Բ և այլ, Ռ չիք, քաղաք։ 23 Բ Ս|տ|ամպօլայ, էջմիածնա։

թվին ՆԻԵ (976)[285]։ Ի ժամանակս սորա Խաչատուր կաթողիկոս սկապանձեցոյց զբերանս հերձուածողաց լուսաւոր || թղթովք, որ առ 57բ
մետրապօլիան Սեբաստիոյ։

Ի ժամանակս սորա նեղացեալ Սենեքարիմ Յարծրունեաց ետ զկողմ Վասպուրականի Վասիլ թագաւորին Յունաց և էառ զ[Ս]եբաստիայ գաւառօք։ Եւ յայժմ աւուրս շինեաց Սենեքարիմ զԱպարանից սուրբ խաչն ի վերա Է (7) մասանց Քրիստոսի, որ բերաւ աքանչելեօք, ի Կոստանդնուպօլսէ ՆԾԱ (1002) թվին։ Սա տիրեաց բազում քաղաքաց և գաւառաց և Բուլղարաց և յամենայն տեղիս կարկառս նշան յաղթութեան թողոյր, որպէս ասէ Գրիգոր Նարեկացին[286]։ Էառ զԿոստանդին եղբայր իւր և արար հաղորդ թագաւորութեան և էին միաբան։

Եւ թագաւորեաց Կոստանդին, եղբայր նորա, ամս Գ (3)։

Ապա Ռոմանոս, փեսայ սորա, ամս Ե (5).

Սա գնաց ի վերա Տաճկաց և սպառնացաւ միանձանց Սևաւ լերին, թէ դարձցէ ի պատերազմէն արասցէ զնոսա զինուորս և քաղկեդոնիկ և ոչ յաջողեցաւ, այլ թափեալ ի զօրաց յետս դարձաւ։

Այր մի աննշան, Միխախէլ անուն շնայր ընդ թագուհին և նա ջրահեղձ արար զայր իւր, ի բաղանիս, և համբաւեաց յանկարծամահ զթագաւորն։

Եւ թագաւորեաց Միխայէլ ամս Զ (6)։ Սա էառ զթագուհին, ըստ չար տրփանաց իւրոց, բազում ունէր եղբայրս ետ նոցա իշխանութիւն ստրատելութեան քաղաքաց, և մին արար մագիստրոս և առ ինքն պահեաց, որում անուն էր Օռթանօռուս։ Եւ զամենայն ժամանակս ըկլիւր ի դիվաց և մեռաւ չարաչէս։ Եւ թագուհին թագաւորեցուցանէ զեղբայր առն իւրոյ՝ զԿեսար և արար իւր որդէգիր։

Եւ ապերախտն այն փոխանակ երախտեացն գաղտ փախուց զթագուհին անարգանօք. և քոյր թագուհոյն Թէոդոսիէ չիճ բարձեալ առ զօրսն թէ՝ ուր է ծիրանափառ թագուհին, և նոքա խուռն եկեալ բարկութեամբ խնդրէին և թագաւորն առաքեալ դարձոյց զնա։ Եւ զօրքն պորեցին զաչս թագաւորին, որ Զ (6) ամիս էր նստեալ։

Եւ թագաւորեցուցին զՄօնամախ ամս ԺԻ (12)։ Սա էառ զթագուհին. և էր սա անյագ պոռնիկ և շնացող և ոչ առնէր փոյթ զաւեր աշխարհին, զի սուլտան Պարսից էառ զկողմն արևելից Հռոմոց, զոր էառն Վասիլ. և սա այսպէս զեխութեամբ վճարեաց։

Եւ թագաւորեաց թագուհին ամս Բ (2)։ Եւ սա թագաւորեցուցանէ զՄիխայէլ ծեր, այր ընտրեալ և պահեցող Ա (1) ամ և ոմանք Գ (3) ասեն, սա կոչի Արդար։ Եւ զօրացաւ ոմն Կոմանոս անուն, որ և Կիթառոտ, ամս Գ (3).

Եւ Միխայէլ գերծեաց || զգլուխ իւր և եղև կրօնաւոր, յետ 58ա
մի ամի թագաւորութեանն։ Եւ թագաւորեաց Կոմանոս Կիթառօտն Գ (3) ամ, որպէս յառաջ ասացի։ Եւ ի սորա ժամանակն ել Թուրքն և տիրեաց բազում մասանց աշխարհի և սկիզբն թագաւորութեան նոցա։ Եւ Կոմանոս զղջացեալ եղև աբեղայ և զթա-

գաւորութիւն կամաւ եւ Տունկիծին։ Եւ թագաւորեաց Տուղիծն ամս Ժ (10)։ Ի սորա ժամանակս զօրացաւ Թուրք և առաջին թագաւոր Տուղրիլ բէկ, որ առաքեալ էառ զՀալար և ապա զբոլորս։ Եւ թագաւորեաց Տիօժէնն ամս Ե (5)։ Ի սորա ժամանակս Արփասլամ, որ յետ Տուղ[ր]իլին թագաւորեաց, անձամբ գայ ի Հայաստան և նուաճեաց զնոսա և նստեալ ի Կարս։ Եւ կայսրն Տիօժէն ել բազում զօրօք ընդդէմ նորա ի Մանազկերտ գաւառի և ոչ յաջողեցաւ, այլ ըմբռնեալ ածին առաջի թագաւորին։ Եւ թագաւորն Պարսից բազում մեծարանօք արձակեաց և իւր զօրացն կալեալ խաւարեցուցին զնա։ Եւ թագաւորեաց Միխայէլ ամս Ը (8)։ Ի սորա ժամանակին առ Փիլատրոս զԿիլիկիայ և զամենայն սահմանս նորա։ Եւ զօրացաւ Նիկիփոռս, առ զԿոստանդնուպօլիս և սկսաւ կոտորել զքաղաքն։ Եւ Միխայէլ կայսրն առ զթագն ի ձեռս իւր ել ընդառաջ նորա եդ ի գլուխ և ասէ. «Ձոր փափագիս». և ինքն եղև կրօնաւոր։ Ապա զօրացեալ Ալէքս ոմն սպան զՆիկիփոռ, որ Գ (3) ամիս էր նստել թագաւոր։ Եւ թագաւորեաց Ալէքս ամս ԼԸ (38)։ Ի սորա ժամանակս ելին Ֆռանկք յօգնութիւն քրիստոնէից անթիւ։ Եւ ի ծածուկ նենգեցան յԱլէքսէ կայսեր ի ծովու և ի ցամաքի դեղելով զկերակուր, զի ոմանք ասեն, թէ Ալէքս և մայրն չէին քրիստոնեայք և մնացեալքն Ֆռանգաց առին զԵրուսաղէմ և զԱնտիոք։ Եւ թագաւորեաց Կոնթօփրի (կամ Կունդօփրի) յԵրուսաղէմ, զոր գրեալ եմ յառաջին հատորն և սկիզբն Ռուբենեանց։ Եւ թագաւորեաց Պեռփէռօժան, որ և Յոհաննէս, ամս ԺԳ (13)։ Ապա[287] Մանուէլ որդի նորա ամս ԽԶ (46)։ Սա կամեցաւ միաբանել ընդ ուղղափառսն ե առաքեաց առ Ներսէս Կլայեցին կաթողիկոսն Հայոց և առ Միխայէլ կաթողիկոսն Ասորոց և շատ քննութիւն արարեալ մնաց գործն անկատար, զի վաղճանեցան նոքա։ Եւ այսուհետև ոչ գտանի կարգ թագաւորաց Կոստանդնուպօլսոյ, զի այր զարամբ ելանէր և աննշանք ոմանք թագաւորէին, այլև աղջկունք և ստընդիայ տղայք։ Զի մինչ ի թվին ՈԻԷ (1178) երևին անուանք թագաւորաց։ Ի Գայիոսէ մինչև ի Կոստանդիանոս ի Հռոմ նստէին և անտի ‖ [58ր] մինչ ի Մանուէլս այս. և այսուհետև ոչ երևին, զի ոչ կարէին տիրել վիճակին իւրեանց, զի յարևմտից Ֆռանկք էին տիրեալ և յորևմլից՝ Պարսիկք, ի հիւսիսոյ՝ Սկութացիք, ե հարաւոյ՝ Թուրքն, ի Միջագետս և ի Կիլիկիայ՝ Հայք, միայն մնացեալ էր Կոստանդնուպօլիս և շրջակայքն, վասն այնորիկ ոչ յիշին անուանք թագաւորաց նոցա։ Զի թէպէտ յետ Մանուէլի ի ձեռս Յունաց էր Կոստանդնուպօլիս ամս ՄՀԵ (275) մինչ ի թվին ՋԲ (1453), որ էառ սուլթան Մահմատն, որպէս ասացի, տղայք և աղջկունք էին թագաւորքն, և մարտ պատերազմի և բազում արեան հեղմունք ի մէջ սոցա, վասն այնորիկ դիւրամուտ եղև սուլթան Մահմատն և առ։

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Խորագրից սկսած մինչև «Նաւարկութեան» բառի առաջին երկու վանկը բնագրում գրված է կարմիր թանաքով։

2. Տե՛ս և հմմտ. Մ. Խորենացի I, Ե, էջ 19,

3. Ամբողջ հատվածը տես «Յ. Դրասխանակերտցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 11—12, հմմա. Ս. Անեցի, էջ 14—15, Մ. Կաղանկատուացւոյ Պատմութիւն Աղուանից աշխարհի, Թիֆլիս, 1012, էջ 10—11։

4. Տես Մ. Խորենացի, I, Ժ, էջ 32,

5. Տես նույն տեղում, I, Ե, էջ 18,

6. Տես նույն աեղում, I, Ժ, էջ 32—33։

7. Հմմա. նույն տեղում, I, ԺԲ, էջ 39։

8. Մ. Խորենացու մոտ անունը բացակայում է, այնտեղ կարդում ենք. «առաքէ ի կողմն հիւսիսոյ զմի ոմն յորդւոց իւրոց...» (I, ԺԱ, էջ 34)։

9. Հայկի և Բելի պատերազմների պատմությունը տես Մ. Խորենացի, I, ԺԱ, էջ 34—37։ Այստեղ կրկնված է նույնիսկ բառապաշարը, օրինակ. «յաւերժիւք քաջօք և երկնագնդօք հասակօք սկայիւք մրցողօք» և այլն։

10. Տես Մ. Խորենացի, I, ԺԲ, էջ 38,

11. Տես նույն աեղում, I, ԺԲ, էջ 38—39,

12. Տես նույն տեղում, I, ԺԲ, էջ 30—40։

13. Բառացի տե՛ս նույն տեղում, I, ԺԲ, էջ 40։

14. Տե՛ս նույն տեղում, I, ԺԲ, էջ 40—42։ Կրկնված է նույնիսկ բառապաշարը՝ «բարեգեղ, կորովարան և գեղեցկագեղն...»։

15. Բառացի տե՛ս նույն տեղում, I, ԺԳ, էջ 43,

18. Տե՛ս Հ. Դրասխանակերտցի, էջ 18։

17. Տե՛ս Մ. Խորենացի, I, ԺԳ, էջ 43—44։

18. Տե՛ս նույն տեղում, I, ԺԴ, էջ 45—46։

19. Արա Գեղեցիկի մասին տե՛ս նույն տեղում, I, ԺԵ, էջ 48—49։

20. Մ. Խորենացու ընդարձակ տեղեկություններից (I, ԺԶ, էջ 39—54) Գ. Բաղիշեցին վերցրել է միայն Վանի կառուցման փաստը։

21. Տե՛ս նույն տեղում, I, Ի, էջ 63—84,

22. Տե՛ս նույն տեղում, I, (Ի), էջ 62—63,

23. Պարույր Սկայորդու գովեստը (I, ԻԱ (ԻԲ), էջ 64—65), ինչպես և ուրիշ տեղեկություններ Գ. Բաղիշեցին չի բերել այստեղ, այլ բավականացել է դրանց մասին միայն հիշատակելով, միաժամանակ հայտնելով, որ «ծաղկաքաղ եմ արարեալ, ըստ ախորժակաց իմոց»։

24. Տե՛ս Մ. Խորենացի, I, ԻԱ, (ԻԲ), էջ 64։

25. Տե՛ս նույն տեղում, I, ԻԳ (ԻԳ), էջ 70—71։

26. Հմմտ. Cheref-ouddîne, Cheref-Nâmeh ou Fastes de la Nation Kourde, tome II, première partie, St. Petersbourg, 1873, p. 33—36։

27. Երեմիա, ԾԱ, 27, Այս մեջբերումը Մ. Խորենացին չունի։

28. Տե՛ս Մ. Խորենացի, I, ԻԲ (ԻԳ), էջ 68—69,

20. Այս կարգը տե՛ս նույն տեղում, I, ԻԳ (ԻԳ), էջ 67, 69, իսկ Մարաց թագավորների շարքը՝ Ասողիկի մոտ, էջ 27։

30. Մ. Խորենացու մոտ գործածված է «Վահան» և «Վան» ձևերը։

31. Աժդահակին և Տիգրանին վերաբերող վկայությունների առավել մանրամասն տե՛ս Մ. Խորենացու մոտ, I, ԻԴ (ԻԵ)—ԼԱ (ԼԲ), էջ 71—80։

32. Դ. Բաղիշեցին կրկնում է Մ. Խորենացու տրտունջը. վերջինս գրում է. «Յայսմ հետէ մինչև զթագաւորութիւնն Վաղարշակայ ի հայս ոչ ինչ ճշմարտագոյն ունիմ պատմել քեզ. քանզի շփոթ իմն ամբոխից լեալ՝ այր զարամբ ելանէին տիրել աշխարհիս» (էջ 87)։ Այս հատվածով ավարտվում է Մ. Խորենացու առաջին գրքի օգտագործումը։ Այնպիսով, Դ. Բաղիշեցին բաց է թողել ԼԲ (ԼԴ) գլուխը և «Ի Պարսից առասպելաց» հատվածները (էջ 87—92)։

33. Դ. Բաղիշեցին նկատի ունի իր ժամանակագրության երկրորդ հատորը, որտեղ այդ մասին խոսում է մանրամասն։

34. Ամբողջ հատվածը տե՛ս Մ. Խորենացի, II, Ա, էջ 102։

35. Տե՛ս նույն տեղում, II, Բ, էջ 102—103։

36. Տե՛ս նույն տեղում, II, Բ, էջ 103—104։ Անտիգոնին վերաբերող որոշ մանրամասնություններ Մ. Խորենացին չունի, այդ մանրամասնությունները Դ. Բաղիշեցին քաղել է հավանաբար մի ուրիշ աղբյուրից և մուծել իր ժամանակագրության մեջ, Մ. Խորենացու պատմությունից վերցրած վերոհիշյալ հատվածում։ Այս դեպքերի մասին տե՛ս նաև նրա ժամանակագրության երկրորդ հատորում։

37. Պարսից թագավորների այս կարգը առավել մանրամասնությամբ տե՛ս Մ. Խորենացի, II, ԿԸ—ԿԹ, էջ 204, 205, հմմտ. Ասողիկ, էջ 31։

38. Հմմտ. Ասողիկ, էջ 32։ Դ. Բաղիշեցին բաց է թողել Մ. Խորենացու պատմության II գրքի Գ—Զ գլուխները (էջ 104—109)։

39. Տե՛ս Ասողիկ, էջ 32—33։

40. Տե՛ս նույն տեղում, էջ 33—34, հմմտ. Մ. Խորենացի, II, Է, էջ 109—111։

41. Մ. Խորենացու (II, Ը) և Ասողիկի (էջ 35) մոտ այս անվան փոխարեն գրված է «Մաւղէացւոց»։

42. Տե՛ս Ասողիկ, էջ 34—35, հմմտ. Մ. Խորենացի II, Ը, էջ 110։

43. Վաղարշակ թագավորի այս միջոցառումները, ինչպես Դ. Բաղիշեցին է գրում «զոր ոչ գրեմ լինալէս», տե՛ս Մ. Խորենացի (II, Ը, էջ 112—118), հմմտ. Ասողիկ, էջ 36—37։

44. Դեմետրեին և Դիսանեին վերաբերող այս հատվածը Б տարբերակում գրված է ավելի առաջ, ուր խոսվում է Պարսից թագավոր Արշակ Մեծի և Դեմետր, Անտիգոնեի պատերազմների մասին։ Այս տարբերակից երևում է, որ Դեմետրեն և Դիսանեն եկել են Պարսից թագավոր Արշակի մոտ, իսկ A տարբերակից՝ Հայոց թագավոր Վաղարշակի մոտ։ Վերջին ձևով է և ավելի մանրամասն պատմվում Հ. Մամիկոնյանի, Պատմութիւն Տարօնոյ (աշխ. և առաջաբանով. պատմ. գիտ. թեկնածու Աշ. Աբրահամյանի, Երևան, 1941) աշխատության մեջ (էջ 107—108)։

45. Տե՛ս Մ. Խորենացի, II, Թ, էջ 118—119, Ասողիկ, էջ 37։

46. Մ. Խորենացու մոտ նշված է «զԿրիսոսս թագաւոր Լիւդացւոց» (II, ԺԲ, էջ 122), իսկ Ասողիկի՝ «Կրասոս» (էջ 38)։ Այս հանգամանքը ևս ցույց է տալիս, որ Դ. Բաղիշեցին Մ. Խորենացուն քիչ է հետևել և մեծ չափով օգտագործել է Ասողիկին։

47. Մանրամասն տե՛ս նույն տեղում, II, ԺԲ, էջ 122, 123 և Ասողիկ, էջ 38։ Առաջին դեմքով պատմելու ձևը «այլ ոչ գիտեմ, թէ որպէս տղմկեալ եղև զօրաց նորա...» Մ. Խորենացու խոսքերն են, որոնք անցել են նաև Ասողիկին։

48. Տիգրանի գործունեությունը մանրամասն տե՛ս Մ. Խորենացի, II, ԺԴ—ԺԹ, էջ 127—135, հմմտ. Ասողիկ, էջ 39—41։

49. Տե՛ս նույն տեղում, II, Ի, ԻԱ, էջ 135—136։

50. Մ. Խորենացու պատմության II գրքի երկու գլուխը՝ ԻԲ, ԻԳ, Դ. Բաղիշեցին չի վերցրել. նա վերապատմել սկսում է Արշամի ժամանակից (տե՛ս նույն տեղում, II, ԻԴ, էջ 138—139)։ Հմմտ. Ասողիկ, էջ 41—42։

51. Տե՛ս Ասողիկ, էջ 42։

52. Տե՛ս Ս. Անեցի, էջ 52։

53. Տե՛ս Մ. Խորենացի, II, ԻԷ, էջ 144, Ասողիկ, էջ 43։

54. Տե՛ս նույն տեղում, II, ԻԸ, էջ 145—146, Ասողիկ, էջ 43։

55. Բնագրում այդպես, մեզ մնաց անհասկանալի։

56. Տե՛ս Մ. Խորենացի, II, ԻԹ, էջ 147։

57. Տես Ասողիկ, էջ 44—45։ Մ. Խորենացու մոտ կարդում ենք. «զՄար Իհար (մի տարբերակում զՄարինա) բդեաշխն Աղձնեաց և զՇամշագրամ նահապետ Ապահունեաց» (II, Լ, էջ 148)։

58. Տե՛ս Մ. Խորենացի, II, Լ, էջ 148։

59. Տե՛ս Ասողիկ, էջ 45։ Պրոֆ. Աշոտ Աբրահամյանը Դ. Բաղիշեցու մասին գրած վերոհիշյալ հոդվածում այս վկայության կապակցությամբ գրում է. «Դ. Բաղիշեցին օգտվել է Պատմահոր մի այնպիսի ընդօրինակությունից, որը չի ունեցել Աբգարի նամակները Քրիստոսի հետ, որի ընդմիջարկություն հանդիսանալն այժմ արդեն անվիճելի է» («Էջմիածին», 1946, XI—XII, էջ 39)։ Դ. Բաղիշեցու սույն վկայությունը նման եզրակացության հիմք չի տալիս. նախ, եթե խոսքը վերաբերում է Աբգարի և Քրիստոսի կարծեցյալ նամակագրությանը, ապա Դ. Բաղիշեցին հիշում է այդ. «առաքեաց առ տէրն մեր Թուղթ աղաչանաց...», իսկ եթե խոսքը վերաբերում է նամակների բովանդակությանը, ինչպես կա Մ. Խորենացու պատմության մեզ հասած տարբերակներում, ապա չպետք մոռանալ, որ Դ. Բաղիշեցին իր ձեռքի տակ գտնված նյութերից ընտրություն է կատարել, ինչպես հեղինակն է ասում «սա ծաղկաքաղ եմ արարեալ ըստ ախորժակաց իմոց», հետևապես նրանից չպետք սպասել, որ նա Մ. Խորենացուն նույնությամբ կրկներ։ Այդ նամակները գուցե, իսկապես, հետագա ընդմիջարկություն են, բայց այդ եզրակացության հանգել և այն հայտարարել անվիճելի, նկատի ունենալով Դ. Բաղիշեցու առաջարկվող վկայությունը, կարծում ենք չափազանցություն է, որովհետև, ինչպես այս, այնպես էլ բազմաթիվ այլ վկայություններ Դ. Բաղիշեցին վերցրել է ոչ թե անմիջապես Մ. Խորենացուց, այլ Ասողիկից։ Եթե մոտենանք պրոֆ. Աշ. Աբրահամյանի նման, այն դեպքում կարող ենք ասել, որ Դ. Բաղիշեցին օգտվել է Պատմահոր մի այնպիսի ընդօրինակությունից, որը չի ունեցել ոչ միայն վերևում նշված նամակները, այլև Աբգարի նամակները Տիբերիոսին, Ներսեհին, Արտաշեսին (II, ԼԴ—ԼԶ, էջ 157—161), հայերի նամակը Կոստանդին կայսեր (III, Ե, էջ 261), Վաղենտիանոսի նամակը Արշակ Բ-ին (III, ԺԹ, էջ 278), Դանիելյան նշանտղրերի պատմությունը (III, ԾԲ, էջ 325) և այլն, և այլն, որովհետև այս նամակները և տեղեկությունները բացակայում են Դ. Բաղիշեցու ժամանակագրության մեջ, մինչդեռ դրանք գտնում ենք Մ. Խորենացու պատմության այժմյան բնագրում։

60. Մանրամասն տես Մ. Խորենացի, II, ԼԴ—ԼԶ, էջ 157—161, Ասողիկ, էջ 46—47։

61. Տե՛ս նույն տեղում, II, ԼԷ—ԽԶ, էջ 161—173, հմմտ. Ասողիկ, էջ 47։

62. Տե՛ս նույն տեղում, II, ԽԷ, Կ. էջ 173, 191։

63. Տե՛ս նույն տեղում, II, ԾԷ, էջ 187։

64. Տե՛ս նույն տեղում, II, Ծ, էջ 177—178։

65. Տե՛ս Հ. Դրասխանակերտցի, էջ 36—37։

66. Տե՛ս Մ. Խորենացի, II, ԾԹ, էջ 188, Ասողիկ, էջ 49։

67. Իմա, խենթ, խելագար։ Արտավազդ Բ-ի այս մականվանը հանդիպում ենք Վանականի «Ցաղագս տարեմտին» աշխատության մեջ. «Որդի մի էր նորա՝ (Արտաշէսի—Վ. Հ.) Արտաւազդ անուն՝ բախած ի մանկութենէ, զոր Շիդարն կոչէին» (հրատ. Լ. Խաչիկյանի, տես Մատենադարանի Գիտական նյութերի ժողովածու, № 1, 1941, էջ 151—169)։ Սակայն Հայսմավուրքում Նավասարդի 1-ի տակ Շիդարը հիշվում է, որպես Արտավազդի որդի. «Թագաւոր մի կայր Հայոց Արտաւազդ անուն և ունէր որդի մի խելագար Շիդար անուն...» (№ 4680, էջ 3ա)։ Դավիթ Բաղիշեցին ամենայն հավանականությամբ օգտվել է Վանականից։

68. Տե՛ս Մ. Խորենացի, II, ԿԱ, էջ 191—192, Ասողիկ, էջ 49։

69. Մանրամասն տե՛ս նույն տեղում, II, ԿԲ, էջ 193—194։

70. Տե՛ս նույն տեղում, II, ԿԷ, էջ 199—200, Ասողիկ, էջ 50։

71. Տե՛ս նույն տեղում, II, ԿԸ, էջ 200, Ասողիկ, էջ 51։

72. Տե՛ս Մ. Խորենացի, II, ՀԱ—ՀԲ, ՀԴ, էջ 207—208, 212, 218, Ասողիկ, էջ 51—52։

73. Տե՛ս նույն տեղում, II, ՀԴ, էջ 211—212, հմմտ. Ասողիկ, էջ 52—53։

74. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, II, Ձ, էջ 219—220։

75. Հանգամանորեն տե՛ս Հ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 69—71։

76. Տե՛ս Հ. Դրասխանակերտցի, էջ 37։

77 Տե՛ս Հ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 71, 73, հմմտ. Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909, էջ 30, 70—71։

78. Տե՛ս և համմտ. Հ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 72—73, Մ. Խորենացի, II, Զ, էջ 220։

79. Տե՛ս Մ. Խորենացի, II, ԶԱ, էջ 221-223։

80. Տե՛ս նույն տեղում, II, ԶԴ, էջ 22·—229։

81. Տե՛ս և համմտ. Հ. Մամիկոնյան, Պատմութիւն Տարօնոյ, էջ 73—79, Ագաթանգեղոս, էջ 414—436, Մ. Խորենացի, II, ՂԱ, էջ 242։

82. Տե՛ս Դաշանց թուղթը (Ագաթանգեղոս, Պատմութիւն, Կ. Պոլիս, 1709 թ., էջ 399—422), Ագաթանգեղոս, էջ 459—464։

83. Տե՛ս Մ. Խորենացի, II, Ղ, էջ 241—242։

84. Տե՛ս նույն տեղում, II, ԶԹ—Ղ, էջ 239—241։

85. Տե՛ս նույն տեղում, II, ՂԱ, էջ 242, 244։

86. Տե՛ս նույն տեղում, II, ՂԱ, էջ 243։

87. Տե՛ս նույն տեղում, II, ՂԱ, էջ 244։

88. Մանրամասն տե՛ս նույն տեղում, II, ՂԲ, էջ 245—250։

89. Տե՛ս նույն տեղում, III, Դ, Զ, էջ 260, 262։

90. Տե՛ս նույն տեղում, III, Ը, էջ 265։

91. Տե՛ս նույն տեղում, III, ԺԱ, էջ 269։

92. Տե՛ս Փ. Բուզանդ («Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1913), III, ԺԲ, էջ 45-46, համմտ. Մ. Խորենացի, III, ԺԴ, էջ 272։

93. Այս ամբողջ հատվածը տես Մ. Խորենացի, III, ԺԴ—ԺԴ, էջ 270—272։

94. Տե՛ս նույն տեղում, III, ԺԶ, էջ 274—275։

95. Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 139։

96. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԺԷ, էջ 276, համմտ. Փ. Բուզանդ, III, Ի, էջ 82, համմտ. Ասողիկ, էջ 69։

97. Տե՛ս Փ. Բուզանդ, III, Ի, էջ 76—81։

98. Տե՛ս նույն տեղում, IV, Ա, էջ 101։

99. Տե՛ս Մ. Խորենացի, III, Ի, էջ 278, Փ. Բուզանդ, IV, Դ, էջ 111—112։

100. Տե՛ս Մ. Խորենացի, III, Ի, ԼԸ, էջ 279, 306։ «Յուսիկ ի կատարեալ պատմագրաց» բառերի տակ Դ. Բաղիշեցին նկատի ունի Մ. Խորենացուն և Փ. Բուզանդին, Վերջինս այդ դեպքերն առավել մանրամասն է տալիս (տես IV, Դ, էջ 110—123)։

101. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԺԹ, էջ 278։

102. Տե՛ս և համմտ. նույն տեղում, III, ԻԱ, էջ 281, Հ. Դրասխանակերտցի, էջ 49։

103. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԻԱ, էջ 281։

104. Տե՛ս նույն տեղում, III, ԻԲ, էջ 282—283, համմտ. Փ. Բուզանդ, IV, ԺԵ, էջ 180—182։

105. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԻԳ, էջ 283—284։

106. Տե՛ս Փ. Բուզանդ, IV, ԺԵ, էջ 184, 187։

107. Տե՛ս նույն տեղում, IV, ԺԵ, էջ 190—191։

108. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԻԹ, էջ 292—293։

109. Տե՛ս և համմտ. Փ. Բուզանդ, IV, Զ, էջ 141—146, համմտ. Մ. Խորենացի, III, Լ, էջ 294. Փ. Բուզանդը Ներսեսի աքսորը նշում է ինն տարի, բայց հայագետները հավանական համարել են ինն ամիսը, ինչպես Դ. Բաղիշեցին էլ այդ հաստատում է, ըստ երևույթին, եթե դա շփոթման արդյունք չէ, վերջինիս ձեռքի տակ գտնվել է Փ. Բուզանդի պատմության այնպիսի ընդօրինակություն, ուր «Թ ամս»-ի փոխարեն եղել է «Թ ամիս»։

119. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԼԴ, էջ 297։ Վաղեսը սպանվում է գոթերի դեմ մղված կռվում, 378 թ. Ադրիանապոլի ճակատամարտում։

111. Տե՛ս նույն տեղում, III, ԼԴ, էջ 297։

112. Տե՛ս նույն տեղում, III, ԻԷ, էջ 288—289։

113. Տե՛ս նույն տեղում, III, ԼԴ—ԼԵ, էջ 298—301։ Համմտ. Փ. Բուզանդ, V, Է, էջ 307—312։

114. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԼԶ, էջ 301։

115. Իմա՛, Ներսես Պարթև։

116. Տե՛ս Ասողիկ, էջ 71, համմտ. Մ. Խորենացի, III, ԼԶ, էջ 302։ Բնագրի «և գնաց առ մեծն Թէոդոս թագաւորեցուցանել զՊապ, որ էր ի պատանդի առ նմայ», հատվածի առթիվ պրոֆ. Ա. Աբրահամյանն իր հոդվածում գրում է. «Բաղիշեցին իր ձեռքի տակ

ունեցել է Փավստոսի այնպիսի մի ընդօրինակություն, ուր Պապ թագավորը գահ բարձրանալուց առաջ ներկայացվել է որպես պատանդ հռոմայեցիների մոտ» («Էջմիածին», 1916, XI–XII, էջ 39)։ Այս եզրակացությունը սառույց չէ, որովհետև Գ. Բաղիշեցին այս հատվածը վերցրել է ոչ թե Փ. Բուզանդից, կամ Մ. Խորենացուց, այլ Ասողիկից։ Բացի դրանից և Բուզանդը, և Խորենացին բազմաթիվ անգամ հիշում են Պապի պատանդ լինելու մասին, հետևապես, Գ. Բաղիշեցու այս հաղորդումը առանձին կարևորություն չունի։ Փ. Բուզանդն այս առթիվ գրում է. «և իբրև ջրթափեաց (Պապը—Վ. Հ.) և եղև հուժկու ետուն զնա պատանդ ի ձեռն կայսերն յերկիրն Յունաց» (IV, ԺԵ, էջ 193), ապա թե «իսկ Պապ որդին Արշակայ ոչ դիպեցաւ անդ ի Հայոց աշխարհին, զի առ թագաւորն Յունաց դիպեցաւ» (IV, ԾԵ, էջ 253)․ այլև «Ապա յետ այսր ամենայնի Մուշեղ որդի Վասակայ ժողովեաց զամենայն ազատագունդ մարդկանն մնացելոյն, որ մի անգամ մնացեալ էին և չոգաւ հանդերձ նոքօք առ թագաւորն Յունաց։ Եւ եցոյց զպաղատանս աշխարհին Հայոց, և զամենայն անցս տառապանաց՝ որ անցեալ էր ընդ նոսա, և խնդրեաց ի կայսերէն զՊապ զորդի Արշակայ թագաւոր ի վերայ Հայոց աշխարհին...» (V, Ա, էջ 277)։ Ինչպես տեսնում ենք, Փ. Բուզանդի Պատմության շատ սովորական ընդօրինակության մեջ մի քանի անգամ նշված է Պապի պատանդ լինելու փաստը։ Մ. Խորենացին ևս մի քանի անգամ հիշում է Պապի պատանդ լինելը (III, ԻԹ, էջ 292, Լ, էջ 294, ԼԵ—ԼԶ էջ 300—302)։ Պապի պատանդ լինելու մասին հիշում է նաև Հ. Դրասխանակերտցին, էջ 49։

117. Տես Մ. Խորենացի, III, ԼԷ, էջ 302—303, համմտ. Փ. Բուզանդ, V, Բ, էջ 282—285։

118. Տե՛ս Փ. Բուզանդ, IV, ԽԳ, էջ 230։

119. Տե՛ս և համմտ. Փ. Բուզանդ, V, ԻԳ, էջ 323, 326, Մ. Խորենացի, III, ԼԸ, էջ 306։

120. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԼԹ, էջ 306, համմտ. Փ. Բուզանդ, V, ԻԹ, էջ 338, ինչպես հաճախ, այնպես էլ այստեղ Գ. Բաղիշեցին Մ. Խորենացու և Փ. Բուզանդի վկայությունները միահյուսել է։

121. Պապի սպանության հանգամանքները Գ. Բաղիշեցին վերցրել է Մ. Խորենացուց (III, ԼԹ, էջ 307, համմտ. Փ. Բուզանդ, V, ԼԲ, էջ 340—349) և Ասողիկից էջ 73.

122. Այսինքն Թեոդոսի մոտ։

123. Տե՛ս Մ. Խորենացի, III, Խ, էջ 307—309։

124. Տե՛ս նույն տեղում, III, ԽԱ, էջ 309։

125. Տե՛ս նույն տեղում, III, ԽԱ—ԽԲ, էջ 309—310։

1.6. Տե՛ս նույն տեղում, III, ԽԲ, էջ 311։

127. Տե՛ս նույն տեղում, III, ԽԳ, էջ 311—312։

128. Տե՛ս նույն տեղում, III, ԽԷ, էջ 316։

129. Տե՛ս նույն տեղում, III, ԽԹ, էջ 319—320։

130. Տե՛ս նույն տեղում, III, ԽԹ—Ծ, էջ 320—321։

131. Տե՛ս և համմտ. նույն տեղում, III, ԾԱ, էջ 322։

132. Տե՛ս նույն տեղում, III, ՄԱ, էջ 324։

133. Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 30—31։

134. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԾԵ, էջ 329,

135. Տե՛ս նույն տեղում, III, ԾԵ, էջ 330։

136. Տե՛ս և համմտ. նույն տեղում, III, ԾԸ, ԿԳ, էջ 338, 348—339։

137. Համմտ. Կ. Գանձակեցի, էջ 35։

138. Այս ամբողջ հատվածը Б տարբերակում գրված է 25-րդ տողի «և նա թագաւորեցոյց զԱրտաշիր որդի Վռամշապհոյ» հատվածից հետո։

139. Տե՛ս Մ. Խորենացի, III, ԿԵ—ԿԶ, էջ 350—354։

140 Տե՛ս և համմտ. նույն տեղում, III, ԿԷ, էջ 355—356։ Բնագրի այն վկայությունը, թե Մեսրոպը որպես կաթողիկոս հաջորդել է Սահակ Պարթևին, ամենայն հավանականությամբ քաղված է Կ. Գանձակեցուց (էջ 36)։

141. Տե՛ս Ասողիկ, էջ 88։

142. Տե՛ս և համմտ. նույն տեղում, II, Բ, էջ 79, 80, Հ. Դրասխանակերտցի, էջ 59, Կ. Գանձակեցի, էջ 36—38։

143. Տե՛ս և համմտ. Ասողիկ, էջ 79—80, Կ. Գանձակեցի, էջ 37։ Համմտ. Ս. Անեցի, էջ 71, Մխ. Այրիվանեցի, էջ 15 և ուրիշներ։ Սրանց հակառակ Երուսաղեմի ճառընտիրներից

մեկում Վարդան Մամիկոնյանի որդին հիշվում է Ջուրա անունով (տես Գ. Հովսեփյան, Հիշատակարանք ձեռագրաց, 1951, Անթիլիաս, էջ 5)։

144. Տե՛ս և հմմտ. Ասողիկ, էջ 79, Կ. Գանձակեցի, էջ 38։

145. Հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 62։

146. Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 39, հմմտ. Ասողիկ, էջ 81—82։

147. Պետք է լինի Իարդեն։

148. Տե՛ս և հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 63, Ասողիկ, էջ 81։

149. Պետք է լինի Վահանայ, հմմտ. Ասողիկ, էջ 82, Կ. Գանձակեցի, էջ 42։

150. Տե՛ս Ասողիկ, էջ 82։

151. Ասողիկի (էջ 83), Հ. Դրասխանակերտցու (էջ 64) մոտ «Սիւնձեղնոյ», «Սընձեղուան» ձևով, ստույգը սրանք են։

152. Տե՛ս և հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 63—65, Ասողիկ, էջ 81—83։

153. Տե՛ս Հ. Դրասխանակերտցի, էջ 63—66, հմմտ. Ասողիկ, էջ 83։

154. Տե՛ս Ս. Անեցի, էջ 77, հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 51։

155. Հմմտ. Ս. Անեցի, էջ 77—78, ՄԺ, I, էջ 255։

156. Տե՛ս և հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 74—75, Ս. Անեցի, էջ 79։

157. Տես Հ. Դրասխանակերտցի, էջ 75—76։ Ասողիկը նշում է «տէր Քրիստափոր ազատ յԱրքահամեան բարձէն յԱպահունեաց գաւառէն...» (էջ 87), այսինքն սա ունեցել է իշխանական ծագում։

158. Տե՛ս Ս. Անեցի, էջ 80, ՄԺ, I, էջ 255։

159. Տե՛ս և հմմտ. Ս. Անեցի, էջ 81—82։ Սասանյան Պարսկաստանի պարտությունն արաբներից տեղի ունեցավ 636 թվի Կադիսիայի և ապա 642 թվի Նեհավենդի ճակատամարտերում։ Այստեղ ջախջախվելուց հետո վերացավ Սասանյան դինաստիան տևելով 418 տարի (224—642 թթ.)։ Ասողիկն այլ թվեր է տալիս (հմմտ. II, Գ, էջ 117)։

160. Հմմտ. Ասողիկ, էջ 111—117։ Սասանյան թագավորների համեմատական ստույգ կարգը տես Th. Noldeke, Geschichte der Perser und Araber zur zeit der Sasaniden, aus der arabischen chronik des Tabari, Leyden, 1879, էջ 409—434, իսկ աղյուսակը՝ էջ 435։

161. Տե՛ս Ս. Անեցի, էջ 84, հմմտ. ՄԺ, I, էջ 255։

162. Տե՛ս Ս. Անեցի, էջ 84, հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 90—92։ Ասողիկը սրա աթոռակալությունը նշում է Հայոց ՃԻ թվին (էջ 99)։

163. Տե՛ս և հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 93—97, Ս. Անեցի, էջ 85։

164. Տե՛ս Հ. Դրասխանակերտցի, էջ 93, հմմտ. Ս. Անեցի, էջ 85. հմմտ. Ասողիկ, էջ 124—125։ Վահան Գողթնցու մասին տես վերևում, էջ 30, ծանոթ. 33։

165. Տե՛ս և հմմտ. Հ. Դրասխանակերտցի, էջ 100—101, Կ. Գանձակեցի, էջ 65—66։

166. Կաթողիկոսների աթոռակալության և մյուս տեղեկությունները հեղինակը վերցրել է Ս. Անեցուց, էջ 87—95։

167. Տե՛ս Ասողիկ, էջ 157։ Աշոտ Ա-ի թագավորության ժամանակի մասին տես վերևում, էջ 156, ծանոթ. 45։

168. Տե՛ս Ասողիկ, էջ 158—159։

169. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, III, Գ, էջ 159։

170. Տե՛ս և հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 76, Ասողիկ, էջ 169։

171. Այս ամբողջ հատվածը հեղինակը համառոտել է Ս. Անեցուց, էջ 96։

172. Տե՛ս և հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 76—77։

173. Տե՛ս և հմմտ. Ասողիկ, էջ 170, 173—174, 176—177։

174. Տե՛ս նույն տեղում, էջ 180։ Ասողիկը նշում է, որ Աշոտ Բ-ը թագավորել է 25 տարի։ Ստույգը վերջինս է։

175. Տե՛ս նույն տեղում, էջ 181—182, հմմտ. Ս. Անեցի, էջ 100—101, Կ. Գանձակեցի, էջ 81։

176. Ասողիկը նշում է Հայոց ՆԻԶ թիվը (էջ 187), որ և ստույգ է։

177. Ժամանակագրության A տարբերակում նշված է «ՆԾԱ», այս երկու վկայությունն էլ սխալ են, որովհետև Ասողիկը գրում է. «Ջայսու ժամանակաւ մեռաւ թագաւորն Հայոց օրհնեալն Աշոտ ի ՆԻԶ թուականին, և ի նոյն աւուր թագաւորեաց Սմբատ որդի նորա ամս ԺԳ» (էջ 187)։ Այս վկայությունը տես և հմմտ. Ս. Անեցի, էջ 193։

178. Տե՛ս և հմմտ. Ս. Անեցի էջ 107—108, Կ. Գանձակեցի, էջ 85—86։

179. Տե՛ս և հմմտ. Կ. Գանձակեցի, էջ 89—90, 93։

180. Տե՛ս և համտ. նույն տեղում, էջ 91։

181. Հմմտ. Ս. Անեցի, էջ 120։

182. Տե՛ս Ս. Անեցի, էջ 123, Կ. Գանձակեցի, էջ 102։ Բարսեղ կաթողիկոսի մահը Մ. Ուռհայեցին նշում է հայոց 562 թվին «յամռեանն տրէի յաւուր հինգերորդի...» (էջ 329), որն համապատասխանում է 1113 թվի մայիսի 25-ին։

183. Մանրամասն տես Կ. Գանձակեցի, էջ 100—107, համտ. Ս. Անեցի, էջ 122—123։

184. Տե՛ս Կ. Գանձակեցի էջ 109—110։ Միխ. Ասորու ժամանակագրության հրատարակության բնագրում այդ վկայությունը չգտանք, բայց նա Ներսես Շնորհալուն համարում է մեծ կաթողիկոս, իմաստուն և այլն («Ժամանակագրութիւն», Երուսաղէմ, 1871, էջ 461)։

185. Այս ամբողջ պատմությունը տես Միխ. Ասորու մոտ, էջ 472—473։

186. Տե՛ս և համտ. Միխ. Ասորի, էջ 457—458, Ս. Անեցի, էջ 136։ Եգիպտացիները Երուսաղեմը գրավել են 1187 թ. հոկտեմբերի 3-ին։

187. Տե՛ս Կ. Գանձակեցի էջ 141—142։

188. Հմմտ. Ս. Անեցի, էջ 144։

189. Գ. Ազանյանցը «Գիւտանք»-ի Ժ գրքում Դ. Բաղիշեցու ժամանակագրության բնագիրը հրատարակել է այստեղից։

190. Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 155։

191. Տե՛ս նույն տեղում, էջ 150, 172։

192. Տե՛ս նույն տեղում, էջ 151։

193. Տե՛ս Ս. Անեցի, էջ 145—146։

194. Տե՛ս և համտ. նույն տեղում, էջ 148, Կ. Գանձակեցի, էջ 177—178։

195. Տե՛ս և համտ. Ս. Անեցի, էջ 148—149։

196. Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 205—206, 279։

197. Մանրամասն տես Կ. Գանձակեցի, էջ 334—342։

198. Ժամանակագրության Б տարբերակն այստեղից պակասում է. ընդօրինակությունը չի կատարված մինչև «Համառօտ պատմութիւն ազգաց Տաճկաց Օսմանցոց, որ բնակալեցին միահեծան ի ծայրեցն Եւրոպիու բովանդակ հիւսի[ս]ով և Բաբելոնիւ ընդ հարաւ» գլուխը։

199. Տես Կ. Գանձակեցի, էջ 217—221։ Հեղինակը, դժբախտաբար, սխալ է նշել մոնղոլների արշավանքի տարեթիվը։ Մոնղոլների առաջին արշավանքն Անդրկովկաս տեղի է ունեցել 1220 թվին։ Իսկ Չարմաղանի ասպատակությունները Հայաստանում, որոնք մանրամասն նկարագրված են Կ. Գանձակեցու մոտ, եղել են 1236 թվին (համտ. ՄԺ, I, էջ 26, 30, ծանոթ. 31, էջ 41)։ Սակայն, այժմ մեր ձեռքի տակ գտնվում է մի հիշատակարան, որը հնարավորություն է տալիս որոշելու Լոռի և Սուրմարի քաղաքների գրավման ամսաթիվը։ 1236 թվի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Գոյժ աղաղակի յոյժ լուաք յայսմ ամի, որ է ՈՁԵ (1236) յամսեանն յարաց Ժ (10), յաւուր կիւրակէի, եթէ զքաղաքսբերդն զԼաւռէ և զՍուրբ Մարի առին անաւրէն այլասեռք զաւրք Տաթարին, և անխնամաբար... դիմեցին ի վերայ և ետուն հարակ սրոյ և արբեցան արեամբ զառանցն գայլքն յափշտակողք անողորմաբար...» (№ 4160, էջ 74բ)։ Շարժական տոմարի համաձայն Հայոց ՈՁԵ թ. արաց ամսի 10-ը համապատասխանում է Հուլյան տոմարի 1236 թվի հունիսի 30-ին, և այդ օրն էլ իրոք կիրակի է։ Այսպիսով, Լոռիի և Սուրմարիի քաղաքները մոնղոլները գրավել են միաժամանակ՝ 1236 թվի հունիսի 30-ին, կիրակի օրը։ Այս վկայության շարժական տոմարով հաշվելու անհրաժեշտությունը հավաստում է Կ. Գանձակեցին։ Վերջինս Անիի, Լոռիի, Կարսի, Սուրմարիի և այլ վայրերի գրավման մասին դրում է. «Զի ժամանակս ամառնային էր, յորում ասպատակեցին նոքա ի մեզ, վաստակն չև ևս էր հնձեալ կամ ժողովեալ ի շտեմարանս. և նոքա եկեալ ուղտօք, կերան և կոխեցին զամենեսեան» (էջ 247—248)։

209. Մանրամասն տես Կ. Գանձակեցի, էջ 230—239։

201. Կ. Գանձակեցին Վանականի մասին դրում է. «Հասեալ ի բարւոք ծերութիւնն, ալեօրեալ և լի աւուրբք ըստ օրինակի նահապետին Աբրահամու առ տէր փոխեցաւ...» (էջ 331), մահվան օրը նշելով «Արեգի ամսոյ ի տասն՝ ըստ նոր յեղանակի հշմարտութեան, և մարտի ի տասն և ութ, ութ օրով յառաջ քան զգարնանամուտն, յաւուր շաբաթու,...» (էջ 333)։ Եւ իսկապես, անշարժ տոմարի հաշվով 1251 թ. մարտի 18-ը շաբաթ

է։ Ս. Անեցու մոտ նշված է Վանականի տարիքը՝ 70, (էջ 150)։ Գ. Բաղիշեցին օգտվել է Ս. Անեցուց։

202. Մանրամասն տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 263—269։

203. Տե՛ս նույն տեղում, էջ 269—270։

204. Իմա Վարդան Արևելցի, բայց այս վկայությունը սխալ է, որովհետև Վարդան Արևելցին Հուլավուի մոտ գնացել է 1264 թվին։ Նա իր պատմության մեջ գրում է. «Յեօթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ Հուլաւու Խղանն...» (էջ 204)։ Կ. Գանձակեցին Հեթում Ա-ի այս առաքելությունը մանրամասն է նկարագրում, թվելով Հեթում Ա-ին ուղեկցող նշանավոր հոգևորականներին (էջ 351—352, 355), սակայն Վարդան վարդապետի մասին չի հիշում։

205. Կ. Գանձակեցին վկայում է, որ Հեթում Ա-ն Դերբենդ հասել է մայիսի 13-ին, իսկ Մանգու ղանի մոտ՝ սեպտեմբերի 13-ին (էջ 353), և որովհետև մինչև Դերբենդ հասնելը երկար կտևեր (օրինակ, մինչև Կարս հասնելը Կ. Գանձակեցին նշում է 12 օր, էջ 351), ուստի Գ. Բաղիշեցու այս վկայությունը հավանական է։

206. Կ. Գանձակեցին Հեթում Ա-ի վերադարձը նշում է հայոց ՉԴ թվականին, և որովհետև, ինչպես վերևում տեսանք (ծանոթ. 201), Կ. Գանձակեցին հետևում է անշարժ տոմարին, նշանակում է հայոց ՉԴ-ն կհամապատասխանի 1255 թ. օգոստոսի 11-ից մինչև 1256 թ. օգոստոսի 10-ը, հետևապես Հեթում Ա-ն Կիլիկիա հասել է 1256 թ. գարնան սկզբներին։ Հեթում Բ-ն ևս հիշում է 1256 թ. (տե՛ս ՄԺ, I, էջ 82)։ 1255 թվին ընդօրինակած մի ձեռագրի հիշատակարանում Հեթում Ա-ի այս առաքելության մասին հետևյալն է ասված. «Յամի ութն հարիւրորդի և չորրորդի եղև զրաւ մատենիս յամսեանս հոռտեմբերի ԻԹ (29), աւրն յուրբաթի և մինչ էաք ի ցաւն, որ է վերջին գիր, վազվազակի հաւ խաւսեցաւ և մեք զոհութեամբ փառս ի վեր առաքեցաք։ Արդ՝ գրեցաւ սա ի դառն ժամանակիս ի թագաւորութեանն Հեթմոյ և նորա երեք ամն էր երթալոյն ի Թաթարսն...» (№ 178, էջ 212բ)։ Այս վկայությունը հետաքրքիր է երկու նկատառումով, նախ գրիչը 1255 թ. հիշում է Հեթում Ա-ի միայն գնալու փաստը, երկրորդ Հեթում Ա-ն Մանգու ղանի մոտ գնացել է 1253 թվին, որը չի համապատասխանում Կ. Գանձակեցու տվյալներին (էջ 357)։

207. Մանրամասն տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 357—358։

208. Մանրամասն տե՛ս նույն տեղում, էջ 362—373։

209. Կ. Գանձակեցին սրա մասին խոսում է մանրամասն (էջ 324—342), սակայն մահվան թվականը չի նշում, մինչդեռ Վ. Արևելցին սրա մահը նույնպես նշում է հայոց 712 թ. (էջ 201—202)։ Արդյոք վերջինիս և Գ. Բաղիշեցու վկայությունների միջև առկա է որևէ աղերս։

210. Տե՛ս Ս. Անեցի, էջ 151. այստեղ տարեթիվը նշված է ստույգ՝ հայոց ՉԺԵ (1266)։

211. Տե՛ս Կ. Գանձակեցի, էջ 172։

212. Հմմտ. ՄԺ, I, էջ 43, 60, ծանոթ. 72։

213. Տե՛ս և հմմտ. Ս. Անեցի, էջ 151։ Իրականում Լևոնը գերությունից ազատվել է 1268 թ., իսկ Հեթում Ա-ն մահացել է 1270 թ. հոկտեմբերի 28-ին (տե՛ս վերևում, էջ 90, ծանոթ. 198, էջ 167, ծանոթ. 148)։

214. Հմմտ. Ս. Անեցի, էջ 152, 153։ Լևոն Բ թագավորի օծումն տեղի է ունեցել 1271 թվի հունվարի 6-ին (տե՛ս վերևում, էջ 75)· իսկ մահը՝ 1288 թ. փետրվարի 6-ին (տե՛ս վերևում էջ 160, ծանոթ. 174) հետևապես նա թագավորել է 17 տարի։

215. Տե՛ս և հմմտ. Ս. Անեցի, էջ 152։

216. Տե՛ս և հմմտ. նույն տեղում, էջ 153։

217. Տե՛ս նույն տեղում, էջ 153։ Այս բնագրում տարեթիվը սխալ է նշված, իրականում Հռոմկլան եգիպտացիները գրավել են 1292 թ. հունիսի 28-ին շաբաթ օրը (տե՛ս ՄԺ, I, էջ 99, ծանոթ. 120)։

218. Մանրամասն տե՛ս Ս. Անեցի, էջ 153—155։ Հմմտ. վերևում էջ 182—183։

219. Տե՛ս Ս. Անեցի, էջ 155։

220. Տե՛ս նույն տեղում, էջ 158, հմմտ. վերևում, էջ 188—189։

221. Ս. Անեցու հաղորդմամբ Հակոբ կաթողիկոսը հանդիսացել է Գրիգոր Անավարզեցու քրոջ որդին (էջ 158)։

222. Այսինքն 1335 թ. մայիսի 25-ին։

223. Մանրամասն տե՛ս Ս. Անեցի, էջ 159—160։ Այս աղետակությանն է վերաբերում 1335 թ. ընդօրինակած ձեռագրի հիշատակարանը. «Զայս դառնաշունչ ժամանակի և

ի նուազել հայոց ազգի անաւրէն ազգն Իսմայէլի յարեան ի վերա երկրին Կիլիկէի և զամէնն ի սուր մաշեցին սուսերի և գայլն ի Մսըր. վարեցին գերի և գկէսն՝ ի յերկիրն Խարամի» (ՀԶՀ, էջ 273)։

224. Հմմտ. ՄԺ, Ն, էջ 107։

225։ Թ. Մեծոփեցու մոտ «յայնկոյս» ձևով («Պատմութիւն Լանկ Թամուրայ», Փարիզ, 1860, էջ 10)։

226. Թ. Մեծոփեցին հիշում է հանվանէ. «և զանն Թաւրիզու ռուչզան Ահմատն» (էջ 13)։

227. Այս միտքը Թ. Մեծոփեցունն է։ Վերջինս ակնարկում է Մ. Խորենացու մեջբերած այն ավանդությունը, ըստ որի Բագրատունիները հրեական ծագում ունեն։

228. Լանկ Թամուրի վերաբերյալ մանրամասն տես Թ. Մեծոփեցու մոտ, էջ 9—13, 17—30։

229. Լանկ Թամուրին վերաբերող, ինչպես սկզբի, այնպես էլ վերջին տարեթվերը շփոթված են։ Լանկ Թամուրը Հայաստան արշավել է 1380 թ.։ Օսմանյան թուրքերի դեմ նրա տված Անկյուրիայի ճակատամարտը տեղի է ունեցել 1402 թ. հունիսի 20-ին, իսկ մահը՝ 1405 թ. փետրվարի 18-ին Չինաստան արշավելու ճանապարհին։

230. Տես Թ. Մեծոփեցի, էջ 14—15։

231. Այս թվականը ստույգ չէ. ՄԺ, Ն, էջ 122, ծանոթ. 22, ՀԶՀ, էջ 560, 564։

232. Տես Թ. Մեծոփեցի, էջ 15։

233. Տես նույն տեղում, էջ 17, 35—37։

234. Տես նույն տեղում, էջ 37—44։

235. Թ. Մեծոփեցու մոտ այս անվան փոխարեն գրված է. «զՅովհաննէսն ի Վաղանդնու վանացն» (էջ 51)։

236. Թ. Մեծոփեցին այլ անուն է հաղորդում. «Մատթէոս Ուխտեցի սուրբ ուխտին Գանձասարու» (էջ 51)։

237. Այս ամբողջ հատվածը տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 50—51։

238. Գ. Տաթևացու մահը սխալ է նշված։ Մահվան թվականը պետք է լինի 1411 թ.։ Վերջինիս աշակերտ Մաթեն 1411 թվի ընդօրինակած ձեռագրի հիշատակարանում գրում է, որ «...յայսմ ամի եղև գրաւ կենաց մեծ րաբունոյն իմոյ Գրիգորի յիշատակին մեծի հօրն Յոհանու Որոտնեցոյ, որոյ սուղն պաշարեաց զիս...» (ՏՑՎ, էջ 109)։ Սակայն այլ տվյալներ նրա մահը նշում են 1410 թվի աշնանը (տե՛ս Գ. Հովսեփյան, Թովմա Մեծոփեցու կյանքը, Վաղարշապատ, 1914 թ., էջ 16—17, հմմտ. Թ. Մեծոփեցի, էջ 60)։

239. Տե՛ս Թ. Մեծոփեցի, էջ 60—61։ Վերջինս հաղորդում է, որ Հովհաննես վարդապետը «Ի յարութեան օրն գնաց առ Քրիստոս» (էջ 51)։ Հավանաբար 1411 թ. ապրիլի 12-ին։

240. Գ. Լուսավորչի աջի պատմությունը մանրամասն տես և հմմտ. Ա. Գավրիժեցի էջ 414—431։

241. Գ. Բաղիշեցին այս ընդարձակ տեղեկությունները վերցրել է Թ. Մեծոփեցու հիշատակարանից (հրատ. Կ. Կոստանյանց, Թիֆլիզ, 1892, էջ 51—54)։

242. Հեղինակն այս հատվածը վերցրել է Թ. Մեծոփեցու կենսագրությունից, որը գրել է Կիրակոս Բանասերը (Գ. Հովսեփյան, «Թովմա Մեծոփեցու կյանքը», էջ 7)։

243. Իմա, Մեծոփու վանքը։ Հեղինակը դարձյալ վերցրել է Կիրակոս Բանասերից (տե՛ս նույն տեղում, էջ 7)։ Բնագրի «Կ (60) ամ կացեալ անդ և թվին ՊՂԵ (1446) վախճանեցաւ» հատվածից չպետք է եզրակացնել, թե Թ. Մեծոփեցու կյանքը տևել է 60 տարի։ Ընդհակառակը, 60 տարին Մեծոփի վանքում Թովմայի անցկացրած տարիների ընդհանուր գումարն է։ Թ. Մեծոփու մահը ոմանք նշում են 1448 թ. (Ղ. Փիրղալեմյան, Նոտարք, էջ 156, 185, 191), բայց դա ճիշտ չէ, ստույգը 1446 թիվն է, մայիսի 15 (տե՛ս Գ. Հովսեփյան, Թ. Մեծոփեցու կյանքը, էջ ԻԷ—ԻԸ)։ Այս երկասիրության մեջ բանասեր Գ. Հովսեփյանը ենթադրում է, որ Թ. Մեծոփեցին ծնվել է 1376—1379 թթ., կյանքի տևողությունը ընդունելով 67—70 տարի (նույն տեղում, էջ Գ)։ Սակայն Պորփյուրի մեկնության ձեռագրի հիշատակարանում (այս և ապա 237 էջի հիշատակարանները շնորհակալությամբ վերցրինք ընկ. Ս. Պ. Լալաֆարյանից), մեզ հետաքրքրող հարցի մասին, գտնում ենք բավական ստույգ վկայություն։ Հավանաբար Թ. Մեծոփեցու թելադրությամբ Հովհաննէս վարդապետը գրում է. «Այլ և ես մեղաւորս ի մանկունս եկեղեցւոյ պիտակ անուն վարդապետս Թովմա և հարազատս իմ Մկրտիչ վարդապետ. յերեսս անկեալ պաղատիմ

քրիստոսընկալ ուսումնասէր եղբարցդ, որք հանդիպիք իմաստութեան գրոյս լուծմանցս Պորփիւրի և պարապանցս սրբոյն Կիւրղի... աշխատասիրութեամբ մեկնեալ հոգևոր հաւր մեր վարժապետին Գրիգորի Տաթևացւոյ... Զի ՊԼԲ (1383) թվականին գրեալ էր և ի ՊՂԳ (1444) թվականիս մեք նոր ետուք կազմել հոգևոր որդւոյ մեր Հերապետ կրաւնաւորի և գրոց աշակերտի...։ Եւ ես ԿԶ (66) տարոյ եմ և եղբայրս իմ ՀԲ (72) և այս գիր ի ձեռն մարգոյ չէ եկեալ վասն ծոյլ ուսումնասիրաց վայ գիս...» (№ 5931, էջ 120ա), իսկ 119բ էջում գտնվում է գրչի 1383 թվականի հիշատակարանը։ Այսպիսով Մատենադարանի № 5931 ձեռագիրն ընդօրինակել են 1383 թ. և այդ վիճակով էլ ձեռագիրը մնացել է մինչև 1444 թ. և այս թվին միայն Թ. Մեծոփեցին կազմել է տվել, այդ մասին գրելով ձեռագրի դատարկ էջում։ Հենց այդ ժամանակ էլ նա եղել է 66 տարեկան, նշանակում է նա ծնվել է 1378 թ. և մահանալիս՝ 1446 թ. եղել է 68 տարեկան։

244. Թ. Մեծոփեցու հիշատակարանում այս անվան փոխարեն կարդում ենք. «Ստեփաննոս վարդապետ» (էջ 52։

245. Տես Թ. Մեծոփեցի, Հիշատակարան, էջ 52, 76—79։

246. Տես Դ. Բաղիշեցու աշխատության վերջին մասում, էջ 365։

247. Տրապիզոնի գրավումը մեկ ուրիշը նշում է Սինոպի հետ միևնույն տարում՝ 1453 թ. օգոստոսին (Մժ, I, էջ 27), իսկ մի երրորդն էլ միայն Սինոպի նվաճումն է հիշում, այն նշելով 1461 թ. հուլիսին (Գր. Կամախեցի, Ժամանակագրություն, էջ 10)։ Ստույգը հավանաբար այս վերջինն է, որի հետ նվաճել են նաև Տրապիզոնը։

248. Մահապարժամը տեղի է ունեցել 1469 թ. (տես և հմմտ. Մժ, I, էջ 168, «Մ. Նաղաշ և իւր տաղերը», Կ. Կոստանյանց, Վաղարշապատ, 1898, էջ 11—12)։

249. Տես և հմմտ. Մժ, I, էջ 232։

250. Բնագրի «Թագաւորեաց Իսմայիլ... սա սպան զհայր իւր» վկայությունը վերաբերում է սուլթան Սելիմ I-ին (տես Ս. Անեցի, էջ 175, Մժ, I, էջ 160 և այլն)։

251. Նկատի ունի Սելիմ I-ի և Իսմայիլ I-ի ճակատամարտը Չալդրանի մոտ, 1514 թ. օգոստոսի 22-ին (ոմանք նշում են 23-ին, Մժ, I, էջ 163, ծանոթ. 4)։

252. Սկսած 1517 թ. տեղեկություններից տես Ս. Անեցի, էջ 176, վերևում, էջ 266—268։

253. Այսինքն Մուրադ III-ի որդին։

254. Տարեթիվը սխալ է նշված։ Հայերի այս գաղթեցումը տեղի է ունեցել 1604 թվին (տես Մժ, I, էջ 178—187, Ա. Դավրիժեցի, էջ 37—70)։ Այս դեպքերի մասին կան անտիպ հիշատակարաններ, որոնցից հետաքրքիրները գտնվում են Մատենադարանի №№ 46, էջ 248բ—249բ, 1282, էջ 261ա—262բ և այլ ձեռագրերում։

255. Այս տարեթիվը ևս սխալ է, Ղարա Եազիջիի ապստամբությունը սկսվել է 1596 թվին (Ա. Դավրիժեցու մոտ նշված Լ 1598 թ., էջ 86) և ինչպես մի ժամանակակից է գրում, սա Թոխաթ եկել է 1602 թվին (Մժ, I, էջ 160)։

256. Թավրիզի կառավարիչը, սրա մասին տես վերևում, էջ 248։

257. Այս սովի մասին ուշագրավ տեղեկություններ է տալիս Գրիգոր Կամախեցին (տես Ժամանակագրություն, էջ 35—37), Ա. Դավրիժեցին (էջ 87—92) և ուրիշները (Մժ. I, էջ 185—186), մի սով էլ նշում են 1606—1610 թվերին։

258. Տես և հմմտ. Ա. Դավրիժեցի, էջ 389—401։

259. Տես և հմմտ. նույն տեղում, էջ 254։

260. Մանրամասնությունները տես նույն տեղում, էջ 303—300, և ժամանակակիցների հիշատակարաններում (№№ 2381, էջ 248բ և շար., 5397, էջ 104ա և այլն)։

261. Իմա, Խոտին, Արևմտյան Ուկրաինայում։ Հեղինակը նկատի ունի թուրքական և լեհ-ուկրաինական 1621 թ. Խոտինի պատերազմը, որտեղ թուրքերը պարտվեցին։

263. Հմմտ. Մժ, I, էջ 196։ Երևանի գրավման և հետագա մի քանի տարիներում տեղի ունեցած դեպքերի մասին ժամանակակիցներից մեկն իր հիշատակարանում ահա թե ինչ է գրում. «...Իսկ վասն բռնակալաց իսմայէլացւոց որ ի քաղաքիս (Կ. Պոլիս) յաւուրս մերում էր թագաւոր սուլթան Մուրատն, որդի սուլթան Ահմատին, այր խրոխտ և ահարկու և յոյժ աջողակ ի գոլ թագաւորութեան իւրոյ իբրև զԱլէքսանդրոս, սա ի հնկետասան ամի թագաւորութեան իւրոյ չոգաւ ի վերայ Երևանայ եաւթն հարիւր հազար հեծելովք և էառ զնա ի թվին ՌՁ և Դ (1635)-ին. և անտի յառաջեալ մինչև ի Թավրէզ արար բնաջինջ զնա և անտի դարձեալ ես ի քաղաքս։ Իսկ ի միւսում ամի եկեալ Պարսիկք առին զԵրևան, զոր լուեալ սուլթան Մուրատն կարի մրմռեալ ոխացաւ Եւ ի

միւսում աարուՋ չարժեալ ևս զաւրօք քան զՑուլիանոսին չոգաւ ի վերայ Բաբելոնի և էառ զնա. և դարձաւ ի կայանս իւր և ի լրանալ միւս ամին բարձաւ ի կենաց իւրոց Թագաւորեալ ամս ԺԹ (19)։... (№ 1562, էջ 582բ)։

263. Հմմտ. ՄԺ, I, էջ 240—241։

264. Տես և հմմտ. ՄԺ, I, էջ 355։ Վարդան Բաղիշեցու համաձայն սուլթան Մուրադը Բաղդաա հասել է 1838 թվի նոյեմբերի 26-ին և 38 օր պաշարելուց հետո, 1638 թվի դեկտեմբերի 14-ին նվաճել (տես Ներքևում, էջ 395)։ Այստեղ ինչ որ անճշտություն կա։

265. Տես և հմմա. Ներքևում, էջ 395։

266. Դ. Բաղիշեցին 1624 և 1625 թվերին տեղի ունեցած դեպքերի մասին, թեև երկիցս գրում է, «Որ ի մերում ժամանակիս... եղեն», բայց և այնպես աղաղակող անճշտություններ է թույլ տալիս։ Մովսես Տաթևացուն (Խոտանանցուն) վերաբերող տարեթվերը սխալ են։ Սա կաթողիկոս է օծվել 1629 թ. (ՄԺ, I, էջ 325), իսկ Ա. Դավրիժեցին հիշում է նույնիսկ օրը՝ հունվարի 13 (էջ 312, 439, 646)։ 1624 թվին Մովսես Տաթևացին կաթողիկոս չէր կարող օծվել, որովհետև 1625 թ. Երևանի ս. Առաքելի վանքում ընդօրինակած ժամագրքի հիշատակարանում նա հիշվում է վանքի առաջնորդ (№ 507, էջ 323ա, տես նաև Ա. Դավրիժեցի, էջ 297, 300), իսկ 1626 թվին՝ էջմիածնի լուսարար (ՄԺ, I, էջ 396)։ Սխալ է նաև նրա մահվան տարեթիվը, որովհետև մահացել է 1633 թվին։ Այս կապակցությամբ, ի միջի այլոց, սխալ է նաև Ա. Դավրիժեցին։ Վերջինս գրում է թե Մովսես Տաթևացին մահացել է 1633 թ. մայիսի 4-ին (էջ 319, 439), սակայն, էջմիածնի միաբանության անդամներից նրա մի ժամանակակիցը № 507 ձեռագրի զատարկ էջերից մեկում արձանագրել է. «Նամի մարդեղութեան տեառն մերոյ կենարարի հազար վեց հարիւր և երեսուն և վեց, և ըստ մերոյս գրոյ Թուի հազար ութսուն և երկու, մայիսի ամսոյ հռովմայեցւոց երեսաան և մի, և հայոց ամսոյ արեգի եւթն և տասն, յինա[ն]ց Ջատկի հինդ կիւրակէին, պատկեր աւուրն երեքշաբաթ, յորում գիշերն զտիւն զգենոյր առաջին պահուն, եղև վախճան մեծ կաթողիկոսին հայոց տեառն տէր Մովսէսի... ամաց իբրև յիսուն և հնգից, կացեալ յաթոռ հայրապետութեան ամս չորս...»։ (էջ 324ա)։ Եւ իրոք 1633 թ. մայիսի 21-ը երեքշաբթի է։ Հետևապես սխալվում են Ա. Դավրիժեցին, Ալիշանը («Այրարաա», էջ 231), Օրմանյանը («Ազգապատում», էջ 2424)։ Սխալ է նաև Դ. Բաղիշեցու այն պնդումը, թե իբր Մովսես Տաթևացին կաթողիկոս եղել է վեց տարի, իրականում չորս տարի և մոտավորապես հինգ ամիս (1629 թ. հունվարի 13-ից—1733 թ. մայիսի 21)։

287. Փիլիպոս Աղբակեցին, որը հաջորդել է Մ. Տաթևացուն, կաթողիկոս օծվել է ոչ թե 1639 թ., ինչպես հաղորդում է Դ. Բաղի.եցին, այլ 1633 թվին։

268. Գավառը գտնվում է Աղբակից հարավ և Ջուլամերկից արևելք, ունի ընդարձակ դաշտ՝ Դիզա անունով, որի միջով հոսում է Մեծ Զաբը։ Բարսեղ Դավառեցուն մի հիշատակագիր հետևյալ կերպ է բնորոշում. «...յի-եցէք... գլուսատուն հայկական տոհմիս զաէր Բարսեղ բազմահանճար, զանյաղթ պ[ո]ւետիկոսն, որ է յերկրէն Դաւառոյ և ի սուրբ աթոռոյն Բարգուղիմէոսի, որ ի Ցաղբակ նահանգի...» (№ 1480, էջ 48ա)։

269. Իմա, Դ. Բաղիշեցու ուսուցիչը։

279. Հմմտ. ՄԺ, I, էջ 355։

271. Մանրամասն տես և հմմտ. Ա. Դավրիժեցի, էջ 178—214, «Ջամբռ համաժողովեցեալ և շարագրեցեալ ի Սիմէօն կաթողիկոսէ Երևանեցւոյ», Վաղարշապատ, 1879, էջ 22։

272. Այս վերցված է Սաղմոսից, ստույգ ձևն է. «Մեք ժողովուրդք ձեռին նորա և խաշն արօտի նորա» (ՂԴ, 7)։

273. Խոսքը վերաբերում է Կանդիայի պատերազմին՝ 1645—1669 թթ.։ Հեղինակը սխալվում է, երբ Կրետե կղզին նույնացնում է Մալթայի հետ (հմմտ. Ա. Դավրիժեցի, էջ 577, 644)։ Մովային կռիվներից մեկի մասին 1656 թ. հիշատակարաններից մեկում պահվել է հետևյալ վկայությունը. «Թուրքի տաւնանմէն Վանատըկցու կոխէց Ըստամբուլոյ բուղազումն թվին ՌՃԵ (1656)» (№ 8349, էջ 30ա)։ Իսկ մեկ ուրիշ ժամանակակից գրիչ, որը եղել է Կ. Պոլսում, Կանդիայի պատերազմի և Կ. Պոլսում ենիչերիների ապստամբության մասին ուշագրավ հետևյալ տեղեկությունները է հաղորդում իր 1651 թ. հիշատակարանում. այնտեղ կարդում ենք. «Արդ՝ և այս ուշ լիցի քեզ զի յետ երկրորդ ամի թագաւորութեանն սուլթան Իպրահիմին եղև մեծ պատերազմ հագարացոցս ընդ վէնէտիկցոց ի վերայ Կրիտէս կղզոյն, զի յառաջին ամի պատերազմին առին սոքա զմասն ինչ ի կղզոյն և եդին ի զօրաց իւրեանց զօրըս բաղումս և անուն զօրագլխին Հիւսէին փաշայ. և արդ աւասիկ այս է (7) ամ է, որ սոքա գնան և նոքա ընդդէմ գան և յոգորին քաջ ընդ

քաջի և ոչ պարտին ի միմեանց, բայց յաւարտն Աստուծոյ է գիտելի, թէ զի արդ է լինելոց։ Նաւ ծանիր ի սոյն ամի եղեալ արհօրանաց քանզի յայսմ ամի զօրացան զօրք ի մէջ քաղաքիս, որոց էնկիչարի ասի և կարի բռնացան ի վերայ երկրորդի թագաւորին և ամենայն դատաստան քաղաքիս, և ել և մուտ ինքեանք առնէին և տային, որպէս և կամէին. յաղագս ահաս զոլս արքային։ Արդ՝ մինչ սորա յայս աջողութեանս անհոգացեալ կային յանկարծակի ի մի վայր հաւաքեալ ամբոխ ռամկին և գրոհ տուեալ յարքունիս փոխեցին զքաղաքապետն, որ վեզիր ասի և եդին զայլ ոմն քաղաքապետ, այր խորհրդական, և ցրուեցան ի տունս իւրեանց. իբր զի յառաւօտն եկեալ արասցեն խորհուրդս վասն էնկիչարոցն, զոր իբրև տեսին նոքա զգործ ևս ի նոյնում գիշերի ժողովեցան առ գլխաւորս և նորին խրատով զինեցան, կազմեցան, կարգեցան հարիւրով և Բձ (200)-ով և առին զկիրճս ճանապարհաց, որով ի դրունս արքային գնային մարդիկք, և պահեցին զանցս ճանապարհացն ի մէջ քաղաքին այնպէս վառեալ խմբմամբ զաւուրս երիս մինչ անճարացեալ ամենեցուն նստան ի տունս իւրեանց, իբր թէ հաշտեցան ի կերպարանս։ Եւ եղև յետ այս ցիբակութեանց աւուրս Ժ (10), յօգոստոս ամսոյ ԻԲ (22), ի լուսանալ առաւօտին, հանեցին զգրօշս ասաշնորդին իւրեանց և տնկեցին ի վերայ պարսպին դրան արքային և սկսաւ ձայնել մունետիկն ի մէջ քաղաքին, եթէ ով որ ի կողմ արքայի է ի ներքո այս դրօշակիս գացէ։ Յայնժամ զդրդեցաւ քաղաքն ամենայն, զի ընաւին արք քաղաքիս իսկոյն ի վայրկեան ժամանակի խմբեցան ի տեւանի անդ. զօրք և զօրագլուխք, տեղականք և եկամուտք, վաճառականք և արհեստաւորք, ամենեքեան որք յաւրէնս Մահմետի էին ի յարքունիս դիմեցան, զատ ի նոցանէ, որ երբեմն զկիրճս պահէին, յայնժամ ծակամուտ եղեն և ոչ երևեցան ի համաժողով հանդիսին, վասն որոյ արտաքսեցան և ի սրոյ ճարակ գնացին, յայսմ աւուր սպանաւ մեծ վալիտան, որ ետես թագաւորեալ զեւր երեք որդիսն զկնի միմեանց և այլ ամենայն գլխաւորքն, ոմանք ըսպանուեան, ոմանք ի փառաց անկան, ոմանք փախեան և ոմանք ևս ի բանտի կան...» (№ 1502, էջ 582բ—583ա)։

274. Տես և համտ. Ա. Դավրիժեցի, էջ 645, Ներքևում էջ 395, «Զամրռ», էջ 22—23։ Փիլիպոս Աղբակեցու գործունեության, Երուսաղեմ և Կ. Պոլիս նրա ճանապարհորդության ու այլ դեպքերի մասին հետաքրքիր տեղեկություններ պահվել է Մատենադարանի № 1502 ձեռագրի հիշատակարանում (էջ 582ա և բ)։

275. Բնագրում խոսքը վերաբերում է 1651 թ., սակայն այդ տարում արևը խավարել է ապրիլի 19-ին և հոկտեմբերի 14-ին (տես պրոֆ. Օպպոլցեր «Canon der Ffnsternisse» էջ 272), մինչդեռ պրոֆ. Օպպոլցերը օգոստոսի 2-ին արևի խավարում մատնացույց է անում 1655 թվին (նույն տեղում, էջ 272), հետևապես հեղինակը այստեղ ևս թույլ է տվել սխալ։ Այս սխալը տես նաև Վարդան Բաղիշեցու մոտ (Ներքևում, էջ 395)։

276, Իմա, Առ. Դավրիժեցի։

277. Վանի Մալաք փաշայի կողմից Բաղեշի գրավման և թալանի մասին հաղորդում է նաև ժամանակակից մի ուրիշ ժամանակագիր Վարդան Բաղիշեցին (տես Ներքևում, էջ 396—397), թեև վերջինս որոշ շեղումներ է տալիս մանրամասնությունների մեջ։

278. Ծանր հարկապահանջության և Ավդալ խանի բռնությունների մասին է պատմում նաև Մարտիրոս գրիչը 1652 թվի իր հիշատակարանում. «Ի թվականիս Հայոց ՌՃԱ ի դառն և ի նեղ ժամանակիս, յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս և առաել ազգիս Հայոց՝ վասն ծովացեալ մեղաց մերոց. ի բռնակալութիւն Բաղիշու Ավդալ բէկին. ի յայսմ տարիս Գ (3) ողի կախեաց ի քրիստոնէից ի մէջ շուկային, վասն հարկապահանջութեան» (№ 835, էջ 243բ)։ Մեկ ուրիշը 1663 թ. գարձյալ գրում է. «Ի դառն և ի նեղ ժամանակիս յորում նեղիմք ի հարկապահանջութենէ անօրինաց, քանզի ևս քան զևս սաստկանա բռնութիւն և նեղութիւն ի վերայ աշխարհիս ևս առաւել ազգիս Հայոց» (№ 6172, էջ 148բ, համա. № 6801, էջ 182բ)։

279. Այս վկայությունը ցույց է տալիս, որ Դ. Բաղիշեցին իր ժամանակագրությունը ավարտել է 1663 թ. (1638+25)։ Այս է հաստատում նաև ժամանակագրությանը կից հեղինակի հիշատակարանը. «Արդ եղև գրաւ սորա թվին ՌՃԺԲ (1662)» (Բաքվի օրինակ, էջ ՄՀԷ. համտ. Λ տարբերակ, էջ 58բ)։

280. Դ. Բաղիշեցու կենսագրական մանրամասնությունները հայտնի չեն։ Հայտնի չէ նաև նրա ծննդյան թվականը, իսկ մահվան մասին հանգամանորեն գրում է Դ. Բաղիշեցու աշակերտ Մեսրոպ վարդապետը իր մի հիշատակարանում. «Ես Բաղիշու քաղաքի վերատեսուչ տառապեալ տրուպ Մեսրովպ վարդապետս ի թվին ՌՃԻԲ (1673) եկի ի ծո-

վայրուրջ անապատն Լմայ, հանդերձ հոգևոր որդւովք իմովք՝ Դաւիթ վարդապետաւն և Աւետիք բանասիրիւ: Դաւիթ վարդապետն վախճանեաց զկեանս իւր, գնաց առ Քրիստոս՝ յոյսն ամենայնի, Որդւոց որոտմանց տօնին. մինչ «էր ընդ եզրաբսն» կարդային, և մարմին եդեալ եղև ընդ հովանեաւ սուրբ Դէորգեայ զօրավարին: Եւ այս աւետարանչաց մէկնիչս Ղուկասուն և Մատթոսին Դաւիթ վարդապետին էր, իւր ձեռաց գրածն. եդաք յիշատակ բարի ի դուռն սրբոյն Դէորգեայ զօրավարին և ի վերայ իւր գերեզմանին փակեալ ...» (№ 5155, էջ 185ա): 1673 թ. Որդւոց որոտմանց տոնը կրնկնի դեկտեմբերի 29-ին: Այսպիսով, Դ. Բաղիշեցին մահացել է Լիմ անապատում 1673 թ. դեկտեմբերի 29-ին: Նրա տապանագիրն այս է. «Կանգնեցաւ ս. խաչս բարեխօս առ Աստուած Բաղիշեցի Դաւիթ վարդապետին և ամենայն աշխատողացն. յիշեցէք ի Քրիստոս թվ. ՌՃԻԲ» («Նօտարք Հայոց» էջ 86. ծանոթ. 2):

281. Իմա, Վարդան Բաղիշեցի:

282. Պառակտողական այս պայքարի մասին մանրամասն պատմել է նաև Սիմեոն Երևանցին («Ջամբռ», էջ 93 և շար.):

283. Եթե Զ-ն ընդունենք հայկական թիվ և ավելացնենք Հուլյան և Հայոց տոմարի տարբերության 551 տարին, ինչպես վարվում է պրոֆ. Աշ. Աբրահամյանը, այդ կնշանակնի, որ այս գլխում եղելությունների հաջորդական կարգը շարադրվելու է մինչև 1251 թ.: Դ. Բաղիշեցու հիշատակարանը և շարադրված նյութը հնարավորություն են տալիս ճշտելու նրա ժամանակագրության այս հատորի ժամանակագրական սահմանները: Հեղինակը հիշատակարանում, իր 2-րդ հատորի վերջին եղրի մասին, գրում է, որ թվելու է «...զկարգս ասաքելոց և զկարգս թագաւորաց ի Դայիոսէ մինչև ցԿոստանդիանոս և անտի մինչ ի Մանուէլ» (Բաքվի օրինակ, էջ ՄՀէ): Եվ, իսկապես, ժամանակագրության 2-րդ հատորում բյուզանդական կայսրների շարքը հասնում է մինչև Մանուել Կոմնենոսը (մեռած 1180 թ.): Եւ ապա հեղինակը բացատրում իր վարմունքի պատճառը. «...այսուհետև ոչ գտանի կարգ թագաւորաց կ. Պօլսոյ, զի այր զարամբ ելանէր և աննշանք ոմանք թագաւորէին, այլև աղջկունք և սարնդիայ տղայք: Զի մինչ ի թվին ՈԻԷ երեին անուանք թագաւորաց: ...Ի Մանուէլս այս և այսուհետև ոչ երեին, զի ոչ կարէին տիրել վիճակին իւրեանց: ... վասն այնորիկ ոչ յիշին անուանք թագաւորաց նոցա»:

Այս մեջբերումը, ասել է. թէ ժամանակագրության 2-րդ հատորը, եզրափակվում է 1453 թ. թուրքերի կողմից կ. Պոլսի գրավման մի նախադասությամբ: Քանի որ Դ. Բաղիշեցին իր ժամանակագրության 2-րդ հատորի մեջ մի շարք դեպքեր (Վասիլ 2-րդի թագավորություն, Մանուել Կոմնենոսի մահվան և այլն) նշում է հայոց տարեթվերով, կարելի է ենթադրել, որ հեղինակը դարձյալ Հայոց թվականը նկատի ունի, երբ իր ժամանակագրության 2-րդ հատորի վերնագրում գրում է «մինչև թվին Զ»: Եթե ճիշտ է սա, նշանակում է հեղինակը իր խոստումը չի կատարել և դեպքերը չի շարադրել մինչև 1251 թիվ, այլ հասցրել է մինչև Մանուել Կոմնենոսը, որի մահը, Դ. Բաղիշեցու համաձայն, տեղի է ունեցել Հայոց ՈԻԷ (1178) թվին:

284. Ինչպես արդեն վերևում նշեցինք, Դ. Բաղիշեցու ժամանակագրության Բաքվի օրինակում բնագրի նախավերջին թերթը ընկել է, այդ պատճառով էլ երկրորդ հատորի վերջից բերված ընդարձակ մեջբերումը կատարել ենք ըստ A տարբերակի:

285. Տես և հմմտ. Ասողիկ, էջ 196:

286. Տես Դ. Նարեկացի, Պատմութիւն Ապարանից խաչին (Սրբոյն հօրն մերոյ Գրիգորի Նարեկացւոյ, երկրորդ մատեան ճառից, Վենետիկ, 1827, էջ 16, 16 և շար.):

287. Բնագրում «եպա» ձևով: